ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԶԵՐԾ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գլեն Դ. Փեյջ

Սպանություններից ազատ համաշխարհային

Նվիրվում է Ռիչարդ Սնայդերին
1916 – 1997թթ.

Հյուբերթ Ուիլսոնին
1909 – 1977թթ.

մի խումբ քաղաքագետների, ուսուցիչների, ընկերների

Հայերեն թարգմանությունը իրականացվել է «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի նախաձեռնությամբ:
Թարգմանիչ Ա. Սիմոնյան

Copyright: Glenn D. Paige (2013)

ISBN: 978-1490497549

Printed by CreateSpace for
the Center for Global Nonkilling
3653 Tantalus Drive
Honolulu, Hawaii 96822-5033
United States of America

info@nonkilling.org
www.nonkilling.org

Ցանկացած գիտություն, որն ամուր կառչած է
իր հիմնադիրների գաղափարներից,
դատապարտված է մահվան:

Ալֆրեդ Նորթ Ուայթեդ

Բովանդակություն

Նախաբան 5

Երախտիքի խոսք 8

Գլուխ 1. Հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն: 10

Գլուխ 2. Սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու հնարավորությունները: 28

Գլուխ 3. Քաղաքագիտության դերը 51

Գլուխ 4. Սպանություններից զերծ քաղաքագիտության դերը խնդիրների լուծման գործընթացում 81

Գլուխ 5. Սպանություններից զերծ քաղաքագիտության դերը հասարակական և պետական ինստիտուտների համար 101

Գլուխ 6. Սպանություններից զերծ համաշխարհային քաղաքագիտություն 116

Հավելված Ա. 130

Հավելված Բ. 132

Հավելված Գ. 134

Հավելված Դ. 137

Ծանոթագրություն 143

Տեղեկատու

Նախաբան

Այս գիրքն առաջին հերթին ներկայացվում է ողջ աշխարհի քաղաքագիտության ոլորտի գիտնականների՝ սկսնակ ուսանողներից մինչև բազմավաստակ պրոֆեսորների աչալուրջ ուսումնասիրությանն ու քննադատությանը: Ո՛չ տարիքը, ո՛չ կրթվածության մակարդակը և ո՛չ էլ բազմագիտակությունը չեն խանգարում կիսել լայնորեն տարածված այն տեսակետը, որ սպանությունը մարդկային կեցության անխուսափելի մասն է կազմում և որը պետք է ընդունեն քաղաքականության տեսությունն ու պրակտիկան: Հուսով ենք, որ ընթերցողները մեզ հետ համատեղ, կասկածի տակ կդնեն այս ենթադրությունը և իրենց մտքերով ու գործողություններով կաջակցեն սպանություններից զերծ համաշխարհային ապագա կառուցելու հետագա նպատակային քայլերի իրագործմանը:

Միանգամայն հնարավոր է, որ սա անգլերեն լեզվով առաջին գիրքն է, որ վերնագրի մեջ կա «սպանություններից զերծ» բառը: Տերմինն ինքը լայն կիրառում չունի: Վերջինիս օգտագործումը նպատակ ունի դուրս գալ «խաղաղություն», անգամ «ոչ բռնություն» հասկացությունների սահմաններից՝ պարզապես բևեռվելով սպանության, մարդկային կյանքը խլելու իրողության վրա: Շատերի նախնական արձագանքը կարող է լինել այն, որ «սպանություններից զերծ» տերմինի վրա կենտրոնանալը խիստ բացասական է, խիստ սահմանափակ և որ դրա արդյունքում կարող են անտեսվել շատ կարևոր բաներ: Այս տեսանկյունից մարդիկ կիսում են Գանդիի այն միտքը, որ «ահիմսա»-ի բնորոշումը (բռնության կանխում, վնասի կանխում մտքով, խոսքով և գործողությամբ) որպես «սպանությունների կանխում», դրական իմաստով քիչ է տարբերվում «բռնություն» հասկացությունից:

Թերևս, որպես ընթերցող, Գանդին էլ այս ամենի մասին մտորելուց հետո կարող էր գալ եզրահանգման, որ սպանություններից ազատվելու մտքի վրա կենտրոնացումը՝ որպես այլ տեսակի բռնությունների սկզբնաղբյուր և պահպանման ձև, կարող էր լինել առաջին քայլը սպանություններից զերծ քաղաքագիտության ձևավորման ճանապարհին՝ ժամանակի ընթացքում կյանքը խլելու քաղաքականությունից անցնելով դեպի այն ամրակայելու քաղաքականության:

Այս գրքի հիմնական իմաստը կայանում է նրանում, որ հնարավոր է ստեղծել սպանություններից զերծ գլոբալ հասարակություն և որ քաղաքագիտության ակադեմիական առարկայի և նրա սոցիալական դերի մեջ տեղ գտած փոփոխությունները կարող են բերել դրա իրագործմանը: Ենթադրությունը, որ սպանությունը մարդկային էության և հասարակական կյանքի անխուսափելի բաղադրիչն է, որով պետք է առաջնորդվեն քաղաքականություն ուսումնասիրողներն ու քաղաքականությամբ զբաղվողները, կասկածի տեղիք է տալիս.

Առաջին - ընդունված է, որ մարդիկ կենսաբանորեն և պայմանականորեն ընդունակ են թե՛ սպանություն գործելու և թե՛ սպանություններից խուսափելու:

Երկրորդ - նկատվել է, որ չնայած իրենց կողմից մահացու հարված հասցնելու կարողությանը՝ մարդկանց մեծամասնությունը մարդասպաններ չեն ու չեն էլ եղել:

Երրորդ - մեծ թվով հասարակական հնստիտուտներ արդեն իսկ դրսևորել են սպանություններից հրաժարվելու կարողություններ, որոնք, ստեղծագործաբար փոխկապակցելու և վերամշակելու դեպքում, կարող են օգտագործվել սպանություններից զերծ հասարակությունների ձևավորման գործընթացում:

Չորրորդ - հաշվի առնելով ինչպես վերջերս կատարված, այնպես էլ հետագայում կատարվելիք գիտական բացահայտումները՝ ուղղված սպանություն ծնող առիթների,

սպանությունից հրաժարվելու պատճառների կամ դրանց միջև ընտրություն կատարելու շարժառիթների ուսումնասիրմանը, սպանության տանող կենսահոգեբանական գործոնների հետ մեկտեղ, կարող են օգտագործվել սպանություններից զերծ հասարակության խաղաղ փոխակերպման գործընթացում:

Հինգերորդ - հաշվի առնելով վերոնշյալը՝ թե մարդիկ բնությունից հակված են արյուն թափելու, թեզ, որով քաղաքագիտությունն ու քաղաքականությունը հիմնավորում են բռնությունների անխուսափելիությունը, չպետք է դառնա լուրջ խոչընդոտ սպանություններից զերք քաղաքագիտության առարկայի մշակման ճանապարհին:

Վեցերորդ - որպեսզի բոլորի համար ընդունելի տարբերակով հասնենք սպանությունների կանխմանը լոկալ և գլոբալ մակարդակներում, այն քաղաքագետներին, ովքեր դեռևս չեն հավատում սպանությունեից զերծ հասարակություն ստեղծելու հնարավորությանը, առաջարկվում է այս հնարավորությունը ընդունել վարկածի տեսքով, բուն տեսական մակարդակով՝ կիրառելով թե՛ ինդուկտիվ և թե՛ դեդուկտիվ մեթոդները: Վարկածի նմանատիպ վերլուծությունը ինչպես սկեպտիկների, այնպես էլ նրանց կողմից, ովքեր հավատում են խաղաղ փոխակերպման հնարավորությանը, կարող է նշանակալիորեն օժանդակել առարկայի զարգացմանը: Ինչպես որ միջուկային զենք ստեղծելու մտքի ջատագովներն ու քննադատները ունեին հնարավորություն տեսականորեն ուսումնասիրել և քննարկել միջուկային լոկալ պատերազմների հետևանքները, նույն կերպ բռնությունը խրախուսող և դատապարտող քաղաքագետները կարող են կազմակերպել քննարկումներ՝ ուսումնասիրելու համար սպանություններից զերծ համաշխարհային հասարակությունների ստեղծման նախադրյալները, գործընթացները և հնարավոր հետևանքները:

Չնայած այն բանին, որ այս գիրքը գլխավորապես ուղղված է բոլոր նրանց, ովքեր ուսումնասիրում են քաղաքագիտություն առարկան և զբաղվում են քաղաքագիտությամբ, բայց և այնպես ակնհայտ է, որ սպանություններից զերծ հասարակությունները չեն կարող ձևավորվել առանց բոլոր ուսումնական առարկաների և մասնագետների ջանքերի ու բացահայտումների: Հիանալի օրինակ կարող է ծառայել անշահախնդիր սիրո կիրառական գիտության ստեղծմանն ուղղված առաջին քայլը, որ կատարեց Հարվարդի համալսարանի սոցիոլոգ Փիթիրիմ Սորոկինը 1954թ. հրատարակված “Սիրո ճանապարհներն ու ուժը” գրքում: Մեկ այլ օրինակ է նախադեպը չունեցող Համաշխարհային Առողջապահության Կազմակերպության(ՀԱԿ) Բռնության և առողջապահության վերաբերյալ 2002թ. համաշխարհային զեկույցը, որում ենթադրվում է, որ մարդկային բռնությունը “կանխարգելվող հիվանդություն” է: Մեզ պետք են սպանություններից զերծ բնական և կենսաբանական գիտություններ, սպանություններից զերծ սոցիալական գիտություններ, սպանություններից զերծ հումանիտար գիտություններ, սպանություններից զերծ մասնագիտություններ և սպանություններից հեռու մասնագետներ հասարակության բոլոր բնագավառներում: Բացի այդ մարդկային հնարավորությունների ներկա ու անցած ողջ շարանը հասկանալու համար մենք պետք է ուսումնասիրենք նաև այլ մշակույթների փորձը: Նորմատիվորեն սահմանված ժամկետում, տեսականորեն ճշգրիտ և գործնականում իրատեսական լինելու համար սպանություններից զերծ քաղաքագիտությունը տեսական և գործնական առումով պետք է լինի գլոբալ:

Առաջին անգամ լույս տեսնելով 2002թ.՝ այս գրքի՝ սպանություններից զերծ մնալու թեզը շարունակում է ուշագրավ արձագանքներ առաջացնել ընթերցողների մոտ: Սրա օրինակն է ռուս քաղաքագետ պրոֆեսոր Ուիլյամ Սմիրնովի կարծիքը հետևյալի մասին. «Այս բացառիկ գրքում տեղ գտած կարևորագույն մտքերը կարող են և պետք է դառնան ընդհանուր արժեքների հիմք և այդ արժեքները կյանքի կոչելու ծրագիր 21-րդ դարի

մարդկության համար»: Կամ Հնդկաստանի նախկին վարչապետ Ի.Կ.Գուջրալի խորհուրդը. «Այս գիրքը պետք է ընթերցեն թե՛ քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողները և թե՛ հասարակության անդամները»:

Ընթերցողների արձագանքները և ավելի քան երեսուն թարգմանությունները (որոնցից քսանն արդեն հրատարակվել են) նախագուշակում են սպանություններից զերծ մնալու թեզի գլոբալ դիտարկման մոտալուտությունը:

Երախտիքի խոսք

Շնորհակալական և ոչ մի խոսք չի կարող ըստ պատշաճի արտահայտել այն խորը երախտագիտությունը, որ ես տածում եմ բոլոր նրանց հանդեպ, ովքեր բացահայտ կամ թաքուն, շատ վաղուց կամ վերջերս, արեցին ամեն ինչ այս գիրքը իրականություն դարձնելու համար:

Մի փոքր ակնարկ նրանց մասին. «Ես երախտապարտ եմ Հավաիի բնակչությանը այս գիտական ճամփորդության ժամանակ ցուցաբերած աջակցության համար, Հավաիի Համալսարանի բարձր կուրսերի օտարազգի ուսանողներին, ովքեր մասնակցեցին «Բռնություններից ազատ քաղաքական այլընտրանքները» թեմայով դասընթացներին 1978-1992թթ., ինչպես և գիտության այն դոկտորներին, ովքեր պաշտպանել են խաղաղասիրական թեմաներով գիտական թեզ, այնուհետև շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը գիտության ասպարեզում՝ Ֆրանսին Բլում, Չայվաթ Սաթա-Անանդ և Մաքապադո Ա.Մազլիմ»:

Այս գիրքը ընթերցողների դատին ներկայացնելիս ես քաջ գիտակցում եմ, թե ինչ մեծ ներգործություն են թողել իմ վրա Փրինսեթոնի համալսարանի քաղաքագիտության երկու հայտնի ուսուցիչները՝ Ռիչարդ Սնայդերն ու Հուբերթ Ուիլսոնը: Սնայդերին ես պարտական եմ գիտության հանդեպ ունեցած իմ հարգանքով, միջառարկայական կապերի ուսումնասիրությամբ, այն համոզմունքով, որ քաղաքագիտության էությունը կայանում է այլընտրանքային իրադրություններում ճիշտ ընտրություն կատարելու կարողության մեջ, բոլոր մակարդակներում կրթության կարևորությունը գիտակցելու մեջ, ինչպես նաև հասկանալու այն, որ արժեքների համակարգը կարող է երևան հանել այնպիսի բաներ, որոնք միշտ չէ, որ կարող են տեսնել նմանատիպ արժեքային համակարգ չունեցող մարդիկ: Ուիլսոնն, իսկ ավելի ուշ Գանդին օգնեցին ինձ հասկանալ, որ ազատ ու արդար հասարակությանը պետք են այնպիսի գիտնականներ ու քաղաքացիներ, որոնք պատրաստ են պաշտպանել իրենց տեսակետները, եթե անգամ ստիպված լինեն միայնակ դուրս գալ բոլորի դեմ:

Ինչպես բոլոր գիտնականները, ես նույնպես ստացել եմ աջակցություն ու տեղեկատվություն թե՛ ակադեմիական միջավայրում և թե՛ նրանից դուրս: Հոգևոր առաջնորդներից մասնավորապես պարտական եմ Ակարիաս Թուլսիին և Մահափրագայային, Ռեբբի Ֆիլիպ Բենթլիին, Դայսակու Իկեդային, Լամա Դոբում Տուլկուին, Զորջ Զաբելկային և Աբդուրահման Վահիդին: Բնագիտական գիտությունների բնագավառում իմ շնորհակալությունն եմ հայտնում Ան Չունգ-Սիին, Չունգ Յուն-Զեին, Զեյմս Դեյթորին, Յոհան Գալթունգին, Պիերո Գիորգիին, Հոնգ Սանգ-Չիկին, Լի Զե-Բոնգին, Բրայան Մարտինին, Ռոնալդ Մաքարթիին, Բրյուս Մորթոնին, Կինհիդ Մուշակոջիին, Երեմոյ Պարնովին, Իլյա Պրիգոգինին, Թոմաս Ռամզեին, Ռի Յոնգ-Փիլին, Հիրոհարու Սեկիին, Ուիլլիամ Սմիրնովին, Լեսլի Սպոնսելին, Ջին Շարփին, Ռալֆ Սամին և Զոն Տրանտին: Հումանիտար ոլորտի գիտնականներից՝ Հերմանին, Ռիչարդ Զոնսոնին, Քամալ Նահալի, Զորջ Սիմսոնին, Տատյանյա Յակուշկինային և Միքայել Թրուին: Գրադարանավարներից հատուկ շնորհակալություն Ռութ Բինզին և Բրուս Բոնթային, քաղաքական և հասարակական առաջնորդներից՝ Մ. Արամին, Արիյարաթնեին, Դանիլո Դոլսիին, Գվինֆոր Իվանսին, Հվանգ Զանգ-Յոփին, Պետրա Կելլիին, Ջին Սադակո Մինգին, Մահիրեդ Կորիգան Մագիրին, Աբդուլ Սալամ ալ Մաջալիին, Ռոնալդ Մալոնեին, Անդրես Պեստրանային, Եվա Քիսթորփին, Շի Գուին, Իկրամ Բաբբանի Բանային, Սուլակ Սիվարակսային և Ունիթանին, ուսուցանողներից՝ Ժոզե Վ. Աբուեվային, Ն. Բադակրիշնանին, Գ. Ռամաշանդրանին, Ժոքին Ուրրեային և Ռիտա Վոլստրոմին:

Խաղաղասիրական տեսության քարոզիչներ Դարմանանդային, Չարլզ Ալֆին ավագին, Բերնարդ Լաֆայետ կրտսերին: Հոգին և մարմինը դարմանող բժիշկներից՝ Թիոնգ Հ. Կամին, Ջին Ր. Լեդուկին, Ռամոն Լոպեզ-Ռեյեզին, Ռի Դոնգշիկին, Ռո Յունգ-Վուին և Ուեսլի Ուոնգին: Նորարարության մարտիկներից շնորհակալություն Վիջեյ Բհարդվային, Կարեն Քրոսին, Լարի Ր. Քրոսին, Վանս Ինգլիմանին, Ս. Լ. Գանդիին, Լու Ան Հա'ահեոյին, Գվանսոն Մանֆրեդ Հենինգսենին, Թեոդոր Լ. Հերմանին, Ցզե Խիան Լեոնգին, Անտոնի Յ. Մարսելային, Ռիչարդ Մորսեին, Ռոմոլա Մորսեին, Սքոթ Մաքվեյին, Գեդոնգ Բագեոս Օկային, Իոհան Թաչիբանային, Վոլդեմար Տոմուսկին և Ալվարո Վարգասին:

Խորապես շնորհակալ եմ այն ընթերցողներին, որոնք տարբեր տեսանկյուններից իրենց նկատառումներն են թողել այս գրքի ձեռագիր տարբերակի վերաբերյալ՝ Ան Չունգ Ցիին, Ա.Տ. Արիյարատնեին, Ջեյմս Մաք Գրեգորի Բըրնսին, Չեյվատ Սաթա-Անանդին, Վանս Ինգլիմանին, Իոհան Գալթունգին, Լուիս Յավիեր Բոթերոյին, Ամեդեո Կոտինոյին, Ելիզավետա Ֆորնիին, Լու Աննին, Հա'ահեո Գվանսոնին, Կաի Հեբերթին, Թեոդոր Լ. Հերմանին, Հոնգ Սանգ-Չիկին, Էդվարդ Ա. Կոլոձիեին, Ռամոն Լոպեզ-Ռեյեսին, Կաիքսիա Լուիին, Մայրիդ Կորրիգան Մագվիրեին, Բրայան Մարտինին, Մելիսա Մաշբուրնին, Ջոն Դ. Մոնթգոմերիին, Բրուս Ե. Մորթոնին, Մունի Մահենդրա Կումարին, Վինսենթ Կ. Փոլլարդին, Իլյա Պրիգոգինիին, Ն. Ռադակրիշնանին, Ֆրեդ Վ. Ռիգզին, Ջեյմս Ա. Ռոբինզոնին, Բուրթոն Մ. Սափինին, Նամրաթա Շարմային, Ջորջ Սիմսոնին, Ջ. Դավիդ Սինգերին, Չանզու Սոնգին, Ռալֆ Սամմիին, Կոնստանտին Տիուսովին, Վոլդեմար Տոմուսկին, Միքայել Թրուին, Ս. Պ. Ուդայակումարին, Տ.Կ.Ն. Ունիթանին, Ալվարո Վարգասին և Բառքսու Ժաոյին: Նրանց մեկնաբանությունները ընդգծեցին այս թեզի դրական կողմերը և վերջինիս իրագործմանը խոչընդոտող բացասական կողմերը: Նրանց դիտողություններին ոչ ադեկվատ արձագանքելու պատասխանատվությունն ընկնում է իմ վրա:

Ես նաև երախտապարտ եմ Ջեյմս Ա. Ռոբինզոնին, ով առաջինը կարդաց գրքի ձեռագիր տարբերակը 1999թ. փետրվարին և առաջարկեց գրել ներածական մաս ի պատիվ Ռիչարդ Ս. Սնայդերի, ինչպես նաև Ջոամ էվանս Փիմին՝ խմբագրելու համար «Սպանություններից ազատ համաշխարհային կենտրոն»-ի 2009թ. հրատարակությունը:

Ես մեկընդմիշտ երախտապարտ եմ կնոջս՝ Գլենդա Հածուկո Նաիտո Փեյջիին ձեռագիրը մեքենագրելու համար, մի բան, որ նա արել է 25 տարուց ավելի յուրաքանչյուր իմ գրքի ու հոդվածի համար, նաև նրա համար, որ միշտ եղել է իմ անբաժան ուղեկիցը սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանն անհրաժեշտ ուղիների բացահայտման նպատակով Բալի, Բանկոկ, Բեյջիգ, Բեռլին, Բրիսբանե, Հիրոշիմա, Կարաչի, Լոնդոն, Մոսկվա, Նոր Դելի, Նյու-Յորք(ՄԱԿ), Փարիզ, Պրովինսթաուն, Յոնգյանգ, Սեուլ, Տոկիո և Ուլան Բատոր կատարած ճամփորդությունների ժամանակ՝ միաժամանակ չմոռանալով հոգ տանել սեփական գործերի մասին:

Երախտիքիս խոսքն եմ հղում Կոլումբիա Համալսարանի Հրատարակչությանը, որ թույլ տվեց մեջբերումներ անել Ջոն Վ. Բուրգեսի «Ամերիկացի գիտնականի հուշեր»-ից:

Գլուխ 1

Հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:

Փիլիսոփայությունը, ինչպես և գիտությունը ձևավորվում է այն ժամանակ,
երբ մեկը ընդհանրական բնույթի մի հարց է տալիս:
Բերտրանդ Ռուսսել

Իր իսկ կողմից առաջադրած հարցերը դառնում
են տվյալ երկրի քաղաքականության զարգացման միջոց:

Հաճախ տվյալ երկրի քաղաքականության ձախողումը
պայմանավորված է իր իսկ առջև դրած սխալ հարցերով:
Ջավահարլալ Ներու

Հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:
Եթե ոչ, ապա ինչու՞: Եթե այո, ապա ինչու՞:

Ի՞նչ նկատի ունենք, երբ ասում ենք «սպանություններից զերծ հասարակություն»: Խոսքը վերաբերում է մարդկանց փոքր կամ մեծ, լոկալ կամ գլոբալ միությանը, որտեղ չկան սպանություններ և դրանք իրագործելու սպառնալիքներ, չկան մարդկանց սպանելու նպատակով ստեղծված զենքեր և դրանք կիրառելու արդարացումներ, չկան հասարակության գոյատևման կամ փոփոխման համար անհրաժեշտ նախապայմաններ՝ սպանություններով կամ դրանք կիրառելու սպառնալիքներով պայմանավորված:

Այսպիսով չկա մարդկանց սպանություն, ոչ էլ վերջիններիս սպանելու սպառնալիք: Սա կարող է վերաբերել նաև կենդանիներին և կյանքի այլ գոյակցություններին, բայց էական է մարդկանց համար: Չկան սպանության սպառնալիքներ: Խաղաղ իրավիճակները չեն ծնվում ահից:

Չկան սպանության գործիքներ (դրանք կարելի է տեսնել միայն թանգարաններում, որտեղ ներկայացված է արյունալի դրվագներով հարուստ մարդկության պատմությունը) և չկան մարդկային կյանքը խլելու օրինական ուղիներ: Անշուշտ, սպանել կարելի է և առանց զենքի՝ բռունցքներով կամ ոտքերով, բայց բացակայում է այս ընդունակությունը կիրառելու կամ տեխնիկապես ընդլայնելու մտադրությունը: Կրոնները չեն խրախուսում սպանությունը. չկան սպանությունը խրախուսող պատվիրաններ: Կառավարությունը չի օրինականացնում սպանությունը, հայրենասիրությունը չի պահանջում սպանություն, հեղափոխականները չեն արդարացնում այն: Մտավորականները դրա համար ներողություն չեն խնդրում, նկարիչները չեն ողջունում այն. ժողովրդական իմաստնությունը չի հավերժացնում այն, առողջ միտքը չի հրամայում դա: Համակարգչային տեխնոլոգիաների այս դարաշրջանում գիտությունը չի տրամադրում սպանությունների իրագործմանն ուղղված սարքավորումներ կամ ծրագրային փաթեթներ:

Հասարակության կառուցվածքը ոչ մի կապ չունի մարդկային կյանքը խլելու գործընթացների հետ: Չկան հասարակական հարաբերություններ, որոնք պահպանելու կամ փոփոխելու համար պահանջվի սպանություն կամ դրա իրագործման սպառնալիք: Իշխելու կամ «ընտրյալ» լինելու և ոչ մի հարաբերակցություն, լինեն դրանք սահմաններ, ղեկավարման ձևեր, սեփականություն, գենդերային հարաբերություններ, ռասսա,

ազգային պատկանելություն, դասակարգ, հոգևոր և աշխարհիկ հավատալիքների համակարգ, չի ենթադրում սպանություն՝ ուղղված վերոնշյալ արժեքների պահպանմանը կամ վերացմանը: Սա չի նշանակում, որ նման հասարակությունը չունի գծված սահմաններ, ինքնորոշում կամ ազատ է կոնֆլիկտներից, սա նշանակում է, որ նրա կառուցվածքը և գործընթացները սպանության արդյունք չեն և կախված չեն նրանից: Չկան օրինական կամ անօրինական մասնագիտություններ, որոնց հիմնական նպատակը լինի սպանելը:

Հետևաբար սպանություններից զերծ հասարակությունում կյանքը բնորոշվում է հետևյալ կերպ. մարդկանց չեն սպանում ու չեն սպառնում սպանել, չկան սպանություն գործելու հատուկ տեխնոլոգիաներ և դրանց կիրառումը արդարացնող միջոցներ, չկան սպանելու կամ դրա իրագործման սպառնալիքից բխող սոցիալական պայմաններ:

Հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:

Մեր պատասխանները կհիմնավորվեն սեփական փորձով, մասնագիտական պատրաստվածությամբ, մշակույթով և կոնտեքստով՝ բոլոր այն գործոններով, որոնք քաղաքագետներն օգտագործում են բացատրելու համար իրենց և մյուսների վարքագիծը:

Սպանություններից զերծ հասարակություն ստեղծելու միտքը անհեթեթություն է:

Սա էր քսան հոգուց բաղկացած ամերիկացի գիտնականների խմբի պատասխանը, երբ 1979թ. Ազգային Հումանիտար Ֆոնդի հովանավորչությամբ կազմակերպված ամառային դասընթացի ժամանակ նրանց նմանատիպ մի հարց առաջադրվեց: Սեմինարի նպատակն էր դիտարկել Արևմտյան քաղաքական մտքի շուրջ առկա դասական գործերը՝ հետագայում դրանք բուհական ծրագիր ներմուծելու համար: Հարցադրումն այսպիսին էր.

- Հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ քաղաքականություն և քաղաքագիտություն:

Սեմինարի ընթացքում հավասարապես ներկայացվեցին ամերիկյան քաղաքագիտության չորս հիմնական ոլորտները՝ քաղաքական տեսություն, ամերիկյան կառավարում, համեմատական քաղաքականություն և միջազգային հարաբերություններ: Ներկա գիտնականներից միայն մեկն էր կին:

Սեմինարի ավարտին կազմակերպված կարճատև քննարկման ժամանակ բերված երեք փաստարկներն էլ վերջ դրեցին հարցի քննարկմանը: Առաջին՝ մարդիկ բնությունից մարդասպաններ են, նրանք վտանգավոր հասարակական կենդանիներ են, որոնք ցանկացած պահի պատրաստ են սպանել: Երկրորդ՝ ռեսուրսների սակավությունը միշտ էլ բերում է մրցակցության, կոնֆլիկտների և սպանությունների: Երրորդ՝ բռնաբարության մշտապես առկա վտանգը ստիպում է տղամարդկանց պատրաստ լինել սպանության՝ պաշտպանելու համար տուժած կանանց: (Ամերիկացի կնոջ կողմից բերված համանման փաստարկը անտեսվեց. «Եթե ինչ-որ մեկը սպառնա իմ երեխայի կյանքին, ես նրան կսպանեմ»: Չհնչեց նաև նման պարագաներում սովորական դարձած հակկընդդեմ հարցը, որ համարվում էր բավարար վերջ դնելու սպանություններից զերծ քաղաքագիտություն ստեղծելու մտքին. «Ինչպե՞ս կարելի էր կանգնեցնել Հիտլերին և հոլոքոստը առանց սպանություն գործելու»):

Այս երեք առաջնային փաստարկները մարդկային էության, սակավաթիվ ռեսուրսների և սեռական բռնությունների վերաբերյալ բավական եղան հերքելու համար

սպանություններից զերծ քաղաքականության տեսություն ու պրակտիկա ձևավորելու հնարավորությունը:

Քաղաքական մտքի շուրջ առկա արևմտյան դասականների գործերի դիտարկումը սեմինարի ժամանակ ևս անտեղին էր: Նրանց վարպետությունը, այդ թվում՝ Չինաստանի պատժիչ Օրինապահների և Հնդկաստանի խորամանկ կաուտիլյացիների սովորույթները բերեցին միևնույն եզրահանգմանը, որ բացահայտ, թե թաքուն սպանություն գործելու պատրաստակամությունը հանդիսանում է բարեկարգ հասարակություն ստեղծելու հիմնաքարը:

Պլատոնի (մ.թ.ա. 427 – 347թթ.) «Հանրապետություն» իդեալական աշխատության մեջ փիլիսոփա առաջնորդները (Պահապանները) հավաքագրված ռազմիկների դասից (վարձկան զինվորներ) ղեկավարում են աշխատողներին և ստրուկներին ուժով և հորդորներով: Բացի այդ, ինչպես նկատում է Լեոն Հարոլդ Կրեգը, «Անաչառ դիտորդը չի կարող չգալ այն եզրակացությանը, որ (Պլատոնի «Հանրապետություն» աշխատության մեջ) պատերազմը դիտվում է որպես անվիճարկելի ճշմարտություն ինչպես քաղաքական կյանքի ներսում, այնպես էլ դրանից դուրս, և որ ցանկացած կարևոր որոշում ընդունելիս այդ փաստը հաշվի է առնվում», (Կրեգ՝ 1994թ. էջ 17, Սագան՝ 1979թ.): Արիստոտելի (մ.թ.ա. 384-322թթ.) «Քաղաքականության» մեջ ճիշտ քաղաքականություն վարելու դեպքում, անկախ նրանից, այդ քաղաքականության գլուխ կանգնած են մեկը, երկուսը, թե մի քանիսը, սեփականատերերը պետք է ունենան զինված բանակ, քանի որ այն պետք է ստրուկներին հնազանդեցնելու և թշնամիների ասպատակումները կանխելու համար: Ե՛վ Պլատոնը, և՛ Արիստոտելը կարևորում են ռազմական նպատակներով սպանություն գործելու անհրաժեշտությունը:

«Տիրակալը» տրակտատում շատերի կողմից սիրված Մաքիավելին (1469 – 1527թթ.) հստակ հիմնավորում է սպանելու անհրաժեշտությունը տիրակալների համար. նրանք պետք է սպանեն, որպեսզի կարողանան պահել իրենց իշխանական դիրքը, կարողանան ամրապնդել առաքինությունը, փառքն ու պատիվը իրենց տիրակալության ներսում: Ճիշտ է՝ ավելի լավ է ղեկավարել՝ օգտագործելով «աղվեսի» խորամանկությունն ու իմաստությունը, բայց անհրաժեշտության դեպքում՝ պետք է և կիրառել «առյուծի» կործանարար ուժը: Ըստ նրա շարքային ոստիկանները կոչված են հզորացնելու պետական կառավարման համակարգը:

Թոմաս Հոբսը (1588-1679թթ.) իր «Լևիաթան» երկում զարգացնում է պետությունների կողմից սպանություն գործելու անհրաժեշտության միտքը՝ ուղղված հասարակական կարգի պահպանմանը և հաղթանակների ապահովմանը պատերազմի ժամանակ: Քանի որ մարդիկ բնությունից մարդասպաններ են, ապա չհամակարգված կյանքի առկայությունը խաղաղ պետականության ներսում ստեղծում է արյունալի քաոս: Եվ քանի որ մարդկանց մոտ ուժեղ է նաև գոյատևման պայքարը, նրանք պետք է հոժարակամ ենթարկվեն կենտրոնական իշխանությանը, որն իրավունք ունի սպանել հանուն վերջիններիս անվտանգության՝ միաժամանակ իրեն վերապահելով ինքնապաշտպանական նպատակներով սպանելու իրավունքը: Հոբսը միայն մեկ քայլ է հեռու զինված ապստամբությունը արդարացնելու գաղափարից:

Նրա փոխարեն այս քայլն արեց Ջոն Լոկը (1632-1704թթ.) իր «Պետական կառավարման երկու տրակտատ» աշխատության մեջ: Լոկը համամիտ է Պլատոնի, Արիստոտելի, Մաքիավելիի և Հոբսի հետ, որ սպանելու պատրաստակամությունը կարևորագույն գործոն է քաղաքական իշխանության համար: Միայն թե նա ավելի հեռուն է գնում և արդարացնում հեղափոխական արյունահեղությունը: Երբ միապետական իշխանությունը վերածվում է բռնապետականի և խախտվում է անհատի կյանքի, ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ճնշված քաղաքացիները իրավունք ունեն տապալելու այդ իշխանությունը: Ինչպես որ մարդասպանը կարող է սպանվել

ապահով մի վայրում, այնպես էլ բռնապետը կարող է սպանվել քաղաքակիրթ հասարակության մեջ:

Տիրակալի համար «արյուն թափելու» կրկնակի արդարացումը Հոբսի և Լոկի կողմից հասցվեց տնտեսական դասակարգային պայքարի Կարլ Մարքսի (1818-1883թթ.) և Ֆրիդրիխ Էնգելսի (1820-1895թթ.) կողմից «Կոմունիստական Մանիֆեստ»-ում: Սեփականատերերի դասակարգը կարող է պաշտպանել իր շահերը արյուն թափելով: Բայց երբ նյութական և սոցիալական հարաբերությունները հասնում են օրհասական կետի, շահագործված դասակարգերը կարող են ապստամբել և ձևափոխել հասարակության տնտեսական ու քաղաքական կառուցվածքը: Ժողովրդավարության ժամանակակից պայմաններում հազվագյուտ են դեպքերը, երբ իշխանափոխությունը տեղի է ունենում խաղաղ ճանապարհով: Հետագայում՝ տնտեսական շահագործման ավարտի հետ կվերանա նաև դասակարգային արյունալի պայքարների արդյունքում ձևավորված պետական իշխանությունը, թեև անցումնային փուլում տնտեսական գործոնները շարունակ կստեղծեն սպանություն հրահրող նախադրյալներ:

Ստեղծագործելով Լոկի և Մարքսի «միջև», կիսելով Հոբսի գաղափարները՝ Ժան Ժակ Ռուսոն (1712-1778թթ.) իր «Սոցիալական պայմանագրում» ներկայացնում է «հասարակական պայմանագրի» տեսությունը որպես պետության քաղաքականության ձևավորման հիմք: Համախմբված քաղաքացիները հանդես են գալիս և՛ որպես սուվերեն իշխանության ներկայացուցիչներ, և՛ որպես պետության ենթականեր: Նրանք պարտավորվում են ենթարկվել ղեկավար իշխանությանը, որն ընդունում և կիրառում է «ընդհանուրի կամքից» բխող օրենքներ: Պայմանագրի համաձայն՝ պետությունն իրավունք ունի պատերազմ հայտարարել և նվաճել տարածքներ, դավաճաններին մահապատժի ենթարկել, իսկ հանցագործներին՝ սպանել: Ղեկավար մարմինը կարող է հրամայել քաղաքացիներին նվիրաբերել իրենց կյանքը հայրենիքին.

Երբ իշխանությունն ասում է քաղաքացուն.

- Պետությունը նպատակահարմար է գտնում, որ դու մեռնես, ուրեմն նա պիտի մեռնի, քանի որ.... նրա կյանքն այլևս բնության կողմից տրված պարգև չէ, այլ պետության պայմանական նվերն է իր քաղաքացուն:

Հասարակական պայմանագիր
Գիրք II, գլուխ V

[Quand le prince lui à dit: Il est expedient à l'État que tu mueres, il doit mourir; puisque. . . sa vie n'est plus seulement un bienfait de la nature, mais un don conditionnel de l'État.

Du contrat social
Livre II, chapitre v.]

Վերջին հաշվով Ռուսսոյի հասարակական, ժողովրդավարական պայմանագիրը փոխկապված է սպանությունների հետ:

20-րդ դարում Մաքս Վեբերը՝(1864-1920թթ.), Գերմանացի հայտնի քաղաքական տնտեսագետը և տեսաբան սոցիոլոգը իր «Քաղաքականությունը որպես կոչում և մասնագիտություն» աշխատության մեջ (առաջին անգամ դասախոսել է 1918թ. Մյունխենի համալսարանում), բացարձակապես ժխտում է այն միտքը, որ կարող է գոյություն ունենալ սպանություններից զերծ քաղաքականություն: Ըստ Վեբերի «բռնությունը հանդիսանում է վճռորոշ գործիք քաղաքականության ձեռքին»: Պատմականորեն գերակայող բոլոր քաղաքական հաստատությունները ոտքի են կանգնել իշխանության համար մղած դաժան պայքարի արդյունքում: Զարմանալի չէ, որ Վեբերը ժամանակակից պետության մոդելը բնորոշում է որպես «մարդկային

հասարակություն, որը (արդյունավետորեն) պահպանում է ֆիզիկական ուժի կիրառման օրինական մենաշնորհը կոնկրետ տարածքում (մեջբերումը բնօրինակից)»: Հետևաբար «նա, ով փնտրում է հոգու փրկություն իր և իր մերձավորների համար, չպետք է զբաղվի քաղաքականությամբ, քանի որ քաղաքականության առջև դրված հարցերը միանգամայն տարբեր են և դրանք կարող են լուծվել միայն ուժի գործադրման միջոցով [մեջբերում]» (Վեբեր 1958թ. 121, 78, 126):

Այս ամենից պարզ է դառնում, որ Վեբերյան հայացքները կիսող պրոֆեսորները և նույն տեսության հետևորդ փիլիսոփաները սպանություններից զերծ քաղաքականություն ու քաղաքագիտություն ստեղծելու գաղափարը պետք է համարեն «անիրատեսական»: Քաղաքական գործչի մասնագիտության հակիրճ ու հստակ նկարագիրը 1950-ական թվականներին տվեց ամերիկացի վաստակավոր մի քաղաքագետ, երբ երիտասարդ գործընկերը խնդրեց վերջինիս տալ «քաղաքականության» իր սահմանումը, թեմա, որի ուսումնասիրությամբ նա զբաղվել էր երկար տարիներ: Քաղաքագետը մի պահ ծխեց իր ծխամորճը և պատասխանեց.

- Ես ուսումնասիրում եմ սպանություններ գործելու պետության ընդունակությունը:

Ավելին, սպանելու վերաբերյալ փիլիսոփայության չգրված օրենքների արձագանքները, օրինված բռնությունն արդարացնող կրոնի կողմից, անդրադառնալով Միացյալ Նահանգների ողջ պատմության ու մշակույթի վրա, ամրագրեցին քաղաքացիների և գիտաշխատողների հավատը նրանում, որ հնարավոր չէ ստեղծել սպանություններից զերծ հասարակություն: Այդ արձագանքները լսվում էին Լեքսինգթոնի հրաձգություններում, որոնք ազդարարեցին Ամերիկյան հեղափոխության սկիզբը, Լոկի հիմնավորումներում, որոնք արդարացնում էին Անկախության դեկլարացիայով արգելված զինված ապստամբությունները և Նյու Հեմփշիրում հնչող հանդուգն կոչերում. «ապրել ազատ կամ մեռնել»: Դրանք հնչում էին «հանրապետության ռազմերթի երգերում», որտեղ փառաբանվում էր ունիոնիստների հաղթանակը կոնֆեդերատ ապստամբների նկատմամբ, ինչպես նաև «Դիկսիի» հանդուգն կրկներգում և «Ռազմածովային հիմն»-ում՝ որոնք հնչում էին ցամաքում և ծովում տեղի ունեցող հեռավոր ճակատամարտերի հաղթության ժամանակ:

Այդ արձագանքները լսվում են նաև այն քսանմեկ հրաձգություններում, որ արձակվում են Նախագահի (որը նաև երկրի գլխավոր հրամանատարն է) ինոգուրացիայի օրը՝ հիշեցնելով ազգի արյունալի անցյալի և ներկայիս ռազմական հզորության մասին: Ամբողջ մի հավերժություն նրանք հնչում են բոլոր այն տոնակատարություններում, որոնք ուղեկցվում են դրոշով, հիմնով և զինված պահակախմբով՝ առաջացնելով սեփական կյանքը զոհաբերելու և թշնամուն ոչնչացնելու հույզեր՝ սրբագործված նախագահական օրհնությամբ՝ «Աստված օրհնի Ամերիկան» (Տվեյն՝ 1970թ.)[1]:

Միացյալ Նահանգների ծնունդը, տերիտորիալ ընդլայնումը, ազգային համախմբումը և գերիզորությունը ձեռք է բերվել սպանությունների գնով: Զոհվածների և վիրավորների թիվը՝ բնիկ, թե այլազգի, զինվորական, թե խաղաղ բնակիչ, հավանաբար երբեք էլ չի ճշտվի, բայց այն փաստը, որ բռնությունն է ընկած Ամերիկյան պետության հիմքում, անժխտելի է:

Թող օտարազգի քաղաքագետները ևս մտորեն ու հասկանան, թե ինչ դեր են խաղացել բռնությունն ու սպանությունը սեփական քաղաքական համակարգերի ձևավորման գործում:

Նոր ազգը ծնվեց համազգային զինված ապստամբության պայմաններում՝ ուղղված գաղութային, ավտորիտար կառավարությանը, որը շարունակում էր իր ենթակայության տակ պահել ստրուկներին: Հանդես գալով ազատության դրոշի ներքո՝ նա ընդլայնեց իր իշխանության սահմանները տեղացիների արյունալից տարագրմամբ, հյուսիսային ու հարավային հարևանների վրա ճնշումներ գործադրելով և զավթելով բոլոր այն

սեփականատերերի ունեցվածքը, ովքեր նախընտրում էին առևտուրը պատերազմից: Պետությունը կերտեց իր ազգային ամբողջականությունը քաղաքացիական պատերազմի միջոցով, որի ժամանակ սպանվեց 74.542 կոնֆեդերատ զինվոր և զոհվեց 140.414 յունիոնիստ:

Ընդլայնելով իր տիրապետության սահմանները՝ ամերիկյան պետությունն իր իշխանությունը տարածեց Հավաիի (1898թ.), Պուերտո Ռիկոյի, Գուամի և Ֆիլիպինների (1989թ.), հարավային Սամոայի (1899թ.) և Խաղաղ օվկիանոսի կղզիների վրա (1945թ.): Ֆիլիպիններում նա ճնշեց հակագաղութային ապստամբությունը (1989-1902թթ.) և մահապատժի ենթարկեց նրա պարագլխին՝ Մուսլին Մորոսին (1901-1913թթ.): Ծովային հարձակում գործելու սպառնալիքով նա ստիպեց Ճապոնիային վերջ տալ մեկուսացման քաղաքականությանը և առևտուր սկսել այլ պետությունների հետ (1853-1854թթ.):

Պատերազմների ու զինված միջամտությունների միջոցով նոր ձևավորվող ազգը շարունակեց ընդլայնել ու պաշտպանել իր հետաքրքրությունների շրջանակը: Նա պատերազմներ էր մղում Բրիտանիայի (1812-1814թթ.), Մեքսիկայի(1846-1848թթ.), Իսպանիայի (1898թ.), Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքայի և Բուլղարիայի (1916-1918թթ.), Ճապոնիայի, Գերմանիայի և Իտալիայի (1941-1945թթ.), Հյուսիսային Կորեայի և Չինաստանի (1950-53թթ.), Հյուսիսային Վիետնամի (1961-75թթ.), Աֆղանիստանի (2001թ.) և Իրաքի հետ (1991թ., 2003թ.):

Զինված միջամտություններ իրականացվեցին Պեկինում (1900թ.), Պանամայում (1903թ.), Ռուսաստանում (1918-1919թթ.), Նիկարագուայում (1912-1925թթ.), Հաիթիում (1915-1934թթ.), Լիբանանում (1958թ.), Դոմինիկյան Հանրապետությունում (1965-1966թթ.) և Սոմալիում (1992թ.): Հարձակումների ու ասպատակությունների միջոցով ԱՄՆ-ն խառնվեց Կամբոջայի (1970թ.) և Լաոսի (1971թ.) գործերին, ճնշեց դիմադրությունները Լիբիայում (1986թ.), Աֆղանիստանում (1998թ.) և Սուդանում (1998թ.) և իր ռազմավարական հետաքրքրությունները պաշտպանելու վճռականություն դրսևորեց Իրաքում (1993թ.), Բոսնիայում (1995թ.) և Յուգոսլավիայում (1999թ.):

Համաշխարհային Երկրորդ պատերազմին հաջորդած 50 տարիների ընթացքում, ծավալելով լայնամասշտաբ պայքար հակակապիտալիստական պետությունների, հեղափոխականների և մյուս թշնամիների դեմ, Միացյալ Նահանգների արյունահեղ գործողությունները ընդգրկեցին ողջ երկրագունդը: Եթե Հեղափոխության ժամանակ երկրի զինված ուժերում հաշվվում էր 1500-ից քիչ մարդ, ապա 1990թ. բանակում հաշվվում էր արդեն 1.5 մլն տղամարդ և կին, որոնց հետևում կանգնած էին Պենտագոնյան 23 հազար ռազմագետներ, գիտական աշխարհի էլիտան և զենքերի ամենաառաջատար արտադրությունը աշխարհում. այս բոլոր ծախսերը կատարվում էին Նախագահի ու Կոնգրեսի հավանությամբ հարկատուների կողմից բյուջե մուտքագրվող տարեկան նվազագույնը քառորդ տրիլիոն դոլարներից: Համեստ հաշվարկներով երկրի ատոմային զենքերի արտադրման ազգային ծրագրի արժեքը միայն 1940-1996թթ. կազմել է 5.821 տրիլիոն դոլար (Սկվարց, 1998թ.): Միացյալ Նահանգները տեղակայել էր ավելի մեծ թվով բազաներ և ռազմական ուժեր արտասահմանյան երկրներում, կնքել ավելի շատ թվով ռազմական դաշինքներ և վերապատրաստել ու զինել ավելի մեծ թվով այլազգի զինվորներ (սպանելու համար իր թշնամիներին, երբեմն ընկերներին և անգամ սեփական բնակչությանը), քան ցանկացած այլ երկիր: Նույն ժամանակահատվածում Ամերիկան դարձավ զենքերի առաջատար մատակարարը զենքի մրցունակ ու շահութաբեր միջազգային շուկայում: Տեխնիկական հագեցվածությունը հնարավորություն է տալիս Նահանգներին մահացու հարված հասցնել տիեզերքի ցանկացած կետում՝ ցամաքում, ծովում թե օդում՝ կիրառելով ամենակործանարար զենքերը, որ երբևէ կարող էր ստեղծել մարդկությունը սպանելու նպատակով: 1776թ. Անկախության Դեկլարացիայի հռչակումից մինչև 1990-ական թվականները այունալի

մարտերի միջով անցած Միացյալ Նահանգները հռչակեց իրեն որպես «աշխարհի միակ ռազմական գերտերությունը և ամենազարգացած տնտեսություն ունեցող երկիրը աշխարհում» (Նախագահ Ուիլյամ Ջ. Քլինթոնի ուղերձը բնակչությանը 1993թ. փետրվարի 19-ին): ԱՄՆ Զինված Ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտերի նախագահ, գեներալ Ջոն Շալիկաշվիլու խոսքերով Միացյալ Նահանգները դարձել է «գլոբալ հետաքրքրություններով» «գլոբալ տերություն»: 1995 թվականին, տոնելով ատոմային ռմբակոծության շնորհիվ Ճապոնիայի նկատմամբ տարած հաղթանակի 15-րդ հոբելյանականը, Հավայան կղզիներում ունեցած ելույթի ժամանակ նախագահն այսպես դիմեց այդտեղ հավաքված զինվորականներին.

- Դուք միշտ լինելու եք լավագույն զինվորական պատրաստվածություն անցած և լավագույն զինվորական տեխնիկայով համալրված բանակը աշխարհում:

Ավելի ուշ նա հայտարարեց.

- Մենք պիտի շարունակենք մնալ ամենաուժեղ պետությունը երկրի վրա, որպեսզի պարտության մատնենք մեր դարաշրջանի բոլոր չար ուժերին:

Այս վճռականությունն իր արտացոլումը գտավ գլխավոր շտաբի նախագահ Ռոնալդ Ֆոգելմանի՝ ռազմաօդային ուժերի ստրատեգիկ պլանավորման վերաբերյալ արած մեկնաբանության մեջ.

- Մեր նպատակն է գտնել, ֆիկսել, հետապնդել և նշանառության տակ առնել երկրագնդի վրա շարժվող ամեն ինչ:

Ավելի ուշ նա բացահայտեց.

- Մենք կարող ենք դա անել հիմա, բայց դա չի լինի ժամանակին համընթաց: (Ելույթ Վաշինգտոնի Հերիթիջ Ֆաունդեյշնում, 13 դեկտեմբերի, 1996թ.):

20-րդ դարավերջը ամերիկացի առաջնորդները, հավատարիմ սովորությանը, հռչակեցին «ամերիկյան դարաշրջան»՝ ցուցաբերելով վճռականություն երրորդ հազարամյակի առաջին հարյուրամյակը դարձնել «Ամերիկայի երկրորդ դարաշրջան»: Ակնհայտ է, որ բռնության նմանատիպ արժեքների առկայության պայմաններում անհնար է պատկերացնել «սպանություններից զերծ Ամերիկա»: Սպանությունների կամ դրանք իրագործելու սպառնալիքների միջոցով ձեռք բերվեց ազգային անկախությունը, վերջ դրվեց մարդկային ստրկությանը, ֆաշիզմին ու Հոլոքոստին, փրկվեց ատոմային ռմբակոծության պատճառով վտանգված ճապոնացիների կյանքը, կանխվեց Կոմունիզմի համաշխարհային տարածումը, փլուզվեց Սովետական կայսրությունը... և այս ամենից հետո Նահանգներն իրեն իրավունք է վերապահում ստանձնել այն առաջատարի դերը, ով 21-րդ դարում կերաշխավորի և կապահովի ժողովրդավարության ու կապիտալիստական տնտեսական համակարգի տարածումը ամբողջ աշխարհում:

Մինչդեռ քաղաքագիտություն ուսումնասիրող ամերիկացիներին՝ բազմավաստակ պրոֆեսորներից մինչև առաջին կուրսի ուսանողներ, պետք չէ ո՛չ փիլիսոփայություն և ո՛չ էլ ազգային քաղաքական ավանդույթ՝ հասկանալու համար այն, որ սպանություններից զերծ հասարակություն գոյություն չունի: Ամենօրյա կյանքում տեղի ունեցող սպանությունները գալիս են հաստատելու սա:

Ամեն տարի մոտավորապես 15 հազար ամերիկացի է սպանվում իր համերկրացիների ձեռքով (14.180 մարդ սպանվել է 2008թ., 5.4% յուրաքանչյուր 100 հազար մարդուց, որը 1.2%-ով ավելի 1900թ. համեմատությամբ և 5.7%-ով ավելի 1945թ. համեմատությամբ): Բերված թվերը չեն ներառում «արդարացված սպանությունները» իրականացված ոստիկանության կամ անհատ քաղաքացիների կողմից (համապատասխանաբար 371 և 245 դեպքեր 2008թ.): Երկրորդ համաշխարհայինի ավարտից ի վեր սպանությունների ընդհանուր թիվը (առնվազն 750.000մարդ) գերազանցել է խոշորագույն պատերազմներին տված զոհերի թիվը (650.053մարդ): Մարդասպանությունների շարքին են դասվում նաև «զինված հարձակումները» (834.885 սպանության դեպքեր 2008թ.,

այսինքն 274.6 սպանության դեպք 100.000 բնակչության կտրվածքով), որոնք հաճախ դառնում են մահվան կամ ծանր վնասվածքների պատճառ (Հետաքննությունների դաշնային բյուրո, 2009թ.): Ինքնասպանությունն առավել քան մարդասպանությունը նպաստում է կյանքին վերջ դնելու դեպքերի աճին ամերիկյան քաղաքացիական հասարակության մեջ (33.600 դեպք 2006թ., 10.9% յուրաքանչյուր 100.000մարդու համար): Ինքնասպանության փորձերը քսանհինգ անգամ ավելի են, քան սպանության դեպքերը: Տարեկան կտրվածքով կատարվող աբորտների թիվը գնահատվում է ավելի քան 1 մլն:

Ամերիկացիները սպանում են ծեծելով, գլխատելով, այրելով, ջրախեղդ անելով, կախելով, սուր կտրող գործիքներով, թունավորելով և հիմնականում հրազենային կրակոցներով (66.9% 2008թ.): Սպանությունները լինում են կանխամտածված, սպոնտան, պրոֆեսիոնալ և պատահական: Սպանություն ծնող պատճառներն են ամուսնական զույգերի, երեխաների, տարեցների նկատմամբ բռնությունը, վիճաբանությունները, հարբած ծեծկռտուքները, թմրադեղերի վաճառքը, խուլիգանական քաշկռտուքները, ազարտային խաղերը, խանդը, երեխաների առևանգումը, մարմնավաճառությունը, բռնաբարությունը, թալանը և «աստվածային» կամ «սատանայական» պատգամները: Չկա ապահով մի վայր. սպանում են տանը, դպրոցում, փողոցում, մայրուղիներում, աշխատավայրում կամ եկեղեցում, բանտում, զբոսայգիներում, փոքր և մեծ քաղաքներում, բնության գրկում և անգամ Վաշինգտոնի Կապիտոլիումի շենքում: Զոհերին սպանում են առանձին-առանձին, հերթով, խմբերով կամ պատահական ընտրությամբ. զոհերը հիմնականում տղամարդիկ են (78.2% 2008թ.): 1976-1985թթ. սպանված ամուսնական զույգերի թվում «գերակշռում» են կանայք (9.480 կին և 7.115 տղամարդ) (Մերսի և Սալցման, 1989թ.): Մարդասպանները անհատներ են, զույգեր, խմբավորումներ, աղանդավորներ, մաքսանենգներ, ահաբեկիչներ և անգամ պետական ծառայողներ: Այն մարդասպանները, որոնց անունը հայտնի է, հիմնականում տղամարդիկ են (1.176 կանանց համեմատ 10.568 տղամարդ 2008թ.) և նրանց մեջ գնալով շատանում են երիտասարդները: 1980թ. տվյալներով «յուրաքանչյուր ամերիկացու համար սպանության զոհ դառնալու հավանականությունը կազմում է սպիտակների համար մեկը՝ 240-ի հարաբերակցությամբ, իսկ սևամորթների և այլ ազգային փոքրամասնությունների համար՝ մեկը 47-ի հարաբերակցությամբ» (տես՝ Ռոզենբերգ և Մերսի, 1986թ., էջ՝ 376): Ի պատասխան 1998թ. հունվարի 27-ի նախագահ Քլինթոնի զեկույցի՝ Սենատում մեծամասնություն կազմող Հանրապետական կուսակցության առաջնորդ Տրենտ Լոտը, ելույթ ունենալով ազգային հեռուստատեսությամբ, նկատեց. «Քրեական հանցագործությունները մեր պետությունը ազատ երկրից վերածում են ահ ու սարսափի երկրի»:

Զանգվածային լրատվամիջոցները ամեն օր տեղեկություններ են հաղորդում երկրում կատարվող սպանությունների մասին: Աղջիկը կտրում է մոր գլուխը, այնուհետև մոտենալով ոստիկանատանը՝ մեքենայի պատուհանից մայթին է նետում մոր կտրված գլուխը: Մայրը ջրախեղդ է անում երկու որդիներին կամ, հակառակը, երկու որդիները սպանում են ծնողներին: Սերիական մարդասպանը հետապնդում է մարմնավաճառներին, համասեռամոլը գայթակղում, անդամահատում, սառեցնում և ուտում է երիտասարդ զոհերի մարմնի մասերը: Դիպուկահարը սպանում է 15 մարդ համալսարանում: Գյուղի միջնակարգ դպրոցում սովորող երկու տղաներ հրացաններով սպանում են 4 դասընկերուհիներին և ուսուցչին՝ մարմնական վնասվածք հասցնելով մեկ այլ ուսուցչի և 9 դասընկերների: Կոլորադոյի Լիթլթոն ավագ դպրոցի երկու տղաներ՝ մինչև ատամները զինված, հրազենային վնասվածք են պատճառում 28 հոգու, որից հետո ինքնասպանություն գործում: 1992-2006թթ. ընթացքում 11-ից մինչև 18 տարեկան դպրոցականներ սպանում են 330 համադպրոցականների, ուսուցիչների և ծնողների: Մի

մարդ ավտոմատ հրազենից բացած կրակահերթով սպանում է քաղաքի դպրոցներից մեկի խաղահրապարակում վազվզող աշակերտներին: Վիետնամական պատերազմի վետերանը գնդացիրից կրակ է բացում Արագ սննդի ընտանեկան ռեստորանում գտնվող հաճախորդների վրա՝ սպանելով 20 և վիրավորելով 13 հոգու: Մեկ այլ վետերան՝ պաշտպանիչ համազգեստով, սպանում է եկեղեցում աղոթք ասողներին՝ բղավելով.

- Մինչև այս պահը սպանել եմ հազար մարդ, սպանելու եմ ևս հազարին:

Միմյանց նկատմամբ դրսևորվող սարսափելի ագրեսիայի (ըստ Հոբսի) և Վեբերյան պետականության հանդեպ ցուցաբերած Լոկյան արհամարհանքի հետևում կանգնած է զինված մարդկանց մի բանակ, որն իր ենթակայության տակ ունի առնվազն 70 մլն հրացան, 65 մլն ատրճանակ, 49 մլն կարճափող հրացան և 8 մլն այլ տեսակի երկարափող հրացաններ (Կուկ և Լյուդվիգ, 1997թ.): Առևտրային նպատակով զենքի արտադրությունը, վաճառքը, ներկրումն ու արտահանումը ամենաշահութաբեր բիզնեսն է, որով զբաղվում են տասնյակ հազարավոր օրինական ու անօրինական առևտրականներ: Ամերիկայում 44մլն չափահաս տանը պահում է զենք, այսինքն միջին հաշվով ամերիկյան ընտանիքների մեկ երրորդը տանը զենք ունի: Երեխաների մեծ մասը գիտի, թե որտեղ են դրանք պահված, չնայած որ ծնողները հակառակն են կարծում:

ԱՄՆ-ի առաջին տիկին Հիլլարի Քլինթոնը, վկայակոչելով Երեխաների պաշտպանության հիմնադրամի կողմից ներկայացված վիճակագրական տվյալները, զեկուցեց, որ ամեն օր 135 հազար երեխա իր հետ դպրոց է տանում հրացաններ և այլ տեսակի զենքեր (Հիլարի Քլինթոնի ելույթը Նոր Հեմփշիր նահանգի Նաշու քաղաքում 1996թ. փետրվարի 22-ին): Քաղաքացիներն իրավունք ունեն զենք պահել ինքնապաշտպանության, որսորդության, հոգեկան հանգստի պահպանման և պետական կամայականությունների դեմ պայքարելու նպատակներով: 1971թ. այս իրավունքն ամրագրվեց ԱՄՆ-ի Սահմանադրական բարեփոխումների երկրորդ փուլում. «Մարդիկ իրավունք ունեն զենք պահել և կրել այնքան ժամանակ, քանի դեռ ազատ պետականության անվտանգությունը ապահովող ոստիկանական համակարգ չի ստեղծվել»:

Ընտանեկան բռնության մահացու դեպքերը կանխելու նպատակով Միացյալ Նահանգներն ունի նաև լավ զինված ոստիկանություն, որի կազմի մեջ մտնում են ֆեդերալ գործակալները, նահանգային և մունիցիպալ ոստիկանությունը (836.787 ոստիկան 2004թ., 100.000 բնակչության կտրվածքով՝ 340 ոստիկան): 2008թվականի ընթացքում սպանվել է քառասունմեկ ոստիկան (Հետաքննությունների դաշնային բյուրո, 2009թ.): Անհրաժեշտության դեպքում ոստիկանների շարքերը համալրվում են ԱՄՆ-ի Ազգային Գվարդիայի ստորաբաժանումների և Զինված Ուժերի ծառայողներով:

Բանտի պահակախումբը հսկում է ավելի քան 1.8մլն բանտարկյալների՝ դատապարտված տարբեր ծանրության հանցանքներ գործելու համար, որոնցից 3.220-ը 2007թ. դատապարտվել են մահվան (Արդարադատության դեպարտամենտի կողմից տրամադրված տվյալներ, 2009թ.): Մահապատիժ կիրառվում է պետական հանցագործների նկատմամբ հիսուն նահանգներից երեսունվեցում: 1977-2007թվականների ընթացքում իրականացվել է թվով 1099 մահապատիժ: 20-րդ դարավերջին, հանցագործությունների և ակնհայտորեն անվերահսկելի բռնության դեպքերի աճով պայմանավորված, մարդիկ պահանջում են վերականգնել մահապատիժը, ավելացնել դրանց թիվը, փողոցներում կանգնեցնել ավելի շատ թվով ոստիկաններ, երկարացնել ազատազրկման ժամկետները և կառուցել ավելի մեծ թվով բանտեր:

Բռնությունն ընկած է ամերիկյան հասարակության հիմքում և ամրակայված է նրա մշակույթով: Պաշտոնապես թե ոչ, օրինական ճանապարհով թե անօրինական մարդկանց սովորեցնում են սպանել: Ավելի քան 25մլն պատերազմի վետերաններ են

վերապատրաստվել «սպանության բնագավառում» (1997թվականի ընթացքում վերապատրաստվել է 25.551.000 վետերան): Շատ միջնակարգ և ավագ դպրոցներ, բածրագույն ուսումնական հաստատություններ ու համալսարաններ իրենց կրթական ծրագրերում ներառել են զինվորական պատրաստվածության դասընթացներ: Գործարար աշխարհի ներկայացուցիչներին սովորեցնում են սպանել ինքնապաշտպանական նպատակներով: Ոստիկանության մասնավոր ստորաբաժանումների աշխատակիցներին նախապատրաստում են մարտական գործողությունների համար, փողոցային ավազակախմբերը համախմբվելով սպանություններ են գործում, բանտերը հանդես են գալիս որպես «խոշտանգման» դպրոցներ: Վարձու մարդասպաններին նվիրված ամսագրերում ներկայացվում են մարտեր վարելու տեխնիկաները, ինչպես նաև տեղադրվում են գովազդներ զենքերի վաճառքի և մարդասպաններ վարձելու վերաբերյալ: Վիդեո և համակարգչային խաղերը ներգրավում են երիտասարդ «խաղամոլներին» ամենատարբեր մարտական գործողությունների մեջ՝ փողոցային ծեծկռտուքից սկսած մինչև ցամաքում, օդում, ծովում և տիեզերքում մղվող մարտեր, որոնց համար օգտագործվում է մահացու տեսարաններ ստեղծող տեխնոլոգիաների լայն շրջանակ: «Վիրտուալ իրականության» ինդուստրիան վաճառում է «ադրենալին» առաջացնող ժամանցային խաղեր «սպանի՛ր կա՛մ կսպանվես» մոտիվներով:

Կգա ժամանակ, երբ համակուրսեցիների «ոչնչացումը» կդառնա «սիրված» խաղ ուսանողների շրջանում, քանի որ իրական սպանություններն ու դրանց իմիտացիաները խաղալիք զենքերով մանկական զվարճանքների տրամաբանական շարունակությունն են:

Հեռուստատեսությունը և զանգվածային լրատվամիջոցները ակամա վարժեցնում են սպանությանը և մարդկային կյանքի արժեզրկմանը՝ մուլտֆիլմներ, ֆիլմեր, ռադիո և հեռուստահաղորդումներ, երգեր, գրքեր, ամսագրեր և կոմերցիոն գովազդներ ստեղծելու միջոցով: Մանկությունից մինչև պատանեկություն բռնության հազարավոր տեսարաններ են դրոշմվում երիտասարդների գլխում, տեսարաններ, որոնք պատկերում են, թե ինչպես են մարդիկ, կալվածքները, կենդանիները և բնությունը անողոքաբար ոչնչացվում հերոսների և չարագործների կողմից: Ավելի ուշ դաժանություն ու արյունահեղություն պատկերող այս տեսարանները համալրվում են էրոտիկ տեսարաններով՝ հատկապես առկա բռնության դրվագներով հարուստ կինոգովազդներում՝ որտեղ սեռական հրապուրանքը ենթագիտակցորեն կապակցվում է սպանելու գայթակղության հետ:

Մարդկային պատմության ողջ ընթացքում կենդանի գիտակցությունը երբեք չէր բախվել այսքան շատ թվով արյունալի տեսարանների: Ապագա կոմանդոսների և վարձու մարդասպանների մոտ սպանության հանդեպ տհաճությունը վերացնելու լավագույն տարբերակը համարվում է անմարդկային դաժանություններով հարուստ ֆիլմերի դիտումը գլուխը հատուկ հարմարանքի մեջ ամրացրած, աչքերը լայն բացած (Վաթսոն՝ 1978:248-51) և տպավորություն է ստեղծվում, թե ողջ ազգն է կորցնում կյանքի նկատմամբ ունեցած հարգանքը՝ փոխարենը սկսելով սառնասրտորեն վերաբերվել սպանությանը: Դատավորները վկայում են, որ անչափահաս մարդասպանները գնալով ավելի քիչ են հարգում մարդկային կյանքը: Բայց որքան էլ վնասակար լինեն բռնություններով հագեցած տեղեկատվական միջոցները, դրանք օգտակար են պետությանը, որ կարիք ունի հայրենիքին նվիրված պրոֆեսիոնալ մարդասպանների: Այս ամենն իր խորը արտացոլումը գտավ 1մլն դոլար արժողությամբ զորակոչը գովազդող տեսահոլովակում, որը հեռարձակվեց հեռուստատեսությամբ Ամերիկյան ֆուտբոլի Սուպերգավաթի խաղարկության ժամանակ: Միլիոնավոր հանդիսատեսների աչքի առաջ մարտական վիդեոխաղից վերցված միջին դարերի ասպետը փոխակերպվում է մեր ժամանակների ԱՄՆ Նավատորմիղի դեսանտի, որը, սուսերը ձեռքին, պատվի է կանգնում:

Սպանության փիլիսոփայությունը արտացոլվում ու ամրակայվում է նաև լեզվում՝ ձեռք բերելով բնական ու անխուսափելի իրողության իմաստ: Ամերիկյան տնտեսությունը հիմնված է ազատ ձեռնարկատիրական կապիտալիզմի վրա: Ամերիկացիները խոսում են «սպանության մասին բաժնետիրական շուկաներում». Ուոլ Սթրիտում հաճախ ասում են.

- Գնումներ կատարեք, երբ փողոցներում ամենուր «արյուն է թափված»: Մինչդեռ բիզնես ընկերությունները մրցում են «գնային պատերազմներում»:

Ամերիկյան քաղաքականությունը հիմնված է ազատ ընտրական ժողովրդավարության վրա: Նախընտրական շտաբի աշխատակիցները կոչվում են «զորքեր» կամ «հետևակ զինվորներ», օրենքները «ոչնչացվում են» գործադիր մարմինների կողմից, մինչդեռ ազգը «պայքարում է» աղքատության, հանցագործության, թմրամոլության և այլ խնդիրների դեմ:

Ազգային սպորտը բեյսբոլն է: Զայրացած երկրպագուներն իրենց դժգոհությունը սովորաբար արտահայտում են «մա'հ դատավորին» կոչերով: Մարզական մեկնաբանները ուժեղ թիմերին կոչում են «սպանողներ», խաղացողները կոչվում են «զենքեր», հարվածները՝ «դիպուկ ականներ», իսկ պարտվող թիմերի համար ասում են՝ «զուրկ են սպանելու բնազդից»:

Հպարտանալով իրենց հավատքի ազատությամբ, երկրպագելով Խաղաղության Արքայազնին՝ Հիսուս Քրիստոսին, ամերիկացիները երգում են.

- Առա'ջ Քրիստոսի զինվորներ և, Խաչակրաց արշավանքների ու Ռեֆորմացիայի ոգով տոգորված, որպես «Խաչի զինվորներ» խմբովի բարձրանում են «Հակոբի սանդուղքով»:

Ազատ պահերին ամերիկացիները մտածում են «ժամանակը սպանելու» մասին:

Ավելի ու ավելի գիտակցելով ռասիստական ու սեքսուալ լեզվի վնասակարությունը՝ ամերիկացիները նույն անփութությամբ շարունակում են իրենց բառապաշարում օգտագործել սպանությանն առնչվող բառեր: Ամերիկյան անգլերենի լեզվաբանական «զինանոցում» կան տերմիններ, որոնք հիշողության մեջ արթնացնում են պատմությանը երբևէ հայտնի բոլոր զինատեսակները, դրանք կիրառելու ձևերը և էֆեկտները: Դավաճանությունը «հարված է թիկունքից», բյուջեն «գլխատված է», «փորձել»-ուն այլ կերպ ասում են «փորձնական կրակոց արձակել», մտքերը «տորպեդահարվում են», ընդդիմության փոխարեն գործածում են «զենիթային հրետանի» տերմինը և որոշակի գործողությունների հետևանքները կոչվում են «ռադիոակտիվ նստվածքներ», իրավաբանները «ծանր հրետանիներ» են, գեղեցիկ կինոաստղերը՝ «շիկահեր ռումբեր»:

Մյուս կողմից սպանության իրական փաստերը սովորաբար քողարկվում են մեղմախոսություններով: Աշխարհում առաջին ատոմային ռումբը, որ կոչվում էր «Մանկիկ» նետվեց Հիրոսիմայի վրա B-29 ռմբակոծիչից, որը կրում էր «Էնոլա Գեյ» անունը ի պատիվ օդաչուի մայրիկի: Հաջորդը պլուտոնիումից պատրաստված «Գիրուկ» արկն էր, որ նետվեց Նագասակիի վրա «Բոկի մեքենայից»: Միջցամաքային ատոմային հրթիռները՝ ընդունակ սպանելու քաղաքաբնակ մարդկանց մեծաթիվ զանգվածների, կոչվեցին «հաշտարարներ»: Պատերազմական գործընթացների համար կիրառելով սպորտային տերմիններ՝ մարդասպաններ պատրաստելու զինվարժանքները կոչվեցին «խաղեր»: Քաղաքացիների կամ հենց իրենց իսկ զինվորների սպանությունը մարտերի ժամանակ անվանվեց կողմնակի վնաս»: Եվ վերջապես 1993թ. Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակված հեռուստահաղորդման ընթացքում ԱՄՆ նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանի կողմից «Ամերիկան հայտարարվեց ժամանակի ամենաքիչ պատերազմող և ամենախաղաղասեր պետությունն է»:

Սպանության առանձին դեպքերը Ամերիկայում պարբերաբար վերածվում են զանգվածային բռնությունների համաքաղաքացիների միջև և քաղաքացիների ու կառավարության միջև: 1992թ., ի պատասխան սևամորթ քաղաքացու նկատմամբ

ոստիկանների ցուցաբերած դաժան վարքագծի արդարացման, Լոս Անջելեսի հարավային շրջանում տեղի ունեցած փոխհրաձգության, կողոպուտի և հրդեհների արդյունքում սպանվել է 52 մարդ, 2000-ը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել, 8000 հոգի բանտարկվել է: Դրան հաջորդող երկու ամիսներին 70հազ. հրազեն է վաճառվել շրջակա տարածքի ահաբեկված բնակչությանը: Այս արյունահեղությունը հիշեցնում է նմանատիպ սպանությունները Ուոթսում(34 զոհ 1967թ.), Նյուարկում (26զոհ 1967թ.) և Դեթրոյտում (46 զոհ 1967թ.), ինչպես նաև մարդկային կյանքի կորուստները 18-րդ և 19-րդ դարերում ստրուկների բարձրացրած ապստամբությունների ժամանակ: Դեթրոյտում հասարակական կարգը վերականգնելու համար պահանջվեց 4700 դեսանտ, 1600 ազգային գվարդիական և 360 շարքային հեծելակ Միչիգանի նահանգից: (Լոկ 1969թ.):

Հոբս-Վեբեր պետականության պատկերը Լոկի Երկրորդ բարեփոխումների հետ կապակցելու հետևանքների վառ ապացույցն եղան 1993թ Տեխաս նահանգի Վակո քաղաքի սպանությունները. և 1995թ. Օկլահոմա նահանգի Օկլահոմա քաղաքի սպանությունները: Վակոում կառավարության զինված ուժերը փորձում էին օրենքի ուժը գործադրել զինված կրոնական մի շարժման դեմ. 4 ոստիկան սպանվեց, տասից ավելի ոստիկաններ վիրավորվեցին, իսկ շարժման 89 անդամներ՝ այդ թվում կանայք և երեխաներ, մահացան սարսափելի ինքնահրդեհման ժամանակ: Այս ողբերգության երկրորդ տարելիցին ակնհայտ վրիժառությամբ տոգորված պետության մի թշնամի, բեռնատար ավտոմեքենայում տեղադրված պայթուցիկը գործի դնելով, ավերեց Օկլահոմա քաղաքի կառավարական շենքը, որի արդյունքում զոհվեց 168 մարդ, այդ թվում՝ կանայք և երեխաներ:

Եթե ամերիկացիները տեսնեն, թե ինչ է կատարվում սեփական երկրի սահմաններից դուրս, ապա կգտնեն բազում ապացույցներ ամրապնդելու համար այն խորին համոզմունքը, որ հնարավոր չէ ստեղծել սպանություններից զերծ հասարակություն: 20-րդ դարը՝ մարդկության պատմության մեջ ամենաարյունալիցը, ի ցույց դրեց զանգվածային սպանություններ կատարելու մարդկային ուժն իր ողջ զորությամբ: Ռուդոլֆ Ջ. Ռամմելի կողմից կատարված հետազոտությունները թույլ են տալիս դիտարկել արյունահեղությունը պատմական և համաշխարհային տեսանկյունից: Տարբերակելով «դեմոցիդը» (սեփական ժողովրդի հանդեպ սպանդը ցեղասպանության, բնաջնջման, զանգվածային սպանությունների և արհեստականորեն առաջացրած սովի միջոցով) և մահը «պատերազմի» դաշտում (համաշխարհային, տեղական, քաղաքացիական, հեղափոխական և պարտիզանական), Ռամմելը «վերապահումներով» հաշվարկում է պատմության գիրկն անցած սպանությունների ծավալի մեծությունը, որը բերված է աղ. 1-ում.

Աղյուսակ 1. Դեմոցիդի և պատերազմի զոհերի թիվը առ 1987թ.

	Մինչև 1900թ.	**1900-1987թթ.**	**Ընդամենը**
Դեմոցիդ՝	133.147.000	169.198.000	302.345.000
Պատերազմներ՝	40.457.000	34.021.000	74.478.000
Ընդամենը՝	173.604.000	203.219.000	376.823.000

Աղբյուր՝ Ռումմել 1994թ., աղ. 1.6, 66-71էջ.

Այսպիսով համարյա 400մլն մարդ է զոհ գնացել քաղաքական սպանություններին՝ չհաշված մարդասպանությունները: Դեմոցիդների մեծ մասը Ռումմելը վերագրում է կոմունիստական վարչակարգին, երկրորդ տեղում տոտալիտար և ավտորիտար վարչակարգերն են և վերջում՝ ժողովրդավարական վարչակարգերը: Ամերիկացիների հիշողության մեջ դեռ թարմ է հիտլերյան Հոլոքոստը, ստալինյան ռեպրեսիան, ճապոնական ագրեսիան և մաոիստական վարչակարգի սպանությունները:

Ուիլյամ Ջ. Էկհարդի և նրա հետևորդների հաշվարկներով 1900-1995թթ. ընկած ժամանակահատվածում պատերազմներին զոհ է գնացել առնվազն 106.114.000 մարդ՝ ներառյալ 62.194.000 խաղաղ բնակիչ և 43.920.000 զինվորական (Սիվարդ 1996:19): Սպանությունները չեն դադարել նաև «Սառը պատերազմի» «խաղաղ» ժամանակահատվածում: 1945-1992թթ. միջին հաշվարկներով 22.057.000 մարդ է սպանվել 149 պատերազմների ընթացքում՝ ներառյալ 14.505.700 խաղաղ բնակիչ և 7.552.000 զինվորական (Սիվարդ 1993:20-1): Միայն 1996թվականին տեղի է ունեցել առնվազն երեսուն պատերազմ:

Հեռուստացույցների էկրաններին պարբերաբար հայտնվում են արյունահեղության տեսարաններ աշխարհի տարբեր մասերից, նրանցից մի քանիսի հիմքում ընկած է վաղեմի թշնամությունը, մյուսները հետևանք են վերջերս առաջացած տարածայնությունների, որոնք խորացել են միայն այն պատճառով, որ արդի հասարակությունը չի տիրապետում խնդրին ճիշտ լուծում տալու հմտություններին: Մի սարսափելի ճգնաժամին փոխարինում է մեկ ուրիշը և տվյալ զանգվածային լրատվամիջոցը, կարճ ժամանակով կենտրոնանալով նրանցից մեկի վրա, այնուհետև անցնում է մյուսի լուսաբանմանը: Արյունահեղությունները դրսևորվում են ամենատարբեր ձևերով, և նրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած է սպանելու պատրաստակամությունը: Դրանք են միջազգային, քաղաքացիական պատերազմները, հեղափոխությունները, տարածքային ամբողջականության համար մղվող պատերազմները, տարածաշրջանային անհամաձայնությունները, ահաբեկչական գործողությունները, ռազմական հեղաշրջումները, ցեղասպանությունները, էթնիկական, կրոնական մոտիվներով սպանությունները, քաղաքական սպանությունները, օտար միջամտությունները և արյունալի գործողությունների հետևանքով առաջացած հաշմանդամությունն ու կորուստները: Երբեմն այլ երկրների հետ հակամարտությունները բերում են ամերիկացիների մահվանը իրենց իսկ երկրում, ինչպես եղավ Համաշխարհային Առևտրի Կենտրոնի պայթեցումը Նյու Յորքում 1993թ. իսրայելական քաղաքականությունը սատարող հակառակորդների կողմից, որի արդյունքում 6 մարդ զոհվեց, իսկ հազար մարդ վիրավորվեց: Կամ արտերկրում կազմակերպվող ահաբեկչությունները, ինչպես պատահեց 1998թ., երբ Նայրոբիում և Դար էս Սալաամիում տեղակայված Ամերիկյան դեսպանատների մոտ միաժամանակ պայթեցին բեռնատար ավտոմեքենաները, որի արդյունքում 12 ԱՄՆ քաղաքացի և 300 աֆրիկացիներ զոհվեցին, իսկ մոտավորապես 5 հազար մարդ վիրավորվեց:

2001թ. սեպտեմբերի 11-ին «Ալ Կաիդա» խմբակցությանը հարող 9 անդամներ, որպես զինամիջոց օգտագործելով առևանգված չորս ուղևորատար ինքնաթիռները, գրոհեցին Համաշխարհային Առևտրի Կենտրոնի երկվորյակ աշտարակները Նյու Յորքում և Պենտագոնի շենքը Վաշինգտոնում, բայց չհասան Կապիտոլիումին: Այս ահաբեկչությանը զոհ գնացին 2986 մարդ: Միացյալ Նահանգների պատասխանը եղավ ԱՄՆ զորքերի ներխուժումը Աֆղանստան 2001թ. հոկտեմբերի սկզբին, որին հաջորդեց Իրաքյան պատերազմը 2003թ.:

Ճանապարհելով անցնող 20-րդ դարը՝ Հոբսի ուսմունքի հետևորդ ամերիկյան քաղաքական առաջնորդները կարող են ասել. «աշխարհն ապրում է ջունգլիների

օրենքով» և կրկնել հռոմեական կայսրության կործանման ժամանակներում հայտնի թևավոր խոսքը. «Եթե ուզում ես խաղաղություն, պատրաստ եղիր պատերազմի» (Si vis pacem para bellum):

Զարմանալի չէ, որ հեթանոսական հավատալիքներով, փիլիսոփայական մտքերով, հայրենասիրական հայացքներով, գովազդող լրատվամիջոցներով, մշակութային սովորույթներով և գլոբալ արյունահեղություններով հարուստ այս իրավիճակներում հայտնված ամերիկացի քաղաքագետներն ու նրանց ուսանողները միանշանակ ժխտում են սպանություններից զերծ հասարակություն ստեղծելու հնարավորությունը: Երբ այս հարցը բարձրացվեց համալսարանականների շրջանում, ապա ուսանողները ևս բերեցին հետևյալ փաստարկները՝ մարդկային էություն, տնտեսական ծանր վիճակ, սեռական և այլ տիպի ոտնձգություններից պաշտպանվելու անհրաժեշտություն: Չնայած հարցվողները տալիս էին մշակութային կարծրատիպերով պայմանավորված պատասխաններ, այնուամենայնիվ առաջարկվող տարբերակներն ու մտքերը գործնականորեն անվերջ էին: Ամեն անգամ նույն հարցը բարձրացնելիս, կարելի է ստանալ մի նոր պատասխան: Մարդիկ իշխանատենչ, եսասեր, խանդոտ, դաժան ու հոգեբանորեն անկայուն էակներ են, ուստի և ինքնապաշտպանական նպատակներով սպանություն գործելն ընկած է նրանց էության հիմքում և հանդիսանում է վերջիններիս անօտարելի իրավունքը: Մարդիկ ագահ են և միշտ ձգտում են մրցակցության, ուստի և սոցիալական անհավասարությունն ու շահերի բախումը անհնարին են դարձնում սպանությունների կանխման գործընթացը: Կան բաներ, որոնք սպանությունից էլ վատ են, ինչպես օրինակ՝ հոգեբանական ճնշումներն ու տնտեսական զրկանքները. սպանություններից զերծ հասարակությունը կլիներ տոտալիտար, կկորցներ իր ազատությունը, կենթարկվեր ասպատակվելու և ստրկացվելու վտանգին օտարերկրյա ագրեսորների կողմից: Սպանությունների կանխումը որպես քաղաքական սկզբունք անբարոյականություն է. սպանությունը, որը կատարվում է զոհերին ագրեսիայից պաշտպանելու նպատակով, միշտ էլ ունի արդարացում, հանցագործների ոչնչացումը մյուսներին պատժելու և վախեցնելու նպատակով օգուտ է հասարակությանը, զենքերն արդեն ստեղծված են, սպանելու նպատակով կիառվող տեխնոլոգիաները միշտ էլ լինելու են, սպանություններից զերծ հասարակության և ոչ մի օրինակ դեռևս հայտնի չէ պատմությանը.... եվ վերջապես այս ամենը պարզապես անհեթեթություն է: Սակայն սա չի նշանակում, որ բոլոր ուսանողներն են այդպես մտածում: Ամերիկացի որոշ ուսանողներ այն կարծիքին են, որ քանի դեռ մարդիկ ունակ են ստեղծագործելու ու կարեկցելու, սպանություններից զերծ հասարակություն կարելի է ստեղծել նրա անդամների կրթման միջոցով: Մյուսները գտնում են, որ սպանությունները կարելի է կանխել փոքրամասշտաբ հասարակություններում, այլ ոչ թե՝ մեծաքանակ և գլոբալ: Սա նաև չի ենթադրում, որ բռնությունների վերաբերյալ ամերիկյան տեսակետներն ավելի արմատական են, քան քաղաքագիտության բնագառի այլազգի դասախոսների ու ուսանողների տեսակետները: Այս ամենը պարզաբանելու համար, անշուշտ, կպահանջվի համակարգված հետևողական ուսումնասիրություն: Իսկ մեր օրերի քաղաքագետներն այս հարցին վերաբերվում են հոռետեսությամբ: Այնուամենայնիվ, երբ անմիտ թվացող «հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն» հարցը հնչեցնում ենք քաղաքական տարբեր մշակույթներում, ապա ստանում ենք զարմանալիորեն տարբեր պատասխաններ:

Առաջ ես այդ մասին երբևէ չէի մտածել.....

Այսպիսինն էր շվեդ կոլեգայի պատասխանը 1980թ. Ստոկհոլմում կայացած շվեդ ֆուտուրիստների հանդիպմանը՝ նվիրված «սպանություններից զերծ քաղաքագիտության» թեմայի քննարկմանը:

- Առաջ ես այդ մասին երբևէ չէի մտածել: Ինձ ժամանակ է պետք այդ մասին խորհրդածելու համար:

Զարմանալին նա էր, որ հարցին անմիջապես չտրվեց դրական կամ բացասական պատասխան: Հարցն ընկալվեց որպես խնդիր, որի մասին հետագայում անհրաժեշտ էր խորհրդածել և կշռադատել: Նույն կերպ պատասխանեց քիմիայի բնագավառի նոբելյան մրցանակակիրը 1997թ. Սեուլում կայացած համակարգային փոխհարաբերությունն ուսումնասիրող գիտնականների միջազգային հանդիպմանը.

- Ես չգիտեմ:

Նա միշտ այդպիսի խուսափողական պատասխան է տալիս հարցին, եթե չունի դրա գիտական հիմնավորումը: Այնուհետև նա կոչ արեց կոնֆերանսի մասնակիցներին հարցին լուրջ մոտեցում ցուցաբերել, քանի որ գիտությունը և քաղաքակրթությունը զարգանում են հենց այն բանի շնորհիվ, որ իրենց առջև դնում են հարցեր, որոնք առաջին հայացքից թվում է, թե անլուծելի են:

Հնարավոր է ստեղծել սպանություններից զերծ հասարակություն, բայց.....

1979թ. Մոկսվայում հրավիրված Քաղաքագիտության Միջազգային Ասոցիացիայի 11-րդ համագումարի ժամանակ երկու ռուս գիտնականներ հանդես եկան «Բռնություններից զերծ քաղաքագիտության» վերաբերյալ զեկույցով՝ արտահայտելով լուրջ մոտեցում ցուցաբերելու հիմնավորված ցանկություն: Զարմանալիորեն երկուսն էլ համակարծիք էին այն մտքին, որ քաղաքականության և քաղաքագիտության նպատակը բռնություններից զերծ հասարակություն ձևավորելն է:

- Բայց,- հարցնում է նրանցից մեկ,- որ՞ն է բռնություններից զերծ քաղաքականության ու քաղաքագիտության տնտեսական հիմքը:

- Բայց,- հարցնում է երկրորդը, - ինչպե՞ս ենք մենք հաղթահարելու այնպիսի ողբերգական դեպքեր, ինչպիսիք պատահեցին Չիլիում (որտեղ զինվորական հեղաշրջումը տապալեց արդար ընտրություններում հաղթած սոցիալիստների կառավարությունը) և Կամպուչիի դեպքերը (որտեղ քաղաքացիական հեղափոխությունը ճնշելու արդյունքում 1մլն-ից ավելի մարդ սպանվեց):

Իսկապես, ինչպիսի՞ տնտեսություն պետք լինի, որ կախված չլինի սպանություններից կամ չխրախուսի սպանությունը, ինչպես դա անում են «կապիտալիզմի» ու «կոմունիզմի» արդի ձևերը: Ինչպե՞ս կարող է սպանություններից զերծ քաղաքականությունը կախարգելի, դադարեցնի և վերացնի մահաբեր ու դաժան սպանությունների հետևանքները:

Բռնություններից զերծ հասարակության հնարավոր գոյությունն ընդունելու պարագայում առաջ են գալիս մի շարք հարցեր, որոնք լուրջ գիտական ուսումնասիրման կարիք ունեն:

Մենք գիտենք, որ մարդ էակը բնությունից օժտված չէ դաժանությամբ, բայց...

Երբ 1981թ. Ամանում Հորդանանի համալսարանի մի խումբ արաբ քաղաքագետների ու հասարակական կառավարման ոլորտի մասնագետների շրջանում բարձրացվեց

բռնություններից զերծ քաղաքագիտության ստեղծման հարցը, պրոֆեսորներից մեկը ընդհանուր մի տեսակետ արտահայտեց.

- Մենք բոլորս էլ գիտենք, որ մարդ էակը բնությունից օժտված չէ դաժանությամբ: Բայց,-ավելացրեց նա,-մենք ստիպված ենք կռվել ինքնապաշտպանության համար:

Եթե կասկածի տակ է դրվում այն ամենահիմնական փաստարկը, որ մարդիկ բնությունից դաժան են, ապա հնարավորություն է ստեղծվում գտնել պայմաններ, որոնց առկայության դեպքում մարդիկ չեն սպանի:

Անհնար է, բայց...

1985թ. Հիրոսիմայի համալսարանի Խաղաղագիտության ինստիտուտի 10-ամյակին նվիրված սեմինարի ժամանակ, հարցին «կողմ» և «դեմ» քվեարկող ճապոնացի գիտնականների թիվը հավասարվեց, իսկ կրթական ոլորտի մի մասնագետ պատասխանեց.

- Անհնար է, բայց կարող է դառնալ հնարավորին: Երբ մենք գիտակցում ենք, որ սպանություններից զերծ հասարակության ձևավորումը երկարատև գործընթաց է, ապա նրա հետագա գոյության հնարավորությունը դառնում է հավանական: Հետո նա ևս հարցով դիմեց մյուսներին.

- Կրթության ինչպիսի՞ համակարգ է անհրաժեշտ բռնություններից զերծ հասարակություն ստեղծելու համար: Հարց, որն իրենից ներկայացնում է խնդրի ստեղծագործական լուծման ուղղված կառուցողական հրավերք:

Լիովին հնարավոր է...

1987թ. դեկտեմբեր ամսին ծագումով կորեացի փիլիսոփայության պրոֆեսորը, սոցիալական գիտությունների կորեական ասոցիացիայի նախագահը և Փյոնգյանգի քաղաքական առաջնորդը, ի զարմանս բոլորի, առաց վարանելու պատասխանեց.

- Լիովին հնարավոր է: Ինչու՞: Առաջին հերթին մարդիկ չեն ծնվում սպանելու համար: Նրանք օժտված են «խղճով», «բանականությամբ» և «ստեղծագործական ձիրքով», ինչն էլ թույլ է տալիս վերջիններիս զերծ մնալ սպանություններից: Երկրորդ՝ տնտեսական դժվարությունները չպիտի հանդիսանան սպանությունները արդարացնելու միջոց, քանի որ մարդիկ նյութական արժեքների գերին չեն: Տնտեսական դժվարությունները կարելի է հաղթահարել «ստեղծագործական ներուժով», «արտադրողականությամբ» և որ ամենակարևորն է՝ «հավասարաչափ բաշխմամբ»: Երրորդ՝ բռնաբարությունը չպետք է դիտվի սպանությունը արդարացնելու միջոց: Բռնաբարության դեպքերը կարող են վերացվել «ուսուցանման» և «առողջ հասարակական մթնոլորտ ապահովելու» միջոցով:

2000թ. փետրվարին, երբ Կոլումբիա նահանգի Մանիզալես քաղաքում հրավիրված մոտ 200 համայնքապետերի հանդիպման մասնակիցներին հարցրեցին, թե «հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն», զարմանալիորեն չեղավ և ոչ մի բացասական պատասխան: Բոլորը միաձայն պատասխանեցին՝ «այո՛»:

Կորեայում և Կոլումբիայում ստացած դրական արձագանքները ուշագրավ են, եթե հաշվի առնենք այս երկրներում տիրող բռնության մթնոլորտը: Կորեայի ժողովրդավարական հանրապետությունում առկա քաղաքական սովորույթները մասամբ ունեն ընդհանրություններ ԱՄՆ քաղաքական տրադիցիաների հետ, ինչպիսիք են հակագաղութային զինված ապստամբությունները, երկրի միավորման համար մղվող քաղաքացիական պատերազմները և ներքին ու արտաքին թշնամիների դեմ տարվող պաշտպանողական ու հարձակողական «արդարացի» մարտերը:

Կոլումբիայում տասնամյակներ շարունակ հասարակությունը տանջվել է զինվորականների, ոստիկանների, ռազմական ուժերի, պարտիզանների և վտանգավոր մարդասպանների ձեռքին:

Իրարամերժ հասարակական արձագանքներ

Երբ սպանություններից զերծ հասարակության հնարավոր գոյության մասին հարցը առանց նախնական քննարկումների բարձրացվում է տարբեր խմբերի, երկրների և մշակույթների ներկայացուցիչների շրջանում, ի հայտ են գալիս ամենատարբեր սոցիալական նախատրամադրվածություններ: Նման պարագայում համակարգված գլոբալ ուսումնասիրություններ կատարելու հեռանկարը դառնում է պարզ ու հստակ:

1998թ. մայիսին Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսում Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ կազմակերպված «Նոր քաղաքագիտություն» սեմինարին մասնակից նախկին Սովետական երկրների քաղաքագետներից 8-ը պատասխանեցին «ոչ» և միայն մեկը՝ «այո»: 1992թ մարտին Սեուլի ազգային համալսարանի ավարտական կուրսերի ուսանողների համար կազմակերպված քաղաքագիտության ներածական դասընթացին տասներկու ուսանող տվեց բացասական պատասխան, իսկ երկուսը՝ «այո և ոչ»: 1998թ. փետրվարին Հավայան կղզիների Հոնոլուլու քաղաքում ՄԱԿ-ի զարգացման ճապոնական հիմնադրամի կողմից կազմակերպված ֆորումին վեցը պատասխանեցին «այո», հինգը՝ «ոչ» և երկուսը՝ «այո և ոչ»: Ճանոպացի կանանցից բաղկացած դիտորդական խմբում տասներկուսը պատասխանեցին «ոչ», տասնմեկը՝ «այո», իսկ մեկը՝ «այո և ոչ»:

1998թ. նոյեմբերին Կոլումբիայի Մեդելլին քաղաքում կազմակերպված «Կրթության ապագան» խորագրով ազգային կոնֆերանսի ժամանակ 275 մասնակից պատասխանեց «այո» և 25 մասնակից՝ «ոչ»: Նույն քաղաքի ընտանեկան սոց. աշխատողների խմբում երեսունը պատասխանեցին «այո», տասնվեցը՝ «ոչ»: «Sicarios» (փոքրիկ դանակներ) կոչվող երիտասարդ ավազակների խմբում, որտեղ կային նաև վարձու մարդասպաններ, տասնվեցը պատասխանեցին «ոչ» և վեցը՝ «այո»: Երբ նրանց խնդրեցին հիմնավորել իրենց պատասխանները, մի մարդասպան ասաց.

- Ես ստիպված եմ սպանել, որպեսզի հոգ տանեմ իմ երկու աղջիկների մասին: Աշխատանք գտնելը շատ դժվար է:

«Այո» պատասխանողներից մեկը այսպես բացատրեց.

- Երբ հարուստների և աղքատների միջև անջրպետը վերանա, մեզ այլևս պետք չի լինի սպանել:

Կանադայի էդմոնտոն քաղաքում 1997թ. հոկտեմբեր ամսին Մահաթմա Գանդիի անվան Կանադայի Համաշխարհային Խաղաղության հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Արժեքները և 21-րդ դարը» խորագրով սեմինարին մասնակցող ավագ դպրոցի մի խումբ աշակերտներից 48-ը պատասխանեցին «ոչ», իսկ 25-ը՝ «այո»: Իսկ 1999թ. ապրիլին Ատլանտա նահանգի Ջորջիա քաղաքում անցկացվող «Ո՛չ բռնությանը» միջազգային կոնֆերանսին՝ ֆինանսավորված Մարտին Լյութեր Քինգ Կրտսերի անվան «Բռնություններից զերծ սոցիալական փոփոխությունների կենտրոնի» կողմից, քառասունը պատասխանեցին «այո», երեքը՝ «ոչ»: 2000թ. փետրվարին Ռուսաստանի Օմսկ քաղաքի 17-26 տարեկան բանասերներից 121-ը պատասխանեցին «ոչ», 34-ը «այո», 3-ը՝ «այո և ոչ»:

«Հնարավոր է արդյո՞ք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն»: Բռնություններով հարուստ 20-րդ դարավերջին՝ գլոբալ սպանությունների և սպառնալիքների առկայության պարագայում, քաղաքագետներն ու նրանց ուսանողները ունեն բոլոր հիմքերը կատարելու հետևյալ եզրահանգումը ՝ «անհնար է ստեղծել

սպանություններից զերծ հասարակություն»: Բայց քիչ չեն նաև նրանք, ովքեր լրջորեն մոտենալով հարցին, պատասխանում են. «հնարավոր է և նույնիսկ հավանական»: Ավելին, չնայած մարդկային գոյությանն ուղղված աննախադեպ սպառնալիքներին՝ երկրագնդի վրա գոյություն ունեն հոգևոր և գիտական ռեսուրսներ, ինստիտուտներ և փորձառություն, որոնք ամրապնդում են մեր հավատքը նրանում, որ վերջիվերջո հնարավոր է ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:

Գլուխ 2.

Սպանություններից զերծ հասարակության հնարավորությունները

Մենք հավանաբար արդեն բավականաչափ իրազեկված ենք,
որպեսզի վերջ դնենք բռնություններով լի դարաշրջանին, միայն թե
որոշենք այլընտրանքային ուղիներ փնտրել:

Դավիդ Ն. Դանիելս և Մարշալ Ֆ. Գիլուլա
Ստենդֆորդի համալսարան, հոգեբուժության ամբիոն, 1970թ.

Ի՞նչն է մեզ հիմք տալիս մտածել, որ հնարավոր է ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:

Ի՞նչն է մեզ հիմք տալիս մտածել, որ մարդիկ ունակ են միասնաբար հարգել ու արժևորել կյանքը:

Սպանություններից զերծ մարդկային էություն

Չնայած մենք կարող ենք սկսել հոգևոր երևույթների դիտարկումից, բայց ավելի լավ է սկզբում դիտարկենք աշխարհիկ, իրական փաստերը: Մարդկանց մեծ մասը երբեք չի սպանում: Երկրագնդի վրա ապրող բոլոր մարդկանցից, այդ թվում և նրանք, ովքեր ապրել են մեզանից առաջ, շատ քչերն են, որ ունակ են սպանելու: Աչքի անցկացրեք ցանկացած հասարակության վիճակագրական տվյալները: Ուսումնասիրեք նաև սպանության դեպքերը պատերազմական գործողությունների ժամանակ:

Աշխարհի ռազմական և էթնոգրաֆիկ թանգարանները բերում են խղճուկ փաստարկներ այն մասին, որ կանայք, որոնք կազմում են մարդկության կեսը, գերակշռող թիվ են կազմել մարտերի ժամանակ: Եվ սա այն պարագայում, երբ նրանցից ոմանք կռվել են պատերազմների և հեղափոխությունների ժամանակ, երբ որոշ հասարակություններում կանայք և նույնիսկ երեխաները մասնակցել են գերեվարված թշնամիների տանջամահության ծիսակարգերին, և որ ժամանակակից մի շարք բանակներ համալրվում են կանանցով: Բայց, ի տարբերություն տղամարդկանց, կանայք երբեք չեն համարվում մարդասպաններ կամ մարտնչողներ: Փոքրաթիվ տղամարդիկ են, որ իսկապես կռվում են պատերազմների ժամանակ: Նրանցից շատ քչերն են, որ իսկապես սպանում են: Սպանողների մեծամասնությունը տհաճության զգացողություն է ունենում և տանջվում է խղճի խայթից: Ըստ երևույթին միայն երկու տոկոսն է, որ առանց զղջալու կարող է անընդմեջ սպանել: Փոխգնդապետ Դեյվ Գրոսսմանը պատերազմներում տղամարդկանց ակամայից սպանելու վերաբերյալ իր մեծ աշխատության մեջ ասում է. «Պատերազմի մասնակիցների իննսունութ տոկոսը, անկախ նրանից, թե որքան ժամանակ է գտնվում ռազմի դաշտում, ստանում է հոգեբանական բնույթի ծանր տրավմաներ: Մնացած երկու տոկոսը, որը չի խելագարվում, արդեն իսկ հոգեկան շեղումներով է մտնում մարտի դաշտ. դրանք հիմնականում ագրեսիվ հոգեկան հիվանդներն են» (Գրոսսման՝ 1995:50): Հակառակ քաղաքագետների շրջանում գերիշխող այն տեսակետին, որ մարդիկ ի ծնե մարդասպաններ են, զինվարժանքների գլխավոր նպատակն է «հաղթահարել սպանություն գործելու համառ դիմադրությունը յուրաքանչյուր անհատի մոտ»(295):

Մարդու խաղաղասիրական էության մյուս ապացույցը ընտանիքն է: Եթե մարդիկ ի ծնե հակված են սպանելու, եթե անգամ մարդկության կեսը անուղղելի մարդասպաններ են, ապա ընտանիքներ չէին ձևավորվի: Հայրերը կսպանեին մայրերին, մայրերը՝ հայրերին, ծնողները կսպանեին զավակներին և զավակները՝ ծնողներին: Թվարկվածներից յուրաքանչյուրը պատահում է կյանքում, բայց սրանք մասնավոր դեպքեր են և չեն հանդիսանում մարդկային ճակատագիրը ղեկավարող բացարձակ օրենքներ: Եթե իրոք այդպես լիներ, ապա մարդկային կյանքը վաղուց վերացել էր երկրի վրայից: Մինչդեռ մենք տեսնում ենք հակառակ պատկերը. չնայած սարսափելի հալածանքներին և աղքատությանը՝ ընտանիքները շարունակում են բազմանալ ու գոյատևել աննախադեպ ծավալներով:

Սպանությունների կանխման համաշխարհային այս գլուխկոտրուկը լուծելու համար մնում է հաշվարկել, թե մինչև օրս որքան բնակչություն է եղել երկրի երեսին, և նրանցից քանիսն են եղել մարդասպաններ: 1996թ. Կեյֆիձի և Ուիկսի հաշվարկներով, որը 1999թ. վերանայվեց Ռամսեյի կողմից՝ մ.թ. 1մլն տարի առաջ մինչև մ.թ. 2000 թվականը ընկած ժամանակահատվածում երկրի վրա հաշվարկվել է մոտավորապես 91.100.000.000 մարդ: Եթե մենք կլորացնենք Ռումմելի հաշվարկած պատերազմների և դեմոցիդների զոհերի թիվը մինչև կես բիլիոն, ենթադրենք, որ յուրաքանչյուրը սպանվել է մեկ մարդու կողմից և բազմապատկենք վեցով, որպեսզի ներառենք նաև քրեական նկատառումներով կատարված մարդասպանությունները, կստացվի մոտավորապես 3 մլրդ մարդասպան սկսած մ.թ.ա. 1000 թվականից (մինչև մ.թ. 1մլն տարի առաջ եղած տվյալներ բացակայում են): Բայց նույնիսկ սպանությունների այս կոպիտ ու ուռճացած հաշվարկը ենթադրում է, որ մադկանց առնվազն ինսունհինգ տոկոսը սպանություն չի գործել: ԱՄՆ-ում ներկայիս սպանությունների հարաբերակցությունը՝ մոտավորապես 10-ը 100.000-ին ենթադրում է, որ բնակչոթյան միայն 0.1% է սպանություն գործում ամեն տարի: Եթե մարմնական վնասվածք պատճառելու բոլոր դեպքերը հաշվենք որպես սպանության փորձեր (2008թ. 274.6 դեպք 100.000 բնակչության հարաբերությամբ), ապա ընդհանուրին պիտի ավելացնենք 0.274%: Այսպիսով Միացյալ Նահանգների ներկա բնակչության 0.284% իրական մարդասպաններ են կամ փորձել են սպանություն գործել: Ըստ երևույթին բոլոր մարդկանց 2%-ից պակասը կամ նույնիսկ 1%-ը խլել են իրենց նման մարդկանց կյանքերը: Տարբեր հասարակություններում սպանությունների տոկոսային հարաբերակցությունը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված դարաշրջանով և տվյալ հասարակության մշակույթային առանձնահատկություններով (Կեելի 1996): Այնուամենայնիվ մարդկության գոյատևումն ու բազմացումը վկայում են այն մասին, որ մարդկային բնության մեջ ապրելու տենչը գերիշխում է սպանելու ձգտմանը:

Հոգևոր հիմքեր

Սպանություններից զերծ հասարակության ձևավորման հարցում վստահություն ներշնչող հիմքերը առկա են մարդկության հոգևոր սովորույթների մեջ: Քաջ հայտնի է, որ շատ դեպքերում կրոններն են վկայակոչվել արդարացնելու համար սարսափելի սպանդերը՝ սկսած մարդկային նահատակություններից և ցեղասպանություններից մինչև ատոմային բնաջնջումները(Թոմսոն 1988թ.): Աստծո՝ Արարչի՝ Սուրբ Հոգու գլխավոր ուղերձը մարդկությանը ինչպես էլ որ մեկնաբանվեր, չէր կարող հնչել հետևյալ կերպ. «Օ~հ մարդկություն, լսի՛ր իմ խոսքը: Գնա՛, գտի՛ր մեկ ուրիշին և սպանի՛ր նրան»: Ընդհակառակը, Աստված պատգամում է մարդկանց. «Հարգե՛ք կյանքը: Երբեք մի՛ սպանեք»:

Սպանությունը դատապարտող պատվիրաններ կարելի է գտնել աշխարհի բոլոր կրոններում: Ահա թե ինչու է Մաքս Վեբերը կարծում, որ Աստծուն նվիրվածությունը անհամատեղելի է սպանություն գործելու քաղաքական հրամայականի հետ: Ջայնիզմը և Հինդուիզմը ունեն ընդհանուր մի պատվիրան, որում ասվում է. «բռնություն չկիրառելը գոյության բարձրագույն օրենքն է» (ahimsa paramo dharma): Բուդդիզմի գլխավոր պատվիրանն է. «Հեռու՛ մնա մարդկային կյանքը խլելուց»: Հուդաիզմը, քրիստոնեությունը և իսլամը ունեն նույն աստվածային պատվիրանը. «Մի՛ սպանիր» (Ելից՝ 30:13): Հրեական հնագույն ուսմունքն ասում է. «Նա ով փրկում է մեկի կյանքը, նույնն է, թե փրկում է մի ողջ մարդկություն: Մինչդեռ նա, ով խլում է մեկի կյանքը, ոչնչացնում է ողջ աշխարհը» (Էզդենդրաթ: 144): Այս պատվիրանի իմաստը, որոշակի վերապահումներով, առկա է նաև իսլամում. «Եթե ինչ-որ մեկը սպանում է մարդ էակին՝ վերջինիս պատժելու կամ երկրի վրա աղտեղություն տարածելու նպատակով, նույնն է, թե նա սպանում է ողջ մարդկությանը, իսկ նա, ով փրկում է մեկի կյանքը, նույնն է, թե փրկում է մի ամբողջ մարդկային ցեղ» (Ղուրան 5:32): Բահաիզմը, որն իր մեջ միավորում է հուդաիզմի, քրիստոնեության և իսլամի ուսմունքները, պատգամում է. «Վախեցե՛ք Աստծուց, օ~հ մարդիկ, և խուսափե՛ք արյուն թափելուց» (Բահաուլլահ 1983:277):

Հումանիստական ուսմունքներում նույնպես սիրում են քննարկել սպանություններից զերծ հասարակության իրատեսական ու ցանկալի լինելու հանգամանքը: Կոնֆուցիական ուսմունքի համաձայն, եթե ղեկավարներն առաջնորդվեն բարոյական սկզբունքներով, ապա մահապատիժ կիրառելու անհրաժեշտությունը երբեք էլ չի առաջանա (Ֆանգ՝ 1952:60): Ըստ դաոիզմի, երբ մարդիկ ապրում են պարզ, ինքնաբուխ և ներդաշնակ բնության հետ, «թեկուզև գոյություն ունենան ռազմական զենքեր, ոչ ոք չի օգտագործի դրանք» (Ֆանգ՝ 1952:190): Ժամանակակից սոցիալիստները, կարծում են, որ եթե բանվորները չքաջալերեն եղբայրասպանությունը, պատերազմները կդադարեն:

> Համաշխարհային արդյունաբերողների միության անդամները, ովքեր օժտված են դասակարգային գիտակցությամբ, դեմ են մարդկային արյուն թափելուն՝ **ոչ թե կրոնական մոտիվներից դուրս գալով,** ինչպես դա անում են քվակերները և բարեգործական միությունները, այլ նրա համար, որ բոլոր տեղերում էլ աշխատանքային դասակարգը ունի նույն շահերն ու հետաքրքրությունները: Քանի որ մենք կտրականապես դեմ ենք Իմպերիալիստական Գերմանիայի կողմից տարվող կապիտալիստական քաղաքականությանը, մենք դեմ ենք նաև աշխարհի բոլոր աշխատավորների սպանությանն ու շահագործմանը (Թրու 1995:49; քաջագործության նմանատիպ օրինակ կարելի է գտնել Բակսթեր 2000-ում):

Յուրաքանչյուր հասարակություն դատապարտում է սպանությունը: Կյանքը հարգող հումանիստական ուսմունքները նույնացվում են կյանքը մեծարող կրոնական համոզմունքների հետ:

Սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու համար որքանո՞վ է կարևոր «սպանություններից զերծ» էթիկայի առկայությունը աշխարհի հոգևոր և հումանիստական ուսմունքներում: Մի կողմից նման էթիկայի առկայությունն երևան է հանում մարդկային գիտակցության մեջ կյանքի նկատմամբ խորը հարգանք սերմանելու աստվածային կամքը: Մյուս կողմից՝ այն բացահայտում է նմանատիպ սկզբունքի գոյությունն ընդունելու, դրան արձագանքելու և նմանատիպ սկզբունք ձևավորելու մարդկային կարողությունը:

Եթե մարդիկ ծնված օրից անուղղելի մարդասպաններ են, ո՛չ նման սկզբունքի ընդունումը, ո՛չ փոխանցումը և ո՛չ էլ ստեղծումը չի լինի ճշմարտանման և ոչ էլ

տրամաբանական: Եթե նույնիսկ սպանություններից զերծ հոգևոր էթիկան ստեղծվեր էլիտայի կողմից՝ հեղափոխությունը դատապարտելու համար, կեղեքվածների կողմից՝ իրենց կեղեքողներին թուլացնելու համար կամ մարդասպաններից կողմից՝ արժանի պատժից խուսափելու համար, նշանակում է, որ մարդիկ, ում ուղղված է այդ էթիկան, ունակ են դրական արձագանքելու այդ ամենին:

Սպանություններից հրաժարվելու ոգին եղել է պատմության մեջ տեղ գտած ամենասարսափելի արյունահեղություններից առաջ, դրանց ընթացքում և դրանցից հետո: Դրա դրսևորումը պարզապես շռայլություն չէ՝ մեծահոգաբար շնորհված մարդասպանների կողմից:

Սպանություններից հրաժարվելու այդ աննկուն ոգին շարունակում է վառ մնալ քրիստոնեության մեջ խաչակրաց արշավանքներից հետո, իսլամի մեջ՝ նվաճումներից հետո, հուդաիզմում՝ Մեծ Հոլոքոստից հետո, Բուդդիզմի մեջ՝ ռազմականացումից հետո և բնիկների սովորույթներում՝ հետգաղութային ժամանակներից հետո: Սպանություններով լի 21-րդ դարում այդ ոգին կարելի է տեսնել սպանություններից զերծ համաշխարհային փոփոխություններ կատարելուն ուղղված քրիստոնեաներ Տոլստոյի և Մարտին Լյութեր Քինգի, հինդուիստ Գանդիի, մուսուլման Աբդուլ Ղաֆֆար Խանի, հրեա Ժոզեֆ Աբիլեհի, բուդդիստ Դալայ Լամայի, Կանաչների կուսակցության լիդեր Պետրա Կելլիի և հայտնի ու անհայտ բազում այլոց համարձակ ձեռնարկներում:

Սպանություններից զերծ ոգու առկայությունը յուրաքանչյուր կրոնում և այդ ոգով առաջնորդվելու սկզբունքայնությունը բերում է հաստատակամության ու պատրաստակամության ձևավորմանը հարյուր միլիոնավոր համախոհների մոտ: Չսպանելու հրամայականի և սպանություն գործելու համար պատասխանատվություն կրելու գիտակցության միջև առկա հակասական լարվածությունը և նրա վնասակար հետևանքները հանդիսանում են սպանություններից զերծ անհատական ու հասարակական փոփոխություններ կատարելու հիմնաքարը: Քանի որ սպանություններից հրաժարվելու արմատներ կարելի է գտնել յուրաքանչյուր ազգի սովորույթներում, ապա մարդկության հոգևոր արժեքների ժառանգությունը որպես մեկ ամբողջություն նման է բազմարմատ ծյուղերով բանյան ծառի կառուցվածքին: Ոգեշնչում ու սնունդ կարելի է ստանալ ինչպես ամբողջ համակարգից, այնպես էլ նրա ամեն մի հատվածից, քանի որ բոլոր արմատներն ունեն կենսատու ուժ: Կյանքի նկատմամբ հարգանքը, որ ընկած է կրոնական հավատքի և հումանիստական ուսմունքի հիմքում, երաշխիքն է այն բանի, որ հնարավոր է ստեղծել սպանություններից զերծ համաշխարհային հասարակություն:

Գիտական հիմնավորում

- Մենք երբեք չենք հասնի բռնությունների վերացմանը միայն հոգևոր համոզմունքների միջոցով:

Այսպիսինն էր Հնդկաստանի հոգևոր առաջնորդներից մեկի՝ Աչարյա Մահապրագայի եզրահանգումը, որը նաև հանդիսանում է ահիմսայի (բռնություններից ազատ)՝ ջաինյան հնագույն ուսմունքի հետևորդը: Համաձայն այս ուսմունքի՝ «ահիմսան ընկած է կյանքի բոլոր փուլերի, բոլոր սուրբ գրքերի հիմքում և հանդիսանում է բոլոր առաքինությունների ու երդումների հիմքը» (Զահի և Վարնի 1993:139): Ըստ Աչարյա Մահապրագայի՝ բռնություններից զերծ հասարակություն ստեղծելու համար պետք է անհատներին հնարավորություն տալ բացահայտել բռնությունը դատապարտող տարրերն իրենց մեջ, հետո տեղափոխել դրանք հասարակական դաշտ՝ կապակցելով ժամանակակից նյարդաբանությունը հոգևոր ճշմարտությունների հետ: Նրա վերլուծությունները ցույց են տալիս, որ բռնությունների հրահրման պատճառը

էմոցիաներն են, որոնք արտադրվում են էնդոկրին գեղձերի կողմից՝ ներգործելով կարեկցական ու հակակարեկցական նյարդային համակարգի վրա և փոխկապակցված են սննդի հետ: Ավելի ուշ, հիմք ընդունելով մեր նյարդային համակարգի վերաբերյալ գիտելիքները, պարզ մեդիտացիոն վարժանքների միջոցով մենք կարող ենք համակարգված ձևով օգտագործել մեր ուղեղի էներգիան՝ մեր մեջ ձևավորելով ոչ բռնի վարքագիծ և նվիրաբերելով մեզ սպանություններից զերծ հասարակական կյանքի ձևավորման գործընթացին: (Մահապրագյա 1987թ., 1994թ.; Ջավերի և Կումար 1992թ.):

Ինչպիսի՞ գիտական հիմքեր կան երաշխավորելու համար սպանություններից զերծ մնալու մարդկային կարողությունը: «Գիտական հիմքեր» ասելով, նկատի ունենք բոլոր տեսակի գիտելիքները, որոնք ձեռք են բերվում փորձարարական ու հետազոտական ուսումնասիրությունների արդյունքում. դրանք են այն բոլոր փաստերը, տեսությունները և մեթոդները, որոնց օգնում են որոշել ձեռք բերված տվյալների ճշմարտացիությունն ու հուսալիությունը: Գիտական «հեղափոխությունը» սկսվում է այն ժամանակ, երբ որոշ փիլիսոփաներ սկսում են կասկածի տակ դնել ընդունված տեսակետը: Հենց սա էլ արեց Ռիչարդ Կոնրադը (1974թ.), երբ կասկածի տակ դրեց լայնորեն տարածված տեսակետի ճշմարտացիությունը, թե սպանելու պատրաստակամությունը միակ արդյունավետ ուղին է հաղթահարելու բռնության դեպքերը՝ բռնաբարությունից մինչև Հոլոքոստ: Ըստ Կոնրադի բռնությունների կանխման միակ հնարավոր լուծումը ունի երեք տարբերակ՝ որոնք սահմանված են, փորձարկված և անարդյունք: Բայց այս տարբերակներն անիրատեսական են. ըստ ամենայնի սպանություններից խուսափելու այլընտրանքային ուղիները անհամար են, ժամանակի սղությունը, անհրաժեշտ ռեսուրսների և գործոնների պակասը խանգարում են փորձարկել արդեն իսկ առկա տարբերակները, ինչի պատճառով էլ մենք չենք կարող վստահ ասել, որ բռնությունը միակ հաջողված տարբերակն է: Այս կերպ Կոնրադը խորհուրդ է տալիս մի կողմ թողնել փիլիսոփայական «նախատրամադրվածությունը» և դիտարկել բռնությունը որպես սպանությունը բացառող այլընտրանքային տարբերակներ գտնելու ու փորձարկելու ցանկություն: Այսպիսի մոտեցումը ամենայն հավանականությամբ կբերի գիտական նոր բացահայտումների, որոնք կասկածի տակ կդնեն սպանության երևույթի անխուսափելիությունը (Յոդեր՝ 1983թ.):

Կասկածի տակ է դրվում նաև այն ենթադրությունը, որ մարդիկ ի ծնե անուղղելի մարդասպաններ են: Տուլենի համալսարանի հոգեբան Լոհ Ցայ Ցզենգը (1963թ.) ապացուցեց, որ առնետներ ոչնչացնող կատվին և կոյուղաջրերում ապրող առնետին կարելի է վարժեցնել նույն ամանից սնվելուն: Մեթոդն իրենից ներկայացնում է պայմանական ռեֆլեքս օպերանտի մշակումն ու համագործակցային մեթոդների ձևավորումը կենդանիների մոտ: Սկզբում ապակյա միջնորմով բաժանված երկու կենդանիները սովորեցին, որ իրենք պետք է միաժամանակ սեղմեն նույն լծակները, որպեսզի կերակրամանը լցվի թեփուկներով: Յոթ հարյուր փորձից հետո միջնորմը հանվեց, քանի որ այլևս չկար կենդանիների՝ միմյանց հոշոտելու վտանգը: Ցայը եզրափակում է.

> Գիտության պատմության մեջ առաջին անգամ նորարարական փորձերի օգնությամբ մենք ապացուցեցինք, որ կատուներն ու առնետները, այսպես կոչված բնական թշնամիները, կարող են համագործակցել և համագործակցում են: Նման բացահայտումը ի չիք դարձրեց հոգեբանության մեջ առկա այն դոգման, թե կենդանիների մոտ ուժեղ է թշնամական բնազդը և դա էլ բերում է մարտերի ու պատերազմների անխուսափելիությանը:(1963: 4)

Նկատելով, որ «շատերի համար մեր հետազոտությունը դարձավ կենսաբանության հիմնաքարը աշխարհում տեսականորեն հնարավոր խաղաղություն կառուցելու գործում», Ցայը ավելի շուտ կոչ է անում ընդունել «համագործակցության միջոցով գոյատևելու» գիտականորեն հիմնավորված փիլիսոփայությանը, քան թե պնդել մրցակցությամբ պայմանավորված սպանության թվացյալ անխուսափելիության տեսությունը: Գիտության խիստ տարբեր բնագավառների ներկայացուցիչ ֆիզիկոս և պատմագետ Անտոնիո Դրագոն, հակադրելով կոնֆլիկտների լուծման Կարնոյի մեխանիկան Նյուտոնի մեխանիկային, տրամադրում է գիտականորեն հիմնավորված նույնատիպ առաջարկներ տրանսցենդենտալ համագործակցության վերաբերյալ (Դրագո 1994): Նույնն է առաջարկում նաև հոգեթերապևտ Ժերոմի Դ. Ֆրանկը՝ խորհուրդ տալով ընդհանուր համագործակցության միջոցով հաղթահարել աշխարհում տիրող անհանդուրժողականությունն ու թշնամանքը (Ֆրանկ 1960: 261-2; 1993: 204-5):

Այն թեզը, թե մարդասպանությունն ընկած է մեր էվոլուցիոն զարգացման հիմքում քանի որ ներկայացնում ենք «մարդասպան կապիկների» մի տեսակը, գենետիկորեն գրեթե նույնանման պրիմատների՝ կենտրոնական Աֆրիկայում բնակվող խաղաղասեր բոնոբո տեսակի կապիկների նոր ուսումնասիրությունների արդյունքն է: (Կանո՝ 1990թ.): Կոնգոյում բնակվող Մանգանդու ցեղը, որն ապրում է մերձարևադարձային անտառին կից՝ բոնոբո կապիկների հարևանությամբ, խստորեն արգելում է բոնոբո կապիկների սպանությունը՝ հետևելով լեգենդին, որ մի ժամանակ իրենց նախնիները և բոնոբո կապիկները, որպես հարազատներ, ապրել են կողք կողքի (Կանո՝ 1990:62): Ի տարբերություն գորիլաների, շիմպանզեների և կապիկների այլ տեսակների՝ բոնոբո կապիկները երբեք չեն սպանել իրենց ցեղակիցներին (Վրանգհամ և Փիթերսոն՝ 1990թ., Վաալ՝ 1997թ.): Բացի այդ «խաղաղասիրության» ու «փոխադարձ սիրո» վերջին ուսումնասիրությունները այն պրիմատների շրջանում, որոնք նաև սպանում են իրենց ցեղակիցներին, կասկածի տակ են դնում տենդենցը, թե միայն սպանությունն է ընկած մարդու էվոլուցիոն զարգացման հիմքում, այլ ոչ թե դրանից հրաժարվելու մարդկային կարողությունը (Վաալ՝ 1989թ., 1996թ.): Գոյություն ունի կենդանիների էության խաղաղ կողմը, և համաձայն Կրոպոտկինի (1914թ.), Սորոկինի (1954թ.) և Ալֆի Կոնի (1990թ.) ուսումնասիրությունների՝ գոյություն ունի նաև մարդկային էության համագործակցային, ալտրուիստիկ և «ավելի լուսավոր» կողմը:

Մարդկանց և կենդանիների մոտ ագրեսիվ վարքի դրսևորմանն ուղղված իր համեմատական ուսումնասիրության մեջ էթոլոգ-մարդաբան Իրենաուս Էյբլ-Էյբեսֆելդթը (1979: 240-1) պարզաբանում է, որ «մի՛ սպանիր» պատվիրանի հիմքում ընկած են կենսաբանական գործոնները: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «շատ կենդանիներիներին հատուկ ներքին արգեսիան, հանդիսանալով բնական գործոն, երբեք ֆիզիկական վնաս չի պատճառում», նա գտնում է որ մարդկանց համար ևս կիրառելի են արյունահեղություններից խուսափելու նմանատիպ, բայց ավելի լավ մշակված մեխանիզմներ: «Կենսաբանական նորմերի որոշակի մաքրազատումը բերում է «մի՛ սպանիր» պատվիրանի իրագործմանը»,-եզրափակում է նա, հետո ավելացնում,- «մշակութային կեղծ տեսակների գոյության(մյուսները բնութագրվում են որպես ոչ լիարժեք մարդիկ, որոնց պետք է ոչնչացնել) արդյունքում մարդը կենսաբանական զտիչ նորմի փոխարեն, որը նրան արգելում է սպանել, կիրառում է մշակութային զտիչ նորմը, որն, ընդհակառակը, հրամայում է սպանել»: Պատերազմի ժամանակ «սա բերում է նորմերի բախմանը, որոնք մարդը գիտակցում է, երբ վերջինիս մոտ արթնանում է խիղճը ու նա հասկանում է, որ իր դեմ կանգնած թշնամին ևս իր նման մարդ է»: Սրա ապացույցն է նաև այն, որ պատերազմից հետո զինվորները հասարակությանը ինտեգրվելու և մաքրագործվելու կարիք են ունենում:

Էյբլ-Էյբեսֆելդթի թեզի հիմնավորումը եղավ Գրոսսմանի այն բացահայտումը, որ «ողջ պատմության ընթացում պատերազմի դաշտում գտնվող մարդկանց մեծամասնությունը չի փորձել սպանել թշնամուն, նույնիսկ այն դեպքում, երբ վտանգված է եղել իր կամ իր ընկերների կյանքը» (Գրոսսման՝ 1995:4): Գրոսսմանը նկատում է, որ հոգեբանական շեղումները ավելի շատ են այն զինվորների մոտ, որոնք սպանել են, քան նրանց մոտ, ովքեր չեն սպանել: Զինվորական հոգեբանի և էթոլոգ-մարդաբանի տեսակետները, շատ հարցերում միմյանց համընկնելով, տարբերվում են սակայն սեփական բացահայտումների տեսական վերլուծության մեջ, քանի որ առաջինի խնդիրն է մասնագիտական դասընթացների միջոցով օգնել զինվորներին հաղթահարել տհաճության զգացողությունը, որ վերջիններս ունենում են սպանելությունն գործելիս, մինչդեռ երկրորդի խնդիրն է ներդաշնակություն ստեղծել մշակույթի և սպանություններից զերծ մարդկային կենսաբանության միջև: Էյբլ-Էյբեստֆելդթը եզրափակում է.

> Խաղաղություն հաստատելու համընդհանուր ցանկության արմատները ընկած են մշակութային ու կենսաբանական նորմերի միջև առկա հակասության հիմքում, ինչն էլ ստիպում է մարդկանց ներդաշնակություն հաստատել այս երկու նորմերի միջև: Մեր միակ հույսը մնում է մեր խիղճը, և եթե մենք լսենք մեր խղճի ձայնին, ապա ճիշտ ուղղությամբ ընթացող էվոլուցիան մեզ կտանի դեպի խաղաղություն: Սա նաև ենթադրում է այն փաստի գիտակցումը, որ պատերազմի կողմից ներկայումս իրականացվող ֆունկցիաներն ինչ-որ մի պահի կիրագործվեն այլ միջոցներով և առանց արյունահեղությունների (1979: 241):

Գլխուղեղի ուսումնասիրությունը թույլ է տալիս ևս մեկ անգամ համոզվել, որ մարդն ունի սպանություններից խուսափելու մեծ ներուժ: Իր գիտական թեզը վերնագրելով «Նեվրորեալիզմ»՝ ստեղծագործող գիտնական, նյարդաբան Բրուս Է. Մորթոնը (2000թ.) ներկայացնում է «Վարքի կազմակերպման երկակի քառակի մոդելը», որը նկարագրում է սպանելու և դրանից խուսափելու նյարդակենսաբնական հիմքերը: Մոդելի չորս մասերը «գործում են քառորդ համակարգի երկու ռեժիմներով»: Նրանք կազմում են ուղեղի գլխավոր համակարգը(բնազդները), լիմբիկ համակարգը (հույզերը), գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերի համակարգը(երևակայություն և ինտելեկտ) և ենթագիտակցական համակարգը(ինտուիցիա): Մորթոնը հոգևոր և հասարակական գիտակցության սկզբնաղբյուր է դիտում ենթագիտակցական ինտուիցիայի համակարգը: Այս «սկզբնաղբյուրը» «ճշմարիտ է, ստեղծագործ, կարգապահ, մարդասեր, համագործակցող, տպավորվող և բարի»: Այն ապահովում է խմբի երկարակեցությունը և հանդիսանում է «գլխուղեղի աշխատանքով պայմանավորված ֆենոմեն, որը հատկանշական է բոլորի համար»: «Սկզբնաղբյուրի» ներթափանցումը գիտակցական մակարդակ կարող է տեղի ունենալ երեք դեպքում՝ մահացու տրավմայի, որոշակի հալուցինացիոն հաբերի և, ամենակարևորը, մեդիտացիայի միջոցով: Առօրյա հասարակական կյանքում «սկզբնաղբյուրը» բնազդորեն նպաստում է համագործակցության առավելությունների ընդգրկմանը «բռնություններից զերծ հասարակության» ձևավորման գործընթաց: Նա նպաստում է կյանքին սպառնացող վտանգների վերացմանը և ինքն էլ շահում է դրանից:

Ուղեղի նեվրոռեալիստական այս տեսությունը ստեղծում է բոլոր հիմքերը ինքնակամ վերջ դնելու սպանությանը և ենթարկվելու հասարակական փոխակերպմանը, որը լիովին համահունչ է սպանություններից զերծ հոգևորի և կենսաբանորեն հրահրվող դժկամության հետ՝ առաջացած սպանության արդյունքում: Այն նաև համատեղելի է

Վիվեկանանդայի տեսության հետ, ըստ որի հայտնի հոգևոր ուսուցիչների խնդիրը ոչ թե Աստծուն մարդկանց մոտեցնելն է, այլ օգնել յուրաքանչյուր անհատի բացահայտել իր ներսում եղած ամենավեհը՝ աստվածայինը: Ինչպես ասում էր Տոլստոյը. «Աստծո թագավորությունը քո մեջ է» (Տոլստոյ, 1974թ.[1983թ.]):

Ահա թե ինչ էր ուսուցանում 15-րդ դարի միստիկ մտածող հնդիկ Կաբիրին.

Քո սրտում Աստծո Հոգին է ապրում,
Սուրհանդակը Բարձրյալի:
Փրկիչը հենց քո մեջ է ապրում,
Նայի՛ր ինքդ քեզ և կտեսնես նրան ...
(Սեթի 1984: 56-7)

Ի՞նչ անել, երբ ուղեղի ֆունկցիոնալ խախտումները որոշ անհատների վերածում են անուղղելի մարդասպանների: Նույնիսկ եթե մարդասպանության հիմքում ընկած են կենսաբանական շարժառիթները, այլ ոչ թե մշակութային սովորույթներն ու ուսուցողական գործընթացները, ապա գիտական առաջընթացը խոստանում է օգնել հոգեկան շեղումներով մարդասպաններին ձերբազատվել սպանելու ցանկությունից՝ միաժամանակ չվնասելով մարդկային այլ հատկանիշները: Ժամանակակից նյարդաբանության, գենետիկայի և կենսաբանական այլ գիտությունների բնագավառում առկա նվաճումները ենթադրում են, որ մարդասպանությունը այլև չի կարող համարվել «մարդկային էության անբաժանելի մասը», եթե այն նույնիսկ ատիպիկ կենսաբանական ֆունկցիաների խախտման արդյունք է:

Առաջին օրինակներից են էվոլուցիոն զարգացման ոլորտում նյարդահոգեբան Ջեյմս Վ. Պրեսկոտի և նյարդահոգեբույժ Ռոբերտ Գ. Հիթի կողմից կատարված տեսական ու կիրառական հետազոտությունները (Ռեստակ՝ 1979:118-133): Նրանց կարծիքով սպանելու պահանջը որոշ անհատների մոտ էլեկտրական շղթաների վնասման հետևանք է («հաճույքի ուղիներ»), որով կապակցվում են ուղեղի հատվածները, որոնք էլ իրենց հերթին իրար են կապում զգացումները (լիմբիկ համակարգ) և մարմնի շարժումները (փոքր ուղեղ): Գիտնականները կարծում են, որ այս շղթաների ճիշտ կամ սխալ զարգացումը կապված է վաղ մանկության շրջանում մարմնի պտուտակաձև շարժումների զարգացման աստիճանից: Նրանք այս վարկածը հիմնավորեցին փորձի միջոցով, որի ընթացքում շիմպանզեների մի մասի գլուխները անշարժացրել էին հատուկ հարմարանքի օգնությամբ, իսկ մյուս մասին, աթոռի մեջ նստեցրած, պտտեցնում էին: Արդյունքում այն շիմպանզեները, որոնց շարժումները սահմանափակել էին, ավելի ագրեսիվ էին, իսկ այն շիմպանզերները, որոնք կարող էին ազատ շարժվել՝ ավելի շփվող: Իրականացնելով փորձեր մահապատժի դատապարտված մարդասպանների շրջանում՝ նրանք փոքր էլեկտրոդ տեղադրեցին նրանց հետին ուղեղում, որը կառավարվում էր գրպանի ստիմուլյատորով և աշխատում էր երդվյալ մարդասպանի ուսի մեջ տեղադրված սարքի միջոցով («փոքր ուղեղի ստիմուլատոր» կամ «փոքր ուղեղի կարգավորիչ»): Երբ տրամադրության անկման զգացողություն է առաջանում և սպանելու անզուսպ ցանկություն, մարդը կարող է ակտիվացնել «հաճույքի ուղիները» և մոռացության տալ այդ զգացողությունները:

«Քրեորեն անառողջ հոգեվիճակ» ախտորոշմամբ որոշ անհատներ անմիջապես թեթևության զգացողություն են ունեցել երկար տարիների բանտարկությունից կամ զրկանքներից հետո: Մյուսների մոտ նկատվել է ինքնասպանություն գործելու ու այլոց սպանելու անզուսպ պահանջի աստիճանական վերացում: Փորձեր եղան, որոնք ձախողվեցին: Մի դեպքում փոքր ուղեղին միացված սարքի լարը կտրվեց և հիվանդն

անմիջապես մկրատով սպանեց բուժքրոջը: Բայց և այնպես նորարարական այս փորձերի ընթացքում արձանագրված հաջողությունները խթան են հանդիսանում նոր տեսական ու տեխնիկական բացահայտումների, որոնք կազատագրեն մարդկությանը սպանություն գործելու կենսաբանական պահանջից:

Սպանությունները կանխելու լավատեսությունը քաղաքագիտական պեսիմիզմին խստորեն հակադրելու հետագա հիմքերը ընկած են Ստենդֆորդ համալսարանի քսաներեք հոգեբույժների եզրահանգումներում, որոնք Մարտին Լյութեր Քինգի և սենատոր Ռոբերտ Ֆ. Քենեդիի սպանություններից հետո ձևավորեցին հանձնաժողով՝ ուղղված այսպես կոչված «բռնությունների ծգնաժամի» ուսումնասիրմանը (Դանիելս, Գիլուլա և Օչբերգ, 1970թ.): Բռնություն և ագրեսիա երևույթները դիտարկելով կենսաբանության, հոգեդինամիկայի, շրջակա միջավայրի, զայրույթի, միջխմբային կոնֆլիկտների, զանգվածային լրատվամիջոցների, հրազենի կիրառման, հոգեկան հիվանդությունների, թմրադեղերի օգտագործման և այլ գործոնների կտրվածքով՝ Դենիելսը և Գիլուլան եկան հետևյալ եզրահանգմանը. «Մենք արդեն գիտենք շատ բան, որպեսզի օգնենք մարդուն վերջ դնել բռնությունների դարաշրջանին. դրա համար միայն պետք է վճռական տրամադրվել ու փնտրել այլընտրանքային ուղիներ»:

Հոգեբույժ Ժորժ Սոլոմոնի (1970թ.) կողմից ներկայացրած մարդասպանության կոնկրետ դեպքերի ուսումնասիրությունը պարզաբանում է սպանություն գործելու պատճառները և ցույց տալիս, որ հնարավոր է այն կանխել, այլ ոչ թե անօգուտ մեջբերել «մարդկային բնության» հարցը: Մի դեպքում առաջին հայացքից անսիրտ ու անհոգի թվացող պատահական կանանց սպանող դիպուկահար-մարդասպանի մանկությունը եղել է այսպիսին. անտեսվածությունը խաղամով հոր կողմից, անբարո ու հարբեցող մոր թեթևաբարո վարքը, զենքի նկատմամբ սերը և թմրադեղերի օգտագործումը իր կողմից գործած սպանությունների «սարսափելի տեսարանները» մոռանալու համար: Մեկ այլ դեպքում նախկին կնոջ նոր ամուսնուն սպանողն ունեցել է այսպիսի անցյալ. աղքատությունը, մորն անընդհատ ծեծող հոր հանդեպ ատելությունը, հոր կողմից գլխին ստացած հարվածների հետևանքով առաջացած ցնցումները, մոր ծաղրը, քույրերի ծեծը, ծովային նավատորմիղում սերժանտի կոչման արժանանալը, ամուսնությունը հասարակաց տան մարմնավաճառի հետ, երկու երեխաների ծնունդը, կնոջ վրա հարձակումը և սեփական երակները կտրելու փորձը, իր բացակայության ընթացքում կնոջ անհավատարմությունը բացահայտելուց հետո 38 կալիբրի ատրճանակով վերջինիս սպանելու կնոջ սպառնալիքը և վերջում կնոջ նոր ամուսնու սպանությունը հյուրասենյակում, որտեղ երեքով վիճում էին երեխաների համար վճարվող ալիմենտի և երեխաների հետ տեսակցելու հոր իրավունքի մասին:

Սոլոմոնը տալիս է այսպիսի եզրահանգում.

> Որպես հոգեբույժ ես միանգամայն վստահ եմ, որ մարդու վարքը կարելի է փոխել: Անհատի վտանգավոր վարքագիծը կանխելու և նրան ճիշտ ուղու վրա դնելու մեր ձախողումները անիրազեկության հետևանք են և կարող են շտկվել հետագա ուսումնասիրությունների միջոցով, որոնք ավելի շուտ պետք է ուղղվեն գործող սկզբունքներին չհետևելու, նորը չստեղծելու և հասարակական անոմալիաների դեմ վրիժառությամբ լցվելու խնդիրներին, քան բռնություն գործադրող մարդուն հատուկ «անբուժելիությունը» ուսումնասիրելուն:
> Մարդն ունի աճելու և վերափոխվելու մեծ ներուժ, և ես հուսով եմ, որ բռնություն գործելու նրա հակումները կարելի է վերացնել(387):

Մարդաբանության մեջ խաղաղություն հաստատելու և բռնություններ կանխելու մարդկային կարողությունները հասկանալու շահագրգռվածությունը ի հակադրություն

բռնության և ագրեսիայի անընդմեջ շեշտադրման, տալիս է նոր գիտելիք, որը ևս մեկ անգամ կասկածի տակ է դնում այն ենթադրությունը, որ հնարավոր չէ ստեղծել սպանություններից զերծ հասարակություն (Սփոնսել և Գրեգորի, 1994թ.; Սփոնսել 1996թ.): Լեսլի Է. Սպոնսելը մեկնաբանում է. «Բռնություններից զերծ խաղաղ հասարակությունները հազվադեպ են ոչ թե նրա համար, որ նման հասարակություններ շատ քիչ կան, այլ նրա համար, որ խաղաղությունն ու բռնություններից ազատ իրադրությունը հազվադեպ են դառնում հետազոտությունների, ԶԼՄ-ների և այլ ոլորտների ուսումնասիրության առարկա»: Հետո ավելացնում է. «նույնքան կարևոր է հասկանալ խաղաղության ու «ոչ բռնության» բնութագրիչները, նախադրյալները, պատճառները, գործոնները, գործընթացներն ու հետևանքները, որքան կարևոր է դրանք հասկանալ բռնության ու պատերազմի համատեքստում» (Սփոնսել 1994թ.: 18-9):

Գիտական հիմնավորումները, որոնք կասկածի տակ դրեցին Հոբսի այն ենթադրությունը, որ բոլոր նախամարդիկ մարդասպաններն են, առաջ տարան Պիերո Գիորգիի(1999թ.) և Ջ.Մ.Գ. վան դեր Դենեն (1990թ.; 1995թ.): Ուսումնասիրելով պատերազմներին և խռովություններին մասնակցած 50.000 «նախամարդկանց» վերաբերյալ փաստարկները անցած դարի էթնոգրաֆիկ գրականության էջերում, վան դեր Դենեն գտավ հավաստի հիմնավորումներ միայն 2.000 համայնքների համար: Ընդունելով այն հանգամանքը, որ բոլոր մյուս խմբավորումների «ռազմատենչական ձգտումների» վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը չի երաշխավորում և վերջիններիս խաղաղասիրությունը, վան դեր Դենեն զգուշանում է կիսել ողջ մարդկության ռազմատենչ լինելու ենթադրության անառարկելի փաստը (1990: 257, 259, 264-9): Նա մեջբերում է էթնոգրաֆիկ տվյալներ հնդկական և ավստրիալական 395 «խաղաղասեր» ցեղերի վերաբերյալ (1995:595-619):

Ուսումնասիրելով մարդաբանական գրականությունը՝ Բրուս Դ. Բոնտան (1993թ.) առանձնացնում է քառասունյոթ համայնքներ, որոնք աչքի են ընկել իրենց «խաղաղասիրական» վարքուբարքով:

> Խաղաղասիրությունը մի վիճակ է, որտեղ մարդիկ ապրում են հնարավորինս ներդաշնակ, չկան ֆիզիկական բռնության դեպքեր չափահասների, երեխաների ու տարեցների, կանանց ու տղամարդկանց միջև, մշակված են էֆֆեկտիվ ռազմավարական մոտեցումներ կոնֆլիկտների խաղաղ լուծման և հնարավոր բռնության դրսևորումները կանխելու ուղղությամբ: Նրանք պատրաստ են կանխել հնարավոր բռնության դեպքերը ուրիշների նկատմամբ (կանխել պատերազմները), դաստիարակում են իրենց երեխաներին խաղաղասիրական ոգով և իրենք իրենց համարում են «բացառապես» խաղաղասեր մարդիկ(4):

Խաղաղասիրության դրսևորումներ Բոնտան գտել է ամիշների, անաբապտիստների, բալինեզների, բատեկների, բիրորների, բուիդների, չեուոնգների, դուխոբորների, ֆիպաների, ֆորեներին, գիուիների, հուտերիթների, իֆալուկների, ինուիտների, ջաինների, քադարների, քունգերի, լադախիսների, մալապանդարամների, մբութիների, մենոնիտների, մորավիացիների, նայակաների, նուբիացիների, օնժերի, օրանգ ասլիների, փալիյացիների, փիարոների, կվակերների, գյուղաբնակ հյուսիսային իռլանդացիների, թաիթյան ցեղերի, սաների, սանփոյլների, սալտոների, սեմաիների, տանկաների, թեմիարների, տորայաների, կղզիաբնակ տրիստանների, վաուրաների, յանադիների, զապոտեկների և զունիների մոտ:

Շարունակելով կոնֆլիկտների լուծման եղանակների ուսումնասիրությունը վերոնշյալ ցեղերից քսանչորսի մոտ՝ Բոնտան (1996թ.) գալիս է հետևյալ եզրահանգման.

> Կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծելու հաջողված դեպքերը այս համայնքների մոտ կասկածի տակ դրեցին արևմտյան գիտնականների կողմից կոնֆլիկտների և դրանց լուծման վերաբերյալ լայն տարածում գտած մի շարք տեսակետներ ու հիմնավորումներ, մասնավորապես՝ բռնի կոնֆլիկտները անխուսափելի են ցանկացած հասարակության համար, պատիժը և զինված ուժի կիրառումը կանխում են արտաքին և ներքին բախումները, կոնֆլիկտներից խուսափելու համար պետք են քաղաքական ինստիտուտներ և որ կոնֆլիկտը պետք է դիտարկել որպես դրական ու անխուսափելի իրողություն: Մինչդեռ հակառակն են ապացուցում այն վկայությունները, որ խաղաղասեր հասարակությունների կեսից ավելիում չեն գրանցվել բռնության դեպքեր, նրանք հազվադեպ են պատժել չափահասներին (միայն արտաքսելու սպառնալիքի դեպքում), նրանք արտաքին կոնֆլիկտները լուծել են նույն խաղաղ ճանապարհով, ինչպես որ ներքին կոնֆլիկտները, նրանք չեն փնտրել այլ պետությունների միջամտությունը ներքին հակասությունները կարգավորելիս, նրանք խիստ բացասաբար են վերաբերվել կոնֆլիկտային իրավիճակներին (403):

Մարդաբանական գիտությունների բացահայտումներից մեկն էլ նա է, որ հասարակության մեջ բռնության դեպքերի հաճախականությունը որոշող գործոնների շարքում կարևոր դեր է խաղում նաև երեխայի սոցիալականացման և համայնքի ինքնորոշման խնդիրը (Ֆաբրո, 1978թ.): Նշված գործոնների կարևորությունը երևում է Դուգլաս Պ. Ֆրայի (1994թ.)՝ հնդկալեզու երկու մեքսիկական գյուղերի համեմատական ուսումնասիրության մեջ: Այս երկու գյուղերն ունեն սոցիալ-տնտեսական նույն կարգավիճակը, բայց տարբերվում են բռնության դեպքերի հաճախականության ցուցանիշով: Խաղաղ Լա Պազայում, որտեղ մարդասպանության դեպքերը շատ քիչ են, բնակիչները իրենց համարում են «հարգված, խաղաղասեր, անկեղծ և ընկերասեր» (140): Իսկ հարևան Սան Անդրես բնակավայրում գերիշխում է «բռնությունը խրախուսող արժեքների համակարգը» (141): Այստեղից էլ կանանց նկատմամբ հարգանքի բացակայությունը, կանանց ծեծի ենթարկելը, երեխաներին ֆիզիկական պատժի ենթարկելը, հայհոյանքները, հարբեցողների տուրուդմփոցը, խանդի հողի վրա կատարված սպանությունները, թշնամանքը և վրիժառությունը: Նույն տնտեսական ու կառուցվածքային կարգավիճակն ունեցող Սան Անդրեսում մարդասպանությունը կազմում է 18.1% 100.000 բնակչության կտրվածքով, ի տարբերություն Լա Պազի, որտեղ այն կազմում է 3.4%: Այս համեմատությունն օգնում է մեզ հասկանալ, որ մարդկային էության և բռնությունը խրախուսող հասարակական նորմերի շուրջ առկա վատատեսությունը բերում է նոր արյունահեղությունների, մինչդեռ սպանությունները դատապարտող համոզմունքներն ու արժեքները ստեղծում են բոլոր նախադրյալները սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու համար:

Այն համոզմունքը, որ մարդն ունակ է զերծ մնալ սպանություններից, ևս մեկ անգամ իր գիտական հիմնավորումը ստացավ Սեվիլյան «Բռնությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարության» մեջ, որը հրատարակվեց 1986թ. մայիսի 16-ին մի խումբ գիտնականների կողմից, որոնք ուսումնասիրում էին կենդանիների վարքագիծը, կենսաբանական մարդաբանությունը, էթոլոգիան, նյարդահոգեբանությունը, ֆիզիկական մարդաբանությունը, քաղաքական հոգեբանություն, հոգեբուժությունը, հոգեկենսաբանությունը, հոգեբանությունը, սոցիալական հոգեբանությունը և սոցիոլոգիան: Նրանք հայտարարեցին.

Գիտականորեն սխալ է ասել, որ մենք պատերազմելու ձգտումը ժառանգել ենք մեր նախնիներից....
Գիտականորեն սխալ է ասել, որ պատերազմը կամ բռնի վարքագծի ցանկացած այլ դրսևորումը գենետիկորեն ծրագրավորված է մեր մարդկային էության մեջ....
Գիտականորեն սխալ է ասել, որ մարդու էվոլուցիոն զարգացման ընթացքում մարդիկ ավելի շուտ նախընտրել են ագրեսիվ վարքագիծը և ոչ այլ տեսակի վարքագծեր....
Գիտականորեն սխալ է ասել, որ մարդկանց ուղեղում գերիշխում է «բռնությունը»....
Գիտականորեն սխալ է ասել, որ պատերազմի պատճառ կարող է լինել «բնազդը» կամ ցանկացած այլ շարժառիթ:

Արձագանքելով Սթենֆորդի հոգեբույժների լավատեսական հայացքներին, սեվիլյան գիտնականները հայտարարում են.

Մենք եկանք այն եզրահանգման, որ կենսաբանությունը չէ, որ դրդում է մարդկանց պատերազմական գործողությունների, և որ մարդկությունը կարող է ազատագրվել կենսաբանական պեսիմիզմի կապանքներից ու վստահ քայլերով ընդառաջ գնալ խաղաղ փոխակերպման համար անհրաժեշտ պահանջների կատարմանը՝ թելադրված Խաղաղության Միջազգային Տարվա կողմից և անհրաժեշտ գալիք տարիների համար: Չնայած այս պահանջները կարելի է կատարել համակարգված ու կոլեկտիվ ուժերով, բայց դրանք պետք է ընկած լինեն յուրաքանչյուրի ենթագիտակցության մեջ, ում համար լավատեսությունը և վատատեսությունը վճռորոշ գործոններ են: Ինչպես որ «պատերազմական գաղափարները ծնվում են մարդկանց գլուխներում», այնպես էլ խաղաղությունը սկիզբ է առնում մեր մտքերում: Բոլոր այն մարդիկ, ովքեր հնարեցին պատերազմը, կարող են նույն կերպ հնարել և խաղաղությունը: Պատասխանատվության բեռը ընկած է մեզանից յուրաքանչյուրի ուսերին (Ադամս 1989: 120-1; 1997):

1939թ. օգոստոսի 2-ին Ալբերտ Էյնշտեյնը մի նամակ գրեց նախագահ Ռուզվելտին, որում ասվում էր, որ ատոմային ֆիզիկան հասել է զարգացման մի փուլի, երբ «նոր տեսակի գերհզոր արկերի» արտադրությունը դարձել է «հնարավոր»(Նաթան և Նորդեն, 1968:295): Արդյունքում ձևավորվեց խորհրդակցական հանձնաժողով, 6հազ. դոլարի չափով նախնական գումարի ներդրում կատարվեց ԱՄՆ-ի կառավարության կողմից, կազմակերպվեց բազմամիլիարդ դոլարների արժողությամբ Մանհեթենյան ծրագրի շահարկումը և վեց տարի անց ստեղծվեցին ու գործարկվեցին աշխարհում առաջին ուրանիում ու պլուտոնիում արկերը: Յոթանասուն տարի անց վստահ կարելի է ասել, որ սպանություններից հրաժարվելու մարդկային կարողության վերաբերյալ կան բավականաչափ գիտական հիմքեր, որոնց համակարգված զարգացումն ու ինտեգրացումը ինքնին կբերեն սպանություններից զերծ հասարակության ձևավորմանը: Կարելի է առանձնացնել ավելի քան հազար դոկտորական ատենախոսություններ, որոնցում ներկայացված են «բռնությունների վերացմանն» ուղղված հետազոտություններ, որոնք հետզհետե աճելով, 1963թ. միայն Միացյալ Նահանգներում ընդգրկեցին այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մարդաբանությունը, քրեագիտությունը, կրթությունը, պատմությունը, լեզուն ու գրականությունը, փիլիսոփայությունը,

քաղաքագիտությունը, սոցիոլոգիան, խոսքային հաղորդակցությունը և տեսաբանությունը (միջազգային ատենախոսական ամփոփ աշխատանքներ 1963-):

Սրան ավելացրած ուսումնասիրությունները կատարված այլ երկրներում (օրինակ՝ Հնդկաստան) տարբեր լեզուներով, ներկայացված գիտական կոնֆերանսների ժամանակ ընթերցվող զեկույցներում, գրքերում և միջազգային սիմպոզիումներում (Կուլ 1990; 1993), ընդհանրական վերլուծություններում (Գրեգ 1966), նոր ամսագրերում («Ո՞չ բռնությանը» միջազգային ամսագիր, 1993-), բռնությունը դատապարտող անձանց ինքնակենսագրական հետազոտություններում (Մաքքարթի և Շարփ՝ 1997թ.), և այլ աղբյուրներում, պարզ է դառնում, որ «խաղաղության» և «կոնֆլիկտների խաղաղ լուծման» գրականության աճին զուգընթաց, աճում ու մեծանում է նաև բռնությունը կանխելու վերաբերյալ գիտելիքների մակարդակը: Սպանությունները կանխելու վերաբերյալ ներկայիս գիտելիքների պոտենցիալը գործնականորեն կարելի է համեմատել 1939թ. ատոմային ֆիզիկայի զարգացման շրջանում առկա գիտելիքների պոտենցիալի հետ:

Սպանությունները կանխելու մարդկային կարողությունների վառ դրսևորումներ

Էմիլի Դուրկհեյմը (1858-1917)՝ ժամանակակից սոցիոլոգիայի հիմնադիրը, բոլորի ուշադրությունը հրավիրեց սոցիալական կյանքի «վառ դրսորումներին»՝ անմիջականորեն կապված տեսական բնույթի հարցերի հետ: Այս միտքը առաջ տարավ ամերիկացի սոցիալ-հոգեբան Դոնալդ Տ. Քեմփբելլը, որը հյուսիսարևմտյան համալսարանի քաղաքագիտության բաժնի ավարտական կուրսի ուսանողներին հրահանգեց աչալուրջ հետևել «սոցիալական փորձերին», որոնք ընդհանուր շատ բաներ ունեն փորձարարական լաբորատորիայում կատարվող փորձերի հետ (Փեյջ, 1971թ.): Քանի որ քաղաքագիտության տեսությունը մշակվում է պրակտիկ դիտարկումներից դուրս գալով («Տիրակալը» աշխատության մեջ Մաքիավելիի տեսության հիմքում ընկած է Չեզարե Բորջիայի անողոք քաղաքականությունը), ապա պատմությունից և ժամանակակից կյանքից վերցված խաղաղասիրական վարքագծի օրինակները էապես կարևոր են հասկանալու համար սպանություններից զերծ հասարակության փոխակերպման հնարավորությունները:

Սպանությունները կանխող կարողությունների վառ դրսևորումներից են հասարակական քաղաքականությունները, հասարակական ինստիտուտները, մշակութային իրադարձությունները, սպանությունների կանխմանն ուղղված քաղաքական պայքարները, պատմական զարգացումները և «գաղափարին» նվիրված անհատները:

Պետական քաղաքականություն

Սպանություններից զերծ հասարակություններ ձևավորելուն ուղղված քաղաքական որոշումների ուշագրավ օրինակներ կարելի է գտնել այն երկրներում, որտեղ չի կիրառվում մահապատիժը, այն երկրներում, որտեղ չկա գործող բանակ և այն երկրներում, որտեղ օրենքով թույլատրվում է այլընտրանքային զինծառայությունը:

2009թ. հունվարի դրությամբ աշխարհի 195 երկրներից ու տարածաշրջաններից 94-ը վերացրել են մահապատիժը անկախ հանցագործության ծանրությունից:

Աղյուսակ 2.Երկրներ և տարածաշրջաններ(93), որտեղ մահապատիժը չի գործում

Ալբանիա	Գերմանիա	Պանամա
Անդորա	Հունաստան	Պարագվայ
Անգոլա	Գվինեական ծոց	Ֆիլիպիններ
Արգենտինա	Հաիթի	Լեհաստան
Հայաստան	Հոնդուրաս	Պորտուգալիա
Ավստրալիա	Հունգարիա	Ռումինիա
Ավստրիա	Իսլանդիա	Ռուանդա
Ադրբեջան	Իռլանդիա	Սամոա
Բելգիա	Իտալիա	Սան Մարինո
Բութան	Կիրիբատի	Սան Տոմե և Պրինսիպե
Բոսնիա-Հերցեգովինա	Լիխտեյնշտեյն	Սենեգալ
Բուլղարիա	Լիտվա	Սերբիա
Կամբոջա	Լյուքսեմբուրգ	Սեյշելես
Կանադա	Մակեդոնիա(ՅՆՀ)	Սլովակիա
Քեյփ Վերդե	Մալթա	Սլովենիա
Չիլի	Մարշալյան կղզիներ	Սոլոմոնյան կղզիներ
Կոլումբիա	Մաուրիտիուս	Հարավային Աֆրիկա
Կուկի կղզիներ	Մեքսիկա	Իսպանիա
Կոստա Ռիկա	Միկրոնեզիա	Շվեդիա
Կոդ դ'Իվուար	Մոլդովիա	Շվեյցարիա
Խորվատիա	Մոնակո	Թիմոր-Լորսե
Կիպրոս	Մոնտենեգրո	Թուրքիա
Չեխիա	Մոզամբիկ	Թուրքմենիստան
Դանիա	Նամիբիա	Տուվալու
Ջիբութի	Նեպալ	Ուկրաինա
Դոմինիկյան հանրապետություն	Նիդերլանդներ	Միացյալ Թագավորություն
Էկվադոր	Նոր Զելանդիա	Ուրուգվայ
Էստոնիա	Նիկարագուա	Ուզբեկիստան
Ֆինլանդիա	Նիու	Վանուատու
Ֆրանսիա	Նորվեգիա	Վատիկան
Վրաստան	Պալաու	Վենեսուելա

Աղբյուրը՝ «Միջազգային Ամնիստիա», հունվար 2009թ.

Մահապատժի վերացման յուրաքանչյուր դեպք իր մեջ ներառում է գիտական ու քաղաքական բացառիկ շահեր: Ինչու՞, ինչպե՞ս և ո՞ր փուլում է, որ յուրաքանչյուր կառավարություն որոշում է արգելել սպանությունը: Ինչու՞ են այստեղ ներկայացված որոշակի երկրներ, մշակույթներ և տարածաշրջաններ, մինչդեռ մյուսները բացակայում են: Նորամուծությունների և դրանց տարածման ի՞նչ պատմական գործընթացների հետևանք է գլոբալ ներդաշնակությունը, որն ունենք այսօր: Խաղաղասիրական փոխակերպումների այս օրինակները ինչպիսի՞ ազդեցություն կունենան

սպանություններից զերծ համաշխարհային հասարակությունների ստեղծման հետագա գործընթացի վրա:

Ի լրումն այն երկրների, որոնք հիմնովին վերացրել են մահապատիժը, ինը երկրներ, վերացնելով մահապատիժը սովորական հանցագործությունների համար, կիրառում են այն միայն ռազմական կամ պատերազմական հատուկ իրավիճակներում (օր.՝ Բոլիվիա, Բրազիլիա, Սալվադոր, Ֆիջի, Իսրայել, Ղազախստան, Կիրգիզստան, Լատվիա և Պերու): Երեսունվեց երկրների օրենքներում կիրառվում է մահապատիժը, սակայն վերջին տաս և ավելի տարիների ընթացքում ոչ ոք մահապատժի չի ենթարկվել (օր.՝ Ալժիր, Բենին, Բրունեյ Դարուսալամ, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կենտրոնական Աֆրիկա, Կոնգոյի Հանրապետություն, Էրիտրեա, Գաբոն, Գամբիա, Գանա, Գրենադա, Կենիա, Հարավային Կորեա, Լաոս, Լիբերիա, Մադագասկար, Մալավի, Մալդիվես, Մալի, Մավրիտանիա, Մորոկկո, Մյանմար, Նաուրու, Նիգերիա, Պապուա, Նոր Գվինեա, Ռուսաստանի Դաշնություն, Շրի Լանկա, Սուրինամի, Սվազիլենդ, Տաջիկիստան, Տանզանիա, Տոգո, Տոնգա, Թունիս և Զամբիա): Հիսունհինը երկրներ (2002թ. հինսունմեկ երկիր) օրենքով կիրառում են մահապատիժը՝ շարունակելով սպանությունները (այդ թվում՝ Աֆղանստան, Անտիգա և Բարբուդա, Բահամյան կղզիներ, Բահրեյն, Բանգլադեշ, Բարբադոս, Բելառուսիա, Բելիզ, Բոցվանա, Բուրունդի, Չադ, Չինաստան, Կոմորոս, Կոնգոյի Ժողովրդական Հանրապետություն, Կուբա, Դոմինիկյան Հանրապետություն, Եգիպտոս, Հասարակածային Գվինեա, Եվթոպիա, Գվատեմալա, Գվինեա, Գուանա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իրան, Իրաք, Յամայկա, Ճապոնիա, Հորդանան, Հյուսիսային Կորեա, Քուվեյթ, Լիբանան, Լեսոթո, Լիբիա, Մալազիա, Մոնղոլիա, Նիգերիա, Օման, Պակիստան, Պաղեստին, Քաթար, Սենտ-Քրիստոֆեր և Նևիս, Սենթ-Լուսիա, Սենթ-Վինսենթ և Գրենադինես, Սաուդիան Արաբիա, Սիերա Լիոնե, Սինգապուր, Սոմալի, Սուդան, Սիրիա, Թայվան, Թայլանդ, Տրինիդադ և Տոբագո, Ուգանդա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վիետնամ, Եմեն և Զիմբաբվե): Չնայած Միացյալ Նահանգները շարունակում է կիրառել մահապատիժը պետական հանցագործությունների դեպքում, նրա հիսուն նահանգներից տասնչորսը՝ Ալյասկան, Հավայան կղզիները, Իովան, Մեյնը, Մասաչուսեթսը, Միչիգանը, Մինիսոտան, Նյու Ջերսին, Նյու Յորքը, Հյուսիսային Դակոտան, Ռոդ Այլընդը, Վերմոնթը, Արևմտյան Վերջինյան, Վիսկոնսինը, ինչպես նաև Կոլումբիայի շրջանը օրենքով վերացրել են այն:

Չնայած մահապատիժը վերացնելու կամ այն վերահաստատելու հերթագայությանը՝ արյունալից անցյալ ունեցող երկների ձգտումը մահապատժի վերացման ուղղությամբ ևս մեկ անգամ ամրապնդում է սպանություններից զերծ հասարակություն ստեղծելու իրատեսությունը: Քաղաքացիների սպանությունը չպետք է հանդիսանա Ռուսսոյի «հասարակական պայմանագրի» մասը, ոչ էլ Մաքս Վեբերի նկարագրած քաղաքականության անբաժանելի մասնիկը:

Դիտարկենք նաև գործող բանակ չունեցող անկախ պետությունների ցանկը: 2009թվականի դրությամբ դրանք քսանյոթն էին և բոլորը՝ բացառությամբ Կուկ Այլանդսի և Նիուեի, հանդիսանում են ՄԱԿ-ի անդամ երկրներ:

Աղյուսակ 3. Երկրներ, որոնք չունեն սեփական բանակ(27)

Բանակ չունեցող երկրներ(19)

Կոստա Ռիկա	Պանամա
Դոմինիկա	Սենտ Կիտս և Նևիս

Գրենադա
Հաիթի
Կիրիբաթի
Լիխշտեյնշտեյն
Մալդիվես
Մաուրիտուս
Նաուրու
Սանտա Լուսիա
Սանտա Վինսենտ և Գրենադիններ
Սամոա
Սան Մարինո
Սոլոմոնյան կղզիներ
Տուվալու
Վանուատու
Վատիկան

Բանակ չունեցող երկրներ(8)
(ըստ պաշտպանության դաշնագրի)

Անդորա (Ֆրանսիա, Իսպանիա)
Կուկ կղզիներ (Նոր Զելանդիա)
Իսլանդիա (ՀԱԴ/ՆԱՏՕ/, ԱՄՆ)
Մարշալյան կղզիներ (ԱՄՆ)
Միկրոնեզիա (ԱՄՆ)
Մոնակո (Ֆրանսիա)
Նիուե (Նոր Զելանդիա)
Պալաու (ԱՄՆ)

Աղբյուր՝ Բարբեյ 2001

Թվարկվածներից բացի, առնվազն տասնութ ոչ անկախ տերիտորիաներ ու աշխարհագրական տարածքներ, կնքել են ապառազմականացման համաձայնագրեր այն երկրների հետ, որոնց ենթակայության ներքո գտնվում են (ինչպես Ալանդի կղզիները և Ֆինլանդիան) կամ ստորագրել միջազգային հրամանագրեր (ինչպես՝ Անտարկտիկան և Լուսինը (Բարբեյ՝ 1989: 5)):

Բանակի բացակայությունը արտառոց երևույթ կարող է հանդիսանալ այն երկրների համար, որտեղ բանակի առկայությամբ է պայմանավորված ազգային ինքնության պահպանումը, հասարակական վերահսկողության հաստատումը, երկրի պաշտպանության ապահովումը ու հարձակողական գործողությունների իրականացումը: Չնայած սեփական բանակ չունեցող երկրների թիվը փոքր է և նրանց մի մասը գտնվում է զինված դաշնակիցների ենթակայության ներքո կամ ունի իր տերիտորիաներում տեղակայված ռազմական ուժեր, այդուհանդերձ նրանց օրինակը ցույց է տալիս, որ հնարավոր է ունենալ ոչ ռազմականացված պետականություն: Սպանություններից զերծ պետականությունների գոյությունը իրատեսական է: Այն երկրներում, որտեղ կա բանակ, այլընտրանքային զինծառայության կիրառումը սպանություններից զերծ քաղաքագիտության հնարավոր գոյության ևս մեկ ապացույցն է: 2005թ. հիսունչորս երկրներ օրենքով ճանաչեցին այլընտրանքային զինծառություն անցնելու քաղաքացիների իրավունքը:

Աղյուսակ 4. Երկներ(թվով 54), որոնք ճանաչել են այլընտրանքային զինծառայություն անցնելու քաղաքացիների իրավունքը

Ալբանիա
Արգենտինա
Հայաստան
Ավստրալիա
Ավստրիա
Ֆինլանդիա
Ֆրանսիա
Գերմանիա
Հունաստան
Գայանա
Լեհաստան
Պորտուգալիա
Ռումինիա
Ռուսաստան
Սերբիա

Ադրբեջան	Հունգարիա	Սլովակիա
Բելառուսիա	Իսրայել	Սլովենիա
Բելգիա	Իտալիա	Հարավային Աֆրիկա
Բերմուդյան կղզիներ	Կիրգիզստան	Իսպանիա
Բոսնիա-Հերցեգովինա	Լատվիա	Սուրինամ
Բրազիլիա	Լիտվա	Շվեդիա
Բուլղարիա	Մակեդոնիա	Շվեյցարիա
Կանադա	Մալթա	Ուկրաինա
Խորվատիա	Մոլդովիա	Միացյալ Թագավորություն
Կիպրոս(հունական մասը)	Մոնտենեգրո	Միացյալ Նահանգներ
Չեխիայի Հանրապետություն	Նիդերլանդներ	Ուզբեկիստան
Դանիա	Նորվեգիա	Յուգոսլավիա
Էստոնիա	Պարագվայ	Զիմբաբե

Աղբյուր՝ Հորման և Սթոլվիժկ (1998թ.), Պատերազմը դատապարտողների միջազգային ընկերություն (2005թ.):

Զինծառայությունից հրաժարման իրավական հիմքերը զանազան են՝ սկսած նեղ կրոնական պահանջմունքներից մինչև սպանելուց հրաժարվելու հոգևոր, փիլիսոփայական, էթիկական, բարոյական, մարդասիրական կամ քաղաքական բազմաբնույթ պատճառներ: Տարբեր են նաև այլընտրանքային զինծառայության պահանջները, դրանից հրաժարվելու զինծառայողներին տրված հնարավորությունը և օրենքը կիրառելու հուսալիության աստիճանը (Մոսկոս և Չամբերս, 1993թ.): Զինծառայությունից հրաժարվելու ներկայիս ամենաազատական օրենքը ընդունվել է 1949թ. Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության Սահմանադրության 4 հոդվածում ՝ «Ոչ մեկը չպետք է ստիպողաբար կռվի դաշտ մտնի՝ զենքը ձեռքին, իր կամքին հակառակ»(Կուհլման և Լիփերթ, 1993: 98): Ինչպես մահապատիժ չկիրառող և սեփական բանակ չպահող երկրների օրինակները, այնպես էլ այլընտրանքային զինծառայության իրավունքի քաղաքական ճանաչման հիմքերը, գործընթացները, համաշխարհային օրինակները և հեռանկարները հանդիսանում են բացառիկ հետաքրքրության առարկա գիտական շրջանների համար :

Հասարակական կառույցներ

Աշխարհի տարբեր մասերում արդեն իսկ սկսել են գործառնել մի շարք հասարակական կառույցներ, որոնց նպատակն է աջակցել սպանություններից զերծ ապագա հասարակությունների խաղաղ փոխակերպման գործընթացին: Նման կառույցների առկայությունը ևս մեկ անգամ ապացուցում է սպանություններից հրաժարվելու մարդկության ձգտումը: Եթե հնարավոր լիներ աշխարհով մեկ սփռված այս ինստիտուտները արդյունավետորեն համախմբել և ադապտացնել ցանկացած հասարակության կարիքներին, ապա սպանություններից զերծ հասարակությունների ստեղծումը հնարավոր կլիներ նույնիսկ հիմա, և դա կլիներ ոչ թե երևակայության արդյունք, այլ մարդկային փորձառնության հետևանք: Բազմաթիվ այս կառույցներից միայն մի քանիսն են նշված այստեղ, չնայած նրանցից յուրաքանչյուրն ունի հիշատակման արժանի մի ողջ պատմություն:

Հոգևոր հաստատություններ

Խաղաղասիրական համոզմունքներով առաջնորդվող կրոնական հաստատություններ կարելի է գտնել ողջ աշխարհում: Նրանցից կարելի է նշել ջայնիզմի հետևորդներին Արևելքում, քվակերներին՝ Արևմուտքում, «Խաղաղասիրական ու եղբայրակցական համաշխարհային միությունը» ճապոնիայում, Փլյում գյուղի բուդդիստական համայնքը Ֆրանսիայում, Սիմոն Կիմբանգու եկեղեցին Աֆրիկայում, Դուխոբոր պացիֆիստները (կամ հոգևոր քրիստոնյաները) Ռուսաստանում ու Կանադայում և հրեաների «Խաղաղ ընկերակցությունը» Միացյալ Նահանգներում: Հաշտության միջազգային ընկերակցությունը՝ հիմնադրված 1919թ., համախմբում է բոլոր կանանց և տղամարդկանց՝ անկախ վերջիններիս կրոնական պատկանելությունից. «բոլոր նրանք, ովքեր հավատալով սիրո և ճշմարտության ուժին, պատրաստ են վերամիավորվել և արդարություն հաստատել համայնքի ներսում՝ բռնությունների կանխումը դարձնելով կենսակերպ և անձնական, սոցիալական, տնտեսական ու քաղաքական փոխակերպման միջոց»:

Քաղաքական կառույցներ

Սպանությունների արմատական վերացումն հետապնդող էլեկտորալ քաղաքական կուսակցություն է Բրիտանիայի «Եղբայրակցություն» կուսակցությունը, որը հիմնադրվել է 1955թ. Ռոնալդ Մալլոնի, Ջոն Լովերսիդի և մի շարք քրիստոնիա պացիֆիստների ու երկրորդ համաշխարհային պատերազմի վետերանների կողմից: Խրախուսելով արվեստն ու սպորտը՝ կուսակցությունը դեմ է պատերազմական գործողություններին, ոչ խաղաղ ճանապարհով տնտեսական ու սոցիալական արդարությունների վերականգնմանը: Գերմանիայում «բռնությունների կանխումն» ընկած է «Կանաչների» բնապահպանական կուսակցության հիմնարար արժեքների հիմքում: Կուսակցությունը հիմնադրվել է 1979թ. Պետրա Կելիի և երեսուն այլ անձանց կողմից: Այս կուսակցության ստեղծման համար ոգեշնչման աղբյուր են հանդիսացել Մահաթմա Գանդիի և Մարտին Լյութեր Քինգի գաղափարներով առաջնորդվող խաղաղասիրական շարժումները(Կելլի, 1989թ.): Չնայած այն անհաստատուն քայլերին, որոնք անում է համաշխարհային քաղաքականության ոլորտում հետզհետե ընդլայնվող «Կանաչների» կուսակցությունը, բռնությունների կանխմանն ուղղված նրա համառ ջանքերը հիմք են հանդիսանում քաղաքական կարևոր նախադրյալների ստեղծման համար: ԱՄՆ պացիֆիստների կուսակցությունը, որն առաջնորդվում է հոգևոր, գիտական և մարդասիրական սկզբունքներով, հիմնադրվել է 1983թ. Բրեդֆորդ Լիթլի կողմից, որն իր թեկնածությունն էր առաջադրել 1996 և 2000թթ. նախագահական ընտրություններին: Կուսակցության խնդիրն է նպաստել ամերիկյան հասարակության խաղաղ փոխակերպմանը և ԱՄՆ դերի փոփոխությանը ողջ աշխարհում: Հնդկաստանի Սարվոդայա կուսակցությունը՝ հիմնադրված Տ.Կ.Ն Ունիթանի և այլ համախոհների կողմից, դուրս է գալիս ընտրական ասպարեզ՝ քարոզելու համար ընդհանուրի բարեկեցությանն ուղղված հասարակական զարգացման մոդելը՝ ստեղծված Գանդիի կողմից: Արդարացնելով քաղաքականությունից հեռու մնալու Գանդիի սովորույթին չհետևելու իր քայլը՝ Սարվոդայա կուսակցությունն ասում է. «ուժն իրենով չեզոք է, այն դառնում է վնասակար միայն վտանգավոր մարդկանց ձեռքին»: Գանդիի խաղաղասիրական գաղափարներով առաջնորդվող Իտալիայի Տրանսնացիոնալ Արմատական կուսակցությունը, լինելով եզակի իր տեսակի մեջ և գործունեություն ծավալելով միջազգային մակարդակներում,

սկիզբ է առել 1988թ. Իտալիայի Արմատական կուսակցությունից: Այն ձգտում է աշխատել բացառապես միջազգային ասպարեզում, որպեսզի կարողանա իր խաղաղասիրական գաղափարներով ազդել ՄԱԿ-ի գործունեության վրա՝ ուղղված օրինակ մահապատժի վերացմանը ողջ աշխարհում, այլընտրանքային զինծառայության իրավունքի ճանաչմանը և ռազմական հանցագործներին քրեական պատասխանատվության ենթարկելուն: Կուսակցությունը չի մասնակցում նախագահական և պառլամենտական ընտրություններին: Կուսակցության անդամները կարող են միաժամանակ անդամակցել մեկ այլ կուսակցության, իսկ անդամավճարները գանձվում են տվյալ երկրի համախառն ներքին արդյունքի մեկ տոկոսի չափով՝ նախատեսված մեկ անձի համար: Առաջնորդվելով Գանդիի գաղափարներով՝ կուսակցությունը կոչ է անում.

- Միջազգային մակարդակով օրենքների ընդունումն ու բռնությունների կանխումը ավելի լավ աշխարհ կառուցելու ամենաարդյունավետ և արմատական ուղին է:

Տնտեսական կառույցներ

Խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող հայտնի տնտեսական կառույցներից են կապիտալիստական բաժնետոմսերի ֆոնդը, որը չի կատարում ներդրումներ ռազմական արդյունաբերության մեջ (Pax World Fund), Գանդիի և Քինգի խաղաղասիրական ուսմունքներով առաջնորդվող աշխատավորների միությունը («Ամերիկայի միացյալ ֆերմերներ»՝ հիմնադրված Ցեզար Չավեսի, Դոլորես Հուերթայի և ուրիշների կողմից), համայնքների բազմակողմանի զարգացման ծրագիրը Շրի Լանկայում՝ հիմնված բուդդիստական խաղաղասիրական սկզբունքների վրա (Սարվոդայա Շրամադանա Սանգամայա, որի ղեկավարն է Ա.Տ.Արիարատնեն): Հնդկական «Հողի շնորհ» (bhoodan) շարժումը, որի հիմքում ընկած է Գանդիի «հոգեբարձության» տեսությունը, և որը նպատակ ունի հողը հատկացնել հողազուրկ գյուղացիներին, չնայած իր ոչ մեծ փորձառությանը՝ ապացուցեց, որ սակավաթիվ ռեսուրսների համերաշխ օգտագործումը հնարավոր է: «Հողի շնորհ» շարժումը գլխավորել են Ջայապրակաշ Նարայանը (1978թ.) և Վինոբա Բհեյվը (1994թ.): Բարեգործական հիմնադրամները խրախուսում են խաղաղասիրական «ծառայությունների» տրամադրումը հասարակությանը: Դրանցից են Գանդիի հիմնադրամը(Լոնդոն), Սարվոդայայի միջազգային հիմնադրամը(Բանգալոր) և Ա.Ջ. Մաստիի անվան ինստիտուտը (Նյու-Յորք):

Կրթական հաստատություններ

Մարդկային կարիքներին համապատասխան խաղաղասիրական ծառայություններ տրամադրող ինստիտուտի ձևավորումը հնարավոր եղավ Գանդիի հետևորդ՝ գիտությունների դոկտոր Գ. Ռամաչանդրանի շնորհիվ(1903-1995), ով հիմնադրեց Գանդիգրամ գյուղատնտեսական ինստիտուտը (Հեղինակավոր համալսարան) Հնդկաստանի Թամիլ Նադու շրջանում: Շրջակա 30 գյուղական տարածքներին «ծառայություններ մատուցող» այս համալսարանի գործունեության կարևոր սկզբունքներից են.

1. ստեղծել կապ տեսական առարկաների և գյուղական միջավայրում դրանց գործնական կիրառման, քաղաքագիտության և որոշումների-կայացման գործընթացի, ֆիզիկայի և ռադիոսարքավորումների վերանորոգման, կենսաբանության և ջրհորների մաքրման, արվեստի և երեխայի ստեղծագործական զարգացման միջև:

2. ապահովել յուրաքանչյուր շրջանավարտի կողմից դիպլոմային աշխատանքի պաշտպանություն՝ ուղղված ընտրված ոլորտին վերաբերող խնդիրների լուծմանը
3. ուսուցանել երեք լեզու՝ թամիլերենը՝ որպես տեղական լեզու, հնդկերենը՝ որպես ազգային լեզու և անգլերեն՝ որպես միջազգային լեզու:
4. ներգրավել բոլորին համալսարանի տերիտորիայի սպասարկման և պահպանման աշխատանքներին՝ վերացնելով դռնապաններ, այգեպաններ և խոհարարներ վարձելու անհրաժեշտությունը:

Ռամաչանդրանի կարևոր ներդրումը եղավ բարձրագույն կրթական համակարգի ներսում զինվորական պատրաստվածություն անցնելու այլընտրանքային տարբերակների մշակումը: Այն անվանվեց «Խաղաղության կորպուս» (Shanti Sena), որի գլխավոր կազմակերպիչը դարձավ հումանիտար գիտությունների պրոֆեսոր Ն. Ռադակրիշնան(1992թ.;1997թ.): 1958-1988թթ. «Խաղաղության կորպուսում» վերապատրաստվեցին հինգ հազար ուսանողներ ու շրջանավարտներ, որոնք դասընթացի ավարտին երդվեցին. «աշխատել հանուն խաղաղության և անհրաժեշտության դեպքում զոհաբերել կյանքը հանուն խաղաղության»: Փոխկապակցելով հոգևոր, ֆիզիկական, ինտելեկտուալ և կազմակերպչական դասընթացները՝ «Խաղաղության կորպուսը» իրականացրել է ուսանողների վերապատրաստում կոնֆլիկտների լուծման, աղետների ժամանակ ցուցաբերվող օգնությունների, անվտանգություն ապահովող գործառույթների և համայնքային կարիքներին համարժեք լուծումների մշակման ոլորտներում: Ուսուցանման նմանատիպ մոտեցումը ենթադրում էր համատեղ աշխատանք գյուղացիների հետ՝ ուղղված երեխաների խնամքի, հիգիենիկ և բնակարանային պայմանների բարելավմանն ու ազգային սովորույթների պահպանմանը: 1970-ական թվականների կեսին, երբ քաղաքային մի շարք համալսարաններ քարկոծվում էին որպես ճնշում գործադրող կառույցներ, Գանդիգրամի շրջակա գյուղերի բնակիչները մասնակցում էին իրենց գյուղական ինստիտուտը հեղինակավոր համալսարան հռչակելուն նվիրված տոնախմբությանը: «Խաղաղության կորպուսը» պատասխանատու էր համալսարանի տարածքի անվտանգության համար: Ձինված ոստիկանների մուտքը համալսարանի տարածք արգելված էր նույնիսկ Հնդկաստանի վարչապետներ Ներուի, Ինդիրա Գանդիի և այլ հայտնի գործիչների այցելությունների ժամանակ:

Վերապատրաստման ինստիտուտներ

Մեր հասարակության մեջ գնալով աճում են ինստիտուտները, որոնք կազմակերպում են խաղաղասիրական դասընթացներ սոցիալական փոփոխությունների, հակամարտության գոտիներում իրականացվող միջամտությունների, բնակչության սոցիալական անվտանգության ապահովման և մի շարք այլ նպատակների իրագործման վերաբերյալ: Ամենուրեք գնալով մեծանում է փորձառու վերապատրաստողների պահանջարկը, ովքեր օգնում են ամրապնդել այն աճող համոզմունքը, թե մարդիկ ունակ են փոխարինել խնդիրների լուծման բռնի տարբերակները խաղաղ լուծման ուղիներով: Նշենք մի քանի կազմակերպությունների և հայտնի վերապատրաստողների անուններ (Beer 1994). Ռամաչանդրանի անվան խաղաղության դպրոց (Ն. Ռադակրիշնան), «Խաղաղության կամուրջներ» միջազգային կազմակերպություն (Դեսայի Նարայան), Մարտին Լյութեր Քինգի անվան Ֆլորիդայի խաղաղության ինստիտուտ(Բերնարդ ԼաՖայետ կրտսեր, Չարլզ Լ. Ալֆին ավագ և Դավիդ Ջենսեն), Հաշտության միջազգային ընկերակցություն (Հիլդեգաարդ Գոս-Մայր և Ռիչարդ Դիթս), Գործնական դասընթացների կազմակերպման կենտրոն (Ջորջ Լաքեյ), Պատերազմը դատապարտողների միջազգային կազմակերպություն (Հովարդ Քլարք), Խաղաղասիրության ուսուցման պաղեստինյան

կենտրոն (Ավադ Մուբարաք), Բռնությունների կանխման միջազգային կազմակերպություն (Միքայել Բեր), Ծառայություն հանուն խաղաղության ու արդարության» (Ադոլֆո Փերեզ Էսկիվել), Բուդդիստների (Յեշուա Մոզեր-Փուանգսվան) և Տրանսցենդենտների (Յոհան Գալթունգ) համացանց:

Խաղաղ փոխակերպման գործընթացների համար ռազմավարական նշանակություն ունեն ինքնապաշտպանության ժամանակ հանդարտություն դրսևորելու և բռնություններից խուսափելու հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթացները, որոնց համար կարևորագույն միջոց է հանդիսանում Ճապոնիայում սկզբնավորված և սպանությունները բացառող Այկիդո մարտարվեստը: Այկիդոի հիմնադիր Մորիհեյ Ուեսիբան ասում էր. «ջարդելը, վնասելը կամ ոչնչացնելը մեղքերից վատթարագույնն է, որին ընդունակ է միայն մարդ էակը»:

Այկիդոյի նպատակն է ներդաշնակել կյանքի ուժը տիեզերքի հետ: Այկիդոն սիրո դրսևորումն է: (Սթիվենս 1987:94, 112; Յոդեր 1983: 28):

Անվտանգության ինստիտուտներ

Աշխարհում հայտնի են մի շարք ինստիտուտներ, որոնք ապահովում են համայնքի անվտանգությունը խաղաղ ճանապարհով: Այսպիսով կան երկրներ, որտեղ քաղաքացիներն իրավունք չունեն զենք կրել (Ճապոնիա), որտեղ ոստիկանները զինված չեն (Բրիտանիա), որտեղ բանտապահները կալանավայրում զենք չեն կրում (Ֆինլանդիա), որտեղ գործում են զենքերից ազատ խաղաղության գոտիներ (Սիտիո Կանտոմանյոգ, Ֆիլիպիններ), որտեղ գոյություն ունեն քաղաքացիների խաղաղ պաշտպանության ընկերակցություններ (Մինդեն, Գերմանիա) և հակամարտության գոտում խաղաղարար միջամտություններ իրականացնող խաղաղասիրական կազմակերպություններ (Մոզեր-Փուանգսվան և Վեբեր 2000թ., Մահոնի և Էգուրեն 1997թ.): Վերոնշյալներին պետք է ավելացնել պետական ու քաղաքացիական տարբեր շարժումները՝ ուղղված զենքերից ազատ աշխարհ ձևավորելուն, այն է վերացնել ատոմային, կենսաբանական և քիմիական զենքերի, թեթև հրազենների, սառը զենքերի ու ականների արտադրությունը: Նման կազմակերպություններից է «Հանուն խաղաղության և հաշտության» կենտրոնը՝ հիմնադրված Կոստա Ռիկայի նախկին նախագահ և 1989թ. խաղաղության Նոբելյան մրցանակակիր Օսկար Արիաս Սանչեզի կողմից: Կենտրոնի գործունեությունն ուղղված է ապառազմականացմանը և կոնֆլիկտների խաղաղ լուծմանը: «Զենքերի առևտուրը արգելող» շարժում, որը կիրառում է ստրկավաճառության դեմ պայքարում առկա փորձը, և Ռենալդո Պաչեկոյի և Հայդի Յ. Յորակի կողմից հիմնադրված «Բնապահպանական հասարակություն կամ անզեն հասարակություն» կազմակերպությունը Ֆիլիպիններում, որի խնդիրն է պաշտպանել մարդ էակին՝ որպես «մի տեսակի, որ կանգնած է բնաջնջման եզրին» (Վիլլավինցենսիո-Փաուրոմ, 1995թ.):

Հետազոտական ինստիտուտներ

Ջին Շարփի կողմից հիմնադրված Ալբերտ Էյնշտեյնի անվան ինստիտուտը Արևմուտքում (Բոստոն, Մասաչուսետս) ուսումնասիրում է պայքարի խաղաղ ձևերն՝ ուղղված ժողովրդավարության հաստատմանը, մարդկանց անվտանգության ապահովմանը և արդարության վերականգմանը ողջ աշխարհում: Արևելքում Ջայապրակաշ («Ջ.Փ.») Նարայանի կողմից հիմնադրված Գանդիի անվան հետազոտական ինստիտուտը (Վարանասի, Հնդկաստան) իրականացնում է սոցիոլոգիական հետազոտություններ՝ ուղղված հասարակության խաղաղ

փոխակերպման գործընթացին: Թեոդոր Լ. Հերմանի կողմից հիմնադրված Խաղաղության միջազգային հետազոտական ընկերության խաղաղասիրական հանձնաժողովը, որն ունի միջազգային ճանաչում, աջակցում է խաղաղ փոխակերպման բնագավառում իրականացված հետազոտական, կրթական և գործնական քայլերի բացահայտմանը ողջ աշխարհում:

Խնդիրների լուծմամբ զբաղվող կառույցներ

Խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքներով առաջնորդվող միջազգային կառույցների թվում կարելի է նշել «Ամնեստիա ինթերնեյշնլ» կազմակերպությունը (մարդու իրավունքների պաշտպանություն և մահապատժի վերացում), «Գրինփիս»-ը (շրջակա միջավայրի պահպանություն և ատոմային զենքերի վերացում), Պատերազմը դատապարտողների միջազգային կազմակերպությունը (այլընտրանքային զինծառայության իրավունքի ճանաչում և դիմակայում բոլոր տեսակի ռազմական պատրաստություններին), «Բժիշկներ առանց սահմանների» (հումանիտար բժշկական օգնություն բռնության զոհերին) կազմակերպությունը:

Զանգվածային լրատվամիջոցներ (ԶԼՄ-ներ)

Խաղաղասիրական տեսանկյունից տեղական ու միջազգային իրադարձությունները մեկնաբանելու ԶԼՄ-ների հնարավորությունները ներկայացված են առաջադեմ լրագրող Կոլման Մաքարտիի աշխատությունում (1994թ.) և աշխարհի տարբեր մասերում լույս տեղնող մի շարք հրատարակություններում: Դրանցից են «Օր-Օրի» (“Day by Day”) թերթը, որը ներառում է տվյալ ամսվա լրատվական, մշակութային ու սպորտային իրադարձությունների գրախոսությունը և հրատարակվում է Բրիտանիայի «Պասիֆիստ եղբայրների» կուսակցության կողմից (Լոնդոն): «Խաղաղության սերմեր» բուդդիստական հրատարակչությունը (Բանգկոկ) «Խաղաղասիրական լուրեր հանուն բռնություններից զերծ հեղաշրջման» պարբերական (Լոնդոն), «Բռնություններից զերծ իրականություն» ֆրանսիական պարբերական (Մոնթարգիս), իտալական «Բռնություններից զերծ գործունեություն» (Վերոնա), գերմանական «Կանաչ հեղափոխություն» (Օլդենբուրգ), ամերիկյան «Եղբայրություն» ամսագրերը (Նյու-Յորք), «Խաղաղ ակտիվիստ»-ը (Նյու-Յորք) և շատ այլ պարբերականներ: «Սոցիալական այլընտրանքներ» (Բրիսբեն, Ավստրալիա), «Գանդի Մարգ» (Նոր Դելի) և միջազգային «Ո՛չ բռնությանը» ամսագրերը ընդլայնում ու տարածում են խաղաղասիրական գաղափարներ ամենատարբեր սոցիալական հարցերի վերաբերյալ: Մի շարք խմբագրատներ, ինչպիսիք են «Նավաջիվան»-ը (Ահմեդաբադ, Հնդկաստան), «Հրատարակիչների նոր միությունը» (Բլեին, Վաշինգտոն), «Բռնություններից զերծ իրականությունը» (Փարիզ) և «Օրբիս բուկսը» (Մերիկնոլ, Նյու-Յորք) հրատարակում են հասարակության խաղաղ փոխակերպման վերաբերյալ ուսուցողական գրքեր:

Մշակութային ռեսուրսներ

Սպանությունը կանխելու մշակութային ռեսուրսները արվեստի և մարդկային մտքի դրսևորումներն են, որոնք ազնվացնում են մարդու հոգին և ոգեշնչում նրան՝ հաղթահարելու սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու դժվարին ուղին: Սրանք ներառում են ժողովրդական երգեր («Մենք հաղթելու ենք»), օպերաներ («Սատյագրահա» Ֆիլիպ Գլասս), վեպեր («Վայր դրե՛ք զենքերդ», Բերթա վոն Սուտներ), բանաստեղծություններ («Ջոնիի երգը» Ստիվ Մեյսոն), արվեստի գործեր («Ցանելու

սերմը չպետք է աղալ» Կաթե Կոլվից) և ֆիլմեր («Գանդի» Ռիչարդ Աթենբորո): «Բռնությունների կանխում արվեստի միջոցով» կենտրոնը՝ հիմնադրված 1995թ. Մալիկա Սարաբխայի կողմից Հնդկաստանի Ահմեդաբադ քաղաքում, փորձում է տեսողական, կատարողական արվեստի ու գրականության միաձուլման միջոցով ներազդել հասարակության խաղաղ փոխակերպման գործընթացի վրա:

Սպանություններից զերծ քաղաքական պայքարներ

Սպանություններից զերծ քաղաքական պայքարները, վաղուց հայտնի լինելով մեր պատմությանը, 20-րդ դարի երկրորդ կեսին ի դերև հանեցին սպանություններից խուսափելու մարդկային մեծ ներուժը: Ըստ Ջին Շարփի՝ դեռևս 1980-ականների սկզբին շատերը չէին էլ պատկերացնում, որ «բռնություններից զերծ պայքարը կամ ազգի կամքը մի տասնամյակ հետո դառնալու է քաղաքանության վրա ազդող կարևորագույն ուժը ողջ աշխարհում» (Շարփ՝ 1989: 4): Շարփը նշում է այն բնակավայրերը, որտեղ 1970-1989թթ. ընթացքում ծավալվել են կարևոր խաղաղասիրական պայքարներ՝ Աֆրիկա (Ալժիր, Մարոկկո, Հարավային Աֆրիկա և Սուդան), Ասիա (Բուրմա, Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա, Պակիստան, Ֆիլիպիններ և Տիբեթ), երկու Ամերիկաներում (Արգենտինա, Բոլիվիա, Բրազիլիա, Չիլի, Հաիթի, Մեխիկո, Նիկարագուա, Պանամա և Միացյալ Նահանգներ), Եվրոպա (Էստոնիա, Ֆրանսիա, Արևելյան և Արևմտյան Գերմանիա, Հունգարիա, Իռլանդիա, Լատվիա և Յուգոսլավիա), Միջին Արևելք (Իսրայելի կողմից օկուպացված Պաղեստինյան տարածքները) և Խաղաղ օվկիանոսի երկրները (Ավստրալիա և Նոր Կալեդոնիա): 1989թվականից սկսած ազգի խաղաղասիրական կամքի դրսևորումները վերջ դրեցին կոմունիստական միապետական իշխանությանը նախկին Սովետական Միությունում, Արևելյան Եվրոպայում, Բալթյան հանրապետություններում և Մոնղոլիայում, նպաստեցին խաղաղ ճանապարհով Գերմանիայի վերամիավորմանը և վերացրեցին ռասսայական խտրականությունը Հարավային Աֆրիկայում: Չնայած ոչ բոլոր պայքարներն անցան առանց արյունահեղությունների, չնայած դրանցից մի քանիսը դաժանորեն ճնշվեցին (Բուրմայում 1988թ. և Չինաստանում 1989թ.) և չնայած որոշ մեկնաբաններ այդ հաջողությունները վերագրեցին սպանության սպառնալիքների գործադրմանը, սակայն դրանք էականորեն տարբերվում էին ամերիկյան, ֆրանսիական, ռուսական, չինական և բռնություններով հարուստ այլ հեղափոխությունների արյունալից ավանդույթներից: Գանդիի անկախության շարժումը Հնդկաստանում, որը նպաստեց գաղութային համակարգի փլուզմանը ողջ աշխարհում, քաղաքացիների իրավահավասարությանն ուղղված Մարտին Լյութեր Քինգի շարժումը Միացյալ Նահանգներում, ազգերի խաղաղ կամքի դրսորմանն ուղղված շարժումը հանուն ժողովրդավարության հաստատման Ֆիլիպիններում, ատոմային պատերազմների վերացմանն ու շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված շարժումները և նման այլ օրինակները ժամանակակից բարձրակարգ տեխնոլոգիաների կիրառման հետ մեկտեղ թույլ են տալիս հետզհետե զարգացնել ու հզորացնել խաղաղասիրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը: Մի շարք իշխող վարչակարգեր, իրենց հերթին, սկսում են ցուցաբերել զսպված հանդուրժողականություն «խաղաղություն, ազատություն ու արդարություն» պահանջող քաղաքացիների հանդեպ:

Ի լրումն լայնամասշտաբ շարժումների, որոնք նպաստեցին մի շարք վարչակարգային ու կառուցվածքային փոփոխությունների իրագործմանը, շատ հասարակական շարժումներ փորձեցին հատուկ փոփոխությունների միջոցով հասնել սպանություններից զերծ հասարակության բնութագրիչների սահմանմանը: Դրանցից են մահապատժի վերացմանը, աբորտից խուսափելու այլ ուղիներ որոնմանը, այլընտրանքային

զինծառայության իրավունքի ճանաչմանը, բանակների վերացմանը, խաղաղ քաղաքացիների պաշտպանությանը, քաղաքներում ու գյուղական բնակավայրերում բռնկվող կռիվների ժամանակ մասնակիցների անվտանգության ապահովմանը, պատերազմական հարկերի վերացմանը, ատոմային, կենսաբանական ու քիմիական զենքերի, ականների, ինքնաձիգների ու թեթև հրազենների արտադրության դադարեցմանը, արյունահեղություններ կազմակերպելու նպատակով տնտեսական ներդրումների վերացմանը, անհատների, ազգային փոքրամասնությունների և բնիկների իրավունքների պաշտպանությանը, շրջակա միջավայրի բնապահպանությանը և քաղաքական, ռազմական, սոցիալական ու մշակութային այլ փոփոխությունների իրագործմանն ուղղված շարժումները:

Հաղորդակցման միջոցների գլոբալիզացման շնորհիվ իրենց բնույթով անկայուն խաղաղասիրական շարժումները քսանմեկերորդ դարավերջին վերածվեցին համակարգված, սկզբունքային, ստեղծագործական և լայնամասշտաբ շարժումների: Սրան մեծապես նպաստեցին նաև Ջին Շարփի (1973թ.), Յոհան Գալթունգի (1992թ.,1996թ.), ժակ Սեմելինի (1993թ.) նորարարական հետազոտությունները: Գլոբալիզացման դարաշրջանում շարունակվող արյունահեղություններին զուգահեռ՝ աշխարհում գնալով աճում ու տարածվում են խաղաղասիրական շարժումները, որոնք, կիրառելով նոր և արդեն փորձված մեթոդները, մարտահրավեր են նետում հասարակության ու պետության ներսում տիրող բռնություններին ու անարդարություններին (Փաուերս և Վոգել, 1997թ., Ջունես, Կուրզ և Աշեր 1999թ., Ակերման և Դուվալ, 2000թ.):

Պատմական արմատները

Պատմությունը ներկայացնում է խաղաղ ճանապարհով կոնֆլիկտների լուծման վառ օրինակներ՝ հաճախ բնորոշ դաժան բռնություններով հարուստ ժամանակներին: Եվ երբ խաղաղասիրական դրսևորումների բոլոր դեպքերը իմի բերվեն, այդ ժամանակ էլ հնարավոր կլինի կերտել բռնություններից ազատ մարդկության պատմությունը:

Խաղաղասիրական համոզմունքներին նվիրվածությունն անսահման է: Շուրջ երկու հազար տարվա պատմություն ունեցող քրիստոնեահուդայական ուսմունքի վեցերորդ պատվիրանը. «Մի՛ սպանիր» (ելից՝ 20:13), Լեռան քարոզը (Մաթ. 5: 3; 7: 27) և խաչված Քրիստոսի օրինակը գրավոր, թե բանավոր փոխանցվում է սերնդեսերունդ, և քանի դեռ այս պրոցեսը շարունակվում է, կշարունակվի և սպանությունների կանխման գործընթացը չնայած այն զանգվածային բնաջնջումներին և հալածանքներին, որոնց ենթարկվում են որոշ մարդիկ՝ անկիրթ ռամիկից մինչև բարձրաշխարհիկ մտավորականը (Բրոկ՝ 1968; 1970; 1972; 1990; 1991ա; 1991բ; 1992): Այսպիսի օրինակներից է «զենքերի համախմբված պայթեցումը» յոթ հազար խաղաղասեր Դուխոբոր գյուղացիների կողմից 1985թ. հունիսի 29-ին Ռուսաստանի երեք վայրերում միաժամանակ, որից հետո 1988թ. Տոլստոյի աջակցությամբ յոթ հազար հինգ հարյուր Դուխոբորներ արտագաղթեցին Կանադա (Տարասով՝ 1995:8-9): Սպանությունների կանխման պատմական արմատներ կարելի է գտնել այլ մշակութային ավանդույթներում, ինչպես՝ Բուդդիզմում (Հորիգան՝ 1996թ. Փեյջ և Գիլլիաթ՝ 1991թ.), Իսլամում (Բաներժեե՝ 2000թ., Քրաու՝ 1990թ., Էսվարան՝ 1999թ., Կիշտեյնի՝ 1990թ., Փեյջ՝ 1993ա; Սաթա-Անանդ՝ 1990թ.; Թայյաբուլլա՝ 1959թ.) և Հուդաիզմի մեջ (Կվարցչիլդ, Փոլներ և Գուդման՝ 1994թ., Ուիլքոկ՝ 1994թ.):

Ավելի ուշ, այլընտրանքային զինծառայության իրավունքը ճանաչած ժամանակակից ժողովրդավարական երկրներում իրականացված պատմական համեմատական հետազոտությունների միջոցով Մոսկոսը և Չամբերսը (1993թ.) ապացուցեցին, որ պատերազմների ժամանակ սպանություններից հրաժարվելու հիմքերը ոչ միայն

կրոնական են, այլև մարդասիրական ու քաղաքական: Սպանությունների կանխման աշխարհականացման գործընթացը սկսվել է: Լինելով հոգևոր կամ աշխարհիկ, սկզբունքային կամ պրագմատիկ՝ մարդիկ միաձայն դեմ են արտահայտվում սպանությանը:

Պատմական մեկ այլ դիտարկման հիմքում ընկած են բռնությունը խրախուսող քաղաքական առաջնորդների կողմից դրսևորված խաղաղասիրության զարմանալի օրինակներ՝ ինչպիսիք են պացիֆիստ մենոնիտներին զինվորական հաշվառումից ազատելու Պրուսայի թագավոր Ֆրեդերիկ Առաջինի (1713թ.), Ռուսաստանի Եկատերինա Երկրորդ թագուհու (1763թ.) և Ալեքսանդր երկրորդի (1875թ.) որոշումները (Բրոկ՝ 1972: 230, 234, 436): 1919թ. Տոլստոյի գործընկեր Վ. Գ. Չերտկովի խնդրանքով և բոլշեվիկ Վ.Ս. Բոնչ-Բրուեվիչի խորհրդով Լենինը տոլստոյականներին և խաղաղասեր այլ կրոնական խմբավորումների ներկայացուցիչներին ազատեց Կարմիր Բանակում ծառայելու պարտականությունից (Ժոզեֆսոն՝ 1985:162, Քոփիթերս և Զվերև՝ 1995թ.): Բոլշևիկյան առաջին որոշումներից մեկը եղավ մահապատժի վերացումը բանակում: Չնայած իրենց կարճատևությանը՝ այսպիսի որոշումները ստեղծում են իրական հնարավորություններ խաղաղասիրական կարևորագույն բացահայտումների համար: Ինչպես նկատում է Ժերոմ Դ. Ֆրանկը իշխանությանը ենթարկվելու ժողովրդի պատրաստակամության պարագայում վարքագծային փոփոխությունը քաղաքական առաջնորդների կողմից կարող է հանդիսանալ ամենաարդյունավետ ներդրումներից մեկը խաղաղության կառուցման ճանապարհին: Քիչ չեն դեպքերը, երբ առաջնորդները կարող են առաջ գնալ, իսկ հետևորդները՝ չհասնել նրանց: Արևմտյան ժողովրդավարական երկրներում մահապատժի վերացման դեպքերի ուսումնասիրման ժամանակ Զիմրինգը և Հոկինսը նկատել են.

> Մահապատժի վերացումը ժողովրդավարական երկրներում միշտ տեղի է ունենում հասարակության մեծամասնության ճնշման ներքո: Ցանկացած արևմտյան ժողովրդավար երկիր, բացառությամբ Միացյալ Նահանգների, վերացրել է մահապատիժը, բայց մենք չգիտենք մի պետություն, որտեղ մահապատիժը վերացնելու պահին եղել է համաժողովրդական կոնսենսուս: Չնայած սրան՝ մահապատժի վերացման գործընթացը շարունակվում է, իսկ հասարակության վրդովմունքը երևույթի նկատմամբ պահպանվում է (1986: xvi):

Կարևորելով քաղաքական առաջնորդության դերը սպանություններից զերծ հասարակության խաղաղ փոխակերպման գործում՝ չպետք է անտեսել սպանությունների կանխմանն ուղղված բազմամարդ ժողովրդական շարժումների աճող ուժը:

Պատմական մեկ ուրիշ դիտարկում ցույց է տալիս, որ սպանություններից հրաժարվելու պատրաստակամությունը, որպես կանոն, ուղեկցվում է տանջանքների այլ ձևերը վերացնելու ջանքերով և ստիպում է հասարակությանը հարգել կյանքի բոլոր ձևերը: «Սպանություն չգործել» չի նշանակում լինել անհոգ կամ անտարբեր: Օրինակի համար Ահիմսան Զայնիզմի տեսության մեջ իր ջանքերն ուղղում է և՛ կենդանիների, և՛ թռչունների, և՛ կյանքի մյուս ձևերի փրկությանը (Թոբիաս, 1991թ.): Հասարակության ներսում կարևոր կառուցվածքային փոփոխությունների իրագործմանն ուղղված խաղաղասիրական ջանքեր կարելի է գտնել Գանդիի շարժման մեջ: Շարժումը հետապնդում է ոչ միայն քաղաքական անկախություն, այլ նաև կարևոր տնտեսական, սոցիալական և մշակութային փոփոխություններ, որոնք ներազդում են աղքատների, կանանց, ազգային փոքրամասնությունների, ստորին խավերի կենսակերպի և միջհամայնքային կապերի վրա: Նույն կերպ Քինգի խաղաղասիրական շարժումը

Միացյալ Նահանգներում, ձգտելով ազատության և ռասսայական արդարության ամերիկյան հասարակության բոլոր շերտերում, իր բոլոր ջանքերն ուղղեց այդ գործընթացը խաթարող խոչընդոտների վերացմանը՝ աղքատությունից մինչև պատերազմ: Սպանություններից հրաժարվելու մարդկային կարողությունների մասին վկայություններ կարելի է գտնել նույնիսկ ներկայիս ամենագրեսիվ պետությունների պատմության մեջ, որի օրինակն է ԱՄՆ-ն: Քանի որ ամերիկյան իրականության մեջ հիմնականում բարձրաձայնվում են բռնություններով հարուստ իրադարձությունները, հետևաբար խաղաղասիրական դրսևորումների օրինակներն ու աղբյուրները անհայտ են մնում քաղաքագիտության մեծաթիվ ուսանողների համար: Մինչդեռ քիչ չեն ուսումնասիրությունները, որոնք փաստում են նման օրինակների անհերքելի ճշմարտությունը (Բրոկ՝ 1968թ., Քունեի և Միխալովսկի՝ 1987թ., Հոկլի և Յունկե՝ 1993թ., Կապուր՝ 1992թ., Կոն՝ 1987թ., Լինդ և Լինդ՝ 1995թ., ամերիկյան պատմաբանների ասոցացիա՝ 1994թ, Շլիսսել՝ 1968թ., Թրու՝ 1995թ., Ջինն՝ 1990թ.):

Սպանություններից հրաժարվելու օրինակներ Միացյալ Նահանգներում

Խաղաղասիրական գործողություններն Ամերիկայում դրսևորվել են նրա սկզբնավորման պահից ի վեր: Դրանք սկսվեցին բնիկների ու խաղաղ միգրանտների միջև բարեկամական հարաբերություններով: Ավելի քան յոթանասուն տարի (1682-1756թթ.) Փենսիլվանիա գաղութում, որտեղ չկար զինված ոստիկանություն, խաղաղ քվակերները կողք կողքի ապրում էին հնդկացի դելավերների հետ՝ երբեք չխախտելով դաշնագրի հետևյալ կետերը՝ դռները միշտ բաց պահել ընկերների առաջ և խորհրդակցել միմյանց հետ թշնամական դիտավորությունների մասին լուրեր լսելիս (Բրոկ՝ 1990:87-91):

Կրոնական շարժառիթներով այլընտրանքային զինծառայություն անցնելու իրավունքը ճանաչվել է նախահեղափոխական ժամանակաշրջանի տասներեք գաղութներից տասներկուսի օրենքներում: Ռոուդ Այլնդի օրենսդրությունը՝ իր տեսակի մեջ ամենալիբերալը (1673թ.), թույլ էր տալիս պարտադիր զինծառայությունից ազատվել այն տղամարդկանց, ում համոզմունքներն արգելում էին վերջիններիս «մասնակցել զինվարժանքների, զենք վերցնել, կռվել, սպանել»՝ միաժամանակ չենթարկվելով որևէ պատասխանատվության. «պարտադիր զինծառայությունից հրաժարվածները չպետք է պատժվեն, տուգանվեն, զրկվեն գույքից կամ բանտարկվեն» (Կոն 1987: 8):

Սպանություններից հրաժարվելու հանգամանքը առկա էր դեռևս նոր ձևավորվող պետության օրենսդրական նախագծերում: 1789թվականին ամերիկյան Կոնգրեսի կողմից ընդունված առաջին օրենսդրական ակտերից մեկը արգելում էր «ցանկացած տեսակի բռնություն» կրոնական համոզմունքներ ունեցող խաղաղասեր անձանց նկատմամբ (Կոն 1987: 10, 13): 1989թվականին ԱՄՆ սահմանադրության մեջ «Իրավական Ակտեր» ավելացնելու նախագծի քննարկման ժամանակ Ներկայացուցիչների պալատի անդամ Ջեյմս Մեդիսոնը առաջարկեց Հոդված 2-ում մտցնել մի դրույթ, որով կճանաչվեր սպանելուց հրաժարվելու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը. «ոչ մի անհատ, ում կրոնական հայացքները թույլ չեն տալիս զենք կրել, չի կարող ենթարկվել հարկադիր զինծառայության» (Կոն 1987:11): Մեդիսոնի առաջարկը ընդունվեց Ներկայացուցիչների պալատի կողմից, բայց մերժվեց Սենատում պետության իրավունքները պաշտպանող հանձնաժողովի կողմից, որը դեմ արտահայտվեց Նահանգներում ոստիկանական համակարգի վրա պետական վերահսկողություն տարածելու օրինագծին:

Ամերիկյան Հեղափոխության ժամանակ (1775-83թթ.) տարբեր ազգության և կրոնական համոզմունքների տեր գաղութաբնակները հրաժարվեցին սպանել:

Բրիտանացի զինվոր Թոմաս Վաթսոնը, որ Ավետարան էր ընթերցում, հրաժարվեց սպանելուց, իսկ ավելի ուշ դարձավ քվակերների առաջնորդը Մասաչուսեթսում: Բրիտանական շրջափակման ժամանակ, որին հաջորդեց Բոստոնի գրավումը ամերիկացիների կողմից (1774-76թթ.), խաղաղասեր քվակերները համոզեցին գեներալ Վաշինգտոնին և Հոուին թույլ տալ իրենց մարդասիրական օգնություն ցուցաբերել գրավված քաղաքի բնակիչներին ու փախստականներին (Բրոկ՝ 1968:193-94): Մեծ ջանքերի ու տառապանքների շնորհիվ խաղաղասիրական նախաձեռնությունը պատշաճ վերաբերմունքի արժանացավ:

Միանգամայն իրատեսական էր, որ խաղաղասիրական պայքարը պետք է հանգեցներ անկախության ձեռք բերմանը (Կոնսեր՝ 1986թ.): «Հեղափոխական պատերազմի չարիքները» աշխատության մեջ (1839թ.) Չալրզ Կ. Ուիփլն ասում է. «Մենք կկարողանայինք ձեռք բերել անկախությունը նույնպիսի արդյունավետ, արագ, արժանապատիվ և բարենպաստ պայմաններով, եթե չդիմեինք զենքի ուժին»:

Մեթոդները պետք է լինեին հետևյալը.

1. անարդարացի պահանջներին ենթարկվելուց հրաժարում հաստատուն, բայց հանգիստ քայլերով
2. սեփական դժգոհությունների բարձրաձայնում և փոխհատուցման պահանջի ներկայացում
3. հպատակեցման նպատակով գործադրվող ցանկացած բռնության հանդուրժում (2)

Խաղաղասիրական պայքարի դինամիկայի վերաբերյալ իր վերլուծության մեջ Ուիփլը գործնականորեն կանխատեսել էր յուրաքանչյուր տարր, որոնք ավելի ուշ արտացոլվեցին Գանդիի ու Ջին Շարփի ուսմունքներում (1973թ.): Խոսելով խաղաղասիրական հեղափոխության առավելություններ մասին՝ Ուիփլը հաշվել էր, որ հնարավոր կլիներ կրճատել զոհերի թիվը (հնարավոր է, որ զինված պայքարի ութ տարիներին զոհված 100հազարի փոխարեն զոհվեր 1000 առաջնորդ, 10հազ. տղամարդ, կին ու երեխա), խուսափել ֆինանսական հսկա ծախսերից՝ ուղղված պատերազմական գործողություններին (135մլն. դոլար) և բանակի հանդերձավորմանը (300մլն. դոլար), իսկ նոր ձևավորվող ազգի էթիկական ու հոգևոր հիմքերը կլինեին ավելի բարձր մակարդակի վրա: Ավելին, ամերիկացի հեղափոխականները, հրաժարվելով արյուն թափելուց, վերջ կդնեին ստրկությանը. «ստիպված չէին լինի խաբել, կաշառել կամ ոչնչացնել երկրի բնիկներին» և «թույլ չէին տա, որ բռնությունը, վրիժառությունն ու մահապատիժը կազմեին պետական կառավարման համակարգի բաղկացուցիչ մասը»(10):

Խաղաղասիրական դրսևորումներ եղել են և ավելի ուշ՝ Քաղաքացիական պատերազմի նախաշեմին: Տանջանքների ու զոհողությունների գնով հայրենասերները անում էին ամեն ինչ կանխելու համար պատերազմը Անգլիայի (1812թ.) ու Մեքսիկայի (1845թ.) դեմ, պայքարում էին կանանց իրավունքների, մասնավորապես ստրկության վերացման համար: Նրանց մեջ կային կանայք և տղամարդիկ, սևամորթներ ու սպիտակամորթներ, հավատացիալներ ու աթեիստներ (Քունի և Միխալովսկի՝ 1987: 20-33; Լինդ և Լինդ՝ 1995: 13-41): Ստրկության դեմ պայքարողների խաղաղասիրական ջանքերը հաջողությամբ կնքվեցին հյուսիսային նահանգներում, որտեղ ընդունվեցին ստրկությունը վերացնող օրենքներ: Սահմանամերձ և հարավային նահանգներում որոշ ստրկատերեր հոգևոր կամ տնտեսական ճնշման ներքո ստիպված էին ազատություն պարգևել իրենց ստրուկներին՝ այդ կերպ շարունակելով ստրուկներին ազատագրելու քվակեր Ջոն Վուլմանի անձնվեր գործը: Ստրուկների ազատագրումը կարող էր ընթանալ առանց արյունալի միջադեպերի: Բրիտանացիները սեփական երկրում վերջ դրեցին ստրկությանը 1777թ., ստրկավաճառությանը՝ 1807թ., իսկ ստրկատիրության

վերացմանը Բրիտանական Կայսրությունում՝ 1833թ., ստրկությունը կարող էր խաղաղ ճանապարհով վերացվել նաև Միացյալ Նահանգներում, եթե Ամերիկան էլ Կանադայի նման, ինչ-որ կերպ կապ պահպաներ **մայր երկրի** հետ:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ (1861-1865թթ.) զորակոչից խուսափած անձնանց նկատմամբ կիրառվող խոշտանգումներին, բանտարկությանը, մահապատժին ու տանջամահությանը հետևեց այլընտրանքային զինծառայության մասին դրույթների ընդգրկումը Համադաշնության (1862թ.) ու Միության (1864թ.) օրինագծեր: Չնայած այս օրենքները միշտ չէին կիրառվում, բայց և այնպես անհատական դեպքերում զինծառայությունից ազատվելու դիմումները բարյացակամորեն ընդունվում էին Յունիոնի նախագահ Աբրահամ Լինքոլնի, ռազմական մինիստր Էդվին Ստենտոնի և Կոնֆեդերացիայի ռազմական մինիստրի օգնական Ա. Քեմփբելի կողմից (Մոսկոս և Չամբերս՝ 1993: 30-1): Հայտնվելով պատերազմի հորձանուտում՝ Թենեսի նահանգի Քրիստոսի խաղաղասեր աշակերտների մի խմբավորում սկզբում հաջողությամբ համոզեց Կոնֆեդերացիայի նախագահ Ջեֆերսոն Դեվիսին, իսկ ավելի ուշ՝ նաև Յունիոնի օկուպացիոն ուժերի ռազմական նախարար Էնդրյու Ջոնսոնին բավարարել պարտադիր զինծառայությունից ազատվելու վերաբերյալ իրենց դիմումը (Բրոկ՝ 1968: 842-3): Եղբայրասպան կռվի ողջ ընթացքում պատերազմող կողմերը քիչ թե շատ չափով գիտակցում ու հասկանում էին, որ իրենց չի վերապահված սպանելու իրավունքը:

Խաղաղասիրական դրսևորումները շարունակվեցին ինդուստրալիզացիայի ու իմպերիալիզմի դարաշրջանում, քսաներորդ դարի երեք համաշխարհային պատերազմների ընթացքում և դրանցից հետո: Չնայած գործատուների, ոստիկանների, պետության, երբեմն էլ աշխատավորների կողմից գործադրվող բռնության առանձին դեպքերին՝ աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված պայքարն Ամերիկայում իր բնույթով խաղաղասիրական էր: Խաղաղասիրական էր նաև կանանց իրավահավասարությանը նվիրված շարժումը, որի արդյունքում 1916թ. ընտրվեց առաջին կին կոնգրեսականը, Ներկայացուցիչների պալատի անդամ Ժանետ Ռենկինը Մոնտանայի հանրապետական կուսակցությունից (Ժոզեֆսոն՝ 1974թ.): 49 կոլեգաների և վեց սենատորներին հետ համատեղ 1917թ. նա դեմ քվեարկեց Միացյալ Նահանգների մասնակցությանը Առաջին համաշխարհային պատերազմին: Վերընտրվելով 1940թվականին՝ 1941-ին նա միայնակ դեմ քվեարկեց Երկրորդ աշխարհամարտին Նահանգների ներգրավմանը: Ավելի ուշ՝ ութսունութ տարեկան հասակում, նրա գլխավորությամբ «Ջանետ Ռենկին բրիգադի» 5000 կանայք Վաշինգտոնում անցկացրեցին բողոքի ցույց՝ ուղղված Վիետնամական պատերազմի դադարեցմանը:

Առաջին աշխարհամարտի ժամանակ պարտադիր զինծառայություն անցած մոտ 4000 ամերիկացիներ հրաժարվեցին կռվելուց: 1300 մարդ բժշկական ծառայության անցավ թիկունքում, մյուս 1500-ը անդամագրվեցին գյուղատնտեսական աշխատանքների, 940-ը մնացին զինավարժանքային ստորաբաժանումներում, իսկ 450 «անդրդրվելիներ», հրաժարվելով որևէ կերպ մասնակցել արյունահեղությանը, դատվեցին զինվորական տրիբունալով և բանտարկվեցին ռազմական բանտերում, որտեղ նրանցից տասնյոթը զոհ գնաց դաժան խոշտանգումներին ու հիվանդություններին (Մոսկոս և Չամբերս՝ 1993: 34-5, Կոն՝ 1987: 42, Լինդ և Լինդ՝ 1995: 91-117, Շլիսել՝ 1968: 128-175):

Երկրորդ աշխարհամարտի զորահավաքի ժամանակ (1940-1947թթ.) 72.354 մարդ հրաժարվեց ծառայությունից, քսանհինգ հազարը ծառայեցին թիկունքում, 213 կրոնական դավանանքի հարող 11.996 մարդ համաձայնվեց աշխատել հասարակական ծառայության քաղաքացիական ճամբարներում: Բանտարկվածների երեք չորրորդը Եհովայի վկաներ էին (Անդերսոն՝ 1994: 1-2; Մոսկոս և Չամբերս՝ 1993: 37-8, Քունի և Միխալովսկի՝ 1987: 94-5; Գարա և Գարա՝ 1999թ.):

Խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու պոտենցիալը ամերիկյան հասարակության մեջ կրկին երևաց «Սառը պատերազմի» ժամանակ (1945-1991թթ.): Այս ժամանակահատվածում բռնկվեցին Վիետնամի (1964-1975թթ.) և Կորեայի (1950-1953թթ.) պատերազմները, որոնք տված զոհերի ու վիրավորների թվով Ամերիկայի պատմության մեջ զբաղեցրեցին համապատասխանաբար չորրորդ և հինգերորդ տեղերը Առաջին և Երկրորդ աշխարհամարտերից հետո: Միացյալ Նահանգների, Սովետական միության և համախոհ երկրների միջև սկիզբ առած սառը պատերազմի ժամանակ հեղափոխական, հակահեղափոխական և աշխարհաքաղաքական պայքարին զոհ գնաց առնվազն 20մլն մարդ: Կորեական պատերազմի ժամանակ մոտ 22.500 ամերիկացի զորակոչիկներ հրաժարվեցին սպանելուց: Վիետնամի պատերազմի հարուցած զանգվածային դժգոհությունները բերեցին նրան, որ անկանխատեսելի քանակությամբ մարդիկ հրաժարվեցին սպանելուց, ընդ որում՝ նրանց մեծ մասը առանց կրոնական որևէ համոզմունքների (Մոսկոս և Չամբերս՝ 1993: 39-43): 1972թվականին գրանցված այլընտրանքային զինծառայողների թիվն ավելի մեծ էր, քան զորակոչվածներինը: Վիետնամական պատերազմը դատապարտողների մյուս մասը խուսափեց զորահավաքից, բանտ գնաց կամ հեռացավ երկրից, հակառակ ուղղությամբ շրջելով Միացյալ Նահանգներ շտապող պացիֆիստ իմիգրանտների հոսքը, որոնք, ինչ-որ ժամանակ խուսափելով զինծառայությունից հայրենիքում, ապաստան էին փնտրում ԱՄՆ-ում: Դառնալով վիետնամական արյունահեղությունների վկան՝ առաջին գծում որպես սանիտարներ աշխատող այլընտրանքային զինծառայողները ևս մեկ անգամ համոզվեցին իրենց հայացքների ճշմարտացիության մեջ (Ջիոգլիո՝ 1989թ.):

Սառը պատերազմի մայրամուտին սպանություններից հրաժարվելու համոզմունքը ևս մեկ անգամ դրսևորվեց Պարսից ծոցում բռնկված իրաքյան պատերազմի ժամանակ(1991թ.): Այս անգամ խոսքը զինակոչից հրաժարվող քաղաքացիների մասին չէր, քանի որ զինակոչ չէր հայտարարվել, այլ խոսքը վերաբերում էր ժամկետային և պահուստային զինծառայողներին, ովքեր հրաժարվում էին մասնակցել կռվին: Այլընտրանքային զինծառայություն պահանջող հիսուն ռազմածովայիններ դատվեցին ռազմական տրիբունալով և բանտարկվեցին (Մոսկոս և Չամբերս՝ 1993: 44):

Ամերիկայի պատմության մեջ սպանություններից հրաժարվելու պոտենցիալը երևում է նաև մահապատժի վերացմանն ուղղված ջանքերում: Այն սկիզբ էր առել դեռևս գաղութային ժամանակներից, երբ կրճատվեց այն հանցագործությունների թիվը, որոնց համար սահմանված էր մահապատիժ, երբ Միչիգանի նահանգում մահապատիժը կիրառվեց միայն պետության դավաճանների հանդեպ (1846թ.) իսկ Ռոուդ Այլնդ (1852թ.) և Վիսկոնսին (1853թ.) նահանգներում այն բացարձակապես վերացվեց: Ներկայումս ԱՄՆ հիսուն նահանգներից տասնչորսը և Կոլումբիայի շրջանը ցույց տվեցին, որ ամերիկացիները՝ միասնաբար խաղաղ պայմաններում և անհատապես պատերազմի ժամանակ, կարող են հրաժարվել սպանելուց: Պետական մակարդակում, այնուամենայնիվ, Գերագույն Դատարանն իր վճռորոշ գործողություններով դեռևս պետք է ապացուցի, որ քաղաքացիները ոչնչացումը դեմ է ԱՄՆ Սահմանադրությանը (Ջիմրիգ և Հոկինս՝ 1986թ.):

Սպանություններից հրաժարվելու պոտենցիալի դրսևորման ձևերից ԱՄՆ-ում կարելի է նշել ատոմային զենքի արտադրության դադարեցումը («Գուբանի խոփի մեջ խրված սուսերներ» շարժում), աղքատության վերացումը («Կաթոլիկ աշխատավորների» շարժում), տղամարդու կողմից կնոջ նկատմամբ կիրառվող բռնությունների վերացումը «կանանց շարժում» և իրավահավասարության ապահովումը աֆրոամերիկացիների և մյուս ազգությունների համար ազատ ու արդար հասարակության մեջ («Սոցիալական խաղաղ փոխակերպման Քինգի շարժում»):

1936թ. աֆրոամերիկացի առաջնորդների հետ հանդիպմանը Գանդիին ասացին, որ բռնությունների կանխման վերաբերյալ իր ուղերձը բխում է «նեգրերի սրտից» և որ աֆրոամերիկացիները պատրաստ են ընդունել նրա գաղափարները: Սրան Գանդին պատասխանեց.

- Ի դեմս ամերիկացի սևամորթների՝ աշխարհը հավանաբար ականջալուր լինի խաղաղության արդար կոչին (Կապուր՝ 1992: 89-90):

Պայմանավորված Գանդիի տեսության, Քինգի շարժման և խաղաղասիրական մյուս պայքարների փոխազդեցությամբ, տեղացի ու միգրանտ բնակչության մոտ դրսևորված խաղաղասիրական արմատներով՝ «բռնությունների կանխումն» Ամերիկայում ուղղակիորեն կապված է սպանություններից զերծ համաշխարհային պատմության հետ:

Չնայած բռնություններով հարուստ քաղաքական մշակույթին՝ ամերիկյան հասարակության խաղաղասիրական հիմքերը կարելի է տեսնել բոլոր ժամանակների համար անպարտելի, կյանքը արժևորող բարոյական հայացքների մեջ՝ սկսած գաղութացման ժամանակներից մինչև մեր օրերը: Դրանք պարզ երևում են պատերազմների ժամանակ սպանություններից հրաժարվելու մադկանց վարքագծում, մահապատժի, աբորտի վերացմանն ուղղված շարժումներում, զինաթափման պահանջներում, ռազմականացմանն ու բռնությունների լայնամասշտաբ դրսևորմանն ուղղված դժգոհություններում, տնտեսության մեջ դրական կառուցվածքային փոփոխությունների իրագործմանը, կանանց իրավունքների պաշտպանությանը, միջմշակութային ու, ռասսայական հարաբերությունների կարգավորմանն ուղղված խաղաղասիրական գործողություններում, կրոնում, արվեստի ու գրականության գործերում (Թրու՝ 1995թ.): Խաղաղասիրության այս դրսևորումները պատմության մեջ կարող են դառնալ «խաղաղ հայրենասիրություն» կամ «խաղաղ ազգասիրություն» ձևավորելու հիմքը:

Պատմական այս իրադարձություններն էր վկայակոչում Ուելսի «Plaid Cymru» պացիֆիստական քաղաքական կուսակցության հիմնադիր Գվինֆոր Էվանսը իր համաքաղաքացիների հետ հանդիպումների ժամանակ (Էվանս՝ 1972թ.): Այս պարագայում պետության հիմնը կարող էր կոչվել «Հիասքանչ Ամերիկա», ռազմի երգը՝ «Մենք հաղթելու ենք», իսկ աղոթքը՝ «Աստված օրհնի խաղաղասեր Ամերիկան խաղաղասեր աշխարհում»:

Խաղաղասեր անձնավորություններ

Վերջին հաշվով սպանություններից զերծ հասարակության արմատներն ընկած են մարդկության կենսագրության հիմքում: Տղամարդիկ և կանայք՝ միայնակ կամ խմբովի, հայտնի ու անհայտ բոլոր ժամանակներում ցուցաբերել են արյունահեղություններից խուսափելու և սոցիալական բարեփոխումներ կատարելու մեծ պոտենցիալ: Այն ինչ անում են ոմանք, կարող են անել և մյուսները: Փարիզի ժամանակակից արվեստի թանգարանի մուտքի մոտ կախված է Ռաուլ Դուֆիի շրջանակածև որմնանկարը, որտեղ պատկերված են բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց ներդրումն են ունեցել էլեկտրականության հայտնագործման ու օգտագործման գործընթացում՝ սկսած անտիկ փիլիսոփաներից մինչև մեր օրերի գիտնականներն ու գյուտարարները: Նույն կերպ բազմաթիվ են մարդիկ, որոնք մեծապես նպաստել են սպանությունը դատապարտող և սպանություններից զերծ քաղաքագիտություն ուսումնասիրող գիտնականների հոգևոր, տեսական ու գործնական հայացքների ձևավորմանը: Համաշխարհային ժառանգության վերաբերյալ որոշ ակնարկներ կարելի է գտնել «Խաղաղասեր առաջնորդների արդի կենսագրական բառարանում» (Ժոզեֆսոն՝ 1984թ.), որտեղ ներկայացված է յոթ հարյուր տասնյոթ մարդու ինքնակենսագրություն թվով երեսունհինը երկրներից, որոնք ապրել ու

գործել են 1800-1980թթ. ընկած ժամանակահատվածում: Բառարանի 1134 էջերում կարելի է գտնել սպանություններից զերծ աշխարհ ձևավորելու մասնագիտական ու մեթոդական մոտեցումների մի ուրույն հաշվետվություն: Ոմանք կյանքի ինչ-որ փուլում «գործել են» բռնություն, մյուսները ամբողջ կյանքում առաջնորդվել են խաղաղասիրական սկզբունքներով: Նման հետազոտական աշխատանքների ընդլայնումը պատմության, աշխարհագրության, մշակույթի և ժամանակակից կյանքի բնագավառներում կբացեր մեր առջև խաղաղության համար պայքարողների արիության ու պատրաստակամության մի ողջ շտեմարան: Խաղաղասեր անձանց կենսագործունեության բացահայտումն ու տարածումը համաշխարհային մակարդակով խիստ կարևոր է:

Խաղաղասեր անձանց անցած ուղին ընդհանրական շատ գծեր ունի՝ չնայած ժամանակին, մշակութային տարբերություններին և տարածականությանը: Դիտարկենք խաղաղասիրության օրինակներ Հին աշխարհի առաջնորդների կյանքից. Եգիպտոսում փարավոն Շաբական՝ ծնունդով Նուբիայից (մ.թ.ա. 760-695թթ.), վերացնում է մահապատիժը(Բեննեթ՝ 1988:11): Հնդկաստանում՝ Կալինգայի գրավումից հետո, որի հետևանքով 100հազար մարդ սպանվեց, 150հազարը տեղահանվեց, իսկ անթիվ ու անհամար մարդիկ վիրավորվեցին, բուդդիստ կայսր Աշոկան արգելում է պատերազմական գործողություններն ու անմեղ մարդկանց սպանությունը (մ.թ.ա. 262թ.), (Չաուդհուրի՝ 1997:52):

Հոգևոր առաջնորդների խաղաղասիրական գործողությունները առողջ մրցակցություն են ձևավորում գալիք սերունդների մոտ. Բուդդա, Մահավիրա, Հիսուս, Մուհամեդ, Ջորջ Ֆոկս, Գուրու Նանակ, Բահաուլլահ և ուրիշներ: Հոգևոր ու աշխարհիկ բնույթի կտրուկ փոփոխությունները տեղի են ունենում միայն այն ժամանակ, երբ մարդիկ բռնության փոխարեն նախընտրում են խաղաղությունը. զինվորները դառնում են խաղաղարարներ (Կրոզիեր՝ 1938թ.; Թենդուկլար 1967թ., Խան՝ 1997թ., Բուբալտ՝ Գոչարդ և Մյուլլեր՝ 1986թ., Ռասսել՝ 1997թ.), հեղափոխականները դադարեցնում են արյունահեղությունները (Նարայան՝ 1975թ., Բենդանա՝ 1998թ.), այլընտրանքային զինծառայողները հրաժարվում են զորակոչից (Մոսկոս և Չամբերս՝ 1993թ.): Նոր զելանդացի հումանիստ Արչիբալդ Բաքստերը անհավատալի քաջությամբ իր դժգոհությունն է արտահայտում Առաջին աշխարհամարտի ժամանակ իրականացված զորակոչի և կտտանքների կապակցությամբ (Բաքստեր՝ 2000թ.): Ավստրիացի Ֆրանց Ջագերստատերը՝ մի գյուղացի քրիստոնյա, գլխատվում է Հիտլերի դեմ կռվից հրաժարվելու համար (Ջան՝ 1964թ.): Մի խումբ ազատարարներ վտանգում են իրենց կյանքը հրեաներին հիտլերյան Հոլոքոստից փրկելու համար (Ֆոգելման՝1994թ., Հալլի՝ 1979թ.): Ոմանք հրաժարվում են տրամադրել բարոյական, նյութական ու մասնագիտական աջակցություն պատերազմ հրահրող և ռազմական ժամանակակից տեխնիկայով հարուստ երկրներին(Էվերեթ՝ 1989թ.): Մյուսները փնտրում են զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը կանխելու ուղղակի ճանապարհներ (Նորման՝ 1989թ., Փոլներ՝ և Օ'գրադի՝ 1997թ.):

Միլիոնավոր մարդիկ են գնում փոքրամարմին, կարճահասակ ու անբարետես «խաղաղ» առաջնորդի՝ Մոհանդաս Կ. Գանդիի հետքերով: Բռնի մշակույթով աչքի ընկնող աֆղան պատանները հնազանդվում են մուսուլման Աբդուլ Ղաֆֆար Խանի «բռնությունը խարազանող» իշխանությանը (Բաներժեե՝ 2000թ.; Էսվարան՝ 1999թ.):

Իր դիտարկումներից մեկում Գանդիի տեսության հետևորդ, գիտությունների դոկտոր Ռամաչանդրանն ասում է. «խաղաղության համար պայքարած անհայտ հերոսներն ու հերոսուհիներն առավել հիշարժան են, քան նրանք, ում անունը հայտնի է» (Ռամաչանդրան՝ 1983թ.): Միացյալ Նահանգներում Գանդիի տեսության հետևորդ մի խումբ աֆրոամերիկացի ուսանողներ Մարտին Լյութեր Քինգ Կրտսերի գլխավորությամբ

մեկնարկում են քաղաքացիների իրավահավասարությանն ուղղված շարժումը (Հալբերսթամ՝ 1998թ.):

Համաշխարհային մակարդակով ընթացող մրցակցության ու գյուտարարության միասնական այս գործընթացում սպանությունը դատապարտող ամերիկացիներ Ադին Բալուն և Հենրի Դեվիդ Թորուն իրենց ազդեցությունն են թողել Տոլստոյի վրա (Քրիստիան՝ 1978: 588), Տոլստոյը՝ Գանդիի, Գանդին Քինգի, իսկ բոլորը միասին իրենց ազդեցությունն են թողել «Կանաչների կուսակցության» հիմնադիր գերմանացի Պետրա Կելիի (Կելլի՝ 1989թ.) և այլոց վրա: 1997 և 1998 թվականներին Հորդանանի մայրաքաղաք Ամմանում կազմակերպված Միացյալ Ազգերի Համալսարանի Միջազգային Կառավարման ակադեմիայի առաջին երկու դասընթացներին մասնակցող մոտ վաթսուն երկրների ավելի քան երկու հարյուր ուսանողների կողմից Գանդին ճանաչվում է աշխարհի ամենահարգված առաջնորդը: Այս մարդու նկատմամբ ունեցած վերջիններիս հարգանքը 1945թ. հետո՝ գաղութային համակարգերի փլուզման ընթացքում, անկախության համար պայքարող առաջնորդների հոգու արձագանքն է: Խաղաղասեր առաջնորդների թիվը շարունակում է աճել ամբողջ աշխարհում: Նրանցից կարելի է նշել կամբոջացի Մահա Ղոսանանդային, կորեացի Սուկ Խոնին, նիգերիացի Կեն Սարո-Վիվային, Ա. Տ. Արիյարատնեին Շրի Լանկայում, թայլանդցի Սուլակ Սիվարաքսային, ֆրանսիացիներ Լանցո դել Վասթոյին և գեներալ Ժակ դե Բոլարդիերին, անգլիացի Ռոնալդ Մալլոնին, իտալացի Ալդո Կապիտինիին, հնդկացի Ն. Ռադակրիշնանին, բրազիլիացի Դոմ Հելդեր Կամարային, ամերիկացի Մյուստին: Եթե ժամանակին Գանդին չպարգևատրվեց իր կատարած ծառայությունների համար, ապա ներկայումս խաղաղասիրական փայլուն գործունեությամբ աչքի ընկած առաջնորդներին պարգևատրում են «խաղաղության» նոբելյան մրցանակներով: Նման մրցանակներով են պարգևատրվել աֆրիկացի Ալբերտ Լյութուլին և Դեսմոնդ Թութուն, Մեյրեադ Կորիգոն Մագիրը հյուսիսային Իռլանդիայից, արգենտինացի Ադոլֆո Փերեզ Էսկիվելը, բիրմիացի Ունգ Սան Սու Չզին, տիբեթցի Դալայ Լաման:

Կանայք՝ յուրաքանչյուրն իր ուրույն պատմությամբ, հերոսաբար խաղաղասիրական պայքարի մեջ են մտնում՝ հաղթահարելու համար բռնության դրսևորումները հասարակության տարբեր շերտերում: Նրանցից կարելի է առանձնացնել ավստրիացի Բերթա վոն Սուքներին, բալիացի Գեդոնգ Բագոես Օկային, հնդկացի Մեդհա Պատկարին, ամերիկացիներ Դորոթի Դեյին, Բարբարա Դեմինգին և Ջին Տումերին (Սթանֆիլդ՝ 1993: 49): Երկրորդ աշխարհամարտի ժամանակ այլընտրանքային զինծառայության իրավունք պահանջող 1704 բրիտանացի կին և ևս 214 այլ կանայք, որոնք հրաժարվում են պատերազմի ժամանակ թիկունքում որոշակի աշխատանքներ իրականացնելուց, բանտարկվում են (Հարրիս-Զենկինս՝ 1993: 77): Կանայք համախմբվելով միահամուռ ուժերով կսում են պայքարել պատերազմների (Պլազա դե Մայո մենաստանի մայրեր), ցեղասպանությունների («Սևազգեստ կանայք», Սերբիա), ատոմային զենքի արտադրության դադարեցման (Գրինհամի կանանց հասարակական ճամբար, Բրիտանիա), շրջակա միջավայրի աղտոտման (Չիպկոյի «Գրկե՛ք ծառերը» շարժում, Հնդկաստան) և ուրիշ շատ անարդարությունների դեմ (Մաքալիսթեր՝ 1982թ., 1988թ., Մորգան՝ 1984թ., Ֆոսթեր՝ 1989թ.):

Գիտնականներ Յոհան Վ. Բոնդուրանտը (1969թ.), Էլիզ Բուլդինգը(1980թ., 1992թ.) և Բերենիս Ա. Կարոլը (1988թ.) ավելի ընդլայնեցին հասարակության խաղաղ փոխակերպման վերաբերյալ գիտելիքները:

Խաղաղ փոխակերպման պայքարի զույգերը՝ լինեն նրանք ամուսիններ թե գործընկերներ, նեցուկ են հանդիսանում միմյանց համար այս դժվարին գործի ողջ ընթացքում: Այդ զույգերից են Կաստուրբա և Մոհանդաս Գանդիները, Կորետա Սքոթը և Մարտին Լյութեր Քինգը, Դոլորես Հուերթա Կրտսերը և Ցեզար Չավեսը, Դորոթի Դեյը և

Պետրոս Մորին, Ֆրանցիս Մեյ Ուիթերսփուն և Չարլզ Ռեչտը, Էլիզաբետ Մաքալիսթերը և Ֆիլիպ Բերրիգան: Անգնահատելի է նման մարդկանց ներդրումը 1986թ. Ֆիլիպիններում ժողովրդավարական խաղաղ միջամտության ժամանակ, երբ միանձնուհիները, քահանաները, հասարակ քաղաքացիները համախմբված ուժերով դեմ դուրս եկան երկրին տիրող բռնակալությանը և հակահեղափակական պայքարը ճնշելու արյունալի սպառնալիքին (Սանտիագո Ա.Ս.՝ 1995թ.):

Մարդկության «խաղաղ» պատմության դիտարկումը համաշխարհային մակարդակով ներշնչում է վստահություն այն բանում, որ կանայք ու տղամարդիկ ունակ են ստեղծել սպանություններից զերծ, արդար հասարակություններ, որտեղ բոլորի շահերը հավասարապես պաշտպանված են:

Սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու նախադրյալները

Սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու հնարավորությունը ընկած է մարդկային փորձառության ու ստեղծագործական կարողությունների հիմքում: Մարդկանց ճնշող մեծամասնությունը երբևէ ոչ մեկին չի սպանել և չի էլ սպանի: Մենք բոլորս էլ կարող ենք սպանել, բայց դա չի նշանակում, որ մենք պետք է սպանենք: Աշխարհի կարևորագույն կրոնական ուսմունքների հիմքում ընկած է հետևյալ պատվիրանը. «Մի՛ սպանիր, հարգի՛ր կյանքը»: Անգամ ամենադաժան իրավիճակներում մարդիկ հոգով ու մտքով հավատարիմ են մնացել այս պատվիրանին: Այնտեղ, ուր հնարավոր չի եղել կանխել սպանությունը, գիտությունն իր բացառիկ կարողություններով բացահայտել է տվյալ սպանության պատճառները, վերացրել այդ պատճառները և օգնել մարդկանց ու հասարակությանը ազատվել արյունահեղություններից:

Սպանություններից զերծ հասարակության նախատիպերը երկրագնդի վրա գոյություն են ունեցել անցյալում, դրանք գոյություն ունեն հիմա և այդ գոյությամբ ապացուցում են, մեր վառ երևակայության արգասիք չեն: Խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող հոգևոր, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային հաստատությունների կարելի է հանդիպել մարդկային պատմության ողջ ընթացքում: Կան հասարակություններ, որտեղ չի գործում բանակ, չի կիրառվում մահապատիժ և չի գործադրվում զենք: Կան խաղաղասիրական կազմակերպություններ և շարժումներ, որոնք իրենց նվիրաբերել են մարդկության գոյատևմանն ու բարեկեցությանն ուղղված խնդիրների լուծմանը: Պատմական փորձը տալիս է գիտելիք այն մասին, թե ինչպես մշակել հասարակության խաղաղ փոխակերպման ներկա ու ապագա ռազմավարությունը: Խաղաղության համար մարտնչած և մարտնչող անհատները, ում քաջությունն ու կատարած գործերը ոգեշնչող են և գոտեպնդող, մեծ ժառանգություն են թողել մեզ:

Եթե մարդիկ որոշեին խմբավորել, վերամշակել և ժամանակի պահանջներին հարմարեցնել պատմությանը հայտնի սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու բաղադրիչները, ապա սպանություններից զերծ հասարակությունն արդեն իսկ հասանելի կլիներ մարդկությանը: Սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու հավանականությունը դեռևս իրականություն չէ, բայց և կասկածի տակ է դնում նման հասարակության գոյության անհնարինության հանգամանքը մի կողմից, մյուս կողմից ամրապնդելով այն համոզմունքը, որ մարդիկ կարող են գնալ «խաղաղ փոխակերպման» ողջ աշխարհում:

Գլուխ 3.
Քաղաքագիտության հայեցակարգը

Բռնությունների կանխումը լոկ կրոնի խնդիրը չէ:
Բռնությունների կանխումը լոկ հասարակության խնդիրը չէ:
Բռնությունների կանխումը իշխանության արհեստավարժության խնդիրն է:

Գ. Ռամաչանդրան

Ի՞նչ նշանակություն ունի սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու հնարավորությունը քաղաքագիտության ակադեմիական առարկայի համար: Եթե արյունահեղությունների անխուսափելիության տեսակետը փոխարինվի սպանությունները կանխելու նախադրյալով, ապա ի՞նչպիսի գիտություն պետք է ստեղծվի քաղաքագետների կողմից: Ի՞նչպիսի արժեքներով պետք է վերջիններս առաջնորդվեն: Ի՞նչ փաստեր պետք է որոնեն: Բացատրական ու կանխատեսական ինչպիսի՞ թեզեր պետք է ուսումնասիրեն: Ի՞նչպես պետք է կիրառեն ձեռք բերված գիտելիքները: Ի՞նչպես պետք է կրթեն ու կրթվեն: Ինչպիսի՞ կառույցներ պետք է ստեղծեն: Ի՞նչպես պետք է փոխհարաբերվեն այլոց հետ խաղաղ աշխարհում խաղաղ հասարակություն ձևավորելու համար անհրաժեշտ գիտելիքների բացահայտման, նորերի ձեռք բերման, դրանց տարածման և կիրառման պրոցեսում:

Սպանություններից զերծ հասարակություն ստեղծելու հնարավորությունը ենթադրում է խաղաղ ստեղծագործական մեթոդների առկայությունը քաղաքագիտության առարկայի մեջ: Այն կասկածի տակ է դնում Վեբերի այն պնդումը, թե բռնությունը (սպանությունը) քաղաքագիտության առարկայի և պրակտիկայի անբաժանելի մասն է կազմում, որ սպանություն չգործելու էթիկան անհամատեղելի է այս առարկայի տեսության հետ: Ստեղծագործական մեթոդների կիրառման շնորհիվ այն, ինչը սկզբում թվում է անհնարին, դառնում է միանգամայն հնարավոր:

Սպանություններից զերծ քաղաքական վերլուծության տրամաբանությունը

Խաղաղասիրական հայացքների ու հասկացությունների մուտքը քաղաքագիտություն ենթադրում է սպանություններից զերծ քաղաքական վերլուծության քառակողմ տրամաբանությունը: Մեզ անհրաժեշտ է իմանալ սպանություն գործելու շարժառիթները, սպանություն չգործելու նախադրյալները, բռնի իրավիճակներից խաղաղ վիճակների անցման պատճառները և սպանություններից զերծ հասարակության բնութագրիչները:

Զարմանալիորեն սպանություններից զերծ քաղաքագիտությունն ավելի շահագրգիռ է հասկանալու սպանություն գործելու դրդապատճառները, քան քաղաքագիտության առարկան, որը պայմանականորեն ընդունում է սպանությունը: Առաջինը նպատակ ունի խաղաղ ճանապարհով նպաստել սպանություններից և արյունահեղություններից զերծ հասարակության ձևավորմանը: Երբ սպանությունը համարվում է անխուսափելի դուրս գալով անհատական և կոլեկտիվ կարիքներից, ապա այնքան էլ կարևոր չէ հասկանալ և վերացնել սպանություն հրահրող պատճառները, որոնք կարող են լինել անձնական, ոչ անձնական կամ փոխկապակցված: Ապահովության զգացողությունը որոշակիորեն թուլանում է, երբ վերջում ամեն ինչ բերում է «ես կսպանեմ քեզ» կամ «մենք կսպանենք քեզ» եզրահանգմանը: Իսկ երբ չկա նման եզրահանգում, ապա սպանություն գործելու պատճառների հստակեցումն ու վերացումը դառնում է խիստ անհրաժեշտ անձի գոյատևման ու բարօրության համար:

Սպանություն հրահրող պատճառների բացահայտումը հանդիսանում է սպանություններից զերծ քաղաքական վերլուծության հիմքը: Որտեղ էլ որ պատահած լինի սպանությունը՝ մարդասպանությունից ցեղասպանություն ու ատոմային բնաջնջում, անհրաժեշտ է հասկանալ տվյալ սպանության պատճառներն ու հետևանքները՝ անկախ վերջիններիս բարդությունից ու փոխկապվածությունից: Սպանության յուրաքանչյուր դեպք պահանջում է բացատրություն: Մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ով է սպանում, ում է սպանում, ինչպես, որտեղ, երբ և ինչու է սպանում, ինչ շարժառիթներով է սպանում, ինչ իրավիճակներում, սպանությունն անձնական և սոցիալական առումներով ինչ նշանակություն և հետևանք ունի: Անշուշտ խորը, մանրակրկիտ ու տիպաբանական համեմատության համար մեզ անհրաժեշտ է կատարել սպանության պատճառների խաչաձև հետազոտություն: Նմանապես մեզ անհրաժեշտ է հասկանալ նաև սպանությունից խուսափելու պատճառները: Ինչու՞ մարդիկ չեն սպանում: Ինչու՞ է սպանություններից հրաժարվելու միտքը ծագել մարդկանց գլխում: Ինչու՞ են մարդիկ առաջնորդվում խաղաղասիրական սկզբունքներով: Ինչու՞ իրենց գոյության ողջ ընթացքում որոշ մարդիկ, չնայած ծաղրանքին, հալածանքին, աքսորին, զրկանքներին, բանտարկությանը, կտտանքներին, մահապատժի սպառնալիքներին և զանգվածային ոչնչացումներին, հավատարիմ մնացին իրենց սկզբունքներին: Ինչու՞ խաղաղ ճանապարհով իրենց նպատակին հասնելու համար մարդիկ ստեղծել են նորմեր, կանոններ ու հաստատություններ:

Ավելին, որո՞նք են փոխակերպման պատճառները՝ անհատականից կոլեկտիվ, սպանություններից դեպի խաղաղասիրություն և հակառակը: Ինչու՞ են մարդասպանները փոխում իրենց վարքագիծը և դարձի գալիս: Ինչու՞ են զինվորները դառնում խաղաղարարներ, հեղափոխականները մերժում արյունահեղությունը, իսկ մարդասպանները նվիրաբերում իրենց «խաղաղասիրության» մեծ գործին: Ինչու՞ են գաղափարախոսությունները, անհատները, առաջնորդները, կազմակերպությունները, հաստատությունները և քաղաքականությունները շրջվում դեպի «խաղաղասիրությունը»: Եվ ինչու՞ սպանությունը դատապարտող մարդիկ սկսում են փառաբանել արյունահեղությունը կամ որոշ պետություններ, որոնք վերացրել են մահապատիժը իրենց օրենքում, նորից սկսում են կիրառել այն, իսկ որոշ պացիֆիստներ ինչ-որ պահի սատարում են իրենց համար հատուկ նշանակություն ունեցող պատերազմական գործողություններին: Սպանություններից զերծ քաղաքական վերլուծությունը հասարակ երկրաչափական պրոգրեսիա չէ: Խաղաղ փոխակերպման գործընթացը կազմակերպելու համար կարևոր է հասկանալ փոխակերպման աճի, նվազման ու տատանման պատճառները: Սկսելով անհատներից կառուցվածքային բաղադրիչների միջոցով մեր ուշադրությունը բևեռում ենք ամբողջական հասարակությունների վրա:

Սպանություններից զերծ քաղաքական վերլուծության չորրորդ պահանջը կայանում է նրանում, որ պետք է հասկանալ սպանություններից զերծ հասարակության բնութագրիչները՝ քաջ գիտակցելով որ դրանք կարող են լինել անթիվ-անհամար: Հաշվի առնելով մարդկանց ստեղծագործական ձգտումները, պետք չէ սպասել, որ այս հասարակությունները կլինեն միանման: Այս չորրորդ պայմանը թերևս պահանջում է ամենամեծ արհեստավարժությունը խաղաղ փոխակերպման գործընթացում: Առաջին երեքը պահանջում են պատմական և ժամանակակից կոնտեքստներից ստացված տվյալների ճշգրտում, իսկ չորրորդը միավորում է առաջին երեքից ստացված գիտելիքները՝ ուսումնասիրելու համար անահատական, հասարակական և համընդհանուր կյանքի էթիկապես ընդունելի, իրականում հասանելի և երբեմն էլ անհրատեսական պահանջները: Այս պայմանը կատարելու համար, ինչպես ասում է բանաստեղծ Ուիթմենը Վոլտը, պետք է «հեռուն փնտրես, որ մոտիկ գտնես» (Ուիթման՝ 1977[1855]: 71):

Ենթադրվում է, որ սպանություններից հրաժարված և ոչ մի հասարակություն մինչև օրս ի ցույց չի դրել խաղաղասիրական որակների այն «ողջ շարանը», որոնք կարող է կիրառել մարդը: Եթե իմի բերենք ողջ պատմական ու ժամանակակից փորձը և միացնենք բոլոր անջատ մասերը, ապա հնարավոր կլինի գտնել սպանություններից հրաժարվելու նոր հնարավորություններ ցանկացած հասարակության համար: Ավելին, նման հիմնավորված դիտարկումներն անհրաժեշտ են «զուտ տեսական» բացահայտումներ կատարելու համար, որպեսզի հստակեցվեն սպանություններից զերծ հասարակությունների բնութագրիչները և ներկա իրավիճակներում դրանք կյանքի կոչելու հավանական գործընթացները:

Մինչև այժմ, ի տարբերություն այն գիտությունների, որոնք խրախուսում են «զուտ տեսության» մշակումը գործնական նպատակներով (ինչպես մաթեմատիկայում, ֆիզիկայում և տնտեսագիտության մեջ), քաղաքագիտությունը միշտ էլ ձգտել է անհաղորդ մնալ վարկածային, անիրատեսական տեսություններին, հատկապես երբ խոսքը վերաբերել է բռնություններին: Բռնությունը խրախուսող քաղաքագիտությունը ամեն կերպ փորձում է խոչընդոտել խաղաղասիրական նախաձեռնություններին և դրանք չընդգրկելով դասապրոցես՝ որպես «ուտոպիստական», «իդեալական» և «անիրատեսական», իրեն շղթայել է անվերջանալի արյունահեղության կապանքներով: Սպանություններից զերծ ստեղծագործ միտքը միայն թույլ կտա ազատվել այդ կապանքներից:

Խաղաղասիրական վերլուծությունների արդյունքում ձեռք բերված հիմնարար գիտելիքները պետք է կիրառել փոխակերպման գործընթացում՝ ձևավորելու համար այն հինգ գոտիները, որոնք կարելի է պատկերել կոնի տեսքով:

Նկ՝ 1. Սպանության կոն



Սպանությունների գոտին ներառում է բոլոր տեսակի արյունահեղությունները՝ սկսած մարդասպանություններից մինչև զանգվածային բնաջնջումներ:

Սոցիալականացման գոտում մարդիկ սովորում են սպանել՝ ուղղակիորեն վերապատրաստվելով հատուկ այդ նպատակի համար կամ անուղղակիորեն՝ ուսումնասիրելով, թե ինչպես են դա անում ուրիշները:

Մշակութային պայմանականությունների գոտում մեզ փոքրուց ներշնչում են, որ սպանությունը մարդու կյանքում պարտադիր և օրինական երևույթ է: Նման ներշնչման աղբյուրներ են հանդիսանում կրոնական, քաղաքական «ուսմունքները», հերոսական և բարբարոսական արարքների գովերգումը, ընտանեկան սովորույթները, օրենքները, ՁԼՄ-ները, ինչպես և արվեստի գործերը:

Կառուցվածքային հզորացման գոտին ներառում է սոցիալ-տնտեսական կապերը, հաստատությունները և նյութական միջոցները, որոնք ստեղծում են սպանություն գործելու բոլոր նախադրյալները:

Նյարդակենսաբանական կարողությունների գոտին ներառում է ֆիզիկական, նյարդային համակարգի ֆունկցիաները, ինչպես և գլխուղեղի աշխատանքը, որոնք պայմանավորում են ինքնապաշտպանական նպատակներով արյուն թափելու կամ խաղաղասիրական վարքագիծ դրսևորելու մարդու կարողությունը (Լոպես-Ռեյս՝ 1998թ., Մորթոն՝ 1999թ.):

Շնորհիվ նպատակաուղղված ջանքերի գոտիների ներսում և դրանց շուրջը՝ «խաղաղ» փոխակերպման խնդիրը կարելի է լուծել՝ փոխարինելով սպանության կոնը սպանություններից հրաժարվելու այլընտրանքանքների բացվող հովհարով (նկ. 2): Այսպիսի փոփոխությունները կարող են լինել ամենատարբեր՝ սպանության գոտում հոգևոր և անվտանգ բարձրակարգ տեխնոլոգիաների միջամտությունից «խաղաղ» սոցիալականացման ու մշակութային ոչ բռնի ներգործությունների միջոցով մինչև սպանություն չենթադրող և չպահանջող սոցիալ-տնտեսական միջավայրի վերափոխում ու կլինիկական, դեղագործական, ֆիզիկական, մեդիտատիվ, կենսաբանական միջամտություններ, որոնք օգնում են ազատվել սպանելու «բնական» մոլորությունից:

Նկ՝2. Սպանություններից հրաժարվելու այլընտրանքների բացվող հովհար



Սպանություններից զերծ գործունեության սկզբունքները

Ի լրումն այն գիտելիքների որոնման, որոնք անհրաժեշտ են սպանություններից զերծ քաղաքականության տրամաբանական վերլուծության համար և ուղղված են գոտիներում սպանություններից հրաժարվելու այլընտրանքների ձևավորմանը, խաղաղ փոխակերպման մոդելը ենթադրում է սկզբունքների կատարելագործում, որը կօգնի անհատական և սոցիալական որոշումների կայացմանը առօրյա կյանքից մինչև համաշխարհային քաղաքականություն:

Սրան հնարավոր կլինի հասնել փորձագիտական հիմնավորումների միջոցով՝ փոխկապակցելով գործնական փորձն ու հետազոտական գործընթացները: Այս նպատակով կարող են օգտագործվել զինվորականների համար նախատեսված «վիրտուալ պատերազմական իրակավիճակներ» ստեղծող եռաչափ մոդելավորմամբ բարձրակարգ համակարգչային վարժանքները:

Խաղաղասիրական սկզբունքները, որոնք 20-րդ դարում դրսևորվեցին այնպիսի ականավոր մարդկանց գործողություններում ու ուսմունքներում, ինչպիսիք էին Գանդին և Քինգը, ներառում են

- Ու՛ժ առ կյանքն արժևորող կրոնական կամ մարդասիրական աղբյուրներից:
- Հարգի՛ր քո և ուրիշների կյանքը:

- Զանք մի՛ խնայիր հանուն ընդհանուրի բարօրության: Սպանությունները տանում են երկպառակության, «խաղաղությունը»՝ համախմբման:
- Կոնֆլիկտային իրավիճակներում, սկզբից մինչև վերջ, փնտրի՛ր հաշտություն, այլ ոչ թե նվաստացում, հալածանք կամ ոչնչացում
- Միացի՛ր կարիքավորների տառապանքների թեթևացմանն ուղղված միջոցառումներին
- Եղի՛ր ստեղծագործ: Բռնությունների տեխնիկական և կառուցվածքային արդի ձեռքբերումների համար պահանջվել է ստեղծագործական մեծ աշխատանք, մինչեռ ավելի մեծ ստեղծագործական աշխատանք կպահանջվի սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու համար:
- Մշակի՛ր փորձագիտական մոտեցում կատարվելիք փոփոխությունների նկատմամբ: Փնտրի՛ր սպանություններից զերծ հասարակություններ ձևավորելու ընդունելի տարբերակներ՝ հիմնվելով առկա ձեռքբերումների ու ձախողումների վրա:
- Հարգի՛ր սպանությունների կանխման ուղղությամբ ձեռնարկված թե՛ անհատական և թե՛ զանգվածային փորձերը:
- Ձիրվի՛ր քաջությամբ: Դադարի՛ր աջակցել բռնությունների տարածմանը, օգնի՛ր սպանությունների կանխման հնարավոր այլընտրանքների ձևավորմանը:
- Ոտքդ թեթև դի՛ր հողին, պահպանի՛ր բնությունը և խնայիր մարդկությանը, որպեսզի նվազեցնես սպանություն ծնող գործոնները:

Յուրանչյուր ոք, ով իր մասնակցությունն է բերում սպանությունների կանխմանն ուղղված բացահայտումներին ու գործընթացներին, նպաստում է սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանն անհրաժեշտ սկզբունքների ու հմտությունների կատարելագործմանը ողջ աշխարհում՝ դրանք համապատասխանեցնելով կոնկրետ իրավիճակներին ու իրադրություններին:

Ժամանակակից քաղաքագիտության համատեքստում սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու հնարավորության փաստը հարցեր է առաջացնում քաղաքագիտության առարկայի յուրաքանչյուր ասպեկտի համար: Համարելով բռնությունը որպես անխուսափելի և օրինական երևույթ՝ քաղաքագետները, ինչպես և հասարակության մյուս անդամները, տալիս են մարդկանց հետևյալ դասակարգումը. *սպանության կողմնակիցներ*, ովքեր սպանությունը ընդունում են որպես բարենպաստ հանգամանք և՛ իրենց և՛ քաղաքակրթության համար: *Սպանությանը հակված մարդիկ*, ովքեր պատրաստ են սպանել կամ խրախուսել սպանությունը, երբ դա բխում է իրենց շահերից: *Միջանկյալ դիրք գրավողներ*, ովքեր հավասարապես կարող են սպանել և հրաժարվել սպանելուց: *Սպանությունից խուսափող մարդիկ*, ովքեր նախընտրում են չսպանել, բայց պատրաստ են դա անել, եթե անհրաժեշտություն լինի: *Սպանությունը դատապարտող մարդիկ*, ովքեր չեն սպանում և անում են ամեն ինչ փոխելու համար սպանություն հրահրող իրավիճակները: Ամփոփելով վերոնշյալը կարելի է ասել, որ առաջին չորս ուղղությունները բնորոշ են սպանությունը խրախուսող և սպանությունն արդարացնող քաղաքականությանն ու քաղաքագիտությանը: Վերջին ուղղությունը նպատակ ունի ստեղծել սպանություններից զերծ քաղաքագիտություն՝ աջակցելու համար սպանություններից զերծ գիտության և հասարակության ստեղծմանը:

Երբ ասվում է, որ ժամանակակից քաղաքագիտությունը բացահայտ կամ թաքուն ընդունում է «սպանությունը», դա չի նշանակում, որ բոլոր քաղաքագետներն իրենց ուսանողներին հորդորում են «սպանել», ինչպես դա անում են զորավարժանքներ անցկացնող սերժանտներն ու սպաները:

Չպետք է նաև անուշադրության մատնել բռնությունների կանխմանն աջակցող քաղաքագետների գործունեությունը, ովքեր փորձում են քաղաքացիական և միջազգային պատերազմները փոխարինել ժողովրդավարական ինստիտուտներով (կուսակցական մրցակցությունները, ընտրությունները, օրենսդրական բարեփոխումները): Այն փաստը, որ ժամանակակից քաղաքագիտության առարկան խրախուսում է բռնությունը և այն հանգամանքը, որ հնարավոր է մշակել սպանություններից հրաժարվելու այլընտրանքներ, խոստանում է առաջընթաց թե՛ բարոյագիտական և թե՛ էմպիրիկ մակարդակներում: Սրանից հետևում է, որ սպանությունների կանխման հարցը ազատության, հավասարության, արդարության ու ժողովրդավարության խնդիրների հետ համատեղ պետք է կազմի քաղաքագիտության առարկայի հիմքը:

Սպանություններից զերծ գիտական հեղափոխություն

Սպանություններից զերծ հասարակություն ստեղծելու հնարավորության փաստումը ենթադրում է սպանությունը դատապարտող գիտական հեղափոխություն քաղաքագիտության բնագավառում, ավելի շուտ, յոթ փոխկապակցված ենթահեղափոխություն. *նորմատիվ*՝ սպանության խրախուսումից մինչև մերժում, *տեղեկատվական* սպանություններից զերծ հասարակության փոխակերպմանը նպաստող գործոնների ճշգրտում, *տեսական*՝ խաղաղ փոխակերպման գործընթացների և պատճառների ըմբռնում, *կրթական*՝ խաղաղ փոխակերպման համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների տրամադրում, *կիրառական*՝ խաղաղասիրական գիտելիքների կիրառում պրակտիկայում, *մեթոդաբանական*՝ խաղաղ փոխակերպման պահանջներին համապատասխան գործառնական, վերլուծական և հետազոտական մեթոդների ստեղծում և վերամշակում:

Նորմատիվ հեղափոխություն

Նորմատիվ շարժը ենթադրում է սպանելու հրամայականից անցումը չսպանելու հրամայականին: Այս շարժը կարող է տեղի ունենալ էթիկական և էմպիրիկ բացահայտումների շարունակական, փոխակապակցված գործընթացում: Էթիկական տեսանկյունից պրոգրեսիան ունի հետևյալ տեսքը. սկսվում է սպանությունից, ուրեմն էթիկական պահանջ է, աճում է դեպի սպանություն՝ կասկածելի է, աճում է դեպի սպանության կանխում, տեսականորեն հնարավոր է, հասնում է սպանություններից հրաժարման, ուրեմն նորմա է: Սրան զուգահեռ՝ էմպիրիկ պրոգրեսիան ունի այս տեսքը. սպանություններից զերծ հասարակություններ չեն կարող լինել, սպանություններից զերծ հասարակության խաղաղ փոխակերպումը խնդրահարույց է, սպանություններից զերծ հասարակության բնութագրիչների վարկածային և իրատեսական ուսումնասիրությունը պարտադիր է, աշխարհում սպանություններից զերծ հասարակություններ ստեղծելու և պահպանելու գիտական ճանապարհների որոնումը նպատակային է:

Էթիկական հարցադրումների ու էմպիրիկ պատասխանների և էմպիրիկ հարցադրումների ու էթիկական պատասխանների փոխներթափանցող գործընթացների միջոցով հնարավոր կլինի հաղթահարել սպանություններից հրաժարվելու սկզբունքների և սպանությունը խրախուսող քաղաքականության միջև առկա անջրպետը՝ հարուցված Վեբերի կողմից: Այս կերպ կյանքի նկատմամբ կայուն հարգանքը կարելի է ավելացնել «փաստերի ու հետևությունների վերաբերյալ կանոնների անփոփոխ կիրառմանը» (Ալմոնդ՝ 1996:89)՝ որպես ընդհանուր էթիկական հիմք քաղաքագիտության ժամանակակից առարկայի համար:

Նկ. 3. Սպանությունների կանխման հարացույցի նորմատիվ-էմպիրիկ շարժերի գործընթաց



Տեղեկատվական հեղափոխություն

Փաստացիորեն խաղաղ փոխակերպումը ենթադրում է սպանություններից հրաժարվելու մարդկային կարողությունների վերաբերյալ վկայությունների նպատակային բացահայտում և վերականգնում՝ անտեսված կամ թերագնահատված բռնությունը խրախուսող տեսությունների կողմից: Նման փաստեր կարելի է գտնել ամենատարբեր աղբյուրներում՝ նյարդաբանությունից մինչև բարձրագույն տեխնոլոգիաներ: Ուշադրության են արժանի հատկապես այն խաղաղասիրական դրսևորումները, որոնք հատուկ են բռնություններով հարուստ պատմական և մշակութային իրավիճակներին: Օրինակի համար մ.թ.ա. 399 Հունաստանում հինգ հարյուր սենատորներից հարյուր քառասունը դեմ քվեարկեցին Սոկրատեսին մահվան դատապարտելու վճռին (Սթոուն՝ 1989: 187): Ճապոնիայում բուդդիստ Հեյանի գահակալության ժամանակ (794-1192թթ.) մահապատիժը չկիրառվեց մոտ երեք հարյուր հիսուն տարի (Նակամուրա՝ 1967:145): Միացյալ Նահանգներում 1917թ. ապրիլի 4-ին ու 6-ին վեց սենատորներ[8] և Ներկայացուցիչների պալատի հիսուն անդամներ[9] դեմ քվեարկեցին Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարելու որոշմանը: Ռուսաստանում 1917թ. հոկտեմբերի 23-ին Կենտրոնական Կոմիտեի նվազագույնը 2, հնարավոր է նույնիսկ հինգ կամ վեց բոլշևիկներ պաշտոնապես դատապարտեցին զինված հեղափոխություն կատարելու Լենինի քաղաքականությունը (Շաբ՝ 1976: 271): Միացյալ Նահանգներում 1945թ. հուլիսի վերջին՝ Հիրոսիմայի և Նագասակիի վրա ատոմային հարձակում գործելու նախաշեմին, Մենհեթենյան Նախագծի մասնակից 150 գիտնականներից 19-ը դեմ քվեարկեցին իրենց իսկ աջակցությամբ ստեղծված զենքի

կիրառմանը ռազմական նպատակներով (Զիովաննիթի և Ֆրիդ՝ 1965: 168, Ալփերովից՝ 1995թ.): 1996թ. ԱՄՆ ռազմածովային ուժերի շտաբը դարձավ այն «գործադիր մարմինը», որը համակարգում էր Պաշտպանության Նախարարության և կառավարական մյուս օղակների գործունեությունը՝ ուղղված ոչ մահաբեր զենքերի ուսումնասիրմանը, մշակմանը ու ձեռքբերմանը (Լուեր և Սքոֆիլդ՝ 1997: 45): Դա կանխագուշակեց «խաղաղ, անվնաս» մտածելակերպ ձևավորելու հնարավորությունը չնայած այն հանգամանքին, որ նմանատիպ զենքերը ներկայումս կիրառվում են որպես մահաբեր տեխնոլոգիաներին փոխարինող տարբերակներ, որոնցով կարելի է մարդկանց խեղել ու սպանել:

Տեղեկատվական հեղափոխության նպատակն է բացահայտել խաղաղասիրական հակումների հին ու նոր դրսևորումները բոլոր հասարակություններում:

Տեսական հեղափոխություն

Տեսական հեղափոխությունը ենթադրում է ստեղծել նորմատիվ և էմպիրիկ տեսություններ, որոնք կխորացնեն սպանությունների կանխման վերլուծության համար անհրաժեշտ գիտելիքները և կնպաստեն անհատական որոշումների կայացման, քաղաքացիական հասարակության գործողությունների պլանավորման ու պետական քաղաքականության իրագործման գործընթացներին: Օրինակի համար տեսական իմացության երեք կարևոր աղբյուրների համակցությունը՝ սկզբունքային, պրագմատիկ և մեթոդական, թույլ կտա ձեռք բերել լրացուցիչ ինֆորմացիա խաղաղ փոխակերպման քաղաքական հնարավորությունների վերաբերյալ: Առաջին աղբյուրը Գանդիի փառահեղ ուսմունքն է, որտեղ շեշտվում է ինքնահարգանքի կարևորությունը անհատի և հանրության կյանքում ճշմարտությունների (արդարությունների) բացահայտման ճանապարհին՝ շարադրված Գանդիի «Սատիագարիի գիտությունը» գրքում (1970թ.): Ըստ Գանդիի՝ Աստծո հանդեպ կենդանի հավատը, որն ընկած է բոլոր կրոնների հիմքում և բնութագրվում է նաև ճշմարտություն, սեր և խաղաղություն բառերով, հանդիսանում է բռնությունների կանխման անհաղթահարելի ուժը: Խաղաղասիրական ոգին ու խաղաղ գոյակցությունը կազմում են մարդկային կյանքի գլխավոր օրենքը. բռնություն կիրառել նշանակում է խախտել այս օրենքը:

Երկրորդ աղբյուրը խաղաղասիրական ներուժի տեսությունն է՝ շարադրված Ջին Շարփի «Խաղաղասիրական գործողությունների քաղաքականություն» գրքում (1973թ.): Հիմք ընդունելով ինչ-որ բանից մշտապես կախման մեջ գտնվող քաղաքական իշխանության մանրամասն վերլուծությունը՝ Շարփը ներկայացնում է խաղաղասիրական պայքարում կիրառված պատմական հայտնի տեխնիկաների լայն շարանը և տալիս է քաղաքականության խաղաղ փոխակերպման զարգացումների ռազմավարական վերլուծությունը: Ըստ Շարփի՝ քաղաքականության «խաղաղ» գործողությունները պրագմատիկորեն այնքան համոզիչ են, որ դրանք իրագործելու համար կարիք չկա հետևել ինչ-որ հոգևոր, կրոնական կամ պացիֆիստական համոզմունքների:

Տեսական իմացության երրորդ աղբյուրը մարդկանց առաջնային կարիքների բավարարմանն տեսությունն է՝ մշակված Ջոն Բերթոնի կողմից և ուղղված բռնություն ծնող պատճառների վերլուծությանն ու խաղաղ փոխակերպման մասնակցային գործընթացներին խոչընդոտող կարիքների բավարարման միջոցների բացահայտմանը: Բերթոնի տեսությունը ներկայացված է «Ահաբեկչությունը և պատերազմը անոմալ երևույթներ են. չլուծված սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման գործընթաց» գրքում (1979թ.) և մյուս աշխատություններում (1984թ., 1996թ, 1997թ.): Ըստ Բերթոնի՝ բռնության բոլոր ձևերը՝ մարդասպանությունից մինչև պատերազմական

գործողություններ, տեղի են ունենում այն պատճառով, որ մարդկանց զրկում են ամենակարևորից, առաջին հերթին՝ ինքնորոշման ու արժանապատվության իրավունքից: Բռնություն գործադրողները և նրանց զոհերը ունեն նույն կարիքները: Բռնությունների ժամանակ ո՛չ արժեքային համակարգը և ո՛չ էլ զուսպ պահվածքը չեն կարող կանխել արյունահեղությունը: Մինչդեռ եթե կարողանանք խնդիրների լուծման գործընթացին ներգրավվել նաև բոլոր նրանց, ում իրավունքներն այս կամ այն կերպ ոտնահարվել են, ապա այդ ժամանակ հնարավոր կլինի ձևավորել սպանություններից զերծ հասարակություն սպանություններից զերծ աշխարհում:

Այս երեք բաղկացուցիչները՝ հոգևոր զորակցությունը, պրագմատիկ մոտեցումը և խնդիրների միասնական լուծումը, կարող են դառնալ խաղաղասիրական տեսության հիմնական տարրերը՝ հարմարեցվելով պետական, դասակարգային, տնտեսական, ինստիտուցիոնալ, գենդերային, ռասսայական, էթնիկական, պատմական, կրոնական, մշակութային, բնապահպանական իրավիճակներին լոկալ և գլոբալ համատեքստում: Համապատասխան իրավիճակներին հարմարեցնելու ստեղծագործական մոտեցումներ կարելի է գտնել Ռոբերտ Ջ. Բարրոուեսի (1996թ.), Բերենիս Ա. Կարոլի (1998թ.), Յոհան Գալթունգի (1996թ.), Բրայան Մարտինի (1989թ.) և Քեյթ Մաքգվիներսի (1993թ.) աշխատություններում:

Կիրառական հեղափոխություն

Նորմատիվ, տեղեկատվական և տեսական շարժերը միասին վերցված ենթադրում են կիրառական նոր մոտեցումներ սպանություններից զերծ քաղաքագիտության մեջ: Նորմատիվ փոփոխությունը առաջացնում է նոր հետաքրքրասիրություն և տրամադրում է կառուցողական (նաև քննադատական) աջակցություն խաղաղասիրական գաղափարներին, քաղաքականություններին, անհատներին, կազմակերպություններին, շարժումներին և ինստիտուտներին: Շարփի տեսությունը ուղղակիորեն աջակցում է բռնատիրական վարչակարգերի խաղաղ փոխակերպմանը, ինչպես նաև նմանատիպ գործընթացներին անհաղորդ ժողովրդավարական համակարգերի ձևափոխմանը: Ըստ Բերթոնի տեսության՝ քաղաքագիտությունը պետք է խաղաղ ճանապարհներով լուծի մարդկանց կարիքների բավարարմանն ուղղված քաղաքական ու սոցիալական խնդիրները: Գանդիի տեսությունը, որը միախառնում է բարոյագիտությունը, մեթոդաբանությունը և զգայունությունը մարդկային կարիքներին, բացահայտ աջակցություն է ցուցաբերում բռնությամբ աչքի ընկնող քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կառույցների խաղաղ փոխակերպմանը, որոնք հանդիսանում են սպանությունների և դրանք իրագործելու սպառնալիքների մտահղացողն ու կիրառողը: Պետք է հիշել, որ հոգևոր, խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող Գանդին և Քինգը միշտ էլ խրախուսել են սպանություններից հրաժարվելու կառուցվածքային փոփոխությունները:

Կիրառական քաղաքագիտության խնդիրն է աջակցել լոկալ և գլոբալ փոխակերպումներին՝ հիմք ընդունելով սպանություններից զերծ տեսության վերլուծության տրամաբանությունը և իրականացնելով սպանությունների կոնը սպանություններից հրաժարվելու այլընտրանքների բացվող հովհարով փոխարինելու հանձնարարականները: Անհատական ու զանգվածային սպանությունների առկայությունը «ժողովրդավարական քաղաքականության» և «ազատ շուկայի» ներկա պայմաններում, վկայակոչում են այն մասին, որ նման երևույթները չեն կարող դառնալ մարդկային բարեկեցության երաշխիք: Այս պայմանները, «ոչ ժողովրդավար քաղաքականության» և «ոչ ազատ շուկայի» հետ համատեղ, խոչընդոտում են

սպանություններից զերծ կիրառական քաղաքագիտության ստեղծագործական զարգացմանը:

Կրթական հեղափոխություն

Սպանություններից զերծ քաղաքագիտություն ձևավորելու խնդիրներից մեկն էլ քաղաքագետների մասնագիտական վերապատրաստումն է և կրթական ընդհանուր համակարգի բարեփոխումը: Պատմությանը հայտնի ու անհայտ արյունալի իրադարձություններն ու ավանդույթները բացահայտելու փոխարեն քաղաքագիտության ուսուցանումը պետք է իր անգնահատելի աջակցությունը բերի համաշխարհային խաղաղ փոխակերպման գործընթացին: Նրա գլխավոր խնդիրը պետք է դառնա սպանություններից զերծ հասարակության առաջնորդների և քաղաքացիների կրթումն ու դաստիարակումը՝ վերջիններիս մոտ ձևավորելով հետազոտական, կրթական, խորհրդատվական, առաջնորդական, գործառնական և քննադատական կարողություններ խաղաղասիրական գիտելիքների բացահայտման, վերամշակման ու տարածման միջոցով:

Սպանություններից զերծ քաղաքագիտության ուսուցանումը ուսանողներից կպահանջի այնպիսի խորը գիտելիքներ, ինչպիսիք սովորաբար ունենում են հոգեբաններն ու հոգեբույժները:

Մենք պետք է հասկանանք, թե սպանությունը խրախուսող կամ դատապարտող սեփական համոզմունքները, հույզերն ու վերաբերմունքը ինչ հիմքեր ունեն: Գիտական մեթոդներով մեդիտացիայի ուսուցանումը, որը կիրառելի է տարբեր կրոնական հայացքների տեր մարդկանց մոտ, կլինի շատ տեղին: Պետք է ստեղծվեն անհրաժեշտ պայմաններ անձնական և մասնագիտական փորձի փոխանակման համար: Խաղաղարար քաղաքագետները պետք է աջակցեն միմյանց մասնագիտական կատարելագործման բոլոր փուլերում, միշտ վառ պահեն կյանքի նկատմամբ ունեցած սեփական հարգանքը՝ նույնիսկ մյուս հարցերում տարակարծիք լինելու պարագայում: Հասարակության մյուս անդամները ևս պետք է առաջնորդվեն այս թեզով:

Խորհրդատուներ ու դերակատարներ դառնալու ճանապարհին խաղաղասեր քաղաքագետները պետք է տիրապետեն այնպիսի հմտությունների, որոնց տիրապետում են բժիշկ փորձագետները, բժիշկները, բժշկագետները և այս ոլորտի մյուս մասնագետները, ում մասնագիտական հմտությունից է կախված մարդու կյանքն ու մահը: Սպանություններից զերծ հասարակությունների ձևավորման գործում քաղաքագետների դերակատարումը նույնն է, ինչ բժիշկ մասնագետների դերը անհատական ու հասարակական առողջապահության բնագավառում: Երկու մասնագիտությունների ներկայացուցիչներն էլ գիտակցում են առաջադեմ գիտելիքների հիման վրա կատարված ճիշտ ախտորոշման, համապատասխան դեղորայքի նշանակման և բուժման կարևորությունը:

Միաժամանակ հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է իր աջակցությունը բերել խաղաղ փոխակերպման հանդիսանալու գործընթացին: Սպանություններից զերծ քաղաքագիտության առարկայի խնդիրն է ուսուցանման բոլոր մակարդակներում ուսանողներին ընձեռել անհատական զարգացման և անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների ձեռք բերման հնարավորություն. հմտություններ, որոնք պետք կգան խաղաղասեր հասարակության առաջնորդին ու քաղաքացուն իրենց կենսագործունեության ողջ ընթացքում: Բոլորը ուսուցանում են.... բոլորը սովորում:

Ուսումնական պլանի հիմքում ընկած են խաղաղասիրական վերլուծության համար անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերումը, արյունալի վեճերը խաղաղ ուղիներով

փոխարինելու կարողությունների օգտագործումը, անհատական ու հասարակական գործողությունների կարգավորման համար անհրաժեշտ սկզբունքների կատարելագործումը:

Ներածական դասընթացի կամ սեմինարի ժամանակ պետք է բերել մարդկային վայրագությունների ու դաժանությունների վառ օրինակներ պատմությունից ու ժամանակակից կյանքից, իսկ հետո ձևակերպել կենսական կարևորություն ունեցող մի բանաձև. «մեր առարկայի խնդիրն է վերջ դնել մարդասպանությանը»:

Հաջորդ բաժնում ներկայացվում են սպանությունները կանխելու մարդկային ներուժի վառ օրինակներ՝ վերցված պատմությունից և ժամանակակից կյանքից: Երրորդ բաժնում բերվում են օրինակներ, որտեղ բռնությունը դատապարտող անհատները կամ հասարակությունները դիմում են բռնության և հակառակը՝ բռնությունը խրախուսող անհատներն ու հասարակությունները նախընտրում են խաղաղ ճանապարհով հարցի լուծման տարբերակները: Չորրորդ բաժնում դիտարկվում է քաղաքական ինստիտուտներ ձևավորելու մարդկային հնարամտությունը, սպանություններից ազատ հասարակության բնութագրիչների հստակեցումը և բոլոր այն ուղիների բացահայտումը, որոնց օգնությամբ քաղաքագիտությունը կարող է նպաստել նմանատիպ հասարակությունների ձևավորմանը: Յուրաքանչյուր բաժնում ներկայացված են խնդիրների լուծման համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարիքները, ինչպես նաև դրանց փոխհարաբերակցությունը տեղական ու համաշխարհային մակարդակներում:

Խաղաղասիրության ուսուցման նորարարական մոտեցումները կառուցվում են այսպիսի հիմքերի վրա:

Սպանություններից զերծ քաղաքական այլընտրանքների վերաբերյալ ավարտական դասընթացում ներառված են հետևյալ կոմպոնենտները. յուրաքանչյուր մասնակից ընտրում է իրեն հետաքրքրող բռնության ոլորտ, ուսումնասիրում է բռնության տվյալ տեսակի և դրա առաջացման պատճառների վերաբերյալ առկա գրականությունը, խորհրդակցում բռնության նման դեպքերին ուղղակիորեն առնչված անձանց հետ, ճշտում նման դեպքերի հաճախականության, տենդենցների, պատճառների ու դրանք կանխելու այլընտրանքային ուղիների վերաբերյալ նրանց տեսակետները, փորձում ինքնուրույն գտնել այլընտրանքային ուղիներ, քննարկում է կատարած վերլուծություններն ու խնդրի լուծման առաջարկները համակուրսեցիների հետ և ի վերջո խմբային քննարկումների արդյունքում գտնում խնդրի լուծման օպտիմալ տարբերակը:

Մեթոդաբանական հեղափոխություն

Մեթոդաբանորեն խաղաղասիրական շարժը ենթադրում է նոր մոտեցումներ հետազոտական, կրթական, կիրառական քաղաքականության և ինստիտուցիոնալ կառուցման մեթոդիկայում: Նրա խնդիրն է վերամշակել խաղաղասիրական այլընտրանքային ուղիների բացահայտման ու կիրառման հին մեթոդները, ըստ անհրաժեշտության մշակել ու ներմուծել նոր մեթոդներ՝ խրախուսելով մյուս ուսումնական առարկաներին (ինչպես օրինակ նյարդաբանությանը) կիրառել սեփական մեթոդները սպանություններից զերծ հասարակության խաղաղ փոխակերպման խնդիրները լուծելիս: Նոր մեթոդների կիրառումը հատկապես անհրաժեշտ է սպանությունների գոտում հետազոտություններ և միջամտություններ իրականացնելիս:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը կարող է օգտագործել տեղեկատվական մեթոդների շարունակ ընդլայնվող պաշարը, որը ներկայումս ներառում է փիլիսոփայական, պատմական, ինստիտուցիոնալ և իրավական վերլուծություններ, հարցազրույցներ, մասնակիցների դիտարկումներ, կոնկրետ դեպքերի

ուսումնասիրություններ, համեմատական վերլուծություններ, բառացի մեկնաբանություններ, խաղերի տեսություններ, հասարակական ընտրության վերլուծություններ, վիճակագրական վերլուծություններ, հետազոտական ուսումնասիրություններ, լաբորատոր և դաշտային փորձեր, վարքագծային հետազոտություններ համակարգչային մոդելավորման միջոցով, ինչպես և թվարկված մեթոդների ամենատարբեր համակցություններ: Կրթական մեթոդները ամենատարբեր են՝ ավանդական դասախոսություններ, ընթերցված նյութի վերլուծություն, գործնական պարապմունքներ, ուսումնական պրակտիկա, ինքնուրույն համակարգչային ուսումնասիրություններ: Քաղաքական պրակտիկան ներառում է սահմանադրական բարեփոխումներ, կոնֆլիկտների լուծում, խորհրդատվական ծառայություններ կազմակերպություններին, ընտրական գործընթացներին, լրատվական մեկնաբանություններ, անվտանգության քաղաքականության ձևավորում և ղեկավար-քաղաքացի անմիջական մասնակցություն որոշումների կայացման ընդհանուր գործընթացին:

Տեսական ու գործնական գիտելիքների այս լայն սպեկտրում առաջադրված մեթոդաբանական հարցադրումը հետևյալն է. «ինչպե՞ս կարող են հին ու նոր մեթոդները լավագույնս նպաստել սպանությունների վերացմանը մարդկության պատմության մեջ»:

Ինստիտուցիոնալ հեղափոխություն

Ինստիտուցիոնալ տեսանկյունից խաղաղ փոխակերպման շարժը փնտրում է այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝ ի՞նչ կառուցվածք պիտի ունենա քաղաքագիտության առարկան, որո՞նք են լինելու նրա ենթաբաժինները և ի՞նչ հարաբերությունների մեջ է լինելու այն մյուս ուսումնական առարկաների ու սոցիալական ինստիտուտների հետ: Անհրաժեշտ է նաև խաղաղ փոխակերպման հարցերի քննարկումը ուսումնական առարկայի կառուցվածքային շրջանակներից տեղափոխել տեղական, ազգային ու միջազգային մակարդակ: Սա ենթադրում է նաև քաղաքագիտության բաժինների ստեղծում նորաբաց ինստիտուտներում կամ միջառարկայան, «խառնածին» նոր մասնագիտություններին ստեղծում՝ ուղղված հասարակության կարիքների բավարարմանը:

Իր այս ներկա կառուցվածքով համաշխարհային քաղաքագիտության առարկան ներկայացված է 1949թ. հիմնադրված «Քաղաքագիտության միջազգային ասոցացիայի» (ՔՄԱ) կողմից: Առնվազն 34.900 անդամներ ունեցող քաղաքագիտության քառասուներկու ազգային ընկերություններ կազմում են ՔՄԱ անդամ ընկերությունների հիմնական կորիզը և ընդգրկված են վերջինիս գործադիր կոմիտեի մեջ (Հավելված Ա): ՔՄԱ անդամների բազմակողմանի հետաքրքրությունները ներկայացված են տասնութ հիմնական ոլորտներում և հիսունմեկ հետազոտական հանձնաժողովներում (Հավելված Բ):

Այս ցուցակին կարելի է ավելացնել ՔՄԱ-ին չանդամակցող երկրների քաղաքագետների և ողջ աշխարհի քաղաքագիտության բաժնի ուսանողները:

ՔՄԱ ծրագրի շրջանակներում ստեղծված *Քաղաքագիտության նոր ձեռնարկը* (Գուդին և Քլինգման՝ 1996թ.)՝ կազմված 42 հեղինակների կողմից, նպատակ ունի ուսումնասիրել քաղաքագիտության առարկայի ներկա վիճակը: Ձեռնարկում առանձնացվել ու ուսումնասիրվել են ութ հիմնական ենթաբաժիններ, որոնք զարգացում են ապրել հատկապես վերջին երկու տասնամյակներին: Դրանք են քաղաքական ինստիտուտները (բանական ընտրություն, իրավական հեռանկարներ), քաղաքական վարքագիծը (ընտրազանգվածներ և բազմակուսակցական համակարգեր, ինստիտուցիոնալ և էմպիրիկ մոտեցումներ), համեմատական քաղաքականությունը

(մակրովարքագծային հեռանկարներ, ժողովրդավարացման գործընթացների ուսումնասիրություններ), միջազգային հարաբերությունները (նեոռեալիզմ և նեոլիբերալիզմ, էկլեկտիկ և ֆեմինիստական հեռանկարներ), քաղաքական տեսությունը (փիլիսոփայական սովորույթներ, էմպիրիկ տեսություն), պետական քաղաքականությունը և կառավարումը (համեմատական քաղաքականության վերլուծություն. գաղափարներ, հետաքրքրություններ և ինստիտուտներ), քաղաքական տնտեսությունը (սոցիոլոգիական) և քաղաքական մեթոդաբանությունը (որակական մեթոդներ, պլանավորված հետազոտական աշխատանքներ և փորձառական մեթոդներ): Ձեռնարկի ներածական մասում ՔՄԱ նախագահը գրում է. «Չկա մեկ այլ գիրք, որն ավելի լավ նախապատրաստեր քաղաքագիտության մուտքը նոր դարաշրջան»(xii):

Չնայած այս բոլոր ձեռքբերումներին՝ նոր ձեռնարկը ցույց է տալիս առարկայի «խաղաղ» փոխակերպման անհրաժեշտությունը: Օրինակ՝ բովանդակության բաժնում ոչ մի տեղ նշված չեն «բռնություն» կամ «ոչ բռնություն», «մարդասպանություն», «ցեղասպանություն», «մահապատիժ», «ահաբեկչություն» կամ «ոստիկանություն» արտահայտությունները:

Ձեռնարկում վաքսուն անգամ հիշատակվում է «պատերազմ» բառը և միայն ութ անգամ՝ «խաղաղություն» բառը: Անունների ցանկում նշված են «Հիտլերի» և «Լենինի», բայց նշված չեն «Գանդիի» և «Քինգի» անունները: Չի նշվում նաև հայտնի քաղաքագետ, խաղաղ քաղաքական պայքարի տեսության ու պրակտիկայի հեղինակ Ջին Շարփի անունը և ոչ էլ նրա «Խաղաղ գործողությունների քաղաքականություն» աշխատությունը (1973թ.), չի նշվում նաև կոնֆլիկտների խաղաղ լուծման տեսության հիմնադիր Ջոն Բերթոնի անունն ու նրա կատարած գործերը (1979թ., 1984թ.): Ըստ պատշաճի չի լուսաբանվում համաշխարհային խաղաղասիրության ոլորտում նշանավոր ուսումնասիրություններ կատարած Յոհան Գալթունգի գործունեությունը (1996թ.):

ՔՄԱ-ի ամենամեծ և ամենաբազմանդամ ընկերությունը (մոտ 13.300 անդամներ) 1903թվականին հիմնադրված «Քաղաքագիտության ամերիկյան ընկերությունն է»(ՔԱԸ): Անդամների հետաքրքրությունները ընդգրկում են ութ հիմնական ոլորտներում, յոթանասունյոթ ենթաոլորտներ և երեսունչորս հատուկ ուսումնասիրության բաժիններ (տես՝ Հավելված Գ): ՔՄԱ և ՔԱԸ հետաքրքրությունների շրջանակները ընդհանուր առմամբ նույնն են: Ամերիկյան քաղաքագիտության հիմնական ոլորտներն են՝ ամերիկյան կառավարություն և քաղաքականություն, համեմատական քաղաքականություն, միջազգային քաղաքականություն, մեթոդաբանություն, քաղաքական փիլիսոփայություն և տեսություն, քաղաքական իրավունք և դատարաններ, պետական քաղաքականություն և պետական կառավարում: Չնայած կան հատուկ բաժիններ նվիրված «կոնֆլիկտային գործընթացներին» և «միջազգային անվտանգությանն ու զենքերի վերահսկողությանը», բայց չկա մի բաժին, որը զբաղվի սպանություններից զերծ քաղաքական վերլուծության տրամաբանության ու գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների ու խնդիրների լուծման պահանջների համակարգմամբ: Օրինակի համար չկան հատուկ բաժիններ «բռնությունների», «բռնությունների կանխման» կամ նույնիկ «խաղաղության» վերաբերյալ (համեմատի՛ր «Խաղաղության միջազգային հետազոտական ընկերություն»): Դուրս է գալիս, որ ժողովրդավարությունը, որը ծնունդ է առել բռնություններից և պահպանվում է նրանց շնորհիվ, հանդիսանալով քաղաքակրթության զարգացման լավագույն երաշխիքը՝ բացահայտորեն խոչընդոտում է խաղաղ քաղաքակրթության այլընտրանքների ուսումնասիրման ինստիտուցիոնալ գործընթացին:

Խաղաղ փոխակերպումը ենթադրում է հարցերի առաջադրում քաղաքագիտության առարկայի բոլոր ոլորտներում՝ ներկայացված ամերիկյան և միջազգային քաղաքագիտության ընկերությունների կառուցվածքում.

- Ի՞նչ կարող եք ասել սպանություններից զերծ հասարակության ձևավորման և դրա իրագործման ուղիների հնարավորությունների մասին:

Սա նշանակում է, որ պետք է միաժամանակ օգտագործել առկա ձեռքբերումներն ու ներմուծել նորերը, որոնք հարցադրումների միջոցով կարտացոլվել ամերիկյան քաղաքագիտության չորս ավանդական ոլորտներում՝ քաղաքական փիլիսոփայություն և տեսություն, ամերիկյան կառավարում և քաղաքականություն, համեմատական քաղաքականություն, միջազգային հարաբերություններ:

Քաղաքական փիլիսոփայություն և տեսություն

Քաղաքական փիլիսոփայության ու տեսության մեջ խաղաղ փոխակերպումը ենթադրում է քաղաքական մտքի պատմության ուսումնասիրությունը մշակութային բոլոր միջավայրերում՝ ուղղված համար խաղաղասիրական մոռացված գաղափարների վերականգնմանը և նորերի ձևավորմանը: Օրինակ Պլատոնի «Հանրապետություն»-ում Դենիս Դելտոնը տեսնում է «վնասի վերացման» էթիկական կատարելություն, որին պետք է ձգտեն փիլիսոփաներն ու քաղաքական առաջնորդները, չնայած այն հանգամանքին, որ այդ աշխատության մեջ Պլատոնն արդարացնում է պատերազմը, մահապատիժը և ռազմական մշակույթը: Այս կատարելությունն արտացոլված է հատկապես Պլուտարքոսի դիտարկումներում. «Նա, ով դանակ է գործածում, չի նշանակում, որ լավ բժիշկ է կամ պետական գործիչ: Երկուսի մոտ էլ կա արհեստավարժության պակաս, իսկ պետական գործչի դեպքում ավելանում է նաև դաժանությունն ու անարդարությունը» (Պլուտարքոս 10: 249):

Դիտարկենք նաև չինացի փիլիսոփա Մեն-Ցզիի հետևյալ տեսակետը (մ.թ.ա. 371-289թթ.). «Նա, ով օգտագործելով իր ուժը, իրեն բարերար է ներկայացնում, իրականում բռնակալ է (Pa)...: Նա, ով օգտագործելով իր առաքինությունը, ցուցաբերում է մարդկային բարեհոգություն(jen), Թագավոր է (wang)» (Ֆանգ՝ 1952: 112): Ուշագրավ է նաև Մո Ցզիի (Mo Ti, մ.թ.ա. 468-376թթ.)՝ պատերազմների ու ճնշումների քննադատի և «տիեզերական սիրո» փիլիսոփայի տեսակետը՝ ուղղված խաղաղ փոխակերպման վերաբացահայտումներին ողջ աշխարհում (Ֆանգ՝ 1952: 76-105):

Բռնությունը ջատագովող դասական գործերը կարելի է վերածնակերպել՝ պակասեցնելով արյունահեղությունների խրախուսումը, փոխարենը պահպանելով և ավելացնելով խաղաղասիրական գաղափարները: Նմանատիպ օրինակներից կարելի է նշել Չայվաթ Սաթա-Անանդի «Խաղաղասեր տիրակալը» աշխատությունը, որը Մաքիավելիի «Բռնակալը» աշխատության վերամշակված տարբերակն է կամ Քլաուզեվիցի «Պատերազմի մասին» աշխատության վերամշակված տարբերակը Բերոուսի կողմից, որտեղ նա երևան է հանում խաղաղ պաշտպանության ռազմավարական սկզբունքները (1996թ.): Այս երկու աշխատություններն էլ հիշեցնում են այն մասին, թե ինչպես Գանդին ձևակերպեց խաղաղ գործառնության սկզբունքները այն խորհուրդներից, որոնք Կրիշնա աստվածը տվեց ռազմի հերոս Արջունային «Բագհավատ Գիտա» հնդկական ասքում (Գանդի՝ 1971թ.):

Բռնությունը ջատագովող անցյալի դասական գործերը դառնում են ներկա ու ապագա խաղաղասիրական սկզբունքների ձևավորման հիմնաքարը: Իր ժամանակին Պլատոնն առաջարկում էր ստեղծել մի հանրապետություն, որի ղեկավարումը պետք է հանձնվեր ռազմական հմուտ առաջնորդների ձեռքը, իսկ ներկայումս սպանություններից զերծ հանրապետության կառավարումը կարելի է տեսնել խիզախ առաջնորդների ու խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող քաղաքացիների ձեռքին: Եթե Արիստոտելը առաջարկում էր պատերազմական գործողությունների կանոնակարգմանն ուղղված օրենքներ, ապա հիմա մենք առաջադրում ենք սպանություններից զերծ

հասարակությունների ձևավորմանը նպաստող սահմանադրական նախագծեր: Եթե Մաքիավելին նկարագրում էր բռնությունների մասսայականացմանն անհրաժեշտ հմտությունները, ապա հիմա կարող ենք մշակել սպանություններից զերծ քաղաքական իշխանության ձևավորման ռազմավարությունն ու մարտավարությունը: Եթե Հոբսը առաջարկում էր ստեղծել հրեշավոր մի պետություն, որտեղ հասարակական խաղաղությունը կարելի էր պահպանել միայն բռնի ուժով, ապա հիմա կարող ենք մշակել մարդկային կարիքներին համահունչ և բռնություն չենթադրող կառավարման նոր մեթոդներ: Եթե Լոկը բռնակալական ռեժիմից ազատվելու ճանապարհը տեսնում էր արյունալի հեղափոխության մեջ, ապա մենք կարող ենք հասկանալ խաղաղ ճանապարհով ժողովրդավարացման ռազմավարությունն ու մարտավարությունը:

Եթե Մարքսն ու Էնգելսը բռնությունը համարում էին դասակարգային պայքարի գլխավոր հաշտարարը, ապա մենք կարող ենք խաղաղասիրական պայքարի գործընթացը դիտել որպես տնտեսական արդարության վերականգնմանն ուղղված դարավոր ցանկությունների իրականացման միջոց: Եթե Ռուսսոն գտնում էր, որ պետք է կնքել բռնությունների վրա հիմնված «հասարակական պայմանագիր» հասարակական կարգը խախտողների դեմ, և եթե ժամանակակից առաջնորդները ևս շարունակում են խոսել նմանատիպ «պայմանագրերի» ու «դաշնագրերի» մասին, ապա մենք կարող ենք սկսել մարդկության բարօրությանն ուղղված երկկողմանի պարտավորությունների ուսումնասիրությունը սպանություններից զերծ հասարակություններում: Եթե Կանտը (1795թ./1959թ.) կարծում էր, որ «հավերժ խաղաղություն» կարող է տիրել չպատերազմելու հրամայականին հավատարիմ մնալու դեպքում, ապա ներկայումս այդ կարծիքը կարող է դիտվել որպես խաղաղասիրության հրամայականը համաշխարհային իրականություն դարձնելու անհրաժեշտ տարր: Եթե ամերիկյան քաղաքական ավանդույթը կտակել է մեզ բռնություններով ձեռք բերված անկախություն և բռնությունը ամրագրող սահմանադրություն, ապա ներկայումս, հասարակական բռնությունների հիման վրա կարելի է կազմել անկախության «խաղաղ» հռչակագիր և բռնություններից զերծ նոր սահմանադրություն: Եվ եթե Վեբերը քաղաքականությունը դիտարկում էր որպես սպանությունն արդարացնող մասնագիտություն, ապա մենք կարող ենք քաղաքականությունը և քաղաքագիտությունը դիտել բռնություններից ձերբազատվելու հնարավորություն ընձեռնող մասնագիտություն (Արենդթ՝ 1970թ., Մյուլլեր և Սեմելին՝ 1995թ., Ստեգեր և Լինդ՝ 1999թ.):

Խաղաղ փոխակերպումը ենթադրում է Գանդիի քաղաքական գաղափարների վերջնական ներմուծումը փիլիսոփայության ու քաղաքագիտության տեսության բնագավառ: Իսկ այդ գաղափարների բացակայության պատճառը բռնություններով լի այս աշխարհում Գանդիին նոբելյան մրցանակի չարժանացնելու անցյալի սխալի հետևանքն է: Խնդրի լուծման համար կան բազմաթիվ ռեսուրսներ՝ բացահայտված տարբեր գաղափարախոսական ու առարկայական տեսակետների հարող հնդկացի վերլուծաբանների և ոչ հնդկացի օգնականներին կողմից (Դհավան՝ 1957թ., Դեյնջ՝ 1977թ., Իեր՝ 1973թ., Պարեխ 1989ա, 1989բ, Բոնդուրանտ՝ 1969թ., Դելթոն՝ 1993թ., Գալթունգ՝ 1992թ., Շարփ՝ 1979թ., Ստեգեր՝ 2000թ.):

Սպանություններից հրաժարվելու տեսության ստեղծագործական զարգացման հնարավորությունները ներկայացված են աշխարհի բոլոր մշակույթներում, խաղաղասիրական այլընտրանքների հին ու նոր կողմնակիցների գաղափարախոսություններում: Մ.թ.ա. 550թ. վերաբերող նմանատիպ մի ուսումնասիրություն կարելի է տեսնել Արթուր և Լիլա Ուեյնբերգների գրքում (1963թ.): Նմանատիպ գործունեության կրոնական հիմքերը ներկայացված են Ունինիթանի ու Յոգենդրա Սինգի աշխատությունում (1973թ.): Հունահռոմեական, եվրոամերիկյան

ավանդույթներում Ուիլլ Մորիսեյը (1996թ.) տալիս է պացիֆիզմի բացառիկ մանրազնին վերլուծությունը՝ սկսած հին ժամանակներից:

Քանի որ սպանություններից զերծ քաղաքական մտքի դիտարկումները առկա են ամբողջ աշխարհում, ապա կարելի է ակնկալել մի շարք զարմանալի բացահայտումներ: Օրինակ՝ "քաղաքականության" բնորոշումը խաղաղասիրության տեսանկյունից, որը տվեց Հուանգ, Յանգ Յոփը 1987թ. դեկտեմբերի 3-ին Փյոնգյանգի հարցազրույցում. «Քաղաքանակությունը դա հասարակության բոլոր անդամների հետաքրքրությունների ներդաշնակությունն է սիրո և հավասարության հիմքերի վրա»:

Թե' նա, թե' հարցազրուցավարը այն ժամանակ անտեղյակ էին, որ «սիրո» և «ստեղծագործական ալտրուիզմի» վերաբերյալ սոցիոլոգ Սորոկինի կատարած բացառիկ ուսումնասիրությունները կարելի էր կապակցել Արենդթի՝ (1970թ.) համատեղ քննարկումների, որոշումների կայացման և գործառնության տեսության, ինչպես նաև Բերթոնի (1979թ.)՝ մարդկային առաջնային կարիքների բավարարման միջոցով սպանություններից զերծ քաղաքականության նոր տեսություն ձևավորելու գաղափարների հետ:

Կառավարման ձևերի ուսումնասիրություն

Հասարակության քաղաքական կառուցվածքի և նրա բաղադրամասերի՝ գյուղական վայրերից մինչև պետական մարմիններ ու միջպետական կառույցներ, ամբողջական ուսումնասիրություններում, ինչպես օրինակ ամերիկյան պետական ու քաղաքական կառուցվածքի ուսումնասիրությունները, խաղաղասիրության վերլուծության տրամաբանությունը առաջադրում են այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հաստատուն պատասխաններ՝ վերացնելու համար այն, ինչը ֆուտուրիստ Հարոլդ Լինսթոունը անվանեց պայմանականության «անխուսափելի գործոն»: Քաղաքական նպատակներով սպանություններն իրականացվում են արդարության քողի ներքո: Հարցերը, որոնք չեն կարող բարձրացվել կառավարման ներսում, պետք է վեր հանվեն քաղաքագետների կողմից կառավարման համակարգից դուրս:

Խաղաղասիրական մոտեցումը կարևորում է այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են.

Առաջին՝

Ի՞նչ դեր է խաղացել «սպանությունը» յուրաքանչյուր հասարակության քաղաքական կառուցվածքի ձևավորման ու ամրակայման հարցում:

Այս կամ այն կառավարման համակարգի մասին սեփական պատկերացումները ի՞նչ չափով են կապված «պանծալի» արյունահեղությունների պատմության հետ:

Կառավարական և ոչ կառավարական կառույցների կողմից կիրառվող հանցագործության ո՞ր ձևերն են գերիշխում և զարգացման ի՞նչ հեռանկարներ ունեն:

Ինչպե՞ս են քաղաքացիներին ներգրավում սպանությունների կամ սպանությունների կազմակերպմանն աջակցելու գործընթացների մեջ՝ օրինական կամ անօրինական ճանապարհով, կառավարության կողմից կամ կառավարությանն ընդդեմ, պետության ներսում կամ նրա սահմաններից դուրս:

Ինչպե՞ս են քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային գաղափարները, պրակտիկաներն ու կառույցները նպաստում սպանությունների իրագործմանը:

Ինչպե՞ս է ներգործում «սպանությունը» կառավարման համակարգի՝ հոգևոր կամ նյութական բնույթի այլ արժեքներ (ազատություն կամ հավասարություն) որոնելու կարողության վրա:

Երկրորդ՝

Խաղաղասիրական գաղափարների, պրակտիկաների, քաղաքականությունների և ինստիտուտների պատմական ի՞նչ հիմքեր կան հասարակության ներսում: Ներկայումս ի՞նչ կերպ են դրանք արտահայտվում և զարգացման ինչպիսի՞ հեռանկարներ ունեն ապագայում: Սպանությունը հրահրող քաղաքական ուժերի դեմ պայքարի խաղաղասիրական ինչպիսի՞ միջոցներ են արձանագրվել: Սպանություններից զերծ հասարակություն ձևավորելու ուղղությամբ կառուցողական ու ստեղծագործական ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել:

Կառավարման համակարգերի ուսումնասիրման երրորդ պայմանն այն է, որ պետք է ստուգել խաղաղ և արյունալի փոխակերպումների վերաբերյալ առկա տվյալները: Քաղաքական ի՞նչ նշանավոր գործիչներ, խմբակցություններ և կազմակերպություններ են մասնակցել այդ «փոխակերպումներին»: Եղել են արդյո՞ք դեպքեր, երբ ռազմատենչ զինվորները դարձել են խաղարարարներ, մարդասպանները՝ կյանքի ջատագովներ: Արդյո՞ք դաժան հեղափոխականները իրենց նվիրաբերել են հասարակության խաղաղ փոխակերպման գործընթացին: Արդյո՞ք հոգևոր գործիչները դադարել են օրհնել «արյունահեղությունը»: Արդյո՞ք բռնությունը խրախուսող մշակութային գործիչները սկսել են դատապարտել այն:

Ինչպիսի՞ փոփոխություններ կրեցին մի շարք հանցագործություններ, որոնց համար սկզբում սահմանված մահապատիժը հետագայում հանվելով՝ կրկին վերընդունվեց: Արդյո՞ք զինված ուժերն ապառազմականացվելով՝ իսկ հետո նորից սպառազինվեցին: Արդյո՞ք ոստիկաններին և հասարակ քաղաքացիներին արգելվեց զենք կրել, թեև հետագայում նրանք նորից վերստացան այդ իրավունքը: Իսկապե՞ս կայացան խաղաղ ելքով հաշտություններ նախկինում ոխերիմ թշնամիրների միջև, և եթե կայացան էլ, արդյո՞ք դրանց հաջորդեցին նոր արյունահեղություններ: Արդյո՞ք արյունահեղությունը խրախուսող տնտեսական համակարգերը փորձեցին մասամբ կամ լիովին արձագանքել ոչ բռնի ճանապարհով անհատների կամ հասարակության կարիքների բավարարմանը:

Չորրորդ՝

Որո՞նք են ներքին կառավարման համակարգի (քաղաքական, սոցիալական, տնտեսական կամ մշակութային) այն հին ու նոր տարրերը, որոնք խաղաղ փոխակերպման գործընթացներում համակարգված կիրառելու դեպքում կապահովեն ցանկալի կենսապայմաններ սպանություններից զերծ հասարակության ներսում: Կրոնական, գաղափարախոսական, իրավական, ինստիտուցիոնալ, քաղաքական, սոցիալ-տնտեսական, հաղորդակցական, ստեղծագործական, միջկառավարական ոլորտի ի՞նչ փոփոխություններ կարող են նպաստել *այդ համատեքստում* սպանություններից զերծ հասարակության ձևավորմանը: Ինչպիսի՞ պայմաններ առավելագույնս կնպաստեն այնպիսի արժեքների խթանմանը, ինչպիսիք են ազատությունը, հավասարությունը, նյութական բարեկեցությունը և անվտանգությունը՝ առանց սպանությունների կամ դրանց սպառնալիքի իրագործման:

Համեմատական քաղաքականություն

Խաղաղ փոխակերպումը պահանջում է, որ սպանություններից հրաժարվելու մարդկային կարողությունների հարցը դրվի համեմատական քաղաքականության ուսումնասիրության հիմքում:

Ի՞նչ հետևություններ կարելի է անել՝ համեմատելով սպառնալիքի վերացման կամ պետության ու քաղաքացիների կողմից բռնությունների դրսևորման հետ ինչ-որ ձևով կապ ունեցող գաղափարները, ինստիտուտները, կառույցները, գործընթացներն ու քաղաքականությունները բոլոր հասարակություններում: Առաջնորդվելով խաղաղասիրության վերլուծության տրամաբանությամբ և փոխակերպման

արդյունավետ պրակտիկաների որոնումներով՝ համեմատական հետազոտությունը նպատակ ունի գտնել այլընտրանքներ տվյալ կառավարման համակարգի շրջանակներից դուրս:

Հասարակությունները կարող են համեմատվել և դասակարգվել ըստ սպանելու կամ սպանություններից հրաժարվելու իրենց ձգտումների, ինչպես դա արվեց ժողովրդավարական ինստիտուտների, մարդու իրավունքների, կանանց կարգավիճակի, երեխաների բարօրության և տնտեսական զարգացման աստիճանների դասակարգման դեպքում: Արյունահեղությունների շարքին են դասվում հատուկ գործակալների և պետության հակառակորդների կողմից կատարվող սպանությունները, քրեական հանցագործությունները, մարդասպանության ու ինքնասպանության դեպքերը քաղաքացիների շրջանում, այլազգի քաղաքացիների սպանությունը, արհեստավարժ մարդասպանների մասնագիտական վերապատրաստումը, արյունահեղությունը խրախուսող քաղաքական տնտեսության նյութական ինդիկատորներն ու տեխնոլոգիական հնարավորությունները: Զուգահեռաբար կարելի է կատարել խաղաղասիրության բնութագրիչների դասակարգումը՝ հիմք ընդունելով մեկ առանձին կառավարման համակարգի վերլուծությունը: Համաշխարհային քաղաքագիտության համար մեծ ներդրում կարող են լինել պարբերաբար կատարվող համեմատական վերլուծությունները այն երկրներում, որտեղ խրախուսվում է սպանությունը և այն երկրներում, որտեղ այն դատապարտվում է: Որչափ որ կարևոր են բաժնետոմսերի համաշխարհային շուկայի և սպորտային մրցաշարարերի ամենօրյա ուսումնասիրությունները, նույնչափ էլ կարևոր են սպանությունների քանակի, խաղաղ փոխակերպման կարողությունների աճի և նվազման ամենօրյա դիտարկումները:

Հասարակության բաղադրիչների վերլուծությունը նույնանման կամ իրարից քիչ տարբերվող պետությունների ներսում կամ դրանց միջև կօգնի հասկանալ հասարակության խաղաղ փոխակերպման պատճառներն ու գործընթացները: Նմանատիպ բաղադրիչներից են խաղաղասիրական ձգտումները կրոնում, գաղափարախոսություններում, արվեստում, կուսակցություններում, կանանց և տղամարդկանց շրջանում, տարբեր տարիքային խմբերում, կրթական ոլորտներում, դասակարգային, էթնիկ խմբերում, ձեռնարկատիրություններում, համալսարաններում և մասնագիտական բնագավառներում:

Անհրաժեշտ է կատարել խաղաղասիրության համեմատական հետազոտություններ՝ հիմնավորելու համար քաղաքագիտության այն կանխադրույթը, թե ժողովրդավարական պետությունները, ի տարբերություն ավտորիտար վարչակարգերի, պատերազմներ չեն սկսում միմյանց դեմ և այս տիպի երկրներում քիչ թվով քաղաքացիների են սպանվում: Բռնության դրսևորումներով ուղեկցվող սպանությունները լիբերալ դեմոկրատական երկներում կամ այդ երկրների կողմից, լինեն նրանք նախագահական, թե պառլամենտական, ևս մեկ անգամ շեշտադրում են համեմատական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը ստրուկտուրալ և մշակութային խաղաղ այլընտրանքների որոնման հարցում:

Օրինակ՝ երկրորդ գլխում բերված մեքսիկական երկու հարևան գյուղերի (այս գյուղերն ունեին սոցիալ-տնտեսական զարգացման նույն մակարդակը, բայց տարբերվում էին բռնությունների ցածր ու բարձր ցուցանիշներով) համեմատական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բռնությունների հաճախականությունը պայմանավորված է երկու գյուղերում իշխող մշակութային պատկերացումներով: Բռնությունը խրախուսող գյուղացիներն իրենց համարում էին ագրեսիվ և ընդունում էին այդ փաստը: Խաղաղասեր գյուղացիները գտնում էին, որ իրենք խաղաղասեր են և հպարտանում էին այդ փաստով (Ֆրայ՝ 1994թ.): Մանկական խաղերի համեմատական ուսումնասիրությունը բռնությունների բարձր և ցածր հաճախականություն գրանցած

ինդոնեզական երկու գյուղերում ցույց տվեց, որ բռնությունը խրախուսող մշակույթը նախապատվությունը տալիս է այն խաղերին, որոնք ներառում են մարդկանց և կենդանիների կռիվ:

Բռնության ցածր մակարդակ ունեցող մշակույթը քաջալերում է հանդարտ խաղերը, ինչպիսիք են պատատուկներից ճոճք պատրաստելը կամ մարդկանց ու կենդանիների վարքագծերի խաղաղ նմանակումները (Ռոյս՝ 1980թ.): Նման բացահայտումներն օգնում են պարզել բռնությունը խրախուսող մշակույթների կապը կոնտակտային մարտական սպորտաձևերի հետ, ինչպես օր.՝ բոքսը, հոկեյը, ըմբշամարտը և ամերիկական ֆուտբոլը:

Միջազգային քաղաքականություն

Խաղաղ փոխակերպման գործընթացն իրենից ներկայացնում է ամբողջական ու մասնակի խնդիրների դիտարկում միջազգային քաղաքականության, միջազգային հարաբերությունների կամ համաշխարհային քաղաքականության բնագավառում: Մի կողմից համաշխարհային կառավարման համակարգի կոմպոնենտները (պետական ու ոչ պետական), նրանց փոխհարաբերակցությունը և խնդիրների լուծման գործընթացները դիտվում են որպես մեկ ամբողջություն: Սա չի նշանակում, որ այդ կոմպոնենտները չեն դիտարկվում պատմական կամ կոնտեքստային տեսանկյունից: Մարդկությունն է կերտել պատմությունը, իսկ կոնտեքստը տեղական ու համաշխարհային իրավիճակների փոխկապակցությունն է: Մյուս կողմից սպանություններից զերծ համաշխարհային հասարակության հնարավոր գործառնումը պահանջում է ուշադրություն այս երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր անհատի բարօրության հանդեպ: Սպանություններից զերծ քաղաքական վերլուծության հիմնական միավորը մարդ անհատն է: Կազմակերպությունները, կառույցները և գործընթացները կազմում են անհատական վարքագծի հավաքական ամբողջություն: Համաշխարհային քաղաքականությունը աշխարհի բոլոր անհատների քաղաքականությունն է: Սպանություններից զերծ համաշխարհային հասարակության գործառնումը կախված է սպանություն չգործող անհատների վարքագծից: Որպեսզի ոչ ոք չսպանի կամ չսպանվի, անհրաժեշտ է հաշվի առնել բոլորի շահերն ու հետաքրքրությունները:

Սրանից հետևում է, որ խաղաղասիրության վերլուծության տրամաբանությունն ու գործընթացներն անհրաժեշտ է կիրառել ողջ մարդկության համար: Այսինքն սպանությունը խրախուսող քաղաքականությունն ուսումնասիրելիս պետք է ուսումնասիրել սպանության դեպքերը պետության կողմից, սպանություններն ուղղված պետության դեմ, պատերազմները, սպանության բոլոր դրսևորումները հասարակությունների միջև և նրանց ներսում, իսկ հետո, գլոբալ մակարդակով ընդհանրացնելով այդ ամենը, հասկանալ դրանց առաջացման պատճառները: Խաղաղասիրական դրսևորումները ուսումնասիրելիս պետք է համաշխարհային մակարդակով հստակեցնել քաղաքական համակարգերի ներսում և դրանց շրջանակներից դուրս առկա խաղաղասիրական ուժերը:

Խաղաղ փոխակերպման պրոցեսը կազմակերպելու համար պետք է հասկանալ փոխազդեցության գործընթացները բռնի և խաղաղասիրական ուժերի միջև հասարակությունների ներսում և նրանցից դուրս՝ համընդհանուր կոնտեքստում:

Սպանություններից զերծ գլոբալ հասարակության իրական, հնարավոր ու ցանկալի առանձնահատկությունները բազմակողմանիորեն հասկանալու համար պետք է ուսումնասիրել խաղաղասիրության անցած ու ներկա հասարակական դրսևորումներն ու ձգտումները՝ ընդունելով տեսականորեն ամսահմանափակ քանակությամբ տարբերակների հնարավորությունը սպանություններից զերծ հասարակության ներսում:

Անհատական մակարդակում պետք է հասկանալ սպանելու և սպանություններից հրաժարվելու անհատների ձգտումները, խաղաղ փոխակերպման դինամիկան և սոցիալական կոնտեքստների այն բնութագիչները, որոնք նպաստում են խաղաղասիրական ներուժի բացահայտմանը վերջիններիս մոտ:

Գործնականում սպանությունների կոնը սպանություններից հրաժարվելու այլընտրանքների բացվող հովհարով փոխարինելու գլոբալ հեռանկարը ենթադրում է փնտրել միջամտության ամբողջական ձևեր սպանությունների գոտում՝ դուրս մղելու համար արյունահեղությունների ազդեցիկ փաստերը: Սա նշանակում է նպաստել առաջնորդների ու քաղաքացիների համընդհանուր սոցիալականացմանն ու վերապատրաստմանը խաղաղ ճանապարհով խնդիրների լուծման գործընթացում, սա նշանակում է բացահայտել և խրախուսել գլոբալ մշակութային ներդրումները խաղաղ փոխակերպման գործընթացում, սա նշանակում է նաև հասկանալ ու աջակցել խաղաղասիրական փոփոխությունների գլոբալ տարածմանը սպանությունը խրախուսող քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կառույցների ներսում:

Ենթադրությունը, թե մարդիկ ունակ են ստեղծել սպանություններից զերծ հասարակություններ, ստիպում է հարցեր առաջադրել ժամանակակից քաղաքագիտության յուրաքանչյուր բաժնի, ենթաբաժնի և բնագավառի համար: Եթե հաշվի առնենք, որ քաղաքագիտությունը չի կարող իր մեջ չկրել որոշակի արժեքներ, այդ դեպքում կարող է արդյո՞ք խաղաղասիրությունը որպես արժեք ներառվել այս առարկայի մեջ: Կարող է արդյո՞ք սպանություններից զերծ քաղաքական իշխանության տեսությունն ու պրակտիկան հաջողությամբ մրցել բռնության երևույթների և արտահայտությունների հետ կամ նպաստել դրանց փոխակերպմանը: Հնարավոր է արդյո՞ք խաղաղ ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումը լոկալ և գլոբալ մակարդակներում: Հնարավոր է արդյո՞ք արյունահեղությունների գնով ձեռք բերված ազգային անվտանգությունը փոխարինել խաղաղ ճանապարհով ձեռք բերված ազգային ու միջազգային անվտանգության: Հնարավոր է արդյո՞ք արյունալի պայքարով ձեռք բերված քաղաքական տնտեսությունը փոխարինել խաղաղ ճանապարհով հզորացած համաշխարհային քաղաքական տնտեսության: Հնարավոր է արդյո՞ք նպաստել սպանություններից հրաժարվելու տեսության ու պրակտիկայի զարգացմանը ֆեմինիստական, ռասսայական, դասակարգային, էթնիկական, լեզվական և կրոնական տեսանկյուններից: Ո՞ր մեթոդների կիրառմամբ կարելի է լավագույնս հասկանալ հասարակական բռնությունների դրսևորման պատճառները, սպանություններից հրաժարվելու հասարակության հնարավորությունները, խաղաղ փոխակերպման գործընթացները, խաղաղասիրական փոխակերպումների կայուն, բայց ստեղծագործական տեսանկյունից դեռևս հակասական ձեռքբերումների նախագծման և գնահատման ուղիները:

Այդուհանդերձ չի կարելի ասել, որ վերոնշյալ բնագավառներում քաղաքագիտությունը ձեռքբերումներ չի ունեցել: Պարզապես այս ամենը օգնում է հասկանալ, թե ինչպիսի՞ն կլինի քաղաքագիտությունը, եթե լրջորեն վերաբերվի սպանություններից զերծ համաշխարհային հասարակություններ ստեղծելու հնարավորությանը: Նման հնարավորության ընդունումը ենթադրում է քաղաքագիտության ակտիվ ներգրավվածությունը գլոբալ խնդիրների խաղաղ լուծման գործընթացին:

Գլուխ 4
Սպանություններից զերծ քաղաքագիտության դերը խնդիրների լուծման գործընթացում

Բոլոր նրանք, ովքեր դատապարտում են Հոլոքոստը և պայքարում այդօրինակ երևույթների դեմ (տասնյակ միլիոնավոր մահացության դեպքեր թերսնման և տնտեսական անարդարությունների հետևանքով), միաձայն ընդունում են, որ նմանատիպ ողբերգությունների հիմքում ընկած են քաղաքական դրդապատճառներ

Հիսուներեք նոբելյան մրցանակակիրների մանիֆեստ, 1981թ.

Ի՞նչ դեր է խաղում սպանություններից զերծ քաղաքականությունը խնդիրների լուծման գործընթացում:

Մտահոգվելով յուրաքանչյուր անհատի բարեկեցության համար՝ որպես հավանական զոհի կամ մարդասպանի՝ քաղաքագիտության հիմնական նպատակն է վերջ դնել սպանությանը ողջ աշխարհում: Այս մտահոգությունը մեծացնում է քաղաքագիտության հետաքրքրասիրությունն ու ստեղծագործական նպատակաուղղվածությունը անհատների հանդեպ մի կողմից, մյուս կողմից ենթադրում է խնդիրների լուծման այնպիսի ուղղվածություն, որն ընդունում, բայց և միևնույն ժամանակ, դուրս է գալիս հոգևոր, գենդերային, տարիքային, էթնիկական, դասակարգային, մասնագիտական, ազգային և քաղաքական պատկանելության շրջանակներից: Խնդիրների լուծման գործընթացին աջակցելու բացառիկ նվիրվածությանը զուգահեռ՝ այն ենթադրում է սպանություններից հրաժարվելու «անխախտ հավատարմություն» (Գվեցկոու՝ 1955թ.)՝ ուղղված բոլորի կարիքների բավարարմանը՝ առանց սպանությունների կամ դրանք իրագործելու սպառնալիքի:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը ենթադրում է գործողությունների շարք, որը, նվազեցնելով սպանություն հրահրող գործոնների նշանակությունը, միաժամանակ կուժեղացնի սպանություններից հրաժարվելու գործոնների դերը: Այն նպատակ ունի գտնել խնդիրների լուծումը սպանության կոնի (նկ. 1) և սպանություններից հրաժարվելու այլընտրանքների բացվող հովհարի բոլոր հինգ գոտիներում (նկ.2): Սա նշանակում է քաղաքագիտության՝ որպես մեկ ընդհանուր առարկայի ուղղակի ներգրավվածությունը խնդիրների լուծման գործընթացին և վերջինիս անուղղակի աջակցությունը բոլոր նրանց, ովքեր քաջալերում են նմանատիպ գործընթացները՝ ներառելով հետազոտական աշխատանքներ և վերապատրաստման դասընթացներ բոլոր նրանց համար, ովքեր պատրաստ են աջակցել անհատական և հասարակական բնույթի խնդիրների լուծմանը և մասակցել անհատի ու հասարակության կարիքների բավարարմանն ուղղված որոշումների կայացմանը:

Այն, որ սպանություններից զերծ քաղաքագիտությունն իր վրա է վերցրել խնդիրների լուծման պատասխանատուի դերը, չի նշանակում, որ քաղաքագիտությունը ամենագետ է կամ ամենակարող, բայց ցույց է տալիս այս գիտության կարևորությունը հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում՝ հոգևոր, ֆիզիկական, նյութական և մշակութային: Սա նաև չի նշանակում, որ քաղաքագիտության միջամտությունը պետք է լինի ամենուրեք. նրա խնդիրն է ավելի շուտ հասկանալ, թե այդ միջամտություններին աջակցող քաղաքական գործիչների, ինստիտուտների, կառավարությունների և

մարդկանց հաջողությունների ու ձախողումների արդյունքում առաջացած սոցիալական բնույթի խնդիրներն ինչքան հեռուն կարող են գնալ՝ սկսած տնտեսական բարեկեցությամբ պայմանավորված ֆիզիկական գոյությունից մինչև մարդկային ամենաբարձր ձգտումներ: Փորձելով օգտակար լինել սպանություններից զերծ հասարակության ձևավորման գործընթացին՝ քաղաքագիտությունը պետք է իր մտահոգությունների և ցուցաբերվելիք աջակցությունների շրջանակով մի փոքր տարբերվի բժշկությունից կամ հասարակական առողջպահության համակարգից:

Խնդիրները կարելի է բնորոշել որպես անհամատեղելիություն ցանկալիի և իրականի միջև: Յուրաքանչյուր խնդիր բաղկացած է անորոշության մեջ գտնվող մի քանի բարդ ենթախնդիրներից՝ նորմատիվ (ինչ է լինելու), էմպիրիկ (ինչ կա իրականում) և հնարավոր (ինչ կարող է լինել): Յուրաքանչյուր խնդիր ներառում է համակարգային բարդություններ, հետադարձ կապի փոխկապակցված գործընթացներ և հարացուցային (ներկա-անցյալ-ապառնի) բաղադրիչներ: Բայց որքան էլ դժվարին ու բարդ լինեն այդ խնդիրներն իրենց էթիկական, փիլիսոփայական կամ էմպիրիկ բնույթով, նրանք չեն խոչընդոտի սպանություններից զերծ քաղաքագիտությանը լուծելու մարդկության գոյությանն ու բարեկեցությանը սպառնացող խնդիրները: Սպանություններից զերծ քաղաքագիտությունն իր ջանքերն է ուղղում վարքագծային բռնությունների վերացմանը, կառուցվածքային բռնության տանող պայմանների փոփոխմանը և միմյանց հետ փոխազդեցության մեջ գտնվող այս երկու խնդիրների լուծմանը: Այն ձգտում է վերջ դնել սպանությունների խրախուսմանը, աջակցել գործող ինստիտուտներին իրենց խաղաղասիրական ձգտումներում և ստեղծել խաղաղասիրական նոր ինստիտուտներ ու նորմեր:

Համաձայնվելով այն մտքի հետ, որ քաղաքագիտությունն իր վրա է վերցրել խնդիրների լուծման գործընթացին մասնակցելու կիրառական և հումանիստական գիտության դերը, գիտականորեն սխալ կլինի նրանից պահանջել պատրաստի լուծումներ: Ոչ այն գիտակցությունը, թե հիվանդությունն անբուժելի է և ոչ էլ այն ենթադրությունը, թե ցանկացած հիվանդության ախտորոշումը, դեղատոմսը և բուժումը նախապես հայտնի է, չեն խանգարում տեսական ու գործնական բշկության բնականոն զարգացմանը: Քաղաքագիտությունը, որի հիմքում ևս ընկած է կյանքի ու մահվան խնդիրը, այս հարցում չպետք է տարբերվի բժշկությունից:

Անտրամաբանական կլինի սպանություններից զերծ քաղաքագիտությունից ակնկալել այնպիսի խնդիրների անմիջական լուծումը, որոնք չեն կարողացել լուծել բռնությունը խրախուսող քաղաքականությունն ու քաղաքագիտությունը: Գիտական, մարդկային և նյութական ռեսուրսների լայնածավալ օգտագործումը՝ ճնշելու համար անհավատալի արյունահեղություններով ուղեկցվող բռնությունները, չեն կարողացել վերջ դնել սպանություններին ամբողջ աշխարհում՝ սկսած պատերազմներից ու ցեղասպանություններից մինչև մարդասպանություն և ատոմային զենքի կիրառում: Վիթխարի ստեղծագործական աշխատանք է տարվել «սպանությունների» մշակույթը կերտելու ուղղությամբ և նույնպիսի ստեղծագործական աշխատանք պետք կլինի տանել խաղաղասիրական այլընտրանքներ ձևավորելու գործում:

Արյունահեղությունների դարաշրջանին վերջ դնելը, անշուշտ, միայն քաղաքագիտության խնդիրը չէ: Այն պետք է դառնա բոլոր բնական, հումանիտար գիտությունների, մասնագիտությունների և անհատների հոգածության առարկան: Սա այն խնդիրն է, որտեղ քաղաքագիտությունը, հանդիսանալով նախաձեռնող կողմ, կարող է օժանդակել այլոց նախաձեռնություններին: Այստեղ առաջնությունը պետք է տրվի այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք սովորաբար համարվում են բավականին կարևոր՝ խոչընդոտելու համար սպանություններից զերծ համաշխարհային քաղաքագիտություն ստեղծելու ցանկացած հնարավորություն՝ ծառայեցնելու համար սպանություններից

զերծ աշխարհին: Նրանցից երեքը ընդհանրական են՝ «Հիտլեր և Հոլոքոստ», հեղափոխական կառուցվածքային փոփոխություններ և անվտանգության ապահովում՝ անհատից մինչև պետություն:

Սպանությունների կանխում, Հիտլեր և Հոլոքոստ

Քաղաքական առաջնորդության և սպանության խնդիրը, որի վառ օրինակն են հանդիսանում Հիտլերն ու Հոլոքոստը և ոչ միայն այս երկուսը, պետք է դիտարկվեն ուղղակիորեն՝ ենթարկվելով ամենատարբեր վերլուծությունների տեսական ու կիրառական գիտության կողմից: Ցեղասպանության սարսափելի օրինակները, զանգվածային դասակարգային բնաջնջումները և հասարակ քաղաքացիների ոչնչացումը չպետք է կաթվածահար անեն գիտության «խաղաղ» ստեղծագործական պոտենցիալը: Հակառակ դեպքում քաղաքագիտությունը, դառնալով ցեղասպանության կազմակերպչի, հեղափոխական դասակարգը ոչնչացնողի կամ քաղաքների ու գյուղերի արդարադատ բնաջնջողի ձեռքի գործիքը, դատապարտված կլինի բացահայտ կամ թաքուն նախապատրաստելու նմանատիպ արյունահեղություններ և բռնություններ՝ իրենց տեսակի մեջ առավել սարսափելի, քան նախորդները:

Տեղին կլիներ սկսել միջառարկայական ինտենսիվ աշխատանքներ իրականացնել քաղաքական առաջնության ուսումնասիրության դեռևս ոչ այնքան զարգացած ոլորտներում՝ բացահայտելու համար սպանությունը խրախուսող վարքագծային և համակարգային փոփոխականները և գտնելու այնպիսի փոփոխություններ, որոնք կբերեին խաղաղասիրական վարքագծի ձևավորմանը առաջնորդների և նրանց համախոհների մոտ: Որոշ փոփոխականներ արդեն իսկ ճանաչվել են արդյունավետ նպատակային, խաղաղ փոխակերպման տանող միջամտությունների հարցում: Դրանք են առաջնորդության բռնությունը խրախուսող գաղափարները, անձնական որակները, պաշտոնական լիազորությունները, կազմակերպությունների աջակցությունը, հրահանգների ճիշտ կատարումը, առանձին արժեքների կարևորությունը, տեխնոլոգիական հնարավորությունները և սպանությունը խրախուսող տնտեսական, սոցիալական ու մշակութային գործոնները (Փեյջ՝ 1977թ.):

20-րդ դարում կուտակված փորձը առաջարկում է սպանություններից հրաժարվելու մի քանի ելակետ: Սպանությունը խրախուսող առաջնորդների և նրանց համախոհների գործունեությունը կասեցնելու համար՝ մարդիկ իրենց գոյության որոշակի հատվածում, պետք է պարզապես հրաժարվեն սպանելուց և սպանությունը խրախուսող համակարգերի հետ համագործակցելուց: Հակառակ դեպքում սպանությունների շրջապտույտը վրիժառու, արյունարբու և հոգեկան տրավմաներ տարած հաղթողների միջև կկրի շարունակական բնույթ: Թվում է, թե գործընթացն իրենով պարզ է: Հետադարձ հայացք գցելով քսաներորդ դարի դաժանություններին՝ պարզ է դառնում, որ 19-րդ դարավերջի խաղաղության ջատագովները, որոնք փորձում էին վերջ դնել պատերազմներին, միանգամայն ճիշտ էին: Պարզ տեսանելի է կապը բոլոր այն դաժանությունների միջև, որ տեղի ունեցան Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ, Սառը պատերազմի ժամանակ և դրանից հետո:

Քաղաքագիտության կանխարգելիչ գործողություններից է բացահայտել և հաշտեցնել հին ու նոր ոխերիմ թշնամիներին, քանի դեռ այդ թշնամանքը չի վերածվել արյունահեղության: Կասեցնելու համար այն առաջնորդների և համախոհների աճը, որոնք փառաբանում են վրիժառու թշնամիների ոչնչացումը, քաղաքագիտությունը պետք է ուղղակիորեն նվիրաբերի իրեն սպանությունների կանխման, վրիժառու կողմերի հաշտեցման և կյանքի խաղաղ պայմանների ստեղծման գործին:

Պոտենցիալ Հիտլերների, Ստալինների, Մաոների, Ամինների, Փոլ Փոթերի կամ նույնիսկ ատոմային ռմբարկու Թրումանների «վերադարձը» կանխելու համար պետք է վերափոխվի քաղաքական առաջնորդության վերաբերյալ ընդհանուր պատկերացումը, այն է՝ արյունալի գործողությունները կարգադրողից անցնել սպանություններից զերծ հասարակության խնդիրների լուծման ֆասիլիտատորի, փորձել վաղ փուլում բացահայտել ագրեսիվ, դաժան անհատականության տեր առաջնորդ թեկնածուներին, առաջնորդի պարտականություններից հանել սպանություն գործելու պատրաստակամությունն ու մյուսներին սպանել հրամայելու լիազորությունը, առաջնորդներին չապահովել արհեստավարժ մարդասպաններ տրամադրող կազմակերպություններով՝ հարուստ անընդհատ կատարելագործվող զենքերով, չցուցաբերել աշխատանքային, կրոնական, առևտրական, գիտական և գեղագիտական աջակցություն սպանությունը խրախուսող կազմակերպություններին՝ փոխարենը այդ ռեսուրսներն ուղղել սպանություններից հրաժարվելու այլընտրանքների բացահայտմանը, հասարակության կարիքների բավարարմանն ուղղված կոնլիկտների լուծումը դարձնել քաղաքական առաջնորդների և հասարակ քաղաքացիների գլխավոր խնդիրը, խաղաղասիրական արժեքների պահպանումը դարձնել արժանապատվության և ազգային ինքնության գլխավոր բաղադրամասը, սպանություններն արդարացնելու համար մարդկանց որոշակի խմբեր չորակել «անսիրտ» կամ «չարակամ», փնտրել երկխոսության տարբերակներ խմբերի ներսում՝ հանուն բոլորի բարօրության, փոփոխել սոցիալ-տնտեսական և կառուցվածքային մյուս համակարգերը, որոնք ուղղակի կամ անուղղակի դրդում են անհատներին և խմբերին գնալ բռնությունների սեփական կարիքները բավարարելու համար, սպանությունները խրախուսող տնտեսական համակարգը ծառայեցնել մարդկանց առաջնային կարիքների բավարարմանը, հումանիտար և բնական գիտությունների միջոցով աջակցել սպանություններից զերծ մշակույթի ձևավորմանը:

Հիտլերյան ժամանակներին բնորոշ դաժանությունների կանխմանն ուղղված միջամտությունները սպանության գոտիներում, անշուշտ, էլ ավելի մեծ խնդիր են ստեղծում սպանություններից զերծ կիրառական գիտության ստեղծագործական գործառնության համար: Այդ խնդիրը սակայն լուծելի է, եթե հաշվի առնենք տեխնոլոգիական նորարարությունների այս դարաշրջանը: Խնդիրների լուծման տարբերակների մոդելավորումն ու փորձարկումը ենթադրում է առաջնորդ-համախոհ, հոգևոր-աշխարհիկ, սպանություններից հրաժարվելու նախադրյալներ-խոչընդոտներ փոխհարաբերությունների մանրազնին ու ընդհանրական դիտարկում, սպանությունների լայնամասշտաբ դատարպարտում, դրանց դիմակայում (ոչ միայն զոհերի կողմից), արագ տեղահանման պայմանների ապահովում, օդով, ջրով և ցամաքով միջամտություն բարձրակարգ տեխնիկաներով զինված ուժերի կողմից՝ մահ սփռող անհատներին, խմբավորումներին և օժանդակ սարքավորումներին շարքից դուրս հանելու համար: Արտակարգ և համապարփակ միջամտությունը պահանջում է ուղղակի կամ անուղղակի, դրական կամ բացասական ճնշումների գործադրում բռնության այն աղբյուրների վրա, որոնք միաժամանակ հանդիսանում են բռնությունը կանխող միջոցներ:

Հիտլերյան ժամանակաշրջանին բնորոշ տրավմատիկ շոկերի դիտարկումից դուրս գալով՝ պետք է հետամուտ լինել խաղաղասիրական կարողությունների ամրապնդմանը փրկվածների, մարդասպանների և նրանց հարազատների ու բարեկամների շրջանում: Քաղաքագիտությունը պետք է մշակի այնպիսի գործընթացներ, որոնք կօգնեն պատասխանատվության ենթարկել արյունահեղությունների կազմակերպիչներին, կստիպեն վերջիններիս փոխհատուցել պատճառած ֆիզիկական, նյութական ու բարոյահոգեբանական վնասները, կօգնեն հաշտվել թշնամիների հետ, իսկ կանխարգելիչ և կառուցվածքային փոփոխությունների միջոցով կնպաստեն

սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանը ողջ աշխարհում: Վկայակոչելով հոգևոր, գիտական և ավանդական կյանքի բոլոր աղբյուրները՝ խաղաղասիրությունը հետագայում պետք է դառնա ժողովրդի մշակութային պատկանելության ու ազգային հպարտության հիմքը: Գործնականորեն պետք է ձեռնարկել հնարավոր բոլոր քայլերը՝ բացառելու համար նմանատիպ դաժանությունների կրկնությունը:

Վերջ դնելու համար մասսայական դաժանություններին (ցեղասպանությունից մինչև պատերազմ)՝ սպանություններից զերծ քաղաքագիտությունը պետք է լուծի երեք գործնական խնդիր՝ կանխարգելում, միջամտություն և հետտրավմատիկ խաղաղ փոխակերպում: Նա պետք է ազատվի այն մոլորությունից, թե նման դաժանությունները չեն կարող կանխվել խաղաղասիրական սկզբունքների կիրառմամբ:

Սպանություններից հրաժարում և բռնի հեղափոխություն

Երկրորդ կարևոր խնդիրը, որի վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, դա բռնի հեղափոխությունն է և հակահեղափոխությունը: Դրանց թվին կարելի է ավելացնել ռազմական հեղաշրջումները, հակահեղաշրջումները, ահաբեկչությունը, հակաահաբեկչությունը, պարտիզանական պատերազմը և լայնամասշտաբ քաղաքացիական պատերազմը: Ժամանակակից քաղաքագիտության կողմից նմանատիպ հեղափոխությունները և նրանց ճնշամիջոցները դիտվում են որպես անխուսափելի իրողություններ: Վատ վարչակարգերի դեմ ուղղված բռնությունը գովելի է, իսկ վատ հեղափոխականների դեմ ձեռնարկվող խաղաղասիրական միջոցառումները՝ ընդունելի: Երկու դեպքում էլ, երբ բռնությունը գործի է դրվում քաղաքական փոփոխությունների հասնելու կամ դրանց դիմակայելու նպատակով, դառնում է անխուսափելի ու հաճախ գովելի փաստ քաղաքական կյանքում: Ամերիկացի գիտնականների շրջանում տեղի ունեցող այդօրինակ բանավեճերը վերաբերում են նրան, որ քանի դեռ տնտեսական էլիտաները ինքնակամ ու խաղաղությամբ չեն հրաժարվել իրենց ունեցվածքից, արյունալի հեղափոխությունը կլինի արդարացված: Մյուս քաղաքագետները, այնուամենայնիվ, խրախուսում են հակաբռնությունը այն խռովարարների հանդեպ, ովքեր փորձում են փոխել մասնավոր սեփականետերերի կողմից վարձու աշխատողների շահագործման համակարգը: Այն գաղափարը, թե միշտ պետք է պատրաստ լինել հեղափոխական բռնությունների, առկա է նույնիսկ ժողովրդավարության ուղին բռնած ամերիկյան հասարակության մեջ, որտեղ ոմանց կարծիքով քաղաքացիները պետք է ունենան զենք կրելու իրավունք՝պաշտպանելու համար իրենց ազատությունը բոլոր տեսակի ոտնձգություններից:

Ընդունելով ավտորիտար քաղաքական համակարգերը վերացնելու և սոցիալ-տնտեսական անարդարություններով պայմանավորված անհանդուրժողական մթնոլորտը փոփոխելու անհրաժեշտությունը՝ սպանություններից զերծ քաղաքագիտությունը կարող է օգնել ոչ բռնի հեղափոխության այլընտրանքների բացահայտմանն ու ընդլայնմանը: Սա նշանակում է կասկածի տակ առնել այն ենթադրությունը, թե հեղափոխությունները իրենց բնույթով միշտ բռնի են, և տրամադրել գիտելիքներ սպանություններից հրաժարվելու արդյունավետ այլընտրանքների վերաբերյալ՝ ներառելով սկզբունքներ, ռազմավարություններ, մարտավարություններ, կազմակերպչական մեթոդներ և կիրառական հմտություններ:

Սառը պատերազմի ավարտին հեղափոխական ամենադաժան ավանդույթներ ունեցող երկրներում՝ Միացյալ Նահանգներում, Սովետական Միությունում և Չինաստանում, քաղաքական տեսաբանները առաջադրեցին երեք ուշագրավ հիմնավորումներ ոչ բռնի հեղափոխության հնարավորության վերաբերյալ: Միացյալ Նահանգներում Ջին Շարփը

(1973թ.) ներկայացրեց դասական պնդումներ խաղաղ հեղափոխության տեսության ու պրակտիկայի վերաբերյալ՝ հիմք ընդունելով քաղաքական իշխանության դրական կողմերի մանրազննին վերլուծությունը և պատմության մեջ տեղ գտած խաղաղ պայքարի արյունավետ օրինակների լայնամասշտաբ հետազոտությունը: Շարփը բացահայտեց ոչ բռնի գործունեության առնվազն 198 մեթոդ՝ սկսած բողոքարկումից ու հորդորներից, սոցիալական, տնտեսական և քաղաքական համագործակցությունից հրաժարումից մինչև ոչ բռնի եղանակներով ուղղակի միջամտություն:

Այնուհետև նա այդ ամենը համախմբեց խաղաղ փոխակերպման դինամիկ տեսության մեջ՝ ընդգրկելով «փոփոխման, հարմարեցման և հարկադրման» գործընթացները՝ ավելի ուշ ավելացնելով նաև «մասնատման» գործընթացը:

Սովետական Միությունում Է.Գ. Պլիմակը և Յ.Ֆ. Կարյակինը (1979թ.) հեղափոխությունը բնորոշեցին որպես պետության մեջ իշխանական լիազորությունների փոխանցում մի դասակարգից մյուսին, որը բերում է «կտրուկ փոփոխության բնակչության մեծ մասի կյանքում»: Այնուհետև մարքս-լենինյան թեորիայի և երկրորդ համաշխարհայինին հաջորդող ապագաղութացման և ժողովրդավարական փորձառնության հիման վրա նրանք փաստարկեցին սոցիալիստական խաղաղ հեղափոխությունների հնարավորությունը՝ բնորոշելով դրանք որպես հեղափոխություններ՝ «առանց զինված պայքարի, առանց քաղաքացիական պատերազմի և առանց հակահեղափոխական զինված միջամտությունների»: Պնդելով, որ անցյալի ձախողումները չպետք է խոչընդոտեն խաղաղ հեղափոխությունների հետապնդմանը պատմական նոր իրավիճակներում՝ նրանք կոչ արեցին «մանրակրկտորեն և օբյեկտիվորեն ուսումնասիրել խաղաղ հեղափոխության զարգացման» հնարավորությունները:

Չինացի Զանգ Յու-Փինգը, (1981:79) իր փաստարկների հիմքում դնելով մարքսիստական տեսությունը, ազգային անկախության համար Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում մղված խաղաղասիրական պայքարի հաջողված ձևերը և Հնդկաստանում Գանդիի գլխավորած խաղաղ պայքարի շուրջ համախմբվելու լայն զանգվածների կարողությունները, պնդում է. «տեսությունը, որը միակողմանիորեն ջատագովում է բռնի հեղափոխությունը անկախ ժամանակից, տեղից և իրավիճակից՝ փոխարենը վատաբանելով ոչ բռնի հեղափոխությունը, սխալ է տեսականորեն և վնասակար՝ գործնականում»:

Հեղափոխական և հակահեղափոխական արյունահեղությունների համաշխարհային այս բարդ իրավիճակում՝ բռնությունների հարուստ ավանդույթ ունեցող երեք երկրներում, միմյանց անծանոթ քաղաքական վերլուծաբանները իրարից անկախ առաջադրեցին ոչ բռնի հեղափոխության տեսություն և պրակտիկա ձևավորելու գիտական խնդիրը: Ուշագրավ է, որ երեքի համար էլ վկայակոչման աղբյուր է հանդիսացել Գանդիի խաղաղ պայքարը, որը քաղաքական անկախությունից բացի հետապնդում էր նաև սոցիալ-տնտեսական և մշակութային փոփոխություններ:

Մինչև այժմ ոչ բռնի հեղափոխության տեսությունը, անկախ նրանից, «կապիտալիստական» ծագում ունի թե «սոցիալիստական», դիտարկվել է հիմնականում կեղեքվածների տեսանկյունից: Դեռևս էլիտայի կողմից չեն մշակվել ոչ բռնի ձևով հակազդելու վերաբերյալ համեմատական տեսություններ՝ ուղղված խաղաղ հեղափոխական գործողությունները ոչ բռնի կերպով ճնշելու այլընտրանքային ուղիների բացահայտմանը:

Այստեղ անհրաժեշտ է Շարփի վերլուծության հակառակ տարբերակը: Հարուստ սեփականատերերը, քաղաքական առաջնորդները, ոստիկանները և զինվորները ունեն արդյո՞ք բավականաչափ քաջություն առանց զենքի և խաղաղ ճանապարհով դիմակայելու աղքատներին, անտուններին, կեղեքվածներին, ազգային

փոքրամասնություններին և մեծամասնություններին, որոնք նույն խաղաղ ճանապարհով պահանջում են վերականգնել իրենց ոտնահարված իրավունքները և խախտված արդարությունը: Կարող են արդյո՞ք առաջադեմ մարդիկ պաշտպանել իրենց արժանապատվությունն ու ինքնորոշման իրավունքը այնպիսի գործողությունների միջոցով, որոնք հետապնդում են փոփոխություն, հարմարեցում և հարկադրում՝ առանց արյուն թափելու: Ավելին, «ոչ բռնի պայքարի» կամ նույնիսկ «դասակարգային խաղաղ պայքարի» կիրառական տեսությունը՝ ուղղված սոցիալական փոխակերպումների միջոցով երկուստեք ընդունելի փոխհարաբերությունների ձևավորմանը նախկին կեղեքողների/հարուստների և կեղեքվածների/աղքատների միջև, միանգամայն իրատեսական է: Այս հետևությունը կարելի է անել հիմք ընդունելով, որ բնությունից մարդն իր մեջ կրում է խաղաղասիրական տարրեր և հաշվի առնելով այն թշնամանքը, որ բռնությունը խրախուսող էլիտաները և նրանց հակառակորդները տածում են խաղաղ փոխակերպման կողմնակիցների հանդեպ: Պայքարող կողմերից յուրաքանչյուրը փորձում է ճնշել խաղաղ գործողության կողմնակիցներին այնպիսի հիմնավորումներով, թե նման գաղափարները թուլացնում են սպանելու ռազմական պատրաստակամությունն իրենց դասակարգի ներկայացուցիչների/համախոհների մոտ: Օրինակ՝ Սառը պատերազմի ժամանակ թե՛ ամերիկյան և թե՛ սովետական էլիտաներն ու զանգվածային լրատվամիջոցները փորձում էին արագ վարկաբեկել կամ խլացնել խաղաղասերների կոչերը՝ վախենալով, որ խաղաղասիրական գաղափարները արձագանք կգտնեն բնակչության շրջանում և կխախտեն սեփական բանակի հիմքերը: Նրանք հաշվի չէին առնում նույնիսկ այն հանգամանքը, որ այդ գաղափարները թուլացնում են նաև իրենց հակառակորդներին: Նույն կերպ զինված հակամարտության կողմնակից գիտնականներն ու ակտիվիստները անմիջապես դատապարտում էին խաղաղ հեղափոխության այլընտրանքների որոնմանն ուղղված աշխատանքները՝ վախ ունենալով, որ կեղեքվածները կխրախուսեն դրանց կիրառումը: Այսպիսով, երբ հարստահարիչներն ու հարստահարվածները ընդունում են ոչ բռնի պայքարի սկզբունքներն ու ձևերը, ապա դասակարգային խաղաղ պայքարը դառնում է միանգամայն իրատեսական: Այս ամենից կարելի է ենթադրել, որ քաղաքագիտությունը պետք է ակտիվ դեր խաղա ոչ բռնի հեղափոխության այլընտրանքների որոնման գործընթացում: Այս հարցում ելակետային է համարվում Գանդիի ու Քինգի մեթոդների հետագա կիրառման արդյունավետությունը, որոնք մեծ նշանակություն էին տալիս հակառակորդների հետ «հաշտությանը» սոցիալական փոխակերպման համար մղվող խաղաղ պայքարի յուրաքանչյուր փուլում: Նույնիսկ Մաքիավելին էր պնդում, որ քաղաքական վարչակարգում «հիմնավոր փոփոխությունների»՝ «բռնակալությունից ազատություն» և հակառակը, կարելի է հասնել «առանց արյունահեղության», եթե առկա է «պետության հզորացմանը մասնակցած քաղաքացիների միասնական համաձայնությունը» (Մաքիավելի՝ «Դատողություններ»՝ Գիրք 3՝ Գլուխ 7):

Խաղաղասիրություն և անվտանգություն

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը պետք է գտնի վտանգավոր ագրեսիայի դեմ պայքարելու անվտանգության հուսալի այլընտրանքներ անհատական, տեղական, ազգային և միջազգային մակարդակներում: Անվտանգության ընդհանուր տեսությունն ու պրակտիկան ձևավորվում են հիմնականում մահվան սպառնալիքից.

- Ես/մենք/ պարզապես ուզում եմ քեզ հասկացնել, որ ես/մենք/ կսպանեմ քեզ:

Սպանություններից զերծ անվտանգությունը, բայց և այնպես, ենթադրում է հակառակը.

- Ես/մենք/ պարզապես ուզում եմ քեզ հասկացնել, որ ես/մենք/ չեմ սպանի քեզ: Իսկ դու էլ քո հերթին պետք է ինձ/մեզ/ վստահեցնես, որ դու չես սպանի ինձ/մեզ: Այսինքն՝
- Մենք պետք է բացարձակապես վստահ լինենք, որ մեկս մյուսիս չենք սպանի:

Ոչ ոք իրեն ապահով չի զգա այնքան ժամանակ, քանի դեռ կա մեկի կողմից սպանվելու վտանգը: Սպանելու վարպետությունը կարող է հաղթահարել ցանկացած պաշտպանություն. սկսած վահաններից, զրահազգեստից, խրամատներից, բարձրաբերձ պատերից և ամրոցներից մինչև ատոմային ռմբակոծությունից պատսպարվելու ապաստարաններ: Հարձակողական բռնությունը հաղթահարում է մահացության դեմ պայքարելու ցանկացած ձև. նետերը հաղթում են տեգերին, ավտոմատ հրազենները մուշկետներին, ծանր հրետանին հետևազորին, տանկերը հեծելազորին, հրթիռները տանկերին, սուզանավերը ռազմանավերին, օդային և հրթիռային ուժերը հաղթում են համարյա ամեն ինչ, ատոմային, կենսաբանական և քիմիական զենքերը ոչնչացնում են ամեն-ամեն ինչ: Հրազեններով լեցուն տանն ապրելը դեռևս չի նշանակում լինել անվտանգ. ներխուժողը կարող է ունենալ զրահազգեստը ծակող գնդակներ, ծանր հրետանի կամ օդը, կերակուրը, ջրային պաշարները թունավորելու կարողություն: Միակ վստահելի անվտանգությունը սպանելու ցանկության բացակայությունն է:

«Խաղաղ» անվտանգություն ձևավորելու համար քաղաքագիտությունը պետք է օգնի մշակել այնպիսի տեսություն և պրակտիկա, որոնք կօգնեն գտնել բռնության դեմ պայքարելու հուսալի այլընտրանքներ, ինչպես նաև կանխել սպանություն գործելու ցանկությունը հավանական թշնամիների մոտ:

Չնայած նրան, որ առայսօր պահպանողական քաղաքագիտությունը լուրջ նշանակություն չի տվել նմանատիպ հարցեր արծարծող գրականությանը, այնուամենայնիվ դրանք շարունակում են աճել և կարող են սկզբնաղբյուր հանդիսանալ նոր գործողությունների համար: Հետազոտություններից կարելի է քաղել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են. քաղաքացիական դիմադրությունն ընդդեմ նացիստական ցեղասպանության (Հալլի՝ 1979թ., Ֆոգելման՝ 1994թ., Սեմելին՝ 1994թ.), Դանիլո Դոլսիի գլխավորած համայնքային խաղաղ պայքարը կլանային հանցագործությունների դեմ (Ամատո՝ 1979թ., Չաուդհուրի՝ 1998թ.), մարդու իրավունքների պաշտպանների անվտանգությունն ապահովող անզեն թիկնապահներ (Մահոնի և Էգուրեն՝ 1997թ.), խաղաղ դիմադրությունն ընդդեմ ռազմական հեղաշրջումների (Ռոբերթս՝ 1975թ., Շարփ՝ 1990թ., 1993թ.), ազգային, քաղաքացիական, սոցիալական խաղաղ պաշտպանություն (Բոսերափ և Մակ՝ 1974թ., Շարփ՝ 1990թ., Մարտին՝ 1991թ., Ռանդել՝ 1993թ., Բարրոուես՝ 1996թ.), զինված ուժերի օգտագործում խաղաղասիրական նպատակներով (Կեյես՝ 1982թ.), խաղաղասիրական այլընտրանքային ուժեր (Բաներժեե՝ 2000թ., Վեբեր՝ 1996թ., Մոզեր-Փուանգսվան և Վեբեր՝ 2000թ.), ոչ մահաբեր զենքերի ստեղծում(Լեվեր և Սքոֆիլդ՝ 1997թ.):

Մի շարք պետություններ արդեն իսկ սկսել են ուսումնասիրել քաղաքացիական խաղաղ պաշտպանության տարբերակները՝ թեկուզև իբրև համալրում ռազմական ընդունված միջոցներին: Այդ երկրների շարքին են դասվում Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Հոլանդիան, Ֆրանսիան, Լատվիան, Լիտվիան, Էստոնիան, Ավստրիան, Շվեյցարիան և Ֆինլանդիան (Շմիդ՝ 1985թ., Շարփ՝ 1990թ., Ռանդել՝ 1994: 121-37): 1997թ. Թայլանդի նոր Սահմանադրության 65-րդ հոդվածում մտցվեց նախադեպը չունեցող մի դրույթ, որտեղ օրենքով թույլատրվում էր խաղաղ դիմադրությունն ընդդեմ ռազմական հնարավոր հեղաշրջումների. «Ժողովուրդն իրավունք ունի խաղաղ ճանապարհներով տապալելու վարչական իշխանություն ձեռք բերելու ցանկացած փորձ, որը գործի է դնում Սահմանադրությամբ չնախատեսված միջոցներ»:

Ոստիկանության և զինվորների համար ոչ մահաբեր զենքերի ստեղծման ուսումնասիրության գործընթացը Միացյալ Նահանգներում մեկնարկվել է դեռևս 1965թ. և

նոր թափ ստացել 1990-ականներին: Ուսումնասիրվել է տեխնոլոգիաների մի ամբողջ շարք՝ ներառյալ լազերային, օպտիկական, ակուստիկ, էլեկտրոմագնիտային-իմպուլսիվ, քիմիական, կենսաբանական և տասնյակ այլ տիպի զենքերը: Դրանց որոշ տեսակներն արդեն իսկ օգտագործվել են ոստիկանական օպերացիաների և ռազմական գործողությունների ժամանակ ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս (Լեվեր և Սքոֆիլդ՝ 1997թ.): Նույն կերպ կառավարության հետաքրքրությունը հասարակական պաշտպանության, ինչպես և ոչ մահաբեր զենքերի հանդեպ ներկայումս դիտվում է որպես համալրում ընդունված մահաբեր միջոցներին: Այն փաստը, որ պահպանողական փորձագետները, որոնք կողմ են բռնություններով ձեռք բերված անվտանգությանը, լրջորեն են վերաբերվում խաղաղասիրական այլընտրանքներին, արդեն իսկ պետք է հանդիսանա հզոր ստիմուլ քաղաքագիտության առավել ակտիվ գործունեության համար: Նրա գլխավոր նպատակը պետք է լինի այն խնդիրների լուծումը, որոնք առաջանում են անվտանգության խաղաղ համակարգ ստեղծելու ճանապարհին: Խաղաղ անվտանգություն ձևավորելու մեկ այլ միտում կարելի է տեսնել Սրացած կոնֆլիկտների կանխման Կարնեգիի հանձնախմբի ներակայացրած տարեկան զեկույցում (1997թ.), որը կոչ է անում «կառուցվածքային կանխարգելման. այնպիսի ռազմավարությունների մշակմանը, որոնք կօգնեն բացահայտել մահացու ելքով կոնֆլիկտների գլխավոր պատճառները», ինչպես և կնպաստեն «կոնֆլիկտների կանխարգելման մշակույթի» ձևավորմանը: Այս ամենը խոսում է սպանություններից զերծ անհատական և գլոբալ անվտանգության հետագա քայլերի նախաձեռնման հնարավորության մասին: Նման մի օրինակ կարող է լինել «Առանց բռնությունների, խաղաղ ճանապարհով» համաշխարհային կազմակերպության ստեղծումը:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը պետք է փնտրի այն խնդիրների լուծումները, որոնք մինչև օրս հանդիսացել են անհաղթահարելի խոչընդոտ սպանություններից զերծ հասարակությունների ձևավորման ճանապարհին: Նրա առաջնահերթ խնդիրը պետք է լինի վերացնել բռնությունների միջոցով ֆիզիկական ոչնչացման ուղղակի սպառնալիքները: Առաջին՝ առանց ֆիզիկական գոյատևման ոչ մի խնդիր չի կարող լուծվել, երկրորդ՝ սպանություն գործելու մշտական ցանկությունը նպաստում է կառուցվածքային և էկոլոգիական բռնություններին, որոնք էլ իրենց հերթին սպառնում են անհատների, հանրության և ողջ մարդկության բարեկեցությանը:

Սպանությունների կանխումը որպես հանրային խնդիրների լուծման կարևորագույն միջոց դիտելը առաջադրում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են. ինչու՞ ուշադրությունը սևեռել սպանությունների կանխման խնդրի վրա, երբ հոգեբանական բռնությունների, ֆիզիկական կտտանքների, ռասսայական խտրականության, սեռական ոտնձգությունների, տնտեսական շահագործման և բռնատիրության հետևանքով ավելի շատ մահացության դեպքեր են գրանցվում, քան բուն սպանության պատճառով: Առաջին հայացքից թվում է, թե այս բոլոր խնդիրները կլուծվեն, եթե մենք շարունակենք սպանություններ գործել: Մինչդեռ հենց սպանություն գործելու ցանկությունը, կարողությունը և մշակույթը հանդիսանում են սպանության տանող սոցիալ-տնտեսական անհավասարությունների շարժառիթը և սպանության դեպքերը ժամանակավորապես կասեցնող հոգեբանական բռնությունների դրդապատճառը: Ինչպե՞ս կարելի է հանդուրժել բռնությունը, կտտանքը, ռասսիզմը, կանանց իրավունքների ոտնահարումը, տնտեսական շահագործումը և բռնատիրությունը, եթե չկա վախ կամ մահվան սպառնալիք: Բոլոր տեսակի սպանությունների վերացումը՝ սկսած մարդասպանությունից մինչև պատերազմներ, կբերի մարդկության առջև ծառացած հոգևոր, հոգեբանական, նյութական, ժողովրդավարական և բնապահպանական խնդիրների լուծմանը:

Սպանությունների կանխման գործընթացին նվիրումը ենթադրում է քաղաքագիտության մասնակցությունը այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք բնորոշ են բոլոր ժամանակաշրջաններին և սպառնում են մարդկային գոյությանն ու բարեկեցությանը: Գյուղական շրջանների բնակչության հետ զրույցների ժամանակ Գանդին, հերթով ծալելով ձեռքի մատները, թվարկում էր առաջնային լուծում պահանջող խնդիրները՝ «հավասարություն անձեռնմխելիների համար, բամբակից կտորներ հյուսելու իրավունք տնտեսական կախվածությունից ազատվելու համար, հրաժարում թմրանյութերից և ալկոհոլից, բարեկամական հարաբերությունների ձևավորում հնդիկների և մուսուլմանների միջև, կանանց իրավահավասարություն», իսկ այնուհետև ավելացնում. «իսկ իմ ձեռքի դաստակը բռնությունների կանխումն է» (Էյշ՝ 1969: 243): Նույն կերպ մենք կարող են ձևակերպել աշխարհին անհանգստացնող հինգ առաջնակարգ խնդիրները՝ անվերջ սպանությունները և զինաթափման անհրաժեշտությունը, ծայրահեղ աղքատությունը և տնտեսական հավասարության անհրաժեշտությունը, մարդկային արժանապատվության ոտնահարումը և մարդու իրավունքները հարգելու համամասնական անհրաժեշտությունը, կենսոլորտի քայքայումը և երկիր մոլորակի վրա կյանքը պահպանելու անհրաժեշտությունը և մի շարք այլ հակասություններ, որոնք խոչընդոտում են խնդիրների լուծմանն ուղղված համատեղ աշխատանքը:

Այս հինգ խնդիրները ընդհանուր են անհատի, ընտանիքի, համայնքի, ազգի և ողջ մարդկության համար: Բոլորիս էլ պետք է վերջ դնել սպանություններին, տնտեսական զրկանքներին, արժանապատվության ոտնահարումներին, շրջակա միջավայրի թունավորմանը, այս ու այլ խնդիրների լուծմանն ուղղված համատեղ աշխատանքների ձախողմանը: Բոլոր այս խնդիրները փոխկապակցված են և սրացած, քանի որ մարդիկ շարունակում են սպանությունը համարել խնդիրների լուծման գլխավոր միջոց: Մենք որոնում ենք անվտանգություն սպանելու և սպանության գործիքներով զինվելու, վրիժառության սպառնալիքներ ձևավորելու միջոցով: Սպանության գործիքներով զինվելը նպաստում է տնտեսական զրկանքների ավելացմանը և կառուցվածքային անհավասարության սրացմանը: Սպանությունը ինքնապաշտպանության նպատակով և մարդու իրավունքների ոտնահարումը նպաստում են փոխադարձ վիրավորանքների երկարատև պահպանմանը: Արյունալի պատերազմը և ռազմական արդյունաբերությունը սպառնում են շրջակա միջավայրի կործանմանը, իսկ տերիտորյալ տարանջատումը թշնամու սարսափելի անկլավներով խանգարում է խնդիրների լուծմանն ուղղված համատեղ աշխատանքների մշակմանը՝ ի նպաստ ընդհանուրի շահերի:

Խաղաղ ճանապարհով խնդիրների լուծումը ոչ միայն ենթադրում է հրաժարում սպանություններից, այլև կառուցողական մասնակցություն կարիքների բավարարմանն ուղղված փոփոխություններին: Դա նախատեսում է որոշակի մասնակցություն պատերազմների, պատերազմական զենքերի, աղքատության վերացման գործընթացներին, մարդու իրավունքների և պարտավորությունների խաղաղ պաշտպանության գործողություններին, շրջակա միջավայրի պաշտպանությանն աջակցող նախաձեռնություններին, մարդկային կարիքների բավարարմանն ուղղված խնդիրների լուծման գործընթացների աջակցությանն ու ստեղծագործական ներուժի ձևավորմանը անհատների և ողջ մարդկության շրջանում:

Այսօրինակ ծրագիրը, որը կարող է համարվել անհրագործելի, մեզ կտակվել է մեր ժամանակների քաղաքական, ռազմական, տնտեսական, գիտական, մշակութային և քաղաքացիական հասարակության ամենափորձառու առաջնորդների կողմից՝ մարդկության հնագույն խնդիրները տեղափոխելով նոր ժամանակներ: Քաղաքագետների համար խիստ կարևոր է իմանալ, որ գրեթե յուրաքանչյուր համագումար, որ անցկացվում է Միացյալ Ազգերի կամ այլ կազմակերպությունների

հովանու ներքո, կոչ է անում աշխարհի մարդկանց դրսևորել անհրաժեշտ փոփոխություններն իրագործելու «քաղաքական կամք»: Այդ կոչերն ուղղված են ոչ միայն կառավարություններին, այլև կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, կորպորացիաներին, միություններին, համալսարաններին, զանգվածային լրատվամիջոցներին, կրոնական կազմակերպություններին և արվեստի գործիչներին: Մեր օրերում աշխարհին սպառնացող գլոբալ խնդիրներն այնքան են խորացել, որ մարդիկ սկսել են գիտակցել, թե ներկայիս ճախողումներն ինչ կործանարար հետևանքներ կարող են ունենալ ապագայում: Այդ խնդիրների շարքին են դասվում զենքերի տարածումը, բնակչության աճի արագ տեմպերը տնտեսական անհամաչափ զարգացմանը զուգընթաց, մարդկային գոյությանը սպառնացող բնական ռեսուրսների անխնա օգտագործումը, հասարակական կյանքում առկա անհավասար պայմանները կանանց, բնիկների, ճնշված փոքրամասնությունների և բազմաթիվ մշակութային խմբավորումների համար: Ինչպես նկատում է Ֆեդերիկո Մեյորը՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր տնօրենը, մեր օրերում «ամեն ինչ ենթարկվել է արմատական փոփոխության» (Մեյոր՝ 1995: 83-93): Մի՞թե այսքանը բավական չէ խթանելու համար քաղաքագիտության գործունեությունը:

Սպանություններից հրաժարում և զինաթափություն

Ո՛չ լուծում պահանջող խնդիրները, ո՛չ էլ խաղաղասիրական շարժումներն՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը, չեն հանդիսանում քաղաքագիտության առարկայի բացահայտումները: Դրանք առաջադրվել են ժամանակակից համաշխարհային քաղաքական կյանքի կողմից, և քաղաքագիտությունը պետք է իրեն նվիրի այդ խնդիրների լուծմանը:

Խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների հստակ պլան կարելի է գտնել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի զինաթափության վերաբերյալ հատուկ նիստի եզրափակիչ հաշվետվության մեջ (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեա՝ 1978թ.), որը կոչ է անում «համընդհանուր և լիակատար զինաթափություն միջազգային արդյունավետ վերահսկողության ներքո»: Քվեարկության արդյունքում 159 կողմ և 1 ձեռնպահ (Ալբանիա) հարաբերակցությամբ մասնակից երկրները շեշտեցին բոլոր տեսակի ատոմային, բիոքիմիական և մասսայական ոչնչացման զենքերի վերացման անհրաժեշտությունը, այդ զենքերի դուրս բերումը միջազգային ռազմական բազաներից, զինվորականների թվի կրճատումը միայն փոքրամասշտաբ տարածքների պաշտպանության նպատակով, սովորական զենքերի թվի կրճատումը, ռազմական նպատակներով կատարվող «վիթխարի ծախսերի» կրճատումը՝ նյութական և մարդկային ռեսուրսները ուղղորդելով տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծմանը զարգացող և զարգացած երկրներում: Խաղաղ փոխակերպմանն ուղղված դասական այս կոչի մասին, որին գլխավորապես արձագանքեցին բռնությունը խրախուսող երկրները, ցավոք անտեղյակ է քաղաքագիտության ուսանողների մեծամասնությունը:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը չի կարող իր աջակցությունը չբերել կառավարական և հասարակական կազմակերպությունների նախաձեռնություններին՝ ուղղված զենքերից ազատ հասարակություններ ստեղծելու փուլային գործընթացին: Այդպիսի նախաձեռնություններից են համաշխարհային քարոզարշավներն ուղղված թեթև հրազենների, հարձակողական զենքերի, հակահետևակային ականների, զենքերի առևտրի արգելմանը, գյուղերում և քաղաքներում զենքերից ազատ խաղաղության գոտիների ձևավորմանը և ատոմային զենքերից ազատ տարածքների ստեղծմանը:

Սպանություններից հրաժարում և տնտեսական անհավասարություն

Խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների մեկ այլ դասական կոչ է Նոբելյան մրցանակ շահած 53 դափնեկիր ֆիզիկոսների և քիմիկոսների «Հրովարտակը», որը նպատակ ունի կասեցնել, ինչպես իրենք են կոչում, տնտեսական զրկանքների պատճառով առաջացած «մահերի գլոբալ «հոլոքոստը»», մի խնդիր, որն ըստ նրանց, լիովին հաղթահարելի է (Նոբելյան մրցանակակիրներ՝ 1981: 61-3):

Նրանք արեցին հետևյալ հայտարարությունը.

- Բոլոր նրանք, ովքեր դատապարտում են այս հոլոքոստը և պայքարում նրա դեմ, քաջ գիտակցում են, որ այս ողբերգության արմատները պետք է փնտրել քաղաքականության մեջ:

> Խիստ կարևոր է, որ քաղաքացիներն ու քաղաքական գործիչները կատարեն իրենց ընտրությունը և քվեարկեն համապատասխան մակարդակներում՝ ընտրությունների ժամանակ, ազգային ժողովում, կառավարությունում կամ միջազգային մակարդակում նոր օրենքների, բյուջեների, նախագծերի և նոր չափորոշիչների ընդունման համար, որոնք կփրկեն միլիարդավոր մարդկանց թերսնումից և թերզարգացումից, իսկ հարյուր միլիոնավոր մարդկանց՝ սովամահությունից (62):

Շեշտելով «ապրողների կյանքը փրկելու, չսպանելու և չոչնչացնելու անհրաժեշտությունը նույնիսկ դրանց սխալ գործունեության, անտարբերության կամ անգործունեության հետևանք լինելու դեպքում»՝ գիտնականները կոչ են անում տնտեսական խաղաղ հեղափոխության.

> Չնայած այս երկրի զորեղներն իրենց ուսերին են կրում պատասխանատվության ամենածանր բեռը, բայց նրանք մենակ չեն. եթե անօգնականները իրենք են տնօրինում իրենց ճակատագիրը, եթե գնալով մեծանում է այն մարդկանց թիվը, ովքեր չեն ընդունում ոչ մի օրենք մարդու իրավունքներից բացի, որոնցից ամենագլխավորը կյանքի իրավունքն է, եթե թույլերը կազմակերպվում են և օգտագործում իրենց հասանելի մի քանի հզոր զենքեր՝ Գանդիի օրինակով սկսելով ոչ բռնի պայքար՝ ընտրելով ու առաջադրելով սահմանափակ թվով կոնկրետ նպատակներ.... եթե այս ամենն իրականություն դառնա, ապա, անկասկած, վերջ կդրվի մեր օրերի աղետին (63):

Հրովարտակը եզրափակվում է այսպես. «Եկել է գործելու ժամանակը, եկել է ստեղծելու ժամանակը, եկել է այնպես ապրելու ժամանակը, որ գալիք սերունդները նույնպես կարողանան ապրել»:

Անհավասարությունը, բնակչության թվի աճը և ռազմականացումը փոխկապակցվելով սրացնում են տնտեսական հիմնախնդիրներով պայմանավորված սպանությունները, բռնությունը և շրջակա միջավայրի քայքայումը: 1999թ. Համաշխարհային բանկի տվյալներով մոտավորապես 1,5 մլրդ մարդ ապրում է «ծայրահեղ աղքատության» մեջ՝ ունենալով օրական 1 դոլլարից պակաս եկամուտ, իսկ 3 մլդ մարդ՝ 2դոլլարից պակաս եկամուտ: Համաձայն Համաշխարհային բանկի 1999թ. տվյալների՝ միայն Հնդկաստանում 1980-ականների վերջերին ծայրահեղ աղքատների թիվը 300 մլն-ից հասել է 340 մլն-ի:

Եկամուտների անհավասարությունը գնալով աճում է: 1997թ. հունիսին Համաշխարհային բանկի աշխատակից Թարիք Հուսեինը ՄԱԿ-ի համալսարանի Միջազգային առաջնորդության ակադեմիայի առաջին ծրագրի մասնակից 160 երիտասարդ առաջնորդների հետ հանդիպման ժամանակ իր խոսքն ամփոփեց հետյալ կերպ.

> 1990-ականների կեսերին աշխարհն ավելի բևեռացված էր, քան 1980-ականներին... Վերջին երեսուն տարիներին երկրագնդի ծայրահեղ աղքատ բնակչության 20% եկամուտը 2,3%-ից հասել է 1,4%: Միևնույն ժամանակ մեծահարուստ մարդկանց եկամուտը 70%-ից հասել է 85%: Հետևաբար ամսական եկամտի հարաբերակցությունը մեծահարուստների և ծայրահեղ աղքատների միջև կրկնապատկվել է՝ 30:1-ից հասնելով 61:1-ի:
> Աշխարհի 360 միլիարդատերերի համախառն եկամուտը գերազանցում է այն երկրների համախառն տարեկան եկամուտին, որի բնակչությունը կազմում է երկրագնդի բնակչության 45%-ը (Հուսեին՝ 1997: 13):

Համաշխարհային բանկի նախագահ Ջեյմս Դ. Ուոլֆենսոնն ու Մահաթմա Գանդին համամիտ են, որ անհավասարությունը տանում է բռնության: Նախագահն ասում է. «Անհավասարությունը տանում է անկայունության: Աղքատությունը ծնում է պատերազմ» (Հուսեին՝ 1997:6): Իսկ Մահաթման զգուշացնում է. «Բռնություններից ազատ կառավարություն չի կարող լինել այնքան ժամանակ, քանի դեռ հարուստների և միլիոնավոր աղքատների միջև առկա անջրպետը չի վերացել...: Արյունալի ու բռնի հեղափոխությունը մի օր հաստատ կդառնա իրականություն, քանի դեռ հարուստները հանուն ընդհանուրի բարօրության ինքնակամ չեն հրաժարվել այն ճոխություններից և իշխանությունից, որ ձեռք են բերել հարստության շնորհիվ» (Աշխատանքների հավաքածու 75 (1941թ.):158):

Փոխկապակցելով Նախագահի և Մահաթմայի գաղափարները՝ երիտասարդ խաղաղարար ամերիկուհի Բեթսի Դուրենն, որը բաժանել էր իր ժառանգության մեծ մասը, ասում է.

- Հարատև խաղաղության հասնելու միակ ուղին հարստության վերաբաշխումն է: Աղքատության, պատերազմի և տառապանքի պատճառը այն մարդիկ են, ովքեր թխվածքից կտրել են ավելի մեծ չափաբաժին, քան իրենց հասանելիքն է և ամուր պահում են այն (Մոգիլ և Սլեպիան՝ 1992:100):

Նախագահի, Մահաթմայի և երիտասարդ ամերիկուհու հայացքները 2300 տարի առաջ բռնության և անհավասարության փոխկապվածության վերաբերյալ Արիստոտելի կատարած վերլուծության արձագանքն են.

> Կարևոր է հիշել, որ իշխանություն ունեցողներն են (լինեն նրանք առանձին անհատներ, կառավարական մարմիններ, թե ցեղեր) ստեղծում այն խառնաշփոթը, որն ի վերջո տանում է հեղափոխության: Նրանք դա անում են անուղղակի, երբ մյուսերը, նախանձելով վերջիններիս իշխանությանը, սկսում են հեղափոխությունը, կամ ուղղակիորեն, երբ իրենց համարում են այնքան հզոր, որ այլևս չեն ցանկանում մյուսների հետ հավասար գտնվել նույն մակարդակի վրա (Արիստոտել՝ 1962:199):

Բնակչության արագ աճը (լինելով 2,5մլրդ 1950թ., դառնալով 6,1 մլրդ 2000թ.՝ կհասնի 8,9մլդ 2050թ.) ստիպում է ձեռնամուխ լինել սպանությունների կանխմանն ուղղված խնդիրների լուծմանը: Ըստ կանխատեսումների՝ 2050թ. ամենախիտ բնակեցված

երկրները լինելու են Հնդկաստանը (1,529,000,000մարդ), Չինաստանը (1,478,000,000մարդ), Միացյալ Նահանգները (349,000,000 մարդ), Պակիստանը (345,000,000մարդ) և Ինդոնեզիան (321,000,000մարդ): Համաձայն Լեսթեր Բրաունի և Ուոլդուոչ ինստիտուտի կոլեգաների վերլուծության՝ մարդկանց նման աննախադեպ աճը (տարեկան կտրվածքով 80մլն մարդ), իրապես աղետալի ծանրաբեռնվածություն է մեր մոլորակի համար:

Երկրագնդին սպառնացող տասնինը վտանգներն են՝ ջրային պաշարները, հացահատիկի արտադրությունը, էներգետիկան, ցանկատարածքները, կենսաբազմաբանությունը, կլիմայական փոփոխությունները, հիվանդությունները, ուրբանիզացիան, բնակարաշինությունը, կրթությունը, աշխատանքը և միջպետական ու պետական կոնֆլիկտները (Բրաուն, Գարդներ և Հոլվեյլ՝ 1999թ.):

Քանի դեռ բնակչության թվի կրճատմանն ուղղված ավանդական «արյունալի» մեթոդները՝ պատերազմը, ցեղասպանությունը, մանկասպանությունը և աբորտը, ինչպես նաև սովն ու համաճարակը անընդունելի են, սպանություններից զերծ քաղաքագիտության խնդիրն է աջակցել խաղաղասիրական այլընտրանքների բացահայտմանն ու կիրառմանը: Սա նշանակում է, որ քաղագիտության տեսության ու պրակտիկայի հիմքում պետք է լինի հարգանքը մարդու կյանքի որակի և նրան շրջապատող ու սատարող շրջակա միջավայրի հանդեպ:

Աշխարհի ամենասիրված առաջնորդներից ոմանք, լինելով պրոֆեսիոնալ մարդասպաններ, խորը ըմբռնումով են մոտենում ապառազմականացման խնդրին: Նրանցից մեկը՝ Միացյալ Նահանգների նախագահ և Երկրորդ համաշխարհային պատերազմի գեներալ Դուայտ Էյզենհաուերը (1953-1961թթ.) ցանկացած խաղաղասերից լավ է ներկայացրել սպանելու պատրաստակամության և տնտեսական կառուցվածքային բռնության միջև առկա կապի փայլուն ու հակիրճ վերլուծությունը:

> Արտադրված ամեն մի հրացան, ջուրն իջեցված յուրաքանչյուր ռազմանավ, օդ արձակված ամեն մի հրթիռ վերջին հաշվով նշանակում է գողություն նրանցից, ովքեր սոված են ու չունեն հաց, նրանցից, ովքեր մրսում են ու չունեն հագուստ: Զենքերով հարուստ այս աշխարհը միայն գումար չէ, որ ծախսում է: Այն քամուն է տալիս իր աշխատավորների քրտինքը, գիտնականների խելքը, երեխաների հույսը....: Այլևս հնարավոր չէ այսպես շարունակել: Մոտալուտ պատերազմի ամպի տակ մի ողջ մարդկություն է գամվում երկաթյա խաչին (Ուղերձ ամերիկյան խմբագիրների միությանը. 16 ապրիլի, 1953թ.):

Մարդկության «երկաթյա խաչին գամվելու» պատճառներից մեկն էլ Նահանգների կողմից հսկայական գումարների «գողությունն» է՝ ուղղված ատոմային զենքերի արտադրման ծրագրին, որը 1940-1996թթ. կազմել է 5,821 տրիլիոն դոլլար (Շվարց՝ 1998թ.): Սա վառ օրինակ է աշխարհում ռազմական նպատակով կատարվող վիթխարի ծախսերի, որոնց միջին գումարը 1990-ական թվականներին կազմել է «տարեկան ավելի քան 500մլդ դոլար»(Սիվարդ՝ 1996: 7):

Սպանություններից զերծ քաղաքագիտության խնդիրն է նաև վերջ դնել գլոբալ ռազմականացման հետևանքով ստեղծված տնտեսական անհավասարությանը և այն պետք է ջանք չխնայի մարդկությանը «երկաթյա խաչից»իջեցնելու և աղքատության «հոլոքոստին» վերջ դնելու համար:

Մարդու իրավունքներն ու պարտավորությունները սպանություններից զերծ հասարակության ներսում

Խնդիրների լուծման գործընթացին ներգրավվելու հրամայականը ներառված է Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրում (1948թ.) և հետագա քաղաքացիական ու քաղաքական, սոցիալական ու տնտեսական համաձայնագրերում: Յուրաքանչյուր քաղաքագետ ու քաղաքացի պետք է ծանոթ լինի Հռչակագրի հիմնական բովանդակությանը:

Ինչպես էլ որ չբնորոշվեն մարդու իրավունքները, սպանություններից զերծ քաղաքագիտությունը պետք է պաշտպանի դրանք խաղաղասիրական մեթոդներով: Այն պետք է անի ամեն ինչ՝ «չսպանվելու իրավունքի և չսպանելու պարտավորության» համընդհանուր ճանաչմանը հասնելու համար, ինչպես օրինակ՝ ստորև նշված հոդվածի ընդգրկումը Ընդհանուր Հռչակագիր և համաշխարհային պրակտիկա.

> **Հոդված 3(2).** Յուրաքանչյուր ոք ունի չսպանվելու իրավունք և ուրիշներին չսպանելու պարտավորություն:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը, օգտագործելով իր ռեսուրսները, պետք է իրականացն հետազոտություն, վերապատրաստում, խորհրդատվություն և կոնկրետ գործողությունների մշակում այն կազմակերպությունների ու անհատների համար, որոնք փորձում են հզորացնել մարդու իրավունքների պաշտպանությունը բոլոր ասպեկտներում: Օրինակ՝ 1995թ. Պեկինում կայացած կանանց համագումարի ժամանակ առաջադրվեց կանանց և աղջիկների նկատմամբ կիրառվող բռնությունների վերացմանն ուղղված գործողությունների պլան, որի իրագործումը կարող է դառնալ սպանություններից զերծ քաղաքագիտության խնդիրը (ՄԱԿ՝ 1996թ.):

Քաղաքագիտության լիակատար գործառնությունը կարևորող մեկ այլ գործոն է 1961թ. հիմնադրված «Միջազգային Ամնիստիա»-ի գործունեությունը՝ ուղղված ոչ բռնի միջոցներով մարդու իրավունքների պաշտպանությանը: Նրա գործունեության հիմքում ընկած են Համընդհանուր Հռչակագրի հետևյալ սկզբունքները. «Ոչ ոք չպետք է ենթարկվի կտտանքների, դաժան, անմարդկային ու ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի» (Հոդվ. 5), «Ոչ ոք չպետք է ենթարկվի հարկադիր ծերբակալության, կալանքի կամ աքսորի» (Հոդվ. 9), «Յուրաքանչյուր ոք ունի մտքի և խոսքի ազատության իրավունք. մարդիկ կարող են ազատ արտահայտվել, ինչպես նաև լրատվության ամենատարբեր աղբյուրներով փնտրել, գտնել տեղեկություններ և փոխանակել կարծիքներ» (Հոդվ. 18): «Միջազգային ամնիստիա» կազմակերպության նպատակն է հասնել մահապատժի, կտտանքների վերացմանը ամբողջ աշխարհում, ինչպես նաև բոլորի համար արդար դատավարության ապահովմանն ու «խղճի բանտարկյալների» անհապաղ ազատմանը, ովքեր անձամբ չեն հրահրել և չեն քարոզել բռնություն: Կազմակերպության կողմից կիրառվող մեթոդներն իրենց մեջ ներառում են քաղաքական ոչ բռնի գործողությունների բոլոր ձևերը:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող մեկ այլ կազմակերպություն, որը կարող է ակնկալել սպանություններից զերծ քաղաքագիտության աջակցությունը, 1991թ. հիմնադրված «Չներկայացված ազգերի ու ժողովուրդների» կազմակերպությունն է (ՉԱԺԿ): Այն փորձում է հասնել մարդու հավաքական իրավունքների ճանաչմանը հինգ մայրցամաքների ավելի քան հիսուն փոքր ազգությունների համար: Կազմակերպության կանոնադրության մեջ գրված է. «բռնությունների կանխումն ու ահաբեկչություններից հրաժարումը հանդիսանում են կազմակերպության քաղաքականության հիմնական գործիքը»: «Չներկայացված

ազգերի ու ժողովուրդների» կազմակերպությունը կոչ է անում «կառավարություններին, միջազգային, հասարակական կազմակերպություններին և նրանց ղեկավարներին մշակել հստակ և սկզբունքային քաղաքականություն՝ ուղղված բռնության դեպքերի կրճատմանը»: Ըստ այդ քաղաքականության պետք է՝

> ճանաչել և հարգել բոլոր ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների իրավահավասարությունը՝ անկախ նրանց թվաքանակից, մշակութային և կրոնական պատկանելությունից, լուրջ վերաբերվել չներկայացված ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների կարիքներին ու կարծիքներին, բարձրաձայնել և դատապարտել չներկայացված ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող բռնության չարդարացված դեպքերը և մարդու իրավունքների կոպիտ խախտումները, ճանաչել այն շարժումների և կառավարությունների լեգիտիմությունը, որոնք օգտագործում են խաղաղարար և ժողովրդավար միջոցներ իրենց նպատակներին հասնելու համար, գնալ բաց ու անկեղծ երկխոսության նմանատիպ բոլոր շարժումների ու կազմակերպությունների հետ և հատուցել արժանին նրանց, ովքեր իրենց նվիրել են բռնությունների կանխման մեծ գործին, քաջալերել և ակտիվորեն աջակցել իրենց ենթակայության տակ գտնվող կառավարությունների, ազգերի, ժողովուրդների և փոքրամասնությունների միջև ծագած կոնֆլիկտների խաղաղ լուծման գործընթացին (ՉԱԺԿ՝ 1998: 8):

Բացի այդ ՉԱԺԿ-ը կոչ է անում «կոորպորացիաներին և ֆինանսական հաստատություններին վերջ տալ այն ռեսուրսների անխնա շահագործմանը, որոնցից կախված է մարդկանց գոյատևումը, դադարեցնել բռնությունների խրախուսումը զենքերի անպատասխանու առևտրի միջոցով և բռնությունների առևտրակայնացումը զանգվածային լրատվամիջոցներում և նրանց արտադրանքներում» (9): Նման նվիրվածությունը սպանություններից զերծ քաղաքագիտությանը այն ժողովուրդների կողմից, ովքեր տեսել են ցեղասպանություն, մշակութասպանություն և շրջակա միջավայրի ոչնչացում, գործելու հստակ կոչ է սպանություններից զերծ քաղաքագիտությանը: Հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների մեծ քանակությունը և ազգային ինքնորոշման անհրաժեշտությունը վերջիններիս մոտ՝ ՉԱԺԿ-ի անդամ երկրների թիվը կարող է գերազանցել ՄԱԿ-ի անդամ երկրների թվին:

Սպանություններից հրաժարում և շրջակա պաշտպանություն

Սպանություններից զերծ քաղաքագիտության նպատակն է ազատել մարդկությանը շրջակա միջավայրի ոչնչացումից: Մենք սպանում ենք շրջակա միջավայրը, իսկ շրջակա միջավայրն էլ իր հերթին սպանում է մեզ: Սպանություններից զերծ հասարակությունը պահանջում է սպանություններից զերծ բնագիտություն:

Քսաներորդ դարավերջից գնալով աճում է անհանգստությունը՝ կապված մարդու կողմից կենսոլորտը ոչնչացնելու խնդրի հետ: Տնտեսության ռազմականացումը և երկրագնդի վրա տեղի ունեցող պատերազմական հարձակումները ևս նպաստում են վերջինիս ոչնչացմանը: Բնության Համաշխարհային Հրովարտակում՝ ընդունված 1982թ. հոկտեմբերի 28-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի հարյուր տասնմեկ անդամների կողմից, ասվում է. «Բնությունը պետք է ապահովված լինի պատերազմներից և այլ թշնամական գործողություններից» (Հոդվ. 1, բաժ. 5): Բնությանը հասցված ամենակործանիչ

հարվածներից կարելի է առաձնացնել անտառների քիմիական տերևաթափությունը Միացյալ Նահանգների կողմից վիետնամական պատերազմի ժամանակ, նավթահորի հրդեհումը Իրաքի կողմից Պարսից ծոցում բռնկված պատերազմի ժամանակ:

Սպանություններից զերծ քաղաքագիտության առջև դրված է ևս մեկ խնդիր՝ ձևակերպված Բերրի Քոմմոնների կողմից. «Մոլորակի հետ հաշտություն կնքելու համար, մենք պետք է հաշտություն կնքենք նրա վրա ապրող բոլոր մարդկանց հետ» (Քոմմոներ՝ 1990: 243):

1992թ. Ռիո դե Ժանեյրոյում մեկ այլ խնդիր առաջադրվեց Մորիս Սթրոնգի՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման համագումարի գլխավոր քարտուղարի կողմից: Վերջինս կոչ արեց «բնապահպանական հեղափոխության, որով հնարավոր կլինի աշխարհը դնել նոր ուղու վրա և որը կտանի դեպի առավել ապահով, կայուն և արդար ապագա» (Միացյալ Ազգեր՝ 1993: 1): Օրակարգի քսանմեկերորդ կետը, որը գործելու կոչ էր անում համագումարի մասնակիցներին, ասում է. «Պատերազմը հատկապես կործանարար է կայուն զարգացման տեսանկյունից» (կետ 24) և «խաղաղությունը, առաջընթացն ու շրջակա միջավայրի պահպանությունը փոխկապակցված են ու անբաժանելի» (կետ 25): Այն նաև վճռական գործողությունների անցնելու կոչեր է ուղղվում պետություններին, կառավարություններին, քաղաքացիներին, կանանց, երիտասարդներին և տեղացի բնիկներին, այդ թվում նաև բանակներին, ռազմական արդյունաբերություններին, կոորպորացիաներին, աշխատավորական միություններին և քաղաքագետներին:

Մարդկային գոյությանն ու բարեկեցությանը սպառնացող մյուս խնդիրների նման բնապահպանական խնդիրներն էլ իրենց բնույթով բարդ են, միջառարկայական և համընդհանուր: Պետական քաղաքականություն ձևավորելու և իրագործելու համար անհրաժեշտ է քաղաքագիտության ռեսուրսները կիրառել խաղաղասիրական տեսանկյունից: Անհրաժեշտ է ճշտել, թե շրջակա միջավայրին սպառնացող խնդիրներից որոնք են ակնհայտ և ըստ առաջնահերթության որոնք են պահանջում հրատապ լուծումներ, շտապ ուսումնասիրություններ և թե որոնք են հանդիսանում ակադեմիական գիտելիքները հասարակական որոշումների կայացման գործընթաց ներմուծելու լավագույն ճանապարհները: Այդօրինակ մոտեցման նմուշ ներկայացվել է Շվեդիայի Գիտությունների թագավորական ակադեմիայի կողմից (Սեբեկ՝ 1983թ.):

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը պետք է հատկապես ուշադրություն դարձնի և աջակցի այն անհատներին, կազմակերպություններին և հասարակական շարժումներին, որոնք ներգրավված են բնապահպանական խնդիրների լուծման խաղաղասիրական գործողություններում:

Ներկայումս կան ամենատարբեր բնապահպանական խաղաղ շարժումներ՝ սկսվելով Հնդկաստանի գյուղաբնակ կանանց՝ «Փրկենք ծառերը» Չիպկո շարժումից (Վեբեր՝ 1989թ., Նաութիյալ՝ 1996թ.), արտացոլվելով Գրինփիս կազմակերպության՝ պետական և հասարակական քաղաքականությունների վրա ուղղակիորեն ներգործելու ջանքերում՝ (Ստեֆենսոն՝ 1997թ.) հասան մինչև «Կանաչները» քաղաքական կուսակցության և բնապահպանական շարժման ձևավորումը Գերմանիայում:

«Կանաչները» իշխող կուսակցության հիմնադիր Պետրա Կարին Կելիի (1947-1992թթ.) սպանություններից զերծ քաղաքագիտության համար պատրաստել է խնդիրների լուծման փաթեթ մի ողջ դարաշրջանի համար: Նրա գործողությունների կոչը ներառում է յուրաքանչյուր կարևոր հարց՝ զինաթափությունից մինչև տնտեսություն ու մարդու իրավունքներ և երկիր մոլորակը փրկելու համաշխարհային համագործակցություն: Նա կոչ է անում ձևավորել «բնապահպանական պատասխանատվության համընդհանուր մշակույթ» և հաստատել «բնապահպանական հարաբերությունները կարգավորող հիմնարար սկզբունքներ բոլոր երկրների միջև»

(Կելլի՝ 1992: 76): Տոլստոյի, Գանդիի, Աբդուլ Ղաֆֆար Խանի և Մարտին Լյութեր Քինգի հետ մեկտեղ Պետրա Կելլին էլ եթե ոչ հիմա, գոնե հետո պետք է ճանաչվի որպես մի մարդ, ով հսկայական ներդրում է ունեցել համաշխարհային խաղաղ փոխակերպման գործընթացում 20-րդ դարում և դրանից հետո (Կելլի՝ 1989թ., 1992թ., 1994թ., Պարկին՝ 1994թ.):

Սպանություններից հրաժարում և խնդիրների լուծմանն ուղղված համագործակցություն

Ընդհանուր պահանջ է համարվում խնդիրների խաղաղ ճանապարհով լուծման գործընթացների խրախուսումը անհատներից մինչև համաշխարհային հանրություն: Անհնար է ձեռք բերել անվտանգություն, տնտեսական բարեկեցություն, մարդու իրավունքների հանդեպ հարգանք, բնապահպանական կայունություն կամ այլ կարևոր կենսապայմաններ՝ առանց համագործակցելու նրանց հետ, ովքեր հարգում ու գնահատում են կյանքը: Սա չի նշանակում, որ քաղաքագիտությունը պետք է լուծի ցանկացած խնդիր, այն ավելի շուտ պետք է կազմակերպի խնդիրների համատեղ լուծման գործընթացները՝ իրեն չվերապահելով գերիշխողի դերը, քանի որ «նույնիսկ անարխիստները պահանջում են հարգանք իրենց ազատության հանդեպ բոլոր մյուս անարխիստների կողմից»: Խաղաղասիրական մոտեցումը ենթադրում է կոնֆլիկտների վրա հիմնված քաղաքականության և իշխանության հասնելու մրցակցության օտարում՝ կիրառելով բռնությունը որպես հաշտարար միջոց իրենց նպատակներին հասնելու համար: Սպանություններից զերծ քաղաքականությունը ներառում է խնդիրների համագործակցային լուծման անընդհատ ընդլայնվող շրջանակներ, որոնք բնորոշվում են կյանքը փառաբանող փոխադարձ հարգանքով: Այնտեղ, ուր սպանությունը գերիշխում է ու մասնատում, խաղաղասիրությունը համագործակցում է ու միավորում: Ահա թե ինչու է սպանություններից զերծ քաղաքագիտությունը աջակցություն փնտրում կանանց ու տղամարդկանց, կրոնների, քաղաքակրթությունների, ռասսաների, էթնոսների, դասակարգերի, համայնքների, պետությունների, ազգային ու միջազգային կազմակերպությունների և համաշխարհային շարժումների շրջանակներում: Սա նպատակ ունի հանուն ընդհանուրի բարօրության լուծել խնդիրներն առանց սպանությունների կամ սպանություն գործելու սպառնալիքների: Այստեղ կարևոր ռեսուրսներ կարող են լինել միջառարկայական ու մասնագիտական ուսումնասիրությունները՝ ուղղված կոնֆլիկտների լուծման տեսությանն ու պրակտիկային, ինչպես և երկխոսության միջոցով կոնֆլիկտների հաղթող-հաղթող ելքով լուծումների որոնմանը (Ֆիշեր և Ուրայ՝ 1981թ., Բերթոն՝ 1996թ.):

Հիմք ընդունելով հետզհետե ընդլայնվող ուսումնասիրությունները՝ սպանություններից զերծ քաղաքագիտությունն իր աջակցությունն է ցուցաբերում սպանություններից զերծ հասարակությունների փոխակերպմանը բռնությունը խրախուսող պետություններում և քաղաքացիական հասարակություններում: Սպանություններից զերծ քաղաքագիտությունը ընդունում է պատմական ձեռքբերումները ժողովրդավարության ճանապարհին, որոնք կարելի է տեսնել ժամանակակից որոշ քաղաքական համակարգերում, բայց նաև փնտրում վարքագծային ու կառուցվածքային բռնությանն առնչվող խնդիրների լուծումներ, որոնք ինքնուրույն չեն կարող լուծել ազատ քաղաքականություններն ու ազատ շուկաները:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը գիտակցում է հանրաքվեով քաղաքացիների հավանությունը ստացած Սահմանադրությունների կարևորությունը բռնապետական իշխանությունը սահմանափակելու հարցում, քաղաքացիների ազատությունն ամրագրող իրավունքների վերաբերյալ օրինագծերի ընդունումը,

ինստիտուցիոնալ փորձաքննությունների օգտակարությունն ու իրարից անկախ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասար գործառնումը, քաղաքացիական պատերազմի փոխարինումը իշխող կուսակցության տեղի համար մղվող արդար մրցակցությամբ, մասնագիտական բյուրոկրացիայի տրամադրած ծառայությունները, կրոնական ազատությունը, խոսքի և մամուլի ազատությունը, քվեարկության մասնակցողների իրավունքների ընդլայնումը (Ֆայներ՝ 1997թ., Գոլդման՝ 1990թ.): Այն նաև որոնում է ռազմական և ոստիկանական բռնի գործողությունների դրսևորմանն ուղղված այլընտրանքային տարբերակներ:

Գրանցվել են դեպքեր, երբ մարդկային կարիքների չբավարարումը համակարգային սխալ գործառնության հետևանքով բերել է ֆիզիկական ու կառուցվածքային բռնությունների նույնիսկ «ամենառաջադեմ» ժողովրդավարական համակարգերում: Եթե վերցնենք Նահանգների օրինակով, ապա այստեղ լուրջ մտահոգություն առաջացնող խնդիրներից են բռնությունը և մարդասպանությունը ընտանիքում և դպրոցում, հուսահատությունը երիտասարդության շրջանում, ինչն էլ մղում է նրանց ավազակային հարձակումների, թմրադեղերի օգտագործման և ինքնասպանության, քաղաքական համատարած օտարումը, պետական և քաղաքական մարմինների հանդեպ անվստահությունը, որն արտահայտվում է քվեարկողների պասիվությամբ, ահռելի ռեսուրսների իզուր վատնումը ռազմական նպատակներով, անընդհատ զրկանքների մեջ գտնվող ստորին խավը, որը կազմում է բնակչության առնվազն քսան տոկոսը և որը մշտապես բախվում է սննդի, առողջության, բնակարանի, կրթության և ընտանիքի ամբողջականության խնդիրներին, զինված կողոպուտները, ազգային, էթնիկական ատելության հողի վրա կատարված հանցագործությունները, գենդերային և ռասսայական խտրականությունը, ևս քսան տոկոս կազմող բնակչության գերհարուստ խավը, որը շարունակ ավելացնում է իր ունեցվածքը և իրեն զինակից միջին խավի հետ մեկտեղ ապահովում է իր անվտանգությունը՝ դիմելով ոստիկանության և զինված ուժերի ծառայություններին, կառուցելով ավելի շատ թվով բանտեր և սահմանելով առավել խիստ պատիժներ հանցագործների համար:

Թույլ զարգացած ժողովրդավարական համակարգ և քաղաքացիական հասարակություն ունեցող երկրներն ավելի շատ են ենթարկվում դաժանությունների ու բռնությունների՝ պայմանավորված անսանձ բռնակալական իշխանությամբ և տնտեսական զրկանքներով: Նմանատիպ երկրներում բռնությունները լինում են տարաբնույթ՝ զանգվածային ոչնչացումներ, կոտտանքներ, քաղաքական ոճիրներ, ցեղասպանություն, էթնոսպանություն, զինված հարձակումներ, ահաբեկչություն, զինված հեղափոխություններ և տնտեսական ծանր իրավիճակով պայմանավորված զանգվածային մահացության դեպքեր:

Ձերբազատվելով բռնությունը որպես խնդիրների լուծման միջոց դիտելու համոզմունքից՝ սպանություններից զերծ քաղաքագիտության խնդիրն է աջակցել մարդկային կարիքների բավարարման գործընթացների բարելավմանը քիչ թե շատ ժողովրդավար հասարակությունների ներսում և նրանց միջև: Այստեղ մեծ է գիտական ու մարդասիրական ստեղծագործական մտքի ներդրումը: Նույնիսկ հիմա էլ ակնհայտ է, որ կառուցողական գործընթացային փոփոխությունների կարելի է հասնել խաղաղասիրական նոր արժեքներ ներմուծելու, մարդկային խաղաղասիրական կարողությունների մասին թարմ տեղեկություններ տրամադրելու, ղեկավարներին և հասարակ քաղաքացիներին խաղաղասիրական նոր հմտություններ ուսուցանելու, քաղաքականության մշակման գործընթացներին վերջիններիս ակտիվ մասնակցությունն ապահովելու և խաղաղ ճանապարհով խնդիրների լուծման նոր ինստիտուտներ ձևավորելու միջոցով: Այս փոփոխությունները կյանքի կոչելու համար քաղաքագիտությունը նախ և առաջ պետք է հրաժարվի սպանություններից՝ որպես

հասարակությանը ծառայելու ելակետ: Նա պետք է համակարգված մոտեցում ցուցաբերի մինչև օրս չլուծված մարդկային խնդիրների բարելավմանը՝ անհատական ու ընտանեկան խնդիրներից մինչև պետական խնդիրներ:

Գլուխ 5
Սպանություններից զերծ քաղաքագիտության կարևորությունը հասարակական և պետական ինստիտուտների համար

Ինստիտուտները, որոնց գործառնումը մենք համարում ենք անհրաժեշտ, հաճախ նրանք են, որոնց գոյությանը մենք արդեն սովորել ենք... մինչդեռ հասարակության կառուցման հնարավորությունների շրջանակները շատ ավելի լայն են, քան կարող են պատկերացնել տարբեր հասարակություններում ապրող մարդիկ

Ալեքսիս դե Թոքուեվիլ

Խնդիրները, որոնք վտանգի տակ են դնում կյանքը երկրագնդի վրա, ստեղծվել են մեր բոլորի կողմից, ներգործում են բոլորիս վրա, հետևաբար մենք բոլորս էլ պետք է հետամուտ լինենք դրանց լուծմանը:

Պետրա Կ. Կելլի

Ինստիտուցիոնալ ի՞նչ նշանակություն կարող է ունենալ խաղաղ փոխակերպումը քաղաքագիտության, քաղաքագետների, քաղաքագիտության առարկայի կառուցվածքի, այլ գիտությունների հետ վերջինիս կապի և ամենատարբեր ինստիտուտների համար՝ կոչված օժանդակելու սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանը ամբողջ աշխարհում: Ինստիտուտները դիտվում են որպես հասարակական հարաբերությունների նպատակաուղղված կարգավորիչներ և ստեղծվում են ի պատասխան մարդկային կարիքների ու ձգտումների:

Քաղաքակրթության պատմությունը մեծ մասամբ ինստիտուցիոնալ հայտնագործությունների պատմությունն է: Հավատալիքներից ծնվեցին համայնքներ՝ միավորված տաճարներով, սինագոգներով, եկեղեցիներով ու մզկիթներով: Քաղաքական գործողություններին մասնակցությունը բերեց կուսակցությունների, ընտրությունների և ազգային ժողովների ստեղծման անհրաժեշտությանը: Հասարակության նկատմամբ վերահսկողություն սահմանելու անհրաժեշությունը ծնունդ տվեց ոստիկանատներին, դատարաններին և բանտերին: Պատերազմական ձգտումների արդյունքում ստեղծվեցին ցամաքում, ծովում և օդում կռվելու տեխնիկական հնարանքները: Հարկահանության անհրաժեշտությունը բանակներ պահելու և պետական կարիքները հոգալու նպատակով բերեց բյուրոկրացիայի առաջացմանը (Ֆիներ՝ 1997:16-17, 20-21): Ատոմային ռումբ ստեղծելու գաղափարը դրդեց պետություններին Մենհեթենյան ծրագրի շուրջ կենտրոնացելու իրենց ռեսուրսները: Անհայտ պետություններ բացահայտելու ձգտմանը հաջորդած հոգևոր, գիտական, տեխնիկական միջոցների, հմտությունների և ռեսուրսների մոբիլիզացումը ծնունդ տվեց Ճանապարհորդ Արքայազն Հենրիի շրջագայությունների իրագործմանը 15-րդ դարում և մարդուն լուսնի վրա իջեցնելու Ապոլլո ծրագրի մեկնարկմանը 20-րդ դարում:

Ինստիտուցիոնալ ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ քաղաքագիտությանը սպանություններից զերծ հասարակության ստեղծելու համար: Համընդհանուր կյանքի խաղաղ պայմանների նպատակային հետապնդումը կանխատեսում է ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ համալրելու համար այն միջոցները, որոնք սերտորեն կապված են

ժամանակակից հաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ ընդլայնման հետ: Կարելի է խաղաղասիրական հեռանկարները ընդգրկել հին ստրուկտուրաներում՝ ներմուծելով քաղաքագիտության առարկայի մեջ ժողովրդավարական, գենդերային, ռասսայական, դասակարգային և բնապահպանական խնդիրները կամ վերածնակերպել հին ստրուկտուրաները՝ ստեղծելով անցումային հասարակության հետազոտության զուգահեռ ինստիտուտներ կամ բացարձակ նոր ու խառնածին ինստիտուտներ՝ կոչված միավորելու խաղաղ փոխակերպման լուծում առաջարկող բոլոր աղբյուրները:

Սպանություններից զերծ հասարակություններ ձևավորելու հնարավորությունների հանդեպ լուրջ վերաբերմունքը ենթադրում է այնպիսի ինստիտուտների առկայությունը, որոնց գործունեությունն ուղղված է գիտական և հումանիստական խաղաղ մոտեցումների բացահայտմանը, խաղաղասիրական հմտությունների ուսուցանմանը, կյանքի որակի բարելավմանն անհրաժեշտ խնդիրների լուծմանը, սպանություններից զերծ անվտանգության ապահովմանը և խաղաղ ապրելակերպի մշակույթների ձևավորմանը հասարակության բոլոր շերտերում:

Ինչպես որ ժողովրդավարությունը կյանքի է կոչվում այն դեմոկրատների կողմից, ովքեր հասկանում են դրա իմաստը, պատրաստակամ են ու գիտեն ինչպես աշխատեցնել այն, այնպես էլ սպանություններից զերծ հասարակություններն ու ինստիտուտները պետք է ստեղծվեն խաղաղարար անհատների կողմից: Այս կերպ կարող է ձևավորվել և սպանություններից զերծ քաղաքագիտությունը: Խաղաղասիրական մոտիվները կյանքի կոչելու բազմաթիվ եղանակներ կան, և նրանցից յուրաքանչյուրին անհրաժեշտ է անհատական մոտեցում ցուցաբերել: Մարդը կարող է հասնել սպանությունից հրաժարվելու մտքին շնորհիվ այնպիսի գործոնների, ինչպիսիք են իր ծնունդը, հավատքը, ինտելեկտը, հոգեբանական վնասվածքները, կարեկցանքը, վերլուծական միտքը, նմանակումները և մեդիտացիան: Սպանությունների կանխմանն ուղղված մարդկային կարողությունների վերաբերյալ պատմական վիթխարի փորձը և ժամանակակից փաստերը պետք է մեզ քաջալերեն բացահայտել մեր մեջ նմանատիպ անհատական մոտեցումներ:

Սպանություններից զերծ քաղաքագիտության ֆակուլտետ

Քանի որ խաղաղասիրական ոգին պետք է առկա լինի քաղաքագիտության բոլոր բնագավառների, բաժինների և ընկերակցությունների ներսում, ապա անհրաժեշտ է մտածել սպանություններից զերծ քաղաքագիտության նոր ֆակուլտետների ստեղծման մասին, որոնք կլինեն գործող ֆակուլտետները վերակազմավորելու և նորերը ստեղծելու նախատիպը նորաբաց բոլոր համալսարաններում:

Նման ֆակուլտետների ստեղծման հիմքում պետք է ընկած լինի մեկ ընդհանուր նպատակ, այն է՝ վերացնել սպանությունները, դրանք իրագործելու սպառնալիքները և դրանց բաղադրիչները համաշխարհային պրակտիկայից:

Այս կերպ սպանություններից զերծ քաղաքագիտության ֆակուլտետը կտարբերվի բոլոր մյուս ֆակուլտետներից, որոնք քարոզում են բռնությունների վրա հիմնված ազատ ժողովրդավարություն, գիտական սոցիալիզմ և ավտորիտար վարչակարգ: Սպանություններից զերծ քաղաքագիտության մասնագիտությունն այլևս չի ուղղորդվի մինչև օրս եղած արժեքներով ու հասկացություններով, այն կներառի միանգամայն նոր արժեքներ:

Հաշվի առնելով ներկայիս կրթական ձևաչափը՝ ներածական կուրսերից մինչև դոկտորանտուրա՝ քաղաքագիտության նոր ֆակուլտետը բացահայտ փորձում է ուսանողներին զինել բոլոր այն գիտելիքներով ու հմտություններով, որոնք անհրաժեշտ

են սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանն ու պահպանմանը: Հատկապես առանձնացվում են չորս հմտություններ՝ հետազոտություն, ուսուցանում ու վերապատրաստում, գործողությունների պլանի մշակում ու ԶԼՄ-ներում և առօրյա կյանքում տեղ գտած իրադարձությունների առողջ քննադատություն:

Ցածր կուրսեցիները ծանոթանում են մարդկային պատմության արյունոտ էջերին, որից հետո որպես պրոֆեսիոնալ քաղաքագետներ կամ քաղաքացիական ծառայության առաջնորդներ՝ փորձում են գտնել սպանություններից հրաժարվելու ուղիները մարդկանց կյանքում, վկայություններ են հավաքում մարդկանց ստեղծագործական կարողությունների (Բուրստին՝ 1983թ., 1992թ., 1998թ.), քաղաքական նորարարությունների (Ֆիներ՝ 1997թ.), հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մարդկային արժանապատվության բարձրացմանն ուղղված խաղաղասիրական ծառայությունների վերաբերյալ (Ժոզեֆսոն՝ 1985թ.):

Հաջորդ քայլը կարող է լինել լուծում պահանջող արդի խնդիրների (բռնություն, տնտեսություն, մարդու իրավունքներ, շրջակա միջավայր, համագործակցություն), քաղաքագիտության ժամանակակից ինստիտուտների, խնդիրների լուծման գործընթացների (տեղական, ազգային, միջազգային, համաշխարհային), սպանություններից զերծ վերլուծության տրամաբանության ու սկզբունքային գործողությունների վերաբերյալ ամենաթարմ գիտելիքների դիտարկումը, որոնք կարող են նպաստել սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանն անհրաժեշտ որոշումների կայացմանը:

Ավելի ուշ ուսանողներին պետք է հնարավորություն ընձեռնվի ուսումնասիրել խնդիրների լուծմանն ու համայնքային ծառայությունների տրամադրմանն ուղղված մի շարք այլընտրանքային, բայց փոխկապակցված տարբերակներ՝ կիրառելով այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հետազոտությունը, կրթում-վերապատրաստումը, ղեկավար-քաղաքացի փոխհարաբերակցությունը և քաղաքական գործընթացների օբյեկտիվ գնահատումը: Անուշադրության չմատնելով մի շարք այլ հմտություններ ու կարողություններ՝ պետք է մանրակրկտորեն ուսումնասիրել այս չորս մեթոդները՝ աջակցելու համար հասարակական խաղաղ փոխակերպման գործընթացին: Անհրաժեշտ է ճանաչել միմյանց կարողությունները և դրանք ճիշտ ձևով օգտագործել՝ օրինակ վերցնելով գյուղացի արհեստավորներից ու առաջնություններին մասնակցող մարզական թիմերը:

Այսօրինակ նախապատրաստություններից հետո հաջորդ քայլը անհատական կամ խմբային ծրագրերի իրականացնացումն է՝ ուղղված համապատասխան հմտությունների հետազոտության, ուսուցման, գործողությունների մշակման և քննադատական վերլուծության մեջ՝ ստեղծելու համար այլընտրանքային մոտեցումներ ուղղված խնդիրների լուծման գործընթացները խոչընդոտող ֆիզիկական, կառուցվածքային բռնություններին, մարդու իրավունքների ոտնահարմանը, շրջակա միջավայրի աղտոտմանը և բռնություն ծնող հակամարտություններին: Այս ծրագրերը կարող են կիրառվել տեղական, ազգային, միջազգային և համաշխարհային իրադրություններում: Նմանատիպ ծրագրերի արդյունքները, ներկայացված դիպլոմային աշխատանքների տեսքով, պահվում են ֆակուլտետի արխիվում և հրատարակվում Համացանցում՝ անհատական և հասարակական որոշումների կայացման գործընթացներում օգտագործելու համար:

Շրջանավարտները շարունակում են իրենց նորարարական կարիերան պետական ծառայության մեջ կամ քաղաքացիական հասարակության ներսում (տե՛ս համապատասխան ինստիտուտների ցանկը ներքևում): Նրանցից շատերը կարող են շարունակել կրթությունը մագիստրատուրայում և ասպիրանտուրայում՝ մասնակցելով քաղաքագիտության բնագավառում իրականացվող ուսումնասիրություններին կամ

սկսել նորերը (Հավելված Բ, Գ) կամ ընդլայնել ուսումնասիրությունների ոլորտը՝ ընդգրկելով նոր առարկաներ ու մասնագիտություններ:

Սպանություններից զերծ քաղաքագիտության ֆակուլտետը, անշուշտ, պետք է պատրաստի այնպիսի մասնագետներ՝ կոչված ծառայելու հասարակությանը: Ֆակուլտետի ուսանողները և գիտության թեկնածուները կազմում են անկլավներ՝ դուրս գալով ընդհանուրի հետաքրքրություններից և կիրառելով կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան մեթոդներ: Քաղաքագիտության ֆակուլտետը ակնհայտորեն փորձում է բացահայտել նոր գիտելիքներ և դրանք կիրառել կրթության ու վերապատրասման դասընթացներում, հասարակական խնդիրների լուծման գործընթացներում: Կոնֆլիկտների լուծման իր ուրույն մեթոդներում ու դատողություններում քաղաքագիտության առարկան փորձում է կոնկրետ օրինակների տեսքով ներկայացնել սպանություններից զերծ հասարակության բնութագրիչները, ինչպես օրինակ՝ կանանց ու տղամարդկանց հավասար գործառնության մշակույթը, որը կազմում է սպանություններից զերծ հասարակության հիմքը: Այն անհրաժեշտ է համարում պարբերաբար հավաքագրել համապատասխան ոլորտներում աշխատող շրջանավարտների կարծիքները՝ բացահայտելու համար ուսումնասիրության նոր ոլորտներ և կազմակերպելու ուսանողների վերապատրաստումն այնպես, որ վերջիններս ի վիճակի լինեն լուծել անկանխատեսելի խնդիրները: Համայնքի փորձառու առաջնորդներն ու այլ ոլորտի դասավանդողները երբեմն համատեղ հանդիպումների միջոցով աջակցում են կոլեգիալ ստեղծագործական նախաձեռնություններին: Քանի որ խաղաղասիրական գիտելիքներն ու հմտությունները պետք են ողջ աշխարհին, ապա քաղաքագիտության նոր ֆակուլտետը կփորձի ստացիոնար և հեռահար ուսուցման միջոցով այս գործընթացին ներգրավել նաև տաղանդավոր գիտնականների տարբեր երկրներից: Համաշխարհային բարեկեցությանը խոչընդոտող խնդիրները բացահայտելու համար տեղական համայնքը պետք է դիտվի որպես հավասար գործառնություն ապահովող միջավայր:

Շանթի Սենայի համալսարան (Խաղաղության կորպուս)

Սպանություններից զերծ հասարակություններին անցումը ենթադրում է ուսանողական խաղաղ համայնքային ծառայությունների՝ կորպուսների ստեղծում՝ որպես այլընտրանքային միջոց զինվորական պատրաստվածության դասընթացներին, որոնք հաճախ պարտադիր կամ կամովին ուսուցանվում են քոլեջներում ու համալսարաններում: Նման կորպուսները կարող են ղեկավարվել քաղաքագիտության ֆակուլտետի կողմից և դրանց կարող են անդամակցել տարբեր ֆակուլտետների ուսանողները:

Շանթի Սենան, ինչպես էլ որ այն կոչվի, լավ կազմակերպված կառույց է, որի անդամները անցնում են վերապատրաստում՝ ուղղված կոնֆլիկտների խաղաղ լուծմանն ու հաշտության եզրեր գտնելուն, համայնքի անվտանգությունն ու քաղաքացիների պաշտպանությունն ապահովելուն, բնական աղետների, դժբախտ պատահարների ժամանակ առաջին բուժօգնություն ցուցաբերելուն և համայնքի կարիքների բավարարմանն ի նպաստ կառուցողական քայլեր ձեռնարկելուն: Գործնական վերապատրաստումը լրացնում է տեսականին՝ ձևավորելով առաջնորդության հմտություններ մասնակիցների մոտ, որոնց հիմքում ընկած են կյանքը փառաբանող բոլոր կրոնները, երաժշտության ու արվեստի հոգեպարար ներգործությունը, սպորտի կենսասիրական ուժն ու մյուսներին օգտակար լինելուց ստացած բավականությունը: Ստեղծված բարդ իրավիճակներում կազմակերպության անդամները կարող են իրենց ծառայությունները մատուցել ուսումնական կորպուսների ներսում և դրանցից դուրս,

ինչպես նաև «տրամադրել» առաջնորդներ այլ սոցիալական ինստիտուտների համար: Նման կորպուսների գործառնումը կարելի է ապահովել նույնպիսի ֆինանսական և հովանավորչական միջոցներով, ինչպիսիք հատկացվում են զինվորական պատրաստվածության ժամանակակից դասընթացների կազմակերպման համար:

Նման կորպուսներ կարելի է կազմակերպել նաև նախաբուհական կրթության շրջանակներում: Կրթական հաստատություններում Շանթի Սենաներ կազմակերպելու գործնական քայլեր կարելի է գտնել Գանդիի անվան ագրարային համալսարանի պրոֆեսոր Ն. Ռադակրիշնանի աշխատության մեջ (Ռադակրիշնան՝ 1997ա, 1997բ), 1930-1947թթ. Հնդկաստանում գործող մուսուլմանական 80հազարանոց ազատագրական բանակի խաղաղ գործողություններում (Բաներժեե՝ 2000:73-102), հասարակության խաղաղ փոխակերպմանն ուղղված Քինգի պայքարում (Լաֆայետ և Ժենսեն՝ 1995թ., 1996թ.) և խաղաղասիրական այլ դասընթացների օրինակներում (Պատերազմի ընդդիմադիրների լիգա՝ 1989թ.):

Խաղաղասիրական համալսարաններ

Սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանն ուղղված լուրջ մոտեցումներն ենթադրում են այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորում, որոնք չեն կարող տրամադրվել ոչ մի ուսումնական առարկայի կամ ֆակուլտետի կողմից: Հետևաբար ողջ քաղաքագիտության խաղաղ փոխակերպումը ենթադրում է համագործակցության ձևավորում բոլոր տեսակի սոցիալական, բնագիտական, հումանիտար և այլ մասնագիտական առարկաների միջև: Անհրաժեշտ է ստեղծել ամբողջական համալսարաններ՝ ուղղված խաղաղ կյանքի ամրակայմանը տեղական, ազգային, միջազգային և համաշխարհային մակարդակներում:

Համալսարանները ցույց են տվել մարդկային և ինտելեկտուալ ռեսուրսները լիակատար մոբիլիզացնելու իրենց կարողությունները ամենաարյունալի պատերազմների ժամանակ: Ինչպես հայտարարեց Հարվարդի համալսարանի նախագահ Ջեյմս Կոնանտը 1942թ. հունիսի 18-ին «մոտեցնելու համար օրը, երբ Գերմանիան և նրա համախոհները առանց նախապայմանների վայր կդնեն իրենց զենքերը, մենք մոբիլիզացնում ենք մտավորական հին աշխարհի ինտելեկտուալ ողջ ռեսուրսները»: Հարվարդը այլևս դարձավ «Կոնանտի զինանոց», քանի որ բոլոր ուժերի մոբիլիզացումը պատերազմական գործողությունների ժամանակ հիմնովին փոխեց համալսարանական կյանքը: Ֆիզիկայի ֆակուլտետի ցածր կուրսերի ուսանողները ներգրավվեցին ատոմային ռումբ ստեղծելու ծրագրային «գերգաղտնի» աշխատանքներին Նոր Մեքսիկայի Լոս Ալամոս ազգային լաբորատորիայում: Ուսանողներից մեկը հիշում է. «դա մի տեսակ գիտական ուտոպիա էր... ներկա էին բաց հասարակության «լավագույն ուղեղները», առանց կաշկանդվելու մտքեր էին փոխանակում՝ հաշվի չառնելով տարիքը, պաշտոնը կամ նախկին ձեռքբերումները (Հարվարդի ամսագիր, սեպտեմբեր-հոկտեմբեր 1995թ., էջ՝ 32, 43):

Չպետք է արդյո՞ք հին ու նոր համալսարանները վճռականորեն ձեռնամուխ լինեն մարդկային գոյությանն ու բարեկեցությանը սպառնացող բոլոր տեսակի պատերազմների ու սպանությունների վերացմանը: Հաշվի առնելով այն դժկամությունը, որ ցուցաբերում են ներկայիս բարձրագույն ուսումնական հաստատությունները «խաղաղության ուսուցման» դասընթացները, ծրագրերը կամ «բռնությունների, սպանությունների կանխումը» բարոյագիտության և մշակութաբանության թանկարժեք կրթածրագրեր ներմուծելիս, վստահ կարելի է ասել, որ խաղաղ փոխակերպման այս գործընթացում նրանք անցնելու դեռևս երկար ուղի ունեն:

Սպանություններից զերծ քաղաքական կուսակցություններ

Սպանություններից զերծ կիրառական քաղաքագիտությունը ենթադրում է սպանություններից զերծ քաղաքական կուսակցությունների ստեղծումը՝ ապահովելու համար վերջիններիս մասնակցությունը հասարակության առաջնային կարիքների բավարարմանն ուղղված խնդիրների լուծման գործընթացին: Նմանատիպ կուսակցությունները կարելի է կոչել մեկ ընդհանուր անվամբ՝ «*ahimsa sarvodaya*» կուսակցություն (ahimsa-առանց բռնությունների, sarvodaya-ընդհանուր բարեկեցություն): Նման կուսակցություններն իրենց ստեղծագործական հայացքներով, նպատակներով, գործունեությամբ պետք է ստեղծվեն սոցիալ-մշակութային հատուկ պայմաններում:

Սպանություններից զերծ կուսակցությունների նպատակն է նպաստել սպանություններից զերծ հասարակությունների ձևավորմանը տեղական և գլոբալ մակարդակներում: Այս կուսակցությունները նախորդներից տարբերվում են նրանով, որ չեն հետապնդում դասակարգային շահեր, փոխարենը փորձում են ամբողջացնել ու ներկայացնել բոլորի շահերը, քանի որ բոլորն են շահում սպանությունների բացակայությունից և ազատության, արդարության ու նյութական բարեկեցության խաղաղ պայմաններից:

Միաժամանակ կարող են գործել խաղաղասիրական սկզբունքներով միմյանց հետ մրցակցող մի քանի նմանատիպ կուսակցություններ:

Սպանություններից զերծ քաղաքական կուսակցություններից ակնկալվող կառուցողական օժանդակությունը ընտրական գործընթացներին, պետական քաղաքականությունների ձևավորմանը և այլ գործողությունների իրագործմանը հակասում է Գանդիի այն տեսությանը, թե նման կուսակցությունները չպետք է ուղղակիորեն մասնակցեն քաղաքական կյանքին: 1947թ. դեկտեմբերին՝ իր վերջին ուղերձի ժամանակ, Գանդին խորհուրդ տվեց սպանությունների կանխման գործի նվիրյալներին հեռու մնալ քաղաքականությունից, քանի որ վերջինս անվերապահորեն կոռումպացնում է մարդուն (Աշխատանքների հավաքածու՝ 90:223-4): Փոխարենը նշեց, որ այդ մարդիկ պետք է աշխատեն քաղաքացիական հասարակության ներսում, այն մարդկանց շրջանում, որոնք իրենց գերկարևոր խնդիրներով էապես ազդում են քաղաքականության ու քաղաքական գործիչների վրա: Տրամաբանորեն սա նշանակում է թույլ տալ մյուսներին դրսևորել կոռուպցիոն վարքագիծ և կայացնել որոշումներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում բազմամիլիարդ դոլարանոց հարկերի գանձման, միլիոնավոր մարդկանց ու հասարակական կյանքի բոլոր ասպեկտների վրա՝ պատերազմ, անվտանգություն, սնունդ, հագուստ, կացարան, առողջություն, կրթություն, տնտեսություն, մշակույթ և շրջակա միջավայր, մինչդեռ խաղաղարար ակտիվիստներն ու նրանց համախոհները պետք է այնպես ներգործեն կաշառակերների ու նրանց համախոհների վրա, որ վերջիններս միայն բարիք գործեն:

Բայց և այնպես Գանդիի կանխատեսությունն ունի նաև իր դրական կողմը. «Բայց կարող է գալ մի պահ, երբ մարդիկ ցանկություն հայտնեն, որ միայն մենք ու մեզանից բացի ուրիշ ոչ ոք չկանգնի իշխանության գլուխ: Այդ դեպքում մենք կվերանայենք մեր դիրքորոշումները» (223):

Սպանություններից զերծ քաղաքական կուսակցություններն այն տրամաբանական հաստատություններ են, որոնք կարող են օժանդակել հասարակության խաղաղ փոխակերպման գործընթացին: Նրանց ստեղծման համար անհրաժեշտ բարենպաստ պայմանները լինելու են խիստ տարբեր, քանի որ գործընթացն ինքն էլ ամենուր լինելու է դժվար, նույնիսկ այն տեղերում, ուր կուսակցությունները, ընտրական համակարգերը, ներկայացուցչական մարմինները կազմում են կառավարական համակարգի մասը:

Սպանություններից զերծ քաղաքական հասարակությունները պետք է պատրաստվեն երկարատև մարտիրոսական պայքարի՝ աջակցելու համար համընդհանուր կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունների և գործողությունների մշակման գործընթացին: Սա իր հերթին ենթադրում է նոր գիտելիքների, նոր հմտությունների, նոր տիպի կազմակերպությունների ու քաղաքականությունների համակցությունը այնպիսի խնդիրների լուծման արդյունավետ գործողություններում, ինչպիսիք են աբորտը, մահապատիժը, զորակոչը, պատերազմը, զինված հեղափոխությունը, ահաբեկչությունը, ցեղասպանությունը, հանցավորությունը, հասարակական բռնությունը, մշակութային բռնությունը, զինաթափումը և տնտեսական ապառազմականացումը: Այս գործընթացում հաջողությունների կարելի է հասնել՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում, «համաշխարհային» միասնականություն և հասարակությանը ծառայելու պատրաստակամություն:

Սպանություններից զերծ հասարակական ծառայության վարչություններ

Կառավարման բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ստեղծել խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող հասարակական ծառայության վարչություններ՝ օժտված համապատասխան լիազորություններով: Վերջիններս կվերահսկեն հասարակական կյանքի պայմանները՝ կապված սպանություններից զերծ քաղաքական վերլուծության տրամաբանության հետ, կտրամադրեն մասնագիտական վերապատրաստում բոլոր նրանց, ովքեր զբաղվելու են սպանությունների կանխմամբ և հետտրավմատիկ ռեաբիլիտացիոն աշխատանքներով և կմշակեն հասարակական քաղաքականություն, որը կապահովի հասարակության բարեկեցությունը առանց բռնությունների դրսևորման: Քանի որ բռնության տարբեր դրսևորումները իրենց բացասական ազդեցությունն են թողնում կյանքի բոլոր ասպեկտների վրա, հասարակական ծառայությունների ուշադրությունը վերջիններիս հանդեպ նույնքան կարևոր է, որքան աղբահանության կամ մաքուր ջրի մատակարարման հանդեպ:

«Խաղաղասիրության» վարչությունը կհավաքագրի սպանության և բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ և սպանությունների կանխմանն ուղղված հանձնարարականներ բոլոր տեսակի հասարակական ու մասնավոր աղբյուրներից: Վարչությունը սպանություններից զերծ քաղաքականության վերաբերյալ հանձնարարականների հետ մեկտեղ պարբերաբար հաշվետվություններ կներկայացնի պետական պաշտոնյաներին և քաղաքացիական հասարակության անդամներին՝ ավելի շուտ հանդես գալով որպես վերստուգիչ անկախ գործակալություն:

Բազմակողմանի դիտարկում պահանջող ոլորտներն են՝ մարդասպանությունն ու ինքնասպանությունը, բռնության դրսևորումները ընտանիքում (բռնություն երեխաների, կանանց, ամուսնական զույգերի, տարեցների նկատմամբ), դպրոցում, աշխատավայրում, ոստիկանությունում, բանտում, ՁԼՄ-ների նկատմամբ, սպորտում, տնտեսության մեջ, պատերազմի դաշտում: Բռնության հետտրավմատիկ ազդեցությունը տարածվում է մարդասպանների, նրանց հարազատների, զոհերի հարազատների և հասարակության ընդհանուր գիտակցության վրա: Այս հաշվետվությունները պետք է ընդգծեն խաղաղ փոխակերպման կարողությունների ուժեղ ու թույլ կողմերը և տրամադրեն խնդիրների լուծման գործընթացներն ավելի արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ հանձնարարականներ: Ձեռք բերված հաջողությունների մասին հաշվետվությունները պետք է լինեն նույնքան հետևողական, որքան բորսայում գրանցվող արժույթային տատանումների, մարզական նորությունների կամ եղանակի տեսության մասին տեղեկությունները:

Սպանությունների զերծ հասարակական անվտանգության ինստիտուտներ

Անցումը սպանություններից զերծ հասարակություններին ենթադրում է համընդհանուր անվտանգությունն ապահովող խաղաղ ուժերի ձևավորում՝ համազոր ռազմական և ոստիկանական ավանդական ուժերին՝ ուղղված բնակչության պաշտպանությանը և ցամաքում, ծովում ու օդում վերջիններիս հումանիտար օգնություն տրամադրելուն: Նման ուժերը պետք է վերապատրաստում անցնեն կանխարգելիչ, ճգնաժամային, հակաճգնաժամային և հետճգնաժամային գործողությունների վերաբերյալ: Լիդերներ կարող են վերապատրաստել որոշակի փոփոխությունների ենթարկված ներկա ռազմական և ոստիկանական ակադեմիաները կամ նոր ակադեմիաները, որոնցում ուսուցումը դրված է խաղաղասիրական հիմքերի վրա: Նմանատիպ ակադեմիաների օրինակ կարող է հանդիսանալ Շանթի Սենայի համալսարանը:

Հասարակական անվտանգություն ապահովող ուժեր ձևավորելու հեռանկարը պետք է ներառվի ռազմական ու ոստիկանական գործունեության որոշ ոլորտներում, խաղաղարարական և մարդասիրական գործողություններում, ոչ մահաբեր զենքերի օգտավետությանն ուղղված ուսումնասիրություններում և խաղաղ մեթոդներով կոնֆլիկտների լուծման վերաբերյալ դասընթացներում:

Սպանություններից զերծ հասարակական անվտանգությունը ենթադրում է աշխարհի ողջ բնակչության ներգրավվածությունը այս գործընթացին: Դրան կարելի է հասնել՝ ստեղծելով խաղաղության ուսուցման խմբակներ և քաղաքացիական «Շանթի սենաներ» բնակավայրերում, դպրոցներում, եկեղեցիներում, աշխատավայրերում և համացանցով իրար հետ կապված սպանություններից զերծ հասարակական անվտանգության համայնքային կենտրոններում: Քաղաքացիական կազմակերպությունների վերամշակված մոդելներ կարելի է գտնել շատ տեղերում:

Սպանություններից զերծ անվտանգությունն ենթադրում է նաև հասարակական անվտանգության խաղաղ խորհուրդների և հետախուզական խաղաղ գործակալությունների ստեղծում ազգային և միջազգային մակարդակով, ինչպես նաև մշակութային կցորդների նշանակում դիվանագիտական հաստատություններում: Անվտանգության խաղաղ խորհուրդներն անհրաժեշտ են, որպեսզի տրամադրեն կոնֆլիկտների խաղաղ լուծման այլընտրանքային տարբերակներ բռնությունը խրախուսող պետություններին և նրանց դաշնակիցներին: ՄԱԿ-ի Անվտանգության խաղաղ խորհրդում կարող են ընդգրկվել բռնությունների ամենացածր ցուցանիշ ունեցող երկրները, որոնք չունեն ատոմային զենքեր, բանակներ, վերացրել են մահապատիժը, գրանցել են մարդասպանությունների ցածր ցուցանիշ, չեն զբաղվում զենքերի առևտրով և այլն:

Անհրաժեշտ են նաև հետախուզական խաղաղ գործակալություններ, որոնք ԶԼՄ-ների և քաղաքացիական խորհուրդների հետ համատեղ, կարող են բացահայտել բոլոր տեսակի սպանություններն ու դրանք իրագործելու սպառնալիքները՝ մոբիլիզացնելով դրանց կանխմանն ուղղված բոլոր ուժերն ու միջոցները:

Դիվանագիտական հաստատություններում խաղաղարար մասնագետների առկայությունը նույնքան անհրաժեշտ է, որքան ռազմական կցորդներինը կամ տնտեսական հարաբերությունների պատասխանատուներինը:

Մշակութային խաղաղարար կցորդները պետք է փորձեն կառուցել բարի դրացիական հարաբերություններ խաղաղության ջատագովների միջև թե՛ հայրենիքում և թե՛ հյուրընկալ երկրներում: Ինտերնետը թույլ է տալիս տարածել տեղեկատվություն՝ ուղղված համաձայնեցված խաղաղ քայլերի ձեռնարկմանը՝ անկախ այս կամ այն իրադրության վերաբերյալ առկա պետական, լրատվական կամ հավաքական

կարծիքներից: Սպանություններից զերծ հասարակական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ հմտությունների բարելավումը պետական և մասնավոր կազմակերպությունների համար ցույց է տալիս խաղաղասիրական դասընթացներ տրամադրող համապատասխան ինստիտուտների ստեղծան կարևորությունը: Սկզբում հավանաբար որպես ենթաբաղադրիչներ, իսկ ավելի ուշ որպես գործառնորեն փոխարինող համարժեք կառույցներ, «խաղաղ» վերապատրաստման ինստիտուտները կդառնան ռազմական քոլեջների, պաշտպանության պետական համալսարանների, ռազմական, ոստիկանական ակադեմիաների, պետական կառավարման դպրոցների, ինչպես և քաղաքացիական հասարակության մեջ գործող բռնությունը խրախուսող այլ ուսումնական հաստատությունների այլընտրանքները:

Սպանություններից զերծ քաղաքացիական հասարակության ինստիտուտներ

Սպանություններից զերծ հասարակությունների ստեղծմանը, պահպանմանն ու գործառնությանն օժանդակող քաղաքացիական հասարակության հնարավորությունները տեսականորեն անթիվ են: Սպանությունների կանխմանն ուղղված ինստիտուտները բազմաթիվ են, իսկ հատուկ կարևորության այլ ինստիտուտների ձևավորումն էլ դեռ առջևում է:

Սպանություններից զերծ հոգևոր խորհուրդներ

Հասարակության յուրաքանչյուր մակարդակում կամ յուրաքանչյուր կոնցենտրիկ օղակում անհրաժեշտ է ձևավորել սպանություններից զերծ հոգևոր խորհուրդներ՝ ամրապնդելու համար կյանքի նկատմամբ հարգանքը մարդկային գոյության բոլոր փուլերում՝ ծննդյան օրից մինչև մահ: Նման միջդավանական խորհուրդները, հանդիսանալով բռնությունը խրախուսող կրոնական և աշխարհիկ կազմակերպությունների այլընտրանքային տարբերակը, կարող են անվախ բարձրաձայնել ու կիրառել իրենց ուսմունքներում առկա խաղաղասիրական ճշմարտությունները: Նման խորհուրդներն ի հակադրություն բռնությունը խրախուսող աշխարհիկ և հոգևոր պահպանողականների՝ խրախուսում են մարդու կյանքից սպանությունների դուրս մղմանն ուղղված բոլոր ջանքերը հասարակական, մասնավոր, տեղական, ազգային ու միջազգային մակարդակներում:

Օգտագործելով ոգեշնչման յուրաքանչյուր աղբյուր՝ սպանություններից զերծ հոգևոր խորհուրդները կարող են օգնել խաղաղասիրական օրենքներով ապրելու կարողությունների բացահայտմանը անհատների և սոցիալական ինստիտուտների շրջանում:

Սպանություններից զերծ խորհրդատվական կենտրոններ

Հիմք ընդունելով գլոբալ ռեսուրսները՝ սպանություններից զերծ խորհրդատվության կենտրոններն անհրաժեշտ են՝ գտնելու համար խնդիրների լուծման այլընտրանքային ուղիներ հասարակությունների ներսում և նրանց միջև: Նման կենտրոնները, ի մի բերելով հոգևոր, գիտական, կազմակերպչական և այլ անհրաժեշտ աղբյուրները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են աջակցել բոլոր նրանց, ովքեր ուզում են կանխել արյունահեղությունը, դադարեցնել սպանդը և ստեղծել «կայուն» հաշտություն ու համերաշխություն: Նմանատիպ խաղաղասիրական կենտրոնները տարբերվում են

պահպանողական կենտրոններից նրանով, որ ունեն սպանությունների կանխմանն ուղղված հստակ գործելակերպ, անհրաժեշտ կարողություններ և ազատ են բռնակալական պետությունների ու նրանց արյունարբու թշնամիների վերահսկողությունից:

Անհրաժեշտ են նաև այնպիսի մասնավոր հաստատություններ, որոնք կարող են տրամադրել այդօրինակ խորհրդատվական ծառայություններ՝ համախմբելով կուտակած փորձը և ապահովելով դրանց արդյունավետ կիրառումը: Ինչպես օրինակ՝ կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբերակները կվակերների մոտ և ադեկվատ օգնություն ցուցաբերելու փորձառությունը կրոնական ու հումանիտար այլ կազմակերպությունների մոտ:

Խնդիրների լուծման միջազգային կոնսորցիում

Որպես համալրում սպանություններից զերծ քաղաքական ինստիտուտների, որոնք կարելի է կոչել «վերևից ներքև» կառույցներ (օր.՝ կուսակցությունները, հասարակական ծառայության վարչությունները և համընդհանուր անվտանգության ինստիտուտները), անհրաժեշտ է ստեղծել նաև խաղաղ փոխակերպման ինստիտուտների «ներքևից վերև» կոնսորցիումները: Որպես օրինակ կարող է ծառայել Չներկայացված ազգերի ու ժողովուրդների կազմակերպությունը, որն իրենից ներկայացնում է որոշակի ազգային պատկանելության ժողովուրդների կոալիցիա և նպատակ ունի խաղաղասիրական գործողություններով ներազդել Միացյալ Ազգերի, կառավարությունների և այլ հաստատությունների վրա՝ ճանաչելու համար վերջիններիս հավաքական իրավունքները: Այլ օրինակներ են «Միջազգային ամնիստիան», «Գրինփիսը» և «Հաշտության միջազգային ընկերակցությունը»: Խաղաղասիրական կոնսորցիումի մասնակիցները չպետք է համաձայնվեն անդամների կողմից արված բոլոր հայտարարություններին, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է սպանությունների վերացման համաշխարհային գործընթացին: Նմանատիպ կոնսորցիում պետք է ձևավորել սպանության կոնի գոտիների ներսում և նրանց միջև, ինչպես նաև բռնությանը, տնտեսագիտությանը, մարդու իրավունքներին, շրջակա միջավայրի պահպանությանը և համագործակցությանը վերաբերող խնդիրների լուծմանն առնչվող ոլորտներում: Վերջիվերջո տարբեր ազգության ներկայացուցիչներից կազմված հզոր կոնսորցիումը՝ իրենից ներկայացնելով կանանց ու տղամարդկանց համագործակցություն, ուղղված է սպանություններից զերծ աշխարհ ստեղծելուն և համընդհանուրի բարեկեցությունը ապահովելուն:

Սպանությունների կանխմանն ուղղված վերապատրաստման ինստիտուտներ

Բռնության սպառնալիքների համատարած աճով և սպանությունների կանխմանն ուղղված այլընտրանքներ գտնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ավելանում է նաև խաղաղարար առաջնորդներ վերապատրաստելու պահանջարկը՝ կոնֆլիկտների խաղաղ լուծման և սպանություններից զերծ հասարակությունների ստեղծման գործընթացին աջակցելու համար: Մեծ է Քինգի, Գանդիի, բուդդիստական, քրիստոնեական և աշխարհիկ այլ խաղաղասիրական ուսմունքների հետևորդ հմուտ թրեյներների պահանջարկը: Նմանատիպ վերապատրաստողներ պետք են ամենատարբեր ոլորտներում՝ սոցիալական արդարության վերականգնմանն ուղղված քաղաքացիական շարժումներից սկսած մինչև դպրոցներ, աշխատավայրեր, ոստիկանություն և բանտեր: Քաղաքացիական հասարակության ինստիտուտներն

անհրաժեշտ են, որպեսզի կազմակերպեն քաղաքացիների, այդ թվում նաև մասնագետ թրեյներների վերապատրաստումն ու որակավորումը:

Հետազոտական և վերականգնողական կենտրոններ խաղաղարար առաջնորդների համար

Անհրաժեշտ է ստեղծել կենտրոններ, որտեղ ուժերը վերականգնելու, խորհրդածելու, մտքերը գրառելու և փորձի փոխանակում կատարելու նպատակով կարող են հյուրընկալվել խաղաղասիրական կազմակերպությունների ու շարժումների առաջնորդները: Հաճախ բանտարկությունը կամ հոսպիտալացումը հանգստի այն միակ միջոցներն են, որ ունենում են խաղաղ փոխակերպման վտանգավոր, լարված պայքարի նվիրյալ-առաջնորդները: Այս նպատակով անհրաժեշտ է ստեղծել նաև կամավոր հիմունքներով գործող համարժեք կենտրոններ: Այնտեղ ուր առաջնորդներն ենթարկվում են տանջանքների ու կտտանքների, պետք է գործառնեն վերականգնողական կենտրոններ՝ ուղղված վերջիններիս հոգեկան ու ֆիզիկական վիճակի վերականգնմանը: Աշխարհի տարբեր կողմերում գտնվող վերականգնողական կենտրոնները խաղաղարար առաջնորդներին ընձեռում են հոգեպես և ֆիզիկապես վերականգնվելու, տարբեր երկրների կոլեգաների հետ հաղորդակցվելու և գործողությունների հետագա պլան մշակելու հնարավորություն: Այս կենտրոնները կարող են գործել ինքնուրույն կամ հասարակության խաղաղ փոխակերպմանն աջակցող ինստիտուտներին կից:

Ավեստագետների խաղաղ ստեղծագործական կենտրոններ

Անհրաժեշտ են ինստիտուտներ, որոնք խրախուսեն սպանությունների կանխման ստեղծագործական միջոցներն արվեստի գործերի միջոցով: Ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանը այսպես է մեջբերում Տոլստոյի խոսքերը. «Արվեստը պետք է ճնշի բռնությունը, քանի որ միայն արվեստն է զորու դա անել» (Ռոլան՝ 1911:203): Ուսումնասիրելով բռնությունների կանխման դեպքերը Շելլիի բանաստեղծություններում՝ Արտ Յանգը նկատում է. «Բռնությունների կանխումն ավելին է, քան քաղաքական տեսության համակարգը. նրա վրա է կառուցվում կյանքն ու պոեզիան» (1975: 165): Ընդգծելով ռազմի երգի կարևորությունը մարտական ոգու բարձրացման գործում՝ Քինգի ուսմունքում առկա ոսկե կանոնն ասում է. «Չկա երգ, չկա շարժում» (Յանգ՝ 1996:161-184): Անհրաժեշտ է նկարիչներին, բանաստեղծներին և գրողներին ընձեռել համախմբվելու հնարավություն՝ փորձի փոխանակում կատարելու և խաղաղ փոխակերպման նոր ստեղծագործական մոտեցումներ մշակելու համար: Խաղաղ ստեղծագործական մոտեցումներ կիրառող արվեստի ճյուղերը ներառում են գրականություն, պոեզիա, նկարչություն, քանդակագործություն, երաժշտություն, պարարվեստ, թատրոն, կինո, հեռուստատեսություն, լուսանկարչություն, ճարտարապետություն, մոդելավորում և կոմերցիոն արվեստ:

Բռնությունների կանխման խաղաղ ուղիների որոնումը հանդիսանում է մի նոր խնդիր արվեստի բնագավառում: Խորհրդավոր սպանությունների բացահայտմանն ուղղված դետեկտիվ գրականության այլընտրանքային տարբերակում կարող են նկարագրվել խուզարկուներ, որոնք օգտագործում են իրենց ողջ հնարամտությունը կանխելու համար սպանության ու ինքնասպանության բոլոր դեպքերը: Խաղաղ ստեղծագործական մոտեցումը արվեստում կարող է դառնալ խաղաղ փոխակերպման գործընթացի վերաբերյալ մարդկային պատկերացումների ու ոգերշնչումների շարժիչ ուժը:

Արվեստի բնագավառում տեղ գտած խաղաղասիրական ներդրումները համաշխարհային ճանաչման արժանացնելու համար անհրաժեշտ է սահմանել որոշակի տեսակի մրցանակներ՝ համազոր Նոբելյան մրցանակներին:

Սպանություններից զերծ քաղաքականության հետազոտությանն ու վերլուծությանն ուղղված ինստիտուտներ

Ինչպես մասնավոր ինստիտուտներն են կոչված խորհուրդներ տրամադրելու կառավարությանն ու հասարակությանը բոլոր տեսակի հարցերի շուրջ՝ սկսած միջազգային անվտանգության խնդիրներից մինչև քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին առնչվող խնդիրներ, այնպես էլ սպանություններից զերծ քաղաքականության ինստիտուտները պետք է տրամադրեն տեղեկատվական և վերլուծական տվյալներ՝ աջակցելու համար հասարակության համար կարևոր որոշումների կայացման գործընթացին: Սպանություններից զերծ քաղաքագիտության դերը որոշումների կայացման գործընթացում կարելի է ընդլայնել՝ հասնելով մինչև բռնությունների, տնտեսության, մարդու իրավունքների, շրջակա միջավայրի պաշտպանության և համագործակցության բնագավառ: Այս տիպի ինստիտուտները կարող են աջակցել «սպանություններից զերծ» հոգևոր խորհուրդների, կուսակցությունների, հասարակական անվտանգության ինստիտուտների, խորհրդատվական կենտրոնների և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ջանքերին, ինչպես նաև տրամադրել ինֆորմացիա անհատ քաղաքացիներին իրենց հուզող խնդիրների վերաբերյալ:

Խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող զանգվածային լրատվամիջոցներ

Խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող զանգվածային լրատվամիջոցներն անհրաժեշտ են, որպեսզի տրամադրեն անհատական և կառավարական որոշումների կայացման գործընթացներին նպաստող տեղեկություններ, լուրեր և մեկնաբանություններ: Այսինքն մենք այստեղ չենք խոսում այնպիսի լրատվամիջոցների մասին, որոնք անտեսում են սպանություն գործելու մարդկային կարողությունները, այլ խոսում ենք այնպիսի լրատվամիջոցների մասին, որոնք չեն զարգացնի այն միտքը, թե սպանությունը անխուսափելի երևույթ է, հաճախ գովելի ու նաև հետաքրքիր: Խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող լրատվամիջոցների հեռարձակման համար պատասխանատու խմբագրական որոշումները կարող են արտացոլել սպանություններից զերծ քաղաքական վերլուծության տրամաբանությունը. այն է՝ սկզբում մանրամասն վերլուծելով «բռնություն» երևույթը՝ հասանելի դարձնել մարդկանց գիտակցությանը բռնությունների կանխմանն ուղղված իրատեսական այլընտրանքները, տրամադրել տեղեկատվություն խաղաղ փոխակերպման գործընթացների, այդ ոլորտում արձանագրված հաջողությունների ու ձախողումների մասին և ի վերջո արտահայտել սպանություններից հրաժարվելու մարդկային ձգտումը արվեստի բոլոր բնագավառներում, բնագիտական և հումանիտար առարկաներում, մասնագիտական գործունեություններում և առօրյա աշխատանքում: Այս մոտեցումն իր մեջ պարունակում է նույնպիսի արժեքներ, ինչպիսիք պարունակում են այն լրատվամիջոցները, որոնք չկարողանալով զրոյացնել սպանությունները վերացնելու անհնարինության վերաբերյալ պնդումները, շարունակում են բացահայտ կամ թաքուն մարդկային միտքը կապանքել բռնություններով ու սպանություններով: Անհրաժեշտ է կիրառել լրատվության այլընտրանքային միջոցներ թերթերում և ամսագրերում,

ռադիոհեռուստահաղորդումներում, ֆիլմերում և էլեկտրոնային տեղեկատվության համացանցում: Խաղաղասեր քաղաքագետները կարող են հանդիսանալ մեկնաբանությունների և վերլուծությունների տրամադրման մեկ այլ աղբյուր:

Խաղաղությունը խորհրդանշող հուշարձաններ

Քաղաքակրթության «խաղաղ» ժառանգությունը վերականգնելու և պահպանելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հասարակության ներսում կանգնեցնել անհատներին, խմբերին, կազմակերպություններին, անհայտ հերոսներին ու հերոսուհիներին և մի շարք կարևորագույն իրադարձություններին նվիրված հուշարձաններ: Պետք է հավերժացնել բոլոր նրանց հիշատակը, ովքեր հրաժարվել են արյուն թափել՝ իրենց նվիրաբերելով սպանություններից զերծ գլոբալ քաղաքակրթության ձևավորման դժվարին գործին: Սակայն սա չի նշանակում, որ պետք է հեռացնել պատմությանը հայտնի հաղթած կամ պարտված մարդասպանների արձաններն ու հուշարձանները, քանի որ նրանք, ի վերջո, անցյալի արյունահեղությունների խոսուն վկաներն են:

Խաղաղությունը խորհրդանշող հուշարձաններն անհրաժեշտ են, որպեսզի մեզ հիշեցնեն, որ միշտ էլ եղել են խաղաղասիրական այլընտրանքների կողմնակիցներ, այլընտրանքներ, որոնք ներկայումս կարի անհրաժեշտ են հասարակության գոյության համար: Մարդիկ, որոնց հիշատակը անհրաժեշտ է վառ պահել, եղել են կրոնական գործիչներ, մարտիրոսներ, ովքեր չեն վախեցել ճշմարտությունը շպրտել բռնակալների երեսին, պատերազմի «ընդդիմադիրներ», այլընտրանքային զինծառայողներ, մահապատիժը դատապարտողներ, խաղաղության երգիչներ, բազմահազար կանայք ու տղամարդիկ, ովքեր անհաշտ պայքարի մեջ են մտել անարդարությունների դեմ՝ իրենց ենթարկելով կտտանքների, մահվան ու բանտարկվելու վտանգին:

Սպանություններից զերծ խաղաղության գոտիներ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտները կարող են լինել սպանություններից զերծ խաղաղության գոտիները՝ սկսած գյուղական ու քաղաքային կազմակերպություններից մինչև ազգային ու միջազգային համաձայնագրեր: Որպես «խաղաղ» ապաստարաններ կարող են ծառայել կրոնական սրբավայրերը, խաղաղության գոտիները, որոնք ներառում են պատերազմական գործողությունների բովում հայտնված գյուղեր, զինադադարի մեջ գտնվող տարածքներ, զենքերից ազատ հասարակությունների ձևավորմանն ուղղված շարժումներ, քրեական և ավազակային հարձակումներից ապահովված բնակավայրեր, միջուկային զենքերից ազատ գոտիներ ստեղծելուն ուղղված միջազգային դաշնագրեր: Խաղաղության ինստիտուտների բացահայտումը և վերջիններիս մուտքը նմանատիպ գոտիներ մեծ ներդրում կլինի ինստիտուցիոնալ զարգացման ճանապարհին:

Սպանություններից զերծ տնտեսության ձեռնարկություններ

Երբ ասում են, թե ռազմական ձեռնարկությունները շահութաբեր են ոմանց համար, մինչդեռ շատ թանկ են նստում մյուսների վրա, ապա «խաղաղ» բարեկեցությանն ուղղված ձեռնարկությունները կլինեն շահութաբեր բոլորի համար: Եթե հաշվի առնենք սպանություններից զերծ մշակութային ու նյութական ապրանքների, ծառայությունների, ժամանցային այլընտրանքների նկատմամբ աճող պահանջարկը, ապա «սպանություններից զերծ» ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունները

կլինեն անսահմանափակ: Այս գործընթացը սկսելու եղանակներից մեկը կարող է լինել ռազմական ձեռնարկությունների արտադրանքի գույքագրումը և դրանք խաղաղասիրական տարբերակներով փոխարինելու ուղիների որոնումը, այն է՝ պատերազմական բնույթի խաղալիքները փոխարինել «խաղաղ» բնույթի խաղալիքներով, համակարգչային «կռիվ» խաղերը փոխարինել զվարճալի խաղաղասիրական խաղերով, ռազմական արդյունաբերությունը փոխարինել ապառազնականացման արդյունաբերությամբ, բռնությունը խրախուսող ռազմական միջոցառումները փոխարինել «խաղաղ» բեմականացման դրվագներով, իսկ ռազմական նպատակներով օգտագործվող աշխատուժը ներդնել կյանքի որակի բարելավմանն ուղղված գործողություններում: Որպես օրինակ կարող են ծառայել ռազմական ձեռնարկությունների «խաղաղ» փոխակերպման գործընթացները զինաթափման գործողությունների ժամանակ: Մինչ փոխակերպման գործողությունները սկսելը, անհրաժեշտ է բացահայտել հասարակության խաղաղ փոխակերպման գործընթացներով պայմանավորված մարդկային առաջնային կարիքները և տրամադրել այդ կարիքների բավարարմանը համապատասխան ծառայություններ:

Սպանությունների կանխման համաշխարհային կենտրոններ

Սպանություններից զերծ աշխարհի տեսլականը ենթադրում է այնպիսի ինստիտուտների գործառնումը, որոնք կարող են նպաստել հասարակությունների խաղաղ փոխակերպման գործընթացին ողջ աշխարհում: Նմանատիպ կենտրոնները պետք է խորը արմատներ գցեն աշխարհի հոգևոր և մշակութային ուսմունքներում և ստեղծագործաբար համախմբեն գիտական, նկարչական, ինստիտուցիոնալ ռեսուրսները՝ նպատակաուղղելով դրանք մարդկությանը բոլոր տեսակի արյունահեղություններից և դրանց սարսափելի հետևանքներից ազատագրելու գործին: Եթե վերցնենք ժամանակակից համակարգչային լեզուն, ապա այս կենտրոնները պետք է լինեն խաղաղասիրական «ծրագրի անխափանությունն ապահովող» կատալիզատորները, որոնք կարող են ծառայեցվել մարդկային կարիքների բավարարմանը պետության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների համապատասխան սարքավորումների միջոցով: Արդյունավետորեն գործառնելու համար նմանատիպ կենտրոնները պետք է առավելագույնս անկախ լինեն պետական կառույցներից և շահագրգիռ անհատների ազդեցությունից: Նրանք կարող են ֆինանսավորվել անհատ բարեգործների նվիրատվություններով, անդամավճարներով և այլ միջոցներով:

Սպանությունների կանխման համաշխարհային կենտրոնի նպատակն է բացահայտել և երևան հանել մարդկային ամենակարևոր ստեղծագործական կարողությունները հետևյալ ոլորտներում. սպանությունների կանխումը հոգևոր և փիլիսոփայական ուսմունքներում, կենսաբանությունը, նյարդագիտությունը և սպանությունների կանխումը, գենդերային հարաբերությունները և սպանությունների կանխումը, տնտեսագիտությունը և սպանությունների կանխումը, ԶԼՄ-ները և սպանությունների կանխումը, գիտությունը, տեխնոլոգիան և սպանությունների կանխումը, շրջակա միջավայրը և սպանությունների կանխումը, մասնագիտական զբաղմունքը և սպանությունների կանխումը, կրթությունը և սպանությունների կանխումը, արվեստը և սպանությունների կանխումը, սպորտը և սպանությունների կանխումը, բանակի դերը խաղաղ փոխակերպման գործընթացում, սպանություններից զերծ առաջնորդությունը և սպանություններից զերծ խաղաղ ապագա մարդկության համար:

Պատմական և համատեքստային կարևոր խնդիր է համաշխարհային մշակույթի «խաղաղարար» ռեսուրսների հաշվառումն ու գրանցումը բոլոր երկրներում և

տարածաշրջաններում: Սա պահանջում է պատմական «խաղաղասիրական» ուսմունքների, դրանց ժամանակակից դրսևորումների և ապագա հեռանկարների ուսումնասիրություն: Այսօրինակ ինֆորմացիայի հավաքագրումը գլոբալ մակարդակով կօգնի մարդկությանը կազմել ամբողջական պատկերացում սպանություններից հրաժարվելու մարդկային կարողությունների մասին, ինչպես նաև հնարավորություն կընձեռի չափել հետագա առաջընթացի տեմպերը:

Սպանությունների կանխմանն ուղղված համաշխարհային կենտրոնները պետք է համալրվեն մոնիտորինգային հատուկ սենյակներով, որտեղ հնարավոր կլինի անընդհատ կրկնվող արյունալի իրադարձություններին, սպանության սպառնալիքներին և դրանց հետևանքներին հակադրել մարդկությանը հասանելի խաղաղ փոխակերպման ռեսուրսները: Մշտապես առնչվելով սպանություն ծնող իրադրություններին՝ այս տիպի կենտրոնները, օգտագործելով իրենց ձեռքի տակ առկա հոգևոր, գիտական, նկարչական և ինստիտուցիոնալ ռեսուրսները, կկարողանան աջակցել սպանություններից զերծ քաղաքականության խաղաղ փոխակերպման գործընթացներին, հետազոտական աշխատանքներին և բոլոր նրանց վերապատրաստմանը, ովքեր մտահոգվում են մարդկության գոյության ու բարեկեցության խնդիրներով:

Անհրաժեշտ են սպանություններից զերծ ինստիտուտներ

Քաղաքագիտությունը, որն իրեն նվիրել է սպանություններից զերծ հասարակությունների ձևավորման գործին, համապատասխան ինստիտուտների միջոցով կիրականացնի լուսավորչական և նպատակային գործողություններ՝ չմոռանալով և իրեն: Այդպիսի ինստիտուտներն անհրաժեշտ են սպանությունների կանխման հոգևոր ակունքների ամրապնդման, սպանությունների կանխմանն ուղղված գիտելիքների բացահայտման, ինտեգրման և փոխանակման, պետական քաղաքականության մեջ որոշումների կայացման, սպանություններից զերծ հասարակության անվտանգության, տնտեսական բարեկեցության և արվեստում և գործունեության բոլոր ոլորտներում կյանքի փառաբանման համար:

Փոխակերպման խնդիրները պահանջում են սպանությունների կանխմանն ուղղված միավորված ստեղծագործական կենտրոններ՝ ուղղված համընդհանուրի կարիքների բացահայտմանն ու լուծմանը ողջ աշխարհում: Սպանություններից զերծ խաղաղ ինստիտուտների զորությունը սպանությունը դատապարտող անհատների հավաքական միասնության մեջ է: Յուրաքանչյուր քաղաքագետ և յուրաքանչյուր անհատ յուրովի կարող է դառնալ համաշխարհային «խաղաղության» կենտրոնը՝ բերելով իր աջակցությունը սպանություններից զերծ խաղաղ աշխարհ կառուցելու գործին:

Գլուխ 6.
Սպանություններից զերծ համաշխարհային քաղաքագիտություն

Մենք թևակոխել ենք նոր դարաշրջան: Գոյություն ունեցող մեթոդներն ու լուծումները այլևս բավարար չեն: Մենք պետք է ձևավորենք նոր մտքեր, նոր գաղափարներ, նոր պատկերացումներ...: Մենք պետք է ազատվենք անցյալի կապանքներից:

Գեներալ Դուգլաս ՄաքԱրթուր

Մեզանից մեկը պետք է ունենա առողջ դատողություն և ռազմավարական ձիրք, որպեսզի կտրի մեզ ժառանգություն մնացած բռնության կործանարար շղթաները:

Մարտին Լյութեր Քինգ

Հիրավի ողջ պատմական փորձն է փաստում այն ճշմարտությունը, որ մարդը չի կարող հասնել հնարավորին, քանի դեռ նորից ու նորից չի ձգտում հասնել անհնարինին:

Մաքս Վեբեր

Մենք ամեն օր տեսնում ենք, թե ինչպես այն, ինչը անհնար էր թվում երեկ, դառնում է հնարավոր այսօր:

Մոհանդաս Գանդի

Սպանություններից ազատագրմանն ընդառաջ

Եկել է ժամանակը դիտարկելու մարդկանց սպանությունը որպես մի խնդիր, որը պահանջում է լուծում, այլ ոչ թե համակերպում՝ գնահատելով այն որպես անխուսափելի ու անհաղթահարելի մի իրողություն: Մարդկանց դիտավորյալ սպանությունը՝ առանձին-առանձին կամ զանգվածային, ստացել է պաթոլոգիկ ինքնաոչնչացման ձև: Սպանությունը, համարվելով ազատագրելու, պաշտպանելու և հարստացնելու միջոց, դարձել է անապահովության, աղքատության և մարդկության ու երկրագնդի գոյությանը սպառնացող «գործիք»: Մարդկությունը տառապում է այն երևույթից, ինչը Քրեյգ Քոմսթոկը անվանեց «պաշտպանության պաթոլոգիա», երբ պաշտպանության նպատակով գործադրվող միջոցները դառնում են ինքնաոչնչացման աղբյուրներ (Քոմսթոկ 1971թ.): Տանը ինքնապաշտպանական նպատակներով պահվող հրազենը սպանում է ընտանիքի անդամներին, թիկնապահները սպանում են պետության առաջնորդներին՝ վարձված նրանց իսկ պաշտպանության համար, բանակները բռնություն են գործադրում և սովի են մատնում սեփական ժողովրդին, արտադրվող միջուկային զենքերը սպառնում են ոչնչացնել իրենց իսկ ստեղծողներին և

հովանավորներին: Հետևաբար անհրաժեշտ է մշակել բռնություններից զերծ Անկախության Հռչակագիր մեզ և մեր հասարակության համար:

Մարդկային ցանկությունները բռնի ուղիներով բավարարելու տենդենցը նոր դարաշրջանում բերեց անհամար արյունահեղությունների, նյութական զրկանքների և հոգեբանական բարդույթների՝ թողնելով իր ազդեցությունը հաջորդ սերունդների վրա: Վերջին երկու հարյուրամյակներում մարդկության հույսերը արտացոլվել են ֆրանսիական հեղափոխության նշանաբաններում՝ «ազատություն, հավասարություն, եղբայրություն»: «Սպանությունը հանուն ազատության» ամերիկյան հեղափոխության ժառանգությունն է, «սպանությունը հանուն հավասարության»՝ ռուսական և չինական հեղափոխությունների հետևանքն է, իսկ «սպանությունը հանուն խաղաղության» երկու հարյուրամյակներ տևած պատերազմների, հեղափոխությունների և հակահեղափոխությունների արդյունքն է: Դասերը, որոնք պետք է քաղել անցյալի իրադարձություններից, վերաբերում են նրան, որ ճշմարիտ ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը չեն կարող ձեռք բերվել առանց սպանության բոլոր դրսևորումները հիմնովին արմատախիլ անելու: Հանուն բարու և չարի իրենց կյանքը զոհաբերած միլիոնավոր նահատակների արյան կանչն է մեզ դրդում յուրացնել այդ դասերը: Սա նշանակում է կասկածի տակ դնել քաղաքագիտության մեջ առկա թեզը, որ սպանությունն անխուսափելի երևույթ է և հանդիսանում է նպաստավոր գործոն մարդկության բարեկեցության համար: Սա նաև նշանակում է կասկածի տակ դնել և գլխիվայր շրջել անցյալի իմաստնության ու ներկայիս քաղաքական հավատքի ամենահզոր դոգմաներից մեկը: Սրա անալոգը կարելի է գտնել բժշկության պատմության մեջ, երբ հիմնովին չեղարկվեց «թարախի բարերար ազդեցության» մասին տեսությունը: Մոտ տասնյոթ դար շարունակ բժշկության մեջ գերիշխում էր մեծ հեղինակություն վայելող հույն բժիշկ Գալենի (մ.թ. 130-200թ.) տեսությունը այն մասին, որ վերքի շուրջը գոյացող թարախը առողջությունը վերականգնելու բնական ուղին է: Այս համոզմունքը չեղարկվեց 1867թ. Լիսթերի կողմից, երբ «Նշտար» ամսագրում տպագրված «Վիրահատություն վարակազերծման սկզբունքով» գիտական հոդվածը, թեկուզև որոշակի քաշքշուկներով, բերեց վարակազերծիչ միջոցների ստեղծմանն ու կիրառմանը (Ակերկնեչթ՝ 1982:77; Գարրիսոն՝ 1929:116, 589-90): Այն համոզմունքը, որ սպանությունը բնական երևույթ է և բարերար ազդեցություն է թողնում քաղաքականության վրա, հանդիսանում է «թարախի բարերար ազդեցության» տեսությունը քաղաքագիտության մեջ:

Եթե քաղաքական իշխանության բազմակողմանի ուսումնասիրությանն (ընտանեկան առօրեայից մինչև համաշխարհային պատերազմներ) իրենց կյանքը նվիրաբերած քաղաքագետները, գիտնականները չեն ձեռնարկում լուրջ քայլեր փոխելու համար սպանության՝ որպես անխուսափելի և ճշմարտացի երևույթի մասին տեսությունը, ապա ինչպես կարող ենք ակնկալել նման քայլերի ձեռնարկումը քաղաքական առաջնորդների և հասարակ քաղաքացիների կողմից:

Բայց և այնպես, մարդկային պատմության ողջ ընթացքում և հատկապես վերջերս եղել են ու կան առաջնորդներ և քաղաքացիներ, ովքեր առանց քաղաքագիտության աջակցության, բացահայտ փորձում են խաղաղասիրական միջոցներով հասնել ազատության, հավասարության ու խաղաղության հաստատմանը: Ասվածի վառ օրինակ է 1895թ. «զենքերի այրումը» Ռուսաստանում զինծառայությունից հրաժարված յոթ հազար դուխոբոր խաղաղարաների կողմից (Տարասով՝ 1995: 8-10):

Տեսանելի անջրպետ կա սպանությունը «խրախուսող» քաղաքագիտության և սպանությունը «դատապարտող» փորձառու քաղաքագետների միջև: Քսաներորդ դարում Տոլստոյի, Գանդիի, Աբդուլ Ղաֆֆար Խանի, Մարտին Լյութեր Քինգի և Պետրա Կելլիի ուսմունքները խիզախորեն առաջ տարան այնպիսի առաջնորդներ, ինչպիսիք էին

Դալայ Լաման, Աունգ Սան Սու Ցզին և Դեսմոնդ Թութուն, ովքեր, հանդիսանալով ապագայի՝ սպանություններից զերծ ամենակարող քաղաքականության մարգարեները, վայելում էին հազարավոր անհայտ հերոսների ու հերոսուհիների աջակցությունն ու քաջալերանքը:

Արդյո՞ք պետք է, որ քաղաքագետները՝ որպես ավտորիտար վարչակարգերի ձրիակերներ, համառորեն կառչած սպանության ստատուս քվոյից այնքան ժամանակ, քանի դեռ ժողովրդական զայրույթը նրանց չի սրբել իրենց ճանապարհից, ուշացումով գնան զոհաբերությունների գնով հաջողություններ ձեռք բերած անհատների և ժողովրդական շարժումների հետքերով: Մի՞թե դրանից հետո միայն քաղաքագետները պետք է միանան սպանություններից զերծ ժողովրդավարական տոնակատարություններին: Կամ արդյո՞ք քաղաքագիտությունը, հետևելով բժշկագիտության օրինակին, պետք է իրեն նվիրաբերի սպանության պաթոլոգիաների ախտորոշմանն ու բուժման նոր մեթոդների ու դեղորայքների հայտնաբերմանը՝ հասանելի դարձնելով դրանք բոլոր նրանց համար, ովքեր փորձում են վերացնել սպանությունը երկրի երեսից:

Սպանություններից հրաժարվելու կարողությունների մասին թեզ

Այստեղ ներկայացված թեզը վերաբերում է նրան, որ սպանություններից զերծ համաշխարհային հասարակություն հնարավոր է ստեղծել և որ անհրաժեշտ փոփոխությունները քաղաքագիտության ակադեմիական առարկայի և նրա սոցիալական դերի մեջ կարող են օգնել նման հասարակությունների ձևավորմանը: Սպանություններից զերծ հասարակությունների ստեղծման հիմքում ընկած են առնվազն յոթ պատճառներ.

- մարդկանց մեծ մասը չի սպանում
- սպանություններից հրաժարվելու ամենազոր ներուժն ապրում է մարդկության հոգևոր ժառանգության մեջ
- գիտությունը կանխատեսում և ցուցադրում է սպանություններից հրաժարվելու մարդկային կարողությունը
- նույնիսկ սպանությունները խրախուսող պետությունները մշակում են դրանց կանխմանն ուղղված պետական քաղաքականություններ (ինչպես օրինակ՝ մահապատժի վերացումը և այլընտրանքային զինծառայության իրավունքի ճանաչումը)
- խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող տարբեր սոցիալական ինստիտուտներն արդեն իսկ կազմում են սպանություններից զերծ հասարակությունների գործառնական համարժեքները
- քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումներին ուղղված ժողովրդական խաղաղ շարժումները հետզհետե դառնում են արյունալի հեղափոխությունների այլընտրանքային տարբերակները
- խաղաղասիրական ոգեշնչումների ու փորձառությունների արմատներ գտնվում են համաշխարհային պատմության էջերում
- վերջիվերջո խաղաղ փոխակերպման գործընթացի հաջողությունը պայմանավորված է համարձակ քայլերի դիմած խաղաղարար անհատների, հայտնի ու անհայտ տղամարդկանց ու կանանց օրինակներով, որոնք ևս մեկ անգամ հաստատեցին, որ հնարավոր է ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:

Քաղաքագիտության բացառիկ դերը

Հայտնի է, որ մարդիկ, պայմանավորված իրենց կենսաբանական ու վարքագծային առանձնահատկություններով, կարող են սպանել կամ հրաժարվել սպանելուց: Հայտնի է

նաև, որ մարդկանց մեծ մասը երբեք չի սպանում, և որ արդեն իսկ գոյություն ունեն խաղաղասիրական սկզբունքներով առաջնորդվող սոցիալական ինստիտուտներ, որոնք կարող են հանդիսանալ սպանություններից զերծ հասարակությունների նախատիպային բաղադրիչները: Ավելին գիտության ներկա ու ապագա ձեռքբերումները խոստանում են տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ՝ ուղղված սպանություն ծնող պատճառների վերացմանը, խաղաղասիրության տանող հիմքերի ամրապնդմանը և սպանություններից զերծ հասարակությունների ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Հաշվի առնելով այս դիտարկումները՝ սպանության ընդունումը որպես անխուսափելի երևույթ, որն ընկած է քաղաքագիտության ակադեմիական առարկայի և նրա սոցիալական դերի հիմքում, հանդիսանում է ամենաքիչ խնդրահարույց հարցը: Միանգամայն տեղին կլինի կասկածի տակ դնել սպանության և նրա դերի մասին առկա բոլոր այն ենթադրությունները, որոնք ընկած են քաղաքագիտության և այլ առարկաների հիմքում: Քաղաքագիտությունը այլ ուսումնական առարկաների ու մասնագիտությունների հետ համատեղ պետք է կյանքի կոչի անցյալի խաղաղասիրական օրինակները, սահմանի խաղաղասիրական կարողությունների շրջանակները ներկայիս համար, նախագծի խաղաղասիրական հնարավոր կարողությունների սահմանները ապագայի համար և համագործակցային եղանակներով կիրառի ձեռք բերված գիտելիքները հասարակության խաղաղ փոխակերպմանն ուղղված հետազոտական, կրթական գործընթացներում և հասարակական ծառայության ոլորտներում:

Հիմնական տարրերը, որոնք պետք է իրար կապել, սպանություններից զերծ խաղաղ փոխակերպման գործընթացը կազմակերպելու համար արդեն իսկ հստակեցված են. Հոգի(Հ) – սպանությունից հրաժարվելու հաստատակամություն՝ ներշնչված բոլոր կրոնական և փիլիսոփայական ուղղությունների կողմից: Գիտություն(Գ) - արվեստներից, գիտություններից և մասնագիտական զբաղմունքներից քաղված գիտելիքներ՝ ուղղված սպանություն ծնող պատճառների և խաղաղ փոխակերպման գործընթացների բացահայտմանը: Հմտություններ(Հ) – հոգևորը և գիտականը գործողության մեջ ներմուծելու մեթոդներ: Երգարվեստ(Ե) - այն ոգեշնչումը, որն երգն ու արվեստի մյուս ճյուղերը հաղորդում են սպանություններից զերծ խաղաղ պայքարին, դարձնելով սպանություններից զերծ քաղաքագիտության տեսությունն ու պրակտիկան ոչ թե որպես սարսափելի ու մահացու գործընթաց, այլ կյանքը փառաբանող հզոր միջոց:

Որպեսզի միավորենք, հզորացնենք և ընդլայնենք այս չորս տարրերի արդյունավետ գործառնումը, մեզ անհրաժեշտ է ժողովրդավարական Առաջնորդություն(Ա), քաղաքացիական Փորձառնություն(Փ), կատարողական Ինստիտուտներ(Ի) և օժանդակիչ Ռեսուրսներ(Ռ):

Բոլոր այս տարրերի համակցությունը ունի հետևյալ տեսքը.

ՀԳՀԵ x ԱՓԻՌ = սպանությունների կանխմանն ուղղված համաշխարհային խաղաղ փոխակերպում

Հոգին, գիտությունը, հմտությունները և երգարվեստը ստեղծագործաբար փոխկապակցելով կարիքների բավարարմանն ուղղված ժողովրդավարական առաջնորդության, քաղաքացիների հզորացման գործընթացներով և ընդլայնելով ինստիտուցիոնալ արտահայտությունները և ռեսուրսային ներդրումները՝ հնարավոր կլինի նպաստել սպանություններից զերծ աշխարհի ստեղծման գործընթացին:

Տեսություն և հետազոտություն

Մարդկանց սպանությունը կանխելու համար քաղաքագիտությունը պետք է կատարի քաղաքական վերլուծության քառակողմ տրամաբանության ուսումնասիրություն, որը կարող է տրամադրել գիտելիք՝ կանխելու համար սպանություն ծնող ուժերի միավորումը՝ ցեղասպանությունից և միջուկային զենքի կիրառմամբ ամբողջական քաղաքների ոչնչացումից մինչև մարդկության լիակատար անհետացում երկրի երեսից: Սպանությունը, որը մակերեսային դիրք է գրավում բռնությունը խրախուսող քաղաքագիտության մեջ, պետք է հայտնվի վերջինիս ուշադրության կենտրոնում և ենթարկվի մանրամասն վերլուծության:

Սա նշանակում է կենտրոնացնել բոլոր ջանքերը հասկանալու համար սպանություն գործելու, սպանությունից հրաժարվելու, բռնությունից խաղաղության անցնելու պատճառները և հակառակը, ինչպես նաև սպանություններից զերծ հասարակությունների բնութագրիչները: Նմանատիպ գիտելիքն անհրաժեշտ է աջակցելու համար խաղաղասիրական այլընտրանքների և փոխակերպման գործողությունների բացահայտմանը սպանության կոնի գոտիների ներսում և դրանց միջև՝ կենսաբանական, կառուցվածքային, մշակութային, սպանության և սոցիալականացման գոտիներ:

Ուսուցում և վերապատրաստում

Խաղաղ փոխակերպման գործընթացները կազմակերպելու և դրանց համար անհրաժեշտ գիտելիքներ գտնելու նախադրյալներն ընկած են քաղաքագետների ուսուցման ու վերապատրաստման հիմքում, ուսումնական ծրագրերի կառուցվածքում, քաղաքագիտության ֆակուլտետների կազմակերպման գործողություններում, մյուս կրթական առարկաների հետ փոխահարաբերություններում և հասարակության մեջ քաղաքագիտության հետազոտական, կրթական-գործառնական դերերում:

Քաղաքագիտության ուսուցման ու վերապատրաստման հիմնական նպատակն է հասարակության խնդիրների խաղաղ լուծմանն ուղղված ստեղծագործական մոտեցումների և անհրաժեշտ կարողությունների ձևավորումը: Այս հարցում որպես ուղեցույց կարող են ծառայել ստեղծագործող անհատների և ինստիտուտների կուտակած ժառանգության ուսումնասիրությունը, անհատական հետաքրքրությունների ու հմտությունների բացահայտումը, միասնական գիտելիքների և հմտությունների ձևավորման համար անհրաժեշտ միջոցների որոնումը, խնդիրների լուծման ծրագրերին մասնակցությունն ըստ ընտրության, կառուցողական զուգահեռ ծրագրերի տրամադրումը համայնքին և սպանություններից զերծ քաղաքագիտության մասնագիտական ուղղվածությունների խրախուսումն ու ընդլայնումը:

Մոտիկից ծանոթացնելով մարդկային պատմության արյունալի էջերին և ստեղծագործական խաղաղ մոտեցումների ոգեշնչող օրինակներին՝ ուսումնական ծրագիրը պետք է ներկայացնի սպանություններից զերծ քաղաքական վերլուծության տրամաբանությունն ու հասարակության խնդիրների լուծման արդյունավետ գործընթացների ու սկզբունքների բացահայտմանն ուղղված մոտեցումները: Ուսանողները պետք է ուսումնասիրեն սպանություն գործելու և դրանից հրաժարվելու պատճառները, խաղաղ փոխակերպման շարժառիթները և սպանություններից զերծ հասարակությունների բնութագրիչների մասին առկա վարկածները՝ մասնավորապես քաղաքական ինստիտուտների և քաղաքական գործընթացների վերաբերյալ պատմական զարգացումները լոկալ և գլոբալ համատեքստում: Նրանց առջև դրվող խնդիրները հետևյալն են՝ մարդասպանություն, դեմոցիդ, ցեղասպանություն,

զինաթափություն, տնտեսական բռնություններ, մարդու իրավունքների ոտնահարում, շրջակա միջավայրի ոչնչացում և կործանարար տարածայնություններն ի հակադրություն բազմաբնույթ համագործակցության: Խնդրի լուծման առաջարկվող մեթոդներն են՝ ուսումնասիրությունը, ուսուցումը, ծառայողական առաջնորդությունը և քննադատական վերլուծությունը: Վերը թվարկվածների հիման վրա պետք է մշակվեն և ներկայացվեն անհատական կամ խմբակային ծրագրեր՝ ուղղված խնդիրների լուծմանն ու համապատասխան հմտությունների ձևավորմանը, հարկ է նշել, որ այս կոնտեքստում Շանթի Սենայի (Խաղաղության կորպուս) համալսարանը հանդիսանում է հասարակությանը ծառայող առաջնորդների վերապատրաստման լավագույն օրինակը:

Շրջանավարտներն աշխատում են որպես հետազոտողներ, դասավանդողներ, առաջնորդներ և հաղորդակցման մասնագետներ պետական և մասնավոր հաստատություններում՝ տրամադրելով հասարակության կարիքների բավարարմանն ուղղված համապատասխան ստեղծագործական մոտեցումներ:

Ասպիրանտուրայում սովորողներն անցնում են մասնագիտական վերապատրաստում քաղաքականության բնագավառում, կառավարական օղակներում և քաղաքացիական հասարակության մեջ աշխատելու և բռնությունների կանխման ու սոցիալական խաղաղ փոխակերպման գործընթացները կազմակերպելու համար: Ձևավորվում են աշխատանքային խմբեր խորացնելու համար հետազոտության, կրթության, բռնությունների կանխմանն ուղղված գործողությունների, տնտեսության, մարդու իրավունքների, շրջակա միջավայրի, համագործակցության և այլ խնդիրների լուծմանն ուղղված առաջադեմ մեթոդները: Մագիստրոսներն ու դոկտորները ֆակուլտետի աշխատակիցների հետ համատեղ հանդես են գալիս որպես խորհրդատուներ, հրահանգիչներ և ուսանողներ բուհական ծրագրերում:

Գիտության դոկտորների վերապատրաստումը ենթադրում է այնպիսի արհեստավարժ մասնագետների պատրաստում, ովքեր գործին ստեղծագործաբար մոտենալով, կնպաստեն մյուսների մոտ ստեղծագործական ձիրքերի բացահայտմանն ու զարգացմանը: Անշուշտ բոլորին չէ, որ հաջողվում է յուրացնել անհրաժեշտ ամեն մի հմտություն, բայց բոլորը կարող են միմյանց հետ կիսել պահանջվող լուծումների վերաբերյալ պատկերացումները, որոնել ստեղծագործական մոտեցումներ իրենց կարողությունների առավելագույն չափով և սովորել, թե ինչպես աջակցել խնդիրների լուծմանն ուղղված այլոց գործողություններին կրթական համակարգի ներսում և դրանից դուրս:

Ուսուցումը դոկտորանտուրայում պահանջում է սպանություններից զերծ քաղաքագիտության հիմունքների մանրամասն ուսումնասիրություն՝ հասարակության հիմնական կարիքների ըմբռնում տեղական և միջազգային մակարդակով, խաղաղարար գիտական ղեկավարների պատրաստում, հետազոտության որակական ու քանակական մեթոդների (ներառյալ լեզուները) վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում, խնդիրների լուծման համար հասանելի մեթոդների կիրառման հմտություն և առկա գիտելիքների կիրառում գործնականում՝ ուղղված ուսուցման և վերապատրաստման, ինստիտուցիոնալ զարգացման և խնդիրների լուծման գործընթացների բարելավմանը:

Խաղաղարար գիտական ղեկավարներից և առաջնորդներից պահանջվում է սոցիալական ամենատարբեր դերեր ստանձնելու ճկունություն: Շատ կարևոր է ուսումնասիրել սպանությունը խրախուսող կամ դատապարտող վարքագծերի ու պատկերացումների ծագման աղբյուրները: Անհրաժեշտ են դասավանդման մեթոդներ՝ արթնացնելու համար ստեղծագործական պոտենցիալը ուսանողների մոտ և խթանելու ստեղծագործական կոլեգիալ աշխատանքը ֆակուլտետում: Անհրաժեշտ է համագործակցել մյուս ֆակուլտետների հետ, տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն պետության և քաղաքացիական հասարակության ներսում տեղի

ունեցող խաղաղ փոխակերպման գործընթացներին աջակցելու համար, ինչպես և ապահովել համապատասխան պատրաստվածություն՝ խաղաղարար առաջնորդի դերում ուղղակիորեն հանդես գալու համար (Գրինլիֆ՝ 1977թ.):

Իր սոցիալ-անձնական հարաբերություններում սպանություններից զերծ քաղաքագիտության ֆակուլտետը բազմաթիվ ձախողումների ու ձեռքբերումների արդյունքում պետք է գտնի սպանություններից զերծ խաղաղ հասարակության ցանկալի բնութագրիչները: Սա նշանակում է ձևավորել հանդուրժողականության քաղաքականություն տարբեր կրոնական համոզմունքների նկատմամբ և տածել մարդասիրական հարգանք կյանքի հանդեպ, ստանձնել պատասխանատվություն ընդհանուրի բարեկեցության համար, ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները՝ ապահովելու համար ընդհանուրի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, հարգել յուրաքանչյուրի արժանապատվությունն ու անհատականությունը, բաշխել ղեկավարական պարտականությունները բոլորի միջև, պատրաստ լինել հրավիրելու օտար խորհրդատուների այնպիսի կոնֆլիկտների ժամանակ, որոնք թվում է, թե չունեն խաղաղ ելքով լուծում, պատրաստակամորեն ընդունել այլ մասնագետների և ուսուցանողների աջակցությունը, խրախուսել գիտական խնդիրների լուծմանն ուղղված նորարարական մոտեցումները և հասկանալ, որ սպանություններից զերծ գլոբալ հասարակության արմատները թաղված են մեզանից յուրաքանչյուրի և ողջ հասարակության մեջ:

Պետք է պահպանել երկարատև, երկկողմանի փոխհարաբերություններ այն շրջանավարտների հետ, ովքեր աշխատանքի են անցնում հետազոտության, կրթության, առաջնորդության, հաղորդակցման և հասարակական կյանքի այլ ոլորտներում, քանի որ նրանց փորձառնությունը կարող է մեծապես օգնել հասարակության կարիքների բացահայտմանը, բարելավել կրթության մակարդակը և գտնել խաղաղ փոխակերպման առավել արդյունավետ միջոցներ:

Չնայած հայացքների անհամատեղելիությանը մյուս հարցերում՝ բոլոր նրանք, ովքեր իրենց նվիրել են սպանություններից զերծ քաղաքագիտության ստեղծման գործին, պետք է միավորվեն հանուն ընդհանուր գործի հաջողության:

Խնդիրների լուծում

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը ենթադրում է առարկայի տեսության ու գործնականի համակցությունը խնդիրների լուծման բացահայտ գործողություններում: Սոցիալական տարբեր կոնտեքստներում խնդիրները լինում են տարբեր: Նրանցից հինգը ունեն միջազգային կարևորություն՝ բռնություն և զինաթափություն, տնտեսական հոլոքոստ, մարդու իրավունքների ոտնահարում, շրջակա միջավայրի աղտոտում և կարևորագույն խնդիրների անժամանակ լուծում: Բոլորը կապ ունեն սպանելու պատրաստակամության հետ և ուղղակիորեն կամ անուղղակիորեն խորացնում են այն: Մինչդեռ խաղաղասիրական տեսանկյունից դա կինչի այս կերպ. «չկա արդարություն առանց խաղաղասիրության», քանի որ սպանությունը կամ դրա գործադրման սպառնալիքը նպաստում են անարդարությունների առաջացմանն ու հարատևմանը: Օրինակ բերելով կանանց անհավասար իրավունքները՝ Պետրա Կելլին նկատում է. «իշխանության, ռեսուրսների և պարտականությունների անհավասար բաշխումը տղամարդկանց և կանանց միջև ամրագրված է հնագույն ավանդույթներով, վավերացված է օրենքով և, անհրաժեշտության դեպքում, պարտադրված է տղամարդկային ուժով» (Կելլի՝ 1994:15):

Սպանություններից զերծ քաղաքագիտության ակտիվ ներգրավվածությունը խնդիրների լուծման գործընթացին չի նշանակում, որ վերջինս ամենակարող է կամ ունի

ցանկացած խնդրի լուծման բանալին, փոխարենը նշանակում է, որ սպանություններից զերծ խաղաղ քաղաքական վերլուծություններից և խաղաղասիրական գործողությունների պրակտիկայից ու սկզբունքներից վերցված գիտելիքները կարող են բարելավել համընդհանուրի կարիքների բավարարմանն ուղղված որոշումների կայացման հասարակական գործընթացները: Այս իմաստով սպանություններից զերծ քաղաքագիտությունը, ի դեմս բռնություններով ամրագրված ժողովրդավարական մշակույթի, խոստանում է աջակցել խաղաղասիրական գործընթացների ընդլայնմանը (Գոլդման՝ 1990թ.):

Ինստիտուտներ

Գիտելիքների որոնման, ուսուցման-վերապատրաստման և խնդիրների լուծման նոր գործընթացները՝ առաջադրված սպանություններից զերծ քաղաքագիտության կողմից, կարող են կազմակերպվել ինստիտուտների կողմից: Դրանք կարող են լինել քաղաքագիտության վերակազմավորված ֆակուլտետները, նույնիսկ ամբողջական համալսարանները, զինվորական պատրաստվածություն չտրամադրող Շանթի Սենայի ուսումնական կենտրոնները, սպանություններից զերծ պետական քաղաքականության ինստիտուտները, հասարակական անվտանգությունն ապահովող խաղաղարար ուժերը, սպանություններից զերծ քաղաքական կուսակցությունները և քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր հատվածում առկա խաղաղ ինստիտուցիոնալ նորարարությունները: Նման ինստիտուտների ստեղծումը, ինչպես և գործող ինստիտուտների վերափոխումը՝ ուղղված սպանության վերացմանը երկրի երեսից, ստեղծագործական նոր հնարավորություններ են ստեղծում բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրում են սպանություններից զերծ քաղաքագիտությունը և աշխատում են այդ ոլորտում:

Խոչընդոտներ և ոգեշնչման աղբյուրներ

Քսանմեկերորդ դարի սկզբին քաղաքագիտությունն իր առջև խնդիր է դրել աջակցել սպանություններից զերծ հասարակության ձևավորման գործին: Այդ խնդրի լուծումը ոչ միայն ցանկալի է, այլև՝ պարտադիր: Քաղաքագետները չեն կարող խուսափել այս պատասխանատվությունից՝ «իրականում» պահպանելով գիտական չեզոքություն, քանի որ դա կնշանակի ընդունել և խրախուսել սպանությունը: Այդպիսի չեզոքությունը երբեք էլ տեղին չի եղել: Եթե տեղին լիներ, ապա քաղաքագետներին երբեք չէր անհանգստացնի այն հարցը, թե հասարակությունը կամ աշխարհը, որտեղ իրենք ապրում են, արդյոք ազատ է թե ոչ, արդար է թե անարդար, աղքատ է թե հարուստ, պատերազմի մեջ է թե խաղաղության, հաղթում է թե պարտվում: Նրանք հաճույքով կներշնչեին իրենց ուսանողներին, որ քաղաքագետները, չունենալով նախապատվություններ, հետազոտական, կրթական և հասարակական բնույթի ծրագրեր կազմելիս չեն առանձնացնի որոշակի արժեքներ:

Այդ պարագայում նրանք ստիպված չէին լինի ընտրություն կատարել Հիտլերի Հոլոքոստի և Գանդիի Սատյագրահայի միջև:

Քաղաքագետները չեն կարող խուսափել նաև սպանություններից զերծ քաղաքագիտություն ստեղծելու խնդրից այն պարզ պատճառաբանությամբ, որ մյուս արժեքները՝ ազատությունը, հավասարությունը և անվտանգությունը, առավել կարևոր են, քան սպանությունների կանխումը: Սպանությունների կանխումը եթե ոչ առավել, ապա հավասարապես կարևոր խնդիր է, քանի որ մարդկությունը հասել է մի կետի, երբ այս բոլոր արժեքները կոչնչանան, եթե սպանություններից հրաժարվելու էթիկան

չներմուծվի քաղաքագիտության ոլորտ և հասարակական կյանք: Սա այն պահն է, երբ նյութապաշտությունն ու բարոյականությունն եկել են նույն եզրահանգման:

Եթե անցյալի պատմությունն ու մշակույթը մեզ սովորեցրել են, որ ազատությունը, հավասարությունը և անվտանգությունը ձեռք են բերվում արյան գնով, ապա ներկան մեզ ցույց է տալիս, որ քանի դեռ մենք շարունակում ենք սպանել, դրանով ոչ միայն վտանգում ենք մեր ազատությունն ու հավասարությունը, այլև հարցականի տակ ենք դնում մեր իսկ գոյությունը:

Մենք հասել ենք մի կետի, երբ քաղաքագիտության տեսությունն ու պրակտիկան պետք է հավասարաչափ զինվեն բնության ու հասարակության կենսատու ուժերով: Սա ոչ միայն բարձր բարոյախոսություն է և իմաստնություն, այլև դարիս հրամայականն է՝ ուղղված «լավ» քաղաքագիտության ստեղծմանը:

Անցումային փուլում, անտարակույս, կլինի և դիմադրություն այն ուժերի կողմից, ովքեր գոյատևում ու բարգավաճում են բռնությունների ու սպանությունների շնորհիվ: Դրանց մեջ են պետության ուժային կառույցները, նրանց հակառակորդները և բոլոր նրանք, ովքեր ստանում են քաղաքական, տնտեսական և հոգեբանական օգուտ սպանության մշակույթից: Սրանց թվին են պատկանում պատերազմի և հեղափոխության որոշ վետերանները, նրանց հետնորդները և բոլոր նրանք, ովքեր սպանությունը արդարացնող հասարակական տոնակատարությունների միջոցով ճանաչում ու հարգանք են ձեռք բերում:

Հարգանքի տուրք մատուցելով նահատակների շիրիմներին՝ մենք մոռանում ենք հիշել սպանված թշնամիներին, որոնք սխալ քաղաքականության զոհերն են միայն, և հեռանում ենք նրանց շիրիմներից նույնատիպ զոհաբերության գնալու հաստատակամությամբ, այլ ոչ թե այն խորին վճռականությամբ, որ պետք է անել ամեն ինչ կանխելու համար նույնի կրկնությունը:

Սպանություններից զերծ քաղաքագիտության ստեղծմանը նպաստող ոգեշնչման աղբյուրներ են հանդիսանում պատերազմի մեծահամբավ հերոսների վստահություն ներշնչող կոչերը: Ուշագրավ է գեներալ Դուգլաս ՄաքԱրթուրի 1955թ. ուղերձը ամերիկյան Լեգեոնին, որտեղ նա կոչ էր անում վերացնել պատերազմը՝ դիտարկելով այն որպես «գիտական ռեալիզմի» հրամայական.

- Գիտեմ, որ բոլորդ անմիջապես կհակառակվեք ինձ՝ ասելով, որ չնայած պատերազմների վերացումը եղել է մարդկության երազանքը բոլոր ժամանակներում, բայց և այնպես այս ուղղությամբ ձեռնարկված յուրաքանչյուր փորձ՝ համարվելով անհնարին ու երևակայական, ավարտին չի հասցվել: Ցինիկները, հոռետեսները, արկածախնդիրներ ու պարծենկոտները ժխտում էին այս երազանքի իրագործման հնարավորությունը մինչև վերջին տասնամյակը, մինչև այն պահը, երբ գիտությունը իրականություն դարձրեց զանգվածային ոչնչացումը.... Մինչ այդ բերված փաստարկներն, ունենալով հոգևոր և բարոյական հիմքեր, համարվում էին անարդյունավետ: Մինչդեռ ներկայումս միջուկային զենքի և մասսայական ոչնչացման այլ միջոցների հզոր առաջընթացն այս խնդիրը հոգևոր և բարոյական հարթությունից փոխադրեց գիտական ռեալիզմի ոլորտ: Հիմա այն այլևս էթիկական խնդիր չէ, որի շուրջ պետք է խորհրդածեն միայն փիլիսոփաներն ու հոգևոր գործիչները, դա կյանքի ու մահվան խնդիր է երկրագնդի ողջ բնակչության համար: Մեր առաջնորդները դանդաղում են...: Նրանք ոչ մի կերպ չեն ուզում ընդունել այն պարզ ճշմարտությունը, որ քաղաքակրթության հետագա առաջխաղացումը չի կարող տեղի ունենալ, քանի դեռ պատերազմը չի վերացվել...: Կգա արդյո՞ք ժամանակը, երբ իշխանության գլուխ կանգնած մի հայտնի գործիչ կունենա բավականաչափ երևակայություն

իրականություն դարձնելու համընդհանուր այս ցանկությունը, որը գնալով դառնում է համընդհանուր պահանջ:
Մենք թևակոխել ենք նոր դարաշրջան, երբ հին մեթոդներն ու լուծումները այլևս պիտանի չեն: Մենք պետք է ձևավորենք նոր մտքեր, գաղափարներ ու պատկերացումներ...: Մենք պետք է ազատվենք անցյալի կապանքներից (Քազնս՝ 1987: 67-9):

Ֆրանսիական հեղափոխության վերափոխված կարգախոսները կարելի է լսել Միացյալ Նահանգների նախագահ և Երկրորդ համաշխարհային պատերազմի գեներալ Դուայթ էյզենհաուերի ելույթներում, որտեղ նա խոսում էր այն վնասակար ներգործությունների մասին, որ թողնում էր ռազմականացման արյունալի գործընթացը ազատության, հավասարության ու եղբայրության վրա:

Ազատության վերաբերյալ. «Մեր պետության ներսում մենք պետք է զգուշանանք այն անտեղի ազդեցությունից՝ ցանկալի կամ անցանկալի, որ ձեռք է բերում ռազմարդյունաբերական համալիրը: Մենք երբեք չպիտի թույլ տանք, որ այս ազդեցությունը վտանգի տակ դնի մեր ազատություններն ու ժողովրդավարական գործընթացները: Մենք չպիտի թույլ տանք, որ ցանկացած բան մեզ հրամցվի որպես անառարկելի ճշմարտություն» (Հրաժեշտի ուղերձ՝ 17 հունվարի, 1961թ.):

Տնտեսական հավասարության վերաբերյալ. «Արտադրված ամեն մի հրացան, ջուրն իջեցված յուրաքանչյուր ռազմանավ, օդ արձակված ամեն մի հրթիռ վերջին հաշվով նշանակում է գողություն նրանցից, ովքեր սոված են ու չունեն հաց, նրանցից, ովքեր մրսում են ու չունեն հագուստ» (Ուղերձ ամերիկյան խմբագիրների միությանը՝ 16 ապրիլի, 1953թ.):

Եղբայրության վերաբերյալ. «Հիրավի, ես կարծում եմ, որ մարդիկ այնքան շատ են ցանկանում խաղաղություն, որ մոտ ապագայում կառավարությունը պետք է ընդառաջի նրանց ցանկությանը և թույլ տա մարդկանց ապրել խաղաղության մեջ» (Բի-Բի-Սիի հեռուստահարցազրույցը 1959թ. օգոստոսի 31-ին):

1996թ. դեկտեմբերի 4-ին ԱՄՆ միջուկային-պատերազմական ուժերի նախկին հրամանատար, գեներալ Ջորջ Լի Բաթլերը Վաշինգտոնի Մամուլի ազգային ակումբում իր ելույթի ժամանակ կոչ արեց ոչ միայն սահմանափակել միջուկային զենքի կիրառումը, այլև ձեռնարկել քայլեր՝ ուղղված վերջինիս լիակատար ոչնչացման:

Ըստ նրա Միացյալ Նահանգները՝ որպես այս տիպի զենքի հայտնագործող և կիրառող, պետք է գլխավորի նաև դրանց վերացմանն ուղղված գործընթացը: Հակառակ դեպքում այն չի ունենա բարոյական իրավունք հետ պահել մյուս երկրներին միջուկային զենք ձեռք բերելու գործընթացից:

Գեներալն այսպես հիմնավորեց բերված փաստարկները. «Միջուկային զենքերն իրենց տեսակի մեջ շատ վտանգավոր են, չափազանց թանկ, ռազմականորեն անարդյունավետ և բարոյապես անընդունելի»: Այդ կերպ գեներալ Բաթլերն էլ եկավ այն եզրահանգմանը, ինչին հասել էին խոհեմ ամերիկացիները, ինչպես օրինակ «Գութանի խոփի մեջ խրված սուսերներ» շարժման մասնակիցները, որոնք, միջուկային զենքի արտադրմանն ու կիրառմանը դեմ դուրս գալու պատճառով, շարունակվում են պահման ենթարկվել պետության բանտերում: Միջուկային զենքերի վերացմանն ուղղված շարժման տրամաբանությունը կարող է նաև կիրառվել սպանություններից զերծ պայքարի այլ ձևերում:

Եթե գեներալները՝ որպես սպանության բնագավառի փորձագետներ, կարող են բարձրացնել նմանատիպ լուրջ հարցեր իրենց իսկ զբաղմունքի շուրջ առկա ենթադրությունների և հասարակության հետ դրանց փոխհարաբերակցության վերաբերյալ, ապա ինչու՞ քաղաքագետները չեն կարող կասկածի տակ դնել իրենց իսկ

մասնագիտության բռնությունը խրախուսող ենթադրություններն ու հասարակական դերը և պայքարել հանուն սպանություններից զերծ հասարակությունների ձևավորման ամբողջ աշխահում:

Ամերիկացի քաղաքագետների և նրանց արտասահմանյան գործընկերների մեծ մասը, ովքեր հանդիսանում են ներկայիս ամերիկյան քաղաքագիտության ձևավորողները, ըստ երևույթին, անտեղյակ են այն խաղաղասիրական մոտիվներին, որոնք նպաստել են քաղաքագիտության՝ որպես ակադեմիական առարկայի ստեղծմանը Միացյալ Նահանգներում:

Խթան հանդիսացող գործոններից է 1963թ. մարտի դաշտում հյուսիսականների բանակի զինվոր Ջոն Բուրգեսի տված երդումը: Վերջինս գիշերային հերթապահության էր նշանակվել արևմտյան Թենեսսիում Կոնֆեդերատների հետ շարունակված մեկօրյա արյունալի մարտից հետո.

> Տեղատարափ անձրևը շարունակվում էր. սևակնած երկնքում փայլատակում էր կայծակը, իսկ հեռվում որոտացող ամպրոպի արձագանքը հիշեցնում էր ծանր հրետանու համազարկերը երկրի վրա: Բնության այս արհավիրքին խառնվել էր վիրավոր ու մեռնող մարդկանց, կենդանիների ճիչն ու հառաչը:
> Այդ գիշերը սարսափելի էր նույնիսկ ամենադիմացկուն զինվորների համար, իսկ ինձ նման անփորձ ու զգայուն մեկի համար անհնար էր այդ ամենը նույնիսկ բառերով նկարագրել..., այդ սոսկալի մղձավանջը մինչև օրս էլ հետապնդում է ինձ: Այդ զարհուրելի փորձության պահին էլ վճռվեց իմ հետագա գործունեությունը: Երբ ես մթության մեջ լարել էի տեսողությունս և լսողությունս՝ որսալու մոտեցող թշնամու ոտնաձայները, զգացի, որ շուրթերս ինձանից անկախ շշնջում են. «Մի՞թե անհնար է, որ մարդը, որը Աստծո պատկերով ստեղծված բանական էակ է, լուծի իր գոյությանը սպառնացող խնդիրները բանականության ուժով՝ առանց ֆիզիկական բռնության կործանարար միջոցներ գործածելու: Եվ հենց այդ պահին, աչքերս երկինք հառելով, ես երդվեցի. «եթե Նախախնամությունն ինձ ողջ ու առողջ դուրս բերի պատերազմական այս թոհուբոհից, ես իմ կյանքի մնացած օրերը կապրեմ՝ առաջնորդվելով բանականությամբ և փոխզիջումներով՝ առանց արյուն թափելու կամ ոչնչացնելու» (Բուրգես՝ 1934: 28):

Իր երդմանը հավատարիմ՝ Բուրգեսը սովորեց Գերմանիայում և հետ վերադառնալով՝ 1880թ. Նյու Յորքի Կոլումբիա քոլեջին կից հիմնադրեց Քաղաքագիտության դպրոցը:

Փորձությունները, որոնց հանդիպեց պրոֆեսոր Բուրգեսն իր գործունեության ճանապարհին, նման են այն դժվարություններին, որոնց կհանդիպեն սպանություններից զերծ քաղաքագիտության ստեղծման գործի նվիրյալները: Կոնտեքստից կախված այս խնդիրները կլինեն տարբեր բարդության և կպահանջեն քաջություն ու միջազգային համագործակցություն դրանց հաղթահարման համար: Եղբայրաբար վերաբերվելով գերմանացիներին՝ Բուրգեսը դեմ էր Միացյալ Նահանգների մասնակցությանը Առաջին համաշխարհայինին:

1917թ. օգոստոսի 6-ը՝ Ամերիկայի պատերազմին միանալու օրը, նա այսպես է բնութագրում. «.... մեկ դաժան հարվածով իմ կյանքի ողջ աշխատանքը վերածվեց ավերակների»: Հակաֆաշիստական պատերազմի կիզակետում նա գանգատվում էր. «այսօր խաղաղարար ու բանական մարդիկ համարվում են ազգի դավաճաններ ու վախկոտներ» (29):

Պրոֆեսոր Բուրգեսը, ինչպես և ժամանակի բոլոր խաղաղարարները, ստիպված էր անցնել նույն փշոտ ուղին՝ հալածվելով հակառակորդների կողմից և երբեմն սեփական կյանքի գնով պաշտպանելով սկսած գործը:

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը ոչ պակաս քան սպանություններից զերծ քաղաքականությունը պետք է հետևի Գանդիի կոչին, այն է՝ լինել «արդարամիտ, հանդարտ ու անվախ». կոչ, որը տոգորված է կյանքի նկատմամբ հոգևոր և հումանիստական խորը հարգանքով: Այս կոչին հետևելու համար պետք է խիզախ լինել: Մեր օրերում, երբ շուրջ բոլորը արյունահեղություն է, քաղաքագետները պետք է առաջնորդվեն կյանքը հարգող սկզբունքներով ոչ պակաս, քան 1992թ. Մեքսիկայի Չիապաս շրջանում հիմնադրված «Մեղուների քաղաքացիական հասարակության» (Sociedad Civil Las Abejas) գյուղացիները: Այս հասարակության «մեղուները» խաղաղ ճանապարհով պայքարում են արդարության վերականգնման համար Զապատիստայում տիրող զինված ապստամբության և իշխանության ռեպրեսիվ վարչակարգի պայմաններում:

Մենք կիսում ենք մեր համագյուղացիների դժգոհությունը, բայց և ասում ենք. «Մեր ընտրած ուղին տարբեր է: Մենք հավատում ենք Աստծո խոսքին: Մենք գիտենք ճիշտ մեկնաբանել Կտակարանը: Մենք պետք է սիրենք մեր թշնամուն, մենք չենք կարող սպանել նրան: Առաջին հերթին մենք աղքատ գյուղացիներ ենք, քույրեր ու եղբայրներ... Մենք չենք վախենում մահից: Մենք պատրաստ ենք մեռնել, բայց ոչ սպանել» (Խաղաղության լրատու, հուլիս 1998:13, 14):

Ինչու՞ սպանություններից հրաժարվելու սկզբունքային քայլերը պետք է ունենան «ներքևից վերև» դասավորություն, ինչու՞ պետք է դրանք արտահայտվեն բրիտանական իմպերիալիզմի ներքո գտնվող գաղութաբնակ հնդիկների մոտ, սպիտակամորթների ռասսայական ճնշմանը ենթարկվող աֆրոամերիկացիների կամ մեքսիկացի աղքատ գյուղացիների մոտ: Իսկ ինչու՞ չփորձել «վերևից ներքև» տարբերակը՝ սկսելով տեղական, ազգային, միջազգային և գլոբալ էլիտայից՝ ներառելով քաղաքագետ գիտնականներին:

Սպանություններից զերծ հասարակության բաղադրիչների ուսումնասիրությունը հիմք է տալիս հավատալու, որ մարդկությունը ունի խաղաղ փոխակերպման գլոբալ գործընթացն ավարտին հասցնելու համապատասխան կարողություններ:

Գործնական տեսանկյունից սպանություններից զերծ հասարակության բոլոր բաղկացուցիչ տարրերն ինչ-որ տեղ և ինչ-որ պահի դրսևորվել են մարդկային վարքագծում, մնում է միայն դրանք առանձնացնել, վերամշակել և հարմարեցնել տեղական ու միջազգային պահանջներին ու պայմաններին: Անցյալի ու ներկայի արյունահեղություններից սարսափահար գիտակցությունը կարող է լինել սպանությունների կանխման խաղաղ գործընթացները խթանելու և սոցիալականացնելու սկզբնաղբյուր: Մենք ոչ մի կերպ չպետք է կրկնենք մարդկության արյունալի սխալները: Մենք պետք է գործենք, որպեսզի կանխենք շարունակվող սպանությունները կամ կասեցնենք դրանց կրկնությունը:

Ինչպես նկատում են մարդաբաններ Քլեյթոնն ու Կարոլ Ռոբարչեկը (1998թ.), խիստ ուշագրավ է էկվադորի Վաորանի ցեղի շրջանում գրանցված մարդասպանությունների թվի նվազումը հինսուն տոկոսով ընդամենը երեսուն տարիների ընթացքում՝ սկսած 1958թ.: Սա ցույց է տալիս, որ մարդիկ ունակ են կարճ ժամկետներում կյանքի կոչել խաղաղ փոխակերպման գործընթացը: Անցած հարյուրամյակում գրանցված մարդասպանությունների վաթսուն տոկոս կզմող դեպքերի արդյունքով Վաորանի բնակիչները համարվում էին «բռնության ամենաբարձր ցուցանիշներ գրանցած հասարակությունը, որ երբևէ հայտնի էր եղել մարդաբանությանը»: Ըստ տոկոսային հարաբերության՝ 100.000 բնակչության կտրվածքով գրանցվում էր 1000 սպանություն,

մինչդեռ Միացյալ Նահանգներում 100.000 բնակչության կտրվածքով գրանցվում էր 10 սպանություն կամ ավելի քիչ: Բայց երեք տասնամյակների ընթացքում մարդասպանությունների թիվը Վաորանիում կազմում էր 60 սպանություն 100հազ. բնակչի կտրվածքով:

Այս գործում մեծ դեր խաղացին երկու քրիստոնյա կին միսոներների (կինը և քույրը այն երկու նահատակների, ովքեր 1956թ. անհաջող ձևով փորձեցին երկխոսության մեջ մտնել իրենց ցեղակիցների հետ) և Վաորանիի մի քանի այլ կանանց միջամտությունը, «աշխարհ տեսած» կանանց կողմից այլընտրանքային խաղաղասիրական արժեքների համակարգի և նոր ճանաչողական տեղեկությունների ներմուծումը հասարակություն, օտարների հանիբալ լինելու վերաբերյալ կարծրատիպերի վերացումը և, իհարկե, Վաորանի ցեղի անդամների սեփական ցանկությունն ուղղված սարսափելի վենդետաների հարատև պտույտին վերջ դնելուն. պտույտ, որի պատճառով զոհվում էին գնում ամբողջական ընտանիքներ:

Ստեղծվեցին եկեղեցիներ, որտեղ մարդիկ երդվում էին այլևս չսպանել: Մարդասպանությունների թվի կրճատումը տեղի ունեցավ առանց ոստիկանության և ուժային այլ կառույցների միջամտության և առանց նախորդող սոցիալ-տնտեսական, կառուցվածքային փոփոխությունների: Ընդհակառակը՝ կառուցվածքային փոփոխությունները սկսեցին հաջորդել սպանությունների կանխմանն ուղղված հոգևոր նախաձեռնություններին և նոր տեղեկությունների ստացմանը: Նույնիսկ Վաորանիի ոչ քրիստոնյա խմբավորումները փոխեցին իրենց վարքագիծը:

Ըստ Ռոբարչեկների՝ այս ուշագրավ փոփոխությունները արժեքային և կառուցվածքային համակարգում, թեկուզև դեռևս անավարտ, թույլ են տալիս կատարել կարևոր տեսական եզրահանգումներ մարդկային վարքագծի վերաբերյալ.

> Մարդիկ պասիվ մեքենաներ չեն, որ գործի դրվեն էկոլոգիական, կենսաբանական կամ նույնիսկ սոցիալ-մշակութային գործոններով. նրանք ակտիվ որոշումներ կայացնողներ են, որոնք ընտրում են գործունեության իրենց ձևերը առկա տարբերակներից և սահմանափակումներից՝ հետապնդելով անհատական և մշակութային նպատակներ կոնկրետ մշակութային իրականության մեջ, որը կառուցվում ու վերակառուցվում է իրենց իսկ կողմից (1998: 4):

Սպանություններից զերծ քաղաքագիտության տեսանկյունից վաորանիների փորձը վկայում է այն մասին, որ խաղաղ փոխակերպման ներուժը մարդուն տրված է ի վերուստ: Այն, ինչ կարողացան անել վաորանիները, կարող է անել և քաղաքագիտությունը՝ որպես հասարակությանը ծառայող գիտություն:

Անելու շատ բան կա, քանի որ աշխարհը, ինչպես և Վաորանի ցեղը, ապահովագրված չեն սպանություններից: Հարձակումները օտարերկրացիների կողմից, դրան գումարած հարևան ցեղերի ասպատակությունները, ովքեր դեռևս հեռու են սպանությունների կանխմանն ուղղված հոգևոր-իմացական ներգործությունից, կրկին անգամ հրահրում են արյունահեղություններ: Չնայած սպանություններից ազատ, խաղաղասեր համայնքների առկայությունը կարևորում և հնարավորին է դարձնում խաղաղ փոխակերպման համաշխարհային գործընթացը, բայց և այնպես անհրաժեշտ է, որ խաղաղասիրական ոգին ու պրակտիկան կրեն համընդհանուր բնույթ:

Խաղաղ փոխակերպման հրամայականը գլոբալ համատեքստում

Սպանություններից զերծ քաղաքագիտությունը պետք է լինի գլոբալ, գլոբալ՝ բացահայտումներով, ստեղծագործական մոտեցումներով, զանազանությամբ և արդյունավետ գործառնությամբ, գլոբալ՝ հոգևոր, գիտական, մշակութային, ինստիտուցիոնալ դրսևորումներով և ռեսուրսների օգտագործմամբ, գլոբալ՝ առաջնորդների մոտ ստեղծագործական ձիրքերի ձևավորմամբ և կյանքը փառաբանող գործողություններ նախաձեռնելու կարողությունների զարգացմամբ ողջ հանրության շրջանում, գլոբալ՝ մարդկային կարիքների բավարարմանն ուղղված խնդիրների լուծման պատրաստակամությամբ և ամենուրեք սպանությանը վերջ դնելու վճռականությամբ, հակառակ դեպքում ոչ ոք և ոչ մի տեղ իրեն ապահով չի զգա, գլոբալ՝ համընդհանուր մասնակցային գործընթացներով, հակառակ դեպքում ոչ մի ուսումնական առարկա, մասնագիտություն կամ հասարակություն չի կարող տիրապետել անհրաժեշտ բոլոր գիտելիքներին, հմտություններին և ռեսուրսներին, գլոբալ՝ բարեկեցության ապահովմամբ տեղական մակարդակով, քանի որ այստեղ են ցանվում համընդհանուրի ազատագրման սերմերը, գլոբալ՝ բոլոր մարդկանց բարեկեցությունն ապահովող բազմաթիվ գործողություններով ու զանազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքով, գլոբալ՝ երկկողմանի աջակցության տրամադրմամբ բոլոր նրանց, ովքեր սովորում, ուսուցանում և գործում են արյունահեղությունների դարաշրջանին վերջ դնելու նպատակով, քանի որ հենց դրանք են խոչընդոտում ազատության, հավասարության, բարգավաճման և խաղաղության լիակատար հաստատմանը, գլոբալ..., երբ լուսնի վրա կանգնած դիտենք մեր երկիրը, կգիտակցենք, որ մեզանից յուրաքանչյուրը կյանքը լուսավորող միլիարդավոր կայծերից մեկն է, այլ ոչ թե սպանություններից զերծ աշխարհի ձևավորմանն աջակցողներից ինչ-որ մեկը:

Արյունահեղությունների վերացումը համաշխարհային կյանքից ենթադրում է բռնությունը խրախուսող քաղաքագիտության փոխակերպումը սպանություններից զերծ քաղաքագիտության, որը պարտավորվում է ստեղծել բոլոր պայմանները սիրո, բարեկեցության և ստեղծագործական ներուժի ազատ դրսևորման համար:

Եվ այն հարցերին, թե՝

- Հնարավո՞ր է արդյոք ստեղծել սպանություններից զերծ հասարակություն:
- Հնարավո՞ր է արդյոք ստեղծել սպանություններից զերծ քաղաքագիտություն:

Պատասխանը մեկն է՝

- Այո՛, հնարավոր է:

Հավելված Ա.
Քաղաքագիտության միջազգային ասոցիացիայի ազգային ընկերություններ (1999թ.)

Անվանումը	Հիմնադրման Տարեթիվը (Նաև նախորդներինը)	Անդամների Թիվը
Քաղաքագիտության աֆրիկյան ընկերություն	1974թ.	1360
Քաղաքական վերլուծությունների արգենտինա կան ընկերություն	1983թ.(1957թ.)	180
Քաղաքական ուսումնասիրությունների ավստրալական ընկերություն	1966թ.(1952թ.)	425
Քաղաքագիտության ավստրական ընկերություն	1979թ.(1951թ.)	537
Քաղաքագիտության ֆլամանական ընկերություն	1979թ.(1951թ.)	450
Քաղաքագիտության բելգիական ընկերություն Բելգիայի ֆրանսիական համայնք	1996թ.(1951թ.)	125
Քաղաքագիտության բրազիլական ընկերություն	1952թ.	*
Քաղաքագիտության բուլղարական ընկերություն	1973թ.(1968թ.)	72
Քաղաքագիտության կանադական ընկերություն	1968թ.(1913թ.)	1200
Քաղաքագիտության չիլիական ընկերություն	*	*
Քաղաքագիտության չինական ընկերություն	1980թ.	1025
Քաղաքագիտության խորվաթական ընկերություն	1966թ.	50
Քաղաքագիտության չեխական ընկերություն	1964թ.	200
Քաղաքագիտության դանիական ընկերություն	1960թ.	350
Քաղաքագիտության ֆիննական ընկերություն	1935թ.	550
Քաղաքագիտության ֆրանսիական ընկերություն	1949թ.	1030
Քաղաքագիտության գերմանական ընկերություն	1951թ.	1250
Քաղաքագիտության հելլենական ընկերություն	1957թ.(1951թ.)	53
Քաղաքագիտության հունգարական ընկերություն	1982թ.(1968թ.)	410
Քաղաքագիտության հնդկական ընկերություն	1935թ.	1600
Քաղաքական ուսումնասիրությունների իռլանդական ընկերություն	1982թ.	247
Քաղաքագիտության իսրայելյան ընկերություն	1950թ.	250
Քաղաքագիտության իտալական ընկերություն	1975թ.(1952թ.)	220
Քաղաքագիտության ճապոնական ընկերություն	1948թ.	1522
Քաղաքագիտության կորեական ընկերություն	1953թ.	1700
Քաղաքագետների կորեական ընկերություն	1979թ.	1465
Քաղաքագիտության լիտվական ընկերություն	1991թ.	75
Քաղաքագիտության մեքսիկական ընկերություն	*	*
Քաղաքագիտության հոլանդական ընկերություն	1966թ.(1950թ.)	400
Քաղաքական ուսումնասիրությունների Նոր զելան դական ընկերություն	1974թ.	*
Քաղաքագիտության նիգերիական ընկերություն	*	*
Քաղաքագիտության նորվեգական ընկերություն	1956թ.	400
Քաղաքագիտության պակիստանյան ընկերություն	1950թ.	300
Քաղաքագիտության ֆիլիպինյան ընկերություն	1962թ.	*

Քաղաքագիտության լեհական ընկերություն	1950թ.	200
Քաղաքագիտության ռումինական ընկերություն	1968թ.	188
Քաղաքագիտության ռուսական ընկերություն	1991թ.(1960թ.)	300
Քաղաքագիտության սլովակական ընկերություն	1990թ.	115
Քաղաքագիտության սլովենական ընկերություն	1968թ.	220
Քաղաքագիտության հարավաֆրիկյան ընկերություն	1973թ.	186
Քաղաքագիտության և կառավարման իսպանական ընկերություն	1993թ.(1958թ.)	253
Քաղաքագիտության շվեդական ընկերություն	1970թ.	264
Քաղաքագիտության շվեյցարական ընկերություն	1950թ.	1000
Քաղաքագիտության չինական ընկերություն(Թայփեյ)	1932թ.	350
Քաղաքագիտության թայլանդական ընկերություն	*	*
Քաղաքագիտության թուրքական ընկերություն	1964թ.	120
Քաղաքագիտության բրիտանական ընկերություն	1950թ.	1200
Քաղաքագիտության ամերիկյան ընկերություն	1903	13300
Քաղաքագիտության ուզբեկական ընկերություն	*	*
Քաղաքագիտության վենեսուելական ընկերություն	1974թ.	*
Քաղաքագիտության յուգոսլավիական ընկերություն	1954թ.	*
Ընդամենը՝		35142+

* Տվյալներ չկան

Տեղեկատվության աղբյուր՝ ***Մասնակցություն*** **(1999թ.) 23/3: 33-41:** Քաղաքագիտության միջազգային ասոցիացիայի տեղեկատու: /Bulletin de l'association internationale de science politique/.

Հավելված Բ.
Քաղաքագիտության միջազգային ասոցացիա
Հետազոտության ոլորտները (2009թ.)

Հիմնական ոլորտներ

Դատական համակարգ և վարքագիծ
Զարգացման քաղաքականություն
Ընտրություններ և քվեարկության գործընթաց
Կենտրոնական իշխանություն
Կանայք և քաղաքականությունը
Համեմատական քաղաքականություն
Ճնշող խմբեր
Միջազգային իրավունք
Միջազգային հարաբերություններ
Պետական կառավարում
Պետական քաղաքականություն
Տարածաշրջանային ուսումնասիրություններ
Տեղական և քաղաքական ուժերի քաղաքականություն
Քաղաքական կուսակցություններ
Քաղաքագիտության մեթոդներ
Քաղաքական տեսություն և փիլիսոփայություն
Օրենսդրություն

Հետազոտական հանձնաժողովներ (ՀՀ)

ՀՀ01-Հասկացություններ և մեթոդիկաներ
ՀՀ02-Քաղաքական էլիտաներ
ՀՀ03-Եվրոպայի միավորում
ՀՀ04-Քաղաքական բյուրոկրատիա զարգացող հասարակություններում
ՀՀ05-Տեղական կառավարման համակարգի և քաղաքականության համեմատական հետազոտություն
ՀՀ06-Քաղաքական սոցիոլոգիա
ՀՀ07-Կանայք, քաղաքականություն և զարգացող երկրներ
ՀՀ08-Օրենսդրական ոլորտի մասնագետներ
ՀՀ09-Դատական համակարգերի համեմատական հետազոտություն
ՀՀ10-էլեկտրոնային ժողովրդավարություն
ՀՀ11-Գիտություն և քաղաքականություն
ՀՀ12-Կենսաբանություն և քաղաքականություն
ՀՀ13-Ժողովրդավուրությունը համեմատական տեսանկյունից
ՀՀ14-Քաղաքականություն և ազգային պատկանելություն
ՀՀ15-Քաղաքական և մշակութային աշխարհագրություն
ՀՀ16-Սոցիալքաղաքական բազմակարծություն
ՀՀ17-Գլոբալիզացիա և կառավարում

ՀՀ18-Ասիական և խաղաղօվկիանոսյան երկրների ուսումնասիրություններ
ՀՀ19-Գենդերային նորմեր և գենդերային քաղաքականություն
ՀՀ20-Քաղաքական ֆինանսավորում և քաղաքական կոռուպցիա
ՀՀ21-Քաղաքական սոցիալականացում և կրթություն
ՀՀ22-Քաղաքական հաղորդակցում
ՀՀ24-Զինված ուժեր և հասարակություն
ՀՀ25-Առողջապահության համեմատական քաղաքականություն
ՀՀ26-Մարդու իրավունքներ
ՀՀ27-Կառավարության կազմն ու կառուցվածքը
ՀՀ28-Համեմատական ֆեդերալիզմ և ֆեդերացիա
ՀՀ29-Քաղաքական հոգեբանություն
ՀՀ31-Քաղաքական փիլիսոփայություն
ՀՀ32-Պետական քաղաքականություն և կառավարում
ՀՀ33-Քաղաքագիտության առարկայի ուսումնասիրություն
ՀՀ34-Ներկայացուցչական մարմիններ և ընտրական համակարգեր
ՀՀ35-Գիտատեխնիկական առաջընթաց
ՀՀ36-Քաղաքական իշխանություն
ՀՀ37-Քաղաքական զարգացումների վերանայում
ՀՀ38-Քաղաքականություն և բիզնես
ՀՀ39-Զարգացած երկրներ և զարգացող հասարակություններ
ՀՀ40-Համաշխարհային նոր օրենքներ
ՀՀ41-Գեոքաղաքականություն
ՀՀ42-Բաժանված ազգերի համակարգված ինտեգրացում
ՀՀ43-Կրոն և քաղաքականություն
ՀՀ44-Զինված ուժերի դերը ժողովրդավարացման գործընթացում
ՀՀ45-Միջազգային քաղաքականության քանակական ուսումնասիրություն
ՀՀ46-Շրջակա միջավայրի գլոբալ փոփոխություններ
ՀՀ47-Լոկալ-գլոբալ փոխհարաբերություններ
ՀՀ48-Կառավարման մշակույթ
ՀՀ49-Սոցիալիզմ, կապիտալիզմ և ժողովրդավարություն
ՀՀ50-Լեզու և քաղաքականություն
ՀՀ51-Հյուսիսային Աֆրիկայի ներկա քաղաքական իրավիճակի ուսումնասիրություն
ՀՀ52-Գենդեր, գլոբալիզացիա և ժողովրդավարություն

Տեղեկատվության աղբյուր՝ Քաղաքագիտության Միջազգային Ասոցացիա, http://www.ipsa.org (2009թ.)

Հավելված Գ

Քաղաքագիտության ամերիկյան ընկերություն Հետազոտության ոլորտները (2008թ.)

Ընդհանուր ոլորտներ (Անդամների քանակն ըստ էլեկտրոնային հասցեների)

Ամերիկյան կառավարություն	4777
Համեմատական քաղաքականություն	5456
Միջազգային հարաբերություններ	4812
Մեթոդաբանություն	1629
Պետական կառավարում	1147
Պետական քաղաքականություն	2883
Քաղաքական փիլիսոփայություն և տեսություն	2709
Քաղաքական իրավունք և դատարաններ	1383

Ենթաոլորտներ (Անդամների քանակն ըստ էլեկտրոնային հասցեների)

Առաջադեմ արդյունաբերական հասարակություններ	336
Ամերիկյան ազգային քաղաքականություն	48
Ամերիկյան քաղաքականությունը Աֆրիկայում	264
Ամերիկյան քաղաքականությունը Ասիայում	64
Աշխատանքային օրենսդրություն	123
Առողջապահության քաղաքականություն	283
Առևտրային քաղաքականություն	130
Արևելյան և Կենտրոնական Եվրոպա	437
Արևմտյան Եվրոպա	1031
Արտաքին քաղաքականություն	1662
Ավստրալիա	26
Աֆրիկա	443
Բյուրոկրատիա և կազմակերպչական վարքագիծ	665
Բնապահպանական քաղաքականություն	617
Բնակարանային քաղաքականություն	56
Գենդերային քաղաքականություն և հայեցակարգ	443
Գիտություն և տեխնիկա	294
Գնահատման հետազոտություն	131
Գործադիր իշխանության քաղաքականություն	232
Գրականություն և քաղաքագիտություն	263
Դատական քաղաքականություն	595
Դրական քաղաքական տեսություն	436

Զարգացող երկրներ 902
Էներգետիկ քաղաքականություն 112
Էթնիկական և ռասսայական քաղաքականություն 847
Ընտրական վարքագիծ 905
Ընտրական համակարգեր 557
Լատինամերիկյան քաղաքականություն 159
Համասեռամոլների և երկսեռամոլների վերաբերյալ քաղաքականություն 124
Կանայք և քաղաքականությունը 648
Կարիբյան ծովի երկրներ 71
Կանոնակարգող քաղաքականություն 210
Կենտրոնական Ամերիկա 125
Կենտրոնական Ասիա 71
Կոնֆլիկտային իրավիճակներ 857
Կոնգրես 734
Կրթական քաղաքականություն 393
Կրոն և քաղաքականություն 838
Հասարակական գիտություններ և քաղաքագիտություն 84
Հասարակական կարծիք 910
Հասարակական շարժումներ 654
Հասարակական բարօրություն 454
Հարավարևելյան Ասիա 202
Հարավային Ամերիկա 428
Հարավային Ասիա 189
Հետազոտական մեթոդներ 799
Հետկոմունիստական տարածաշրջան 415
Հյուսիսարևելյան Ասիա 560
Հյուսիսային Ամերիկա 122
«Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակը քվեաթերթերում 3
Ղեկավար աշխատանքների ուսումնասիրություն 206
Միգրացիոն քաղաքականություն 262
Միջազգային իրավունք և միջազգային կազմակերպություններ 969
Միջազգային քաղտնտեսություն 1162
Միջազգային անվտանգություն 1463
Միջին Արևելք 593
Նախագահություն 693
Նորմատիվ քաղաքագիտություն 1154
Պաշտպանություն 427
Պետական ֆինանսավորում և պետբյուջե 189
Պետական քաղաքականություն 596
Քաղաքականությունը և պատմությունը 990
Քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ 1223
Քաղաքական հաղորդակցում 671
Քաղաքական հոգեբանություն 728
Քաղաքական զարգացումներ 585
Քաղաքական վարքագիծ 1165
Քաղաքական տնտեսություն 1380
Քաղաքաշինության քաղաքականություն 626
Ֆեդերալիզմ և միջկառավարական կապեր 721

Ֆեմինիստական տեսություն 402
Օրենսդրական ոլորտի ուսումնասիրություններ 694
վերաբերյալ քաղաքականություն

Բաժիններ (Անդամների քանակն ըստ էլեկտրոնային հասցեների)

Արտաքին քաղաքականություն 621
Գիտություն, տեխնոլոգիա և շրջակա միջավայր 325
Եվրոպական քաղաքականություն և հասարակություն 500
Ընտրություններ, հասարակական կարծիք և ընտրողների վարքագիծ 823
Թերի բարձրագույն կրթություն 468
Կանայք և քաղաքականությունը 637
Կոնֆլիկտային իրավիճակներ 396
Կրոն և քաղաքականություն 603
Համեմատական ժողովրդավարություն 597
Համեմատական քաղաքականություն 1508
Մարդու իրավունքներ 381
Միջազգային պատմություն և քաղաքականություն 440
Միջազգային անվտանգություն և զենքի նկատմամբ վերահսկողություն 529
Նախագահության գործունեության ուսումնասիրություն 385
Նոր քաղաքագիտություն 478
Որակական մեթոդներ 909
Պետական կառավարում 534
Պետական քաղաքականություն 981
Ռասսա, էթնոս և քաղաքականություն 569
Տեղեկատվական տեխնոլոգիաներ և քաղաքականություն 265
Քաղաքականություն, գրականություն և կինեմատոգրաֆիա 361
Քաղաքական հոգեբանություն 405
Քաղաքական հաղորդակցություն 470
Քաղաքական կազմակերպություններ և կուսակցություններ 562
Քաղաքական մեթոդաբանություն 943
Քաղաքական տեսության հիմքեր 715
Քաղաքականություն և պատմություն 654
Քաղաքական տնտեսություն 653
Քաղաքաշինության քաղաքականություն 354
Ֆեդերալիզմ և միջկառավարական կապեր 271
Օրենք և դատարան 809
Օրենսդրական դաշտի ուսումնասիրություններ 594
Ներկայացուցչություն և ընտրական համակարգեր 378
Պետական քաղաքականություն 477

Աղբյուր՝ Քաղաքագիտության ամերիկյան ընկերություն, քաղաքագետների հետ կապ հաստատելու էլեկտրոնային հասցեների ցուցակ (2008թ.)

Հավելված Դ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի պետական ծառայության քաղաքացիական ճամբարներում ծառայած այլընտրանքային զինծառայողների կրոնական համոզմունքները

(անդամների քանակը ըստ բարեգործական ճամբարների)

Աբրահամյան հավատքի եկեղեցի	13
Ադվենտիստներ	3
Ադվենտիստների յոթերորդ օրը	17
Ադվենտիստների յոթերորդ օրը, վերափոխված	1
Աղոթքների տուն	1
Առաքելական	2
Առաքելական առաջին եկեղեցի	1
Առաքելական եկեղեցի (Schwenkfelders)	1
Առաջադիմական եղբայրություն	1
Առաջին դարի ավետարան	28
Առաքելական հավատքի շարժում	2
Առաջին միսիոներական եկեղեցի	2
Ազատ երրորդություն	3
Ազատ մեթոդականներ	6
Ազատական բապտիստներ	2
Ազգայնական բապտիստների համաժողով	5
Ամերիկայի առաջին աստվածաբանական ընկերություն	16
Ամերիկայի վերափոխված եկեղեցի (Հոլանդական)	15
Անգլիական եկեղեցի	1
«Four square» ավետարան (Four Square Bible)	2
Անկախ եկեղեցի	2
Աստվածաշնչի հավատարիմ աշակերտներ	36
Աստծո անկախ ժողով	2
Աստծո եկեղեցի, Գաթրի, Օկլահոմա	5
Աստծո թագավորություն	1
Աստծո ժողովականներ	32
Աստծո ժողովականների եկեղեցի	1
Աստծո ժողովականների ամերիկյան միավորված խորհուրդ	1
Աստծո խոսքի դպրոց	1
Աստծո ճշմարիտ հետևորդներ	1
Ավետարանչական եկեղեցի	1
Ավետարանչականների դպրոց	1
Արդարադատ հիսուսականներ	6
Արդարադատ տեր	1
Արտարադատ ուխտագնացներ	3
Բապտիստների յոթերորդ օրը	3
Բապտիստ սրբեր	1

Բարեպաշտների տաճար 1
«Բաց դուռ» եկեղեցի 1
Բերիայի եկեղեցի 1
Բրոդուեյան աղոթատուն 1
Բուդդիստներ 1
Գալիլեան առաքելություն 1
Գերմանացի բապտիստների եղբայրություն 157
Գերմանացի բապտիստների համաժողով 4
Գողգոթայի քարոզիչների աղոթատուն 1
Գրեյսլոնի ասամբլեա 1
Դավիդի տուն 2
Դրական քրիստոնեության ազգային եկեղեցի 5
Դունկարդի եղբայրություն 30
Դուխոբորներ (խաղաղասեր առաջադիմական հասարակություն) 3
Եկեղեցի 1
Եհովայի վկաներ 409
Եղբայրական եկեղեցի 1353
Եղբայրական միություն 1
Եպիսկոպոսական եկեղեցի 88
Երիտասարդ մարդկանց քրիստոնեական միություն (YMCA) 2
Երկրային եկեղեցի 1
Զորեղ հավատքի տաճար 1
Զորոաստրիացիներ 2
էթիկական մշակույթ 3
էմանուելի միսոներական միություն 12
էսենացիներ 5
էվանգելիստներ 50
էվանգելիստական-Կոնգրեգացիոնալ 2
էվանգելիստական միսիոներների մենաստան (Շվեդական) 11
էվանգելիստներ և ռեֆորմիստներ 101
էվանգելիստական միսսիա 3
«Ընթերցանության ճանապարհ» տաճար 1
«Ընկերներ» կվակերների միություն 951
«Ընկերների» հումանիտար միություն 2
Թաոիստներ 1
Թենեսսիի աստծո եկեղեցի 7
Թեոսոֆիստներ 14
Թեոսոֆիստների միավորված եղբայրություն 2
Ժողովրդական եկեղեցի 1
Ինդիանայի աստծո եկեղեցի 43
Ինդուիստների տիեզերական հավատք 1
Լատինամերիկյան եկեղեցիների խաղաղ խորհուրդ 1
Լեմուրյան ընկերություն 9
Լիակատար փրկության միություն 1
Լութերականներ(9 սինոդներ) 108
Լութերականների եղբայրություն 2
Լուսաշող կյանքի եկեղեցի 1
Լույսի եկեղեցի 1

Լույսի տաճար	2
Կենդանի աստծո եկեղեցի	4
Կենդանի տիրոջ եկեղեցի	2
Կոնգրեգացիոնալ քրիստոնյաներ	209
Կվակերթաունի եկեղեցի	1
Կրակե սյուն	1
Կրակով օծված սրբություն	3
Կրոնական հասարակության և փիլիսոփայության ինստիտուտ	1
Համայնքային եկեղեցիներ	12
«Հարավային» բապտիստներ	45
Հավատքի դար	1
Հավատքի տաճար	2
Հավատքի սրահ	1
Հավատացյալների ասամբլեա	1
Հավատացյալների առաքելություն	2
Հավատացյալների աղոթատուն	2
Հավատացյալների տաճար	1
Հեփզիբահի հավատք	6
Հին գերմանական բապտիստական եկեղեցի	7
Հիսուս Քրիստոսի հիսունականների ժողով	1
Հիսունականների համաշխարհային ժողով	3
Հիսուս Քրիստոսի ժողով	1
Հիսուս Քրիստոսի եկեղեցի	1
Հիսուս Քրիստոսի եկեղեցի, Սուլիվան, Ինդիանա	15
Հիսուս Քրիստոսի եկեղեցի, Իսպանիա	1
Հիսունականների ազատ եկեղեցի	4
Հիսունականների առաքելություն	3
Հիսունականների եկեղեցի	2
Հիսունական էվանգելիստական եկեղեցի	1
Հիսունականների ժողով	2
Հիսունականների համաշխարհային կոնֆերանս	4
«Հյուսիսային» բապտիստներ	178
Հոգևոր առաքելություն	1
Հռոմեական կաթոլիկ եկեղեցի	149
Հրեաներ	60
Հունական առաքելական եկեղեցի	1
Հունական կաթոլիկ եկեղեցի	1
Հունական ուղղափառ եկեղեցի	1
Ճշմարտախոս բարեպաշտների ասամբլեա	1
Ճշմարտության եկեղեցի (Նոր Միտք)	1
Ճշմարտության սյունն ու հիմքը	1
Մազդազնամներ	1
Մալտնոմի ավետարանչական դպրոց	2
Մահկանացուների եկեղեցի	3
Մեգիդոնյան առաքելություն	1
Մեթոդիստներ	673
Մենոնիտներ	4665
Միածնի եկեղեցի	11

Միավորված պրեսբիտերիաններ	12
Միսիոներական եկեղեցիների միություն	8
Միսիոներների արքայություն	1
Միսիոներների միջազգային հասարակություն	2
Միասնական եկեղեցի	4
Միասնական առաքելություն	1
Միավորված բապտիստներ	1
Միավորված եղբայրություն	27
Միավորված քրիստոնյաների եկեղեցի	2
Միավորված սուրբ եկեղեցի	1
Միավորված սուրբ քրիստոնեաների ամերիկյան եկեղեցի	2
Միավորված երիտասարդների միջազգային ասամբլեա	2
Միություն	3
Մորավյական եկեղեցի	2
Մորմոններ («Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի»)	10
Մուդիի ավետարանի ինստիտուտ	2
Մուսուլմանական հավատք	1
Յոթերորդ օրվա ադվենտիստներ	1
Յոթերորդ օրվա եկեղեցի	21
Նազարեթյան եկեղեցի	23
Ներաղանդավորական շարժում	16
Նոր օրերի եկեղեցի	3
Նոր օրերի «Փառքի եկեղեցի»	1
Նորվեգացի էվանգելիստների անկախ եկեղեցի	2
Շիլոյի տաճարը	1
Շվեդենբորգներ	1
Շրջող Միսիա (Հավիտենական աստված)	10
Պաշտպաններ	1
Պատերազմի ընդդիմադիրների լիգա	46
Պլիմության եղբայրություն	12
Պրեսբիտերյաններ(ԱՄՆ)	192
Պրեսբիտերիաններ(Միացյալ Նահանգներ)	5
Պրիմիտիվ ադվենտներ	2
Ջեննինգսի տաճար	9
Ռոզենկրեյցերներ	1
Ռոջերինյան կվակերներ(հիսունական ընկերներ)	3
Ռուս մալականներ	1
Սարդիս աստծո եկեղեցի	1
Սերբիացի ուղղափառներ	1
Սկանդինավյան էվանգելիստական եկեղեցի	1
Սպիրիտուալիստներ	1
Ստանդարտ բաց ավետարան	1
Սուրբ առաքելություն	1
Սուրբ երրորդության տաճար	1
Սուրբ լույսի էմիսարներ	1
Սուրբ մեծությունների գլխավոր ասամբլեա	1
Սուրբ տիրոջ եկեղեցի	6
Վեսլեյան մեթոդիստներ	8

Տիեզերական եղբայրություն	1
Տիեզերականներ	2
Տիրոջ աշակերտների եկեղեցի	12
Տիրոջ եկեղեցի	33
Տեր Հիսուս Քրիստոսի եկեղեցի	1
Տաբերնակլյան հավատք	18
Ուղղափառ պարսեներ	2
Ունիտարիաններ	44
Ուսանողների համաշխարհային ֆեդերացիա	2
Փրկչի բարեփոխված առաքելություն	1
Փրկության բանակ	1
Քառատերև երեքնուկի եկեղեցի	1
Քսաներորդ դարի ավետարանչական դպրոց	5
Քարոզիչների եկեղեցի	1
Քրիստոս Աստծո եկեղեցի	12
Քրիստոս աստծո թագավորության և փառքի եկեղեցի	1
Քրիստոնեական առաքելական եկեղեցի	3
Քրիստոնեական եկեղեցիների լատինամերիկյան խորհուրդ	1
Քրիստոնեական համաժողով	1
Քրիստոնյա գիտնականներ	14
Քրիստոնյա եղբայրների եկեղեցի	1
Քրիստոնյա դելֆիաններ	127
Քրիստոնյա հրեաներ	1
Քրիստոնյա մարդկանց եկեղեցի	1
Քրիստոնյա միսիոներների միություն	1
Քրիստոնյա պլիմուտներ	1
Քրիստոնյաների ժողով	1
Քրիստոնյաների ու միսիոներների ալյանս	5
Քրիստոսի աշակերտներ	78
Քրիստոսի աշակերտների ժողով	1
Քրիստոսի դեսպաններ	1
Քրիստոսի եկեղեցի	199
Քրիստոսի եկեղեցու «ոսկե կանոնը»	3
Քրիստոնյա եղբայրներ	1
Քրիստոնյա կաթոլիկ առաքելական եկեղեցի	1
Քրիստոսի հետևորդներ	4
Քրիստոսի ճշմարիտ լույսի եկեղեցի	1
Քրիստոսի մարմին	1
Քրիստոսի սրբագործված եկեղեցի	2
Քրիստոսի սուրբ եկեղեցի	1
Օքսվորդյան շարժում	1
Ֆեդերալ եկեղեցի	1
Ֆիլիպինոի ավետարան	1

Կրոնական խմբավորումներին հարողների ընդհանուր թիվ՝	10, 838
Կրոնական խմբավորումներին չհարողների թիվ՝	449

Անհայտ կրոնական խմբավորումներ՝	709
Ընդամենը՝	11,996

Աղբյուրը՝ Անդերսոն՝ 1994թ:280-6: Ընտրովի ծառայություններից համակարգ՝ 1950: 318-20:

Ծանոթագրություն

Բնաբան. Ալֆրեդ Նորթ Ուայթհեդը Ալան Մեկեյի շարադրանքներում «Գիտական մեջբերումների բառարան» (Բրիսթոլ, Մեծ Բրիտանիա, Ֆիզիկայի ինստիտուտին կից հրատարակչություն՝ 1991թ.), 262. Գլուխ 1, Բերթրանդ Ռասսել, Արևմտյան իմաստնություն (Նյու Յորք, Խաչակրաց գրքեր, 1977թ.)10, Ջավահարլալ Նեհրու «Ինքնակենսագրություն» (Նոր Դելի, Օքսվորդ համալսարանի հրատարկչություն՝ 1982թ.), 409: Գլուխ 2՝ Դանիելս և Գիլուլա 1970: 27: Գլուխ 3՝ Գ. Ռամաչանդրանի դիտողությունները «Երիտասարդությունը հանուն խաղաղության» խորագրով կոնֆերանսի ժամանակ, Կերալայի համալսարան, Տրիվանդրում, Հնդկաստան՝ 23 փետրվարի, 1986թ.: Գլուխ 4՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրներ 1981: 61: Գլուխ 5՝ Ալեքսիս դե Թոքվեվիլ, մեջբերումներ Ուիլսոնից՝ 1951: 244: Պետրա Կելլի «Կանաչ մտքեր» (Բերքելի, Քալիֆ. Պարալակս հրատարակչություն՝ 1994թ.), 38: Գլուխ 6՝ Գեներալ ՄաքԱրթուր Դուգլաս՝ 1987:69, Մարտին Լյութեր Քինգ Կրտսեր «Ինտեգրացման ապագան» Մանչեսթեր քոլեջում համագումարին հնչեցված զեկույցի բրոշյուր, Հյուսիսային Մանչեսթեր, Ինդիանա, 1 փետրվարի, 1968թ. 9: Մաքս Վեբերը Վեբերի մասին՝ 1958թ., Գանդի՝ 1958-1994թթ. հատոր XXVI, 1928, 68:

1. Թեկուզև սա համարվի հայրենասեր ամերիկացիների կողմից գործած արյունահեղությունների ամենակոպիտ նկարագիրը, չեմ կարող բառ առ բառ չմեջբերել 1917թ. ապրիլի 16-ին Կոնգրեսի արձանագրություններում գրանցված սենատոր-դեմոկրատ Ռոբերտ Օուենի մարտական կոչը, որտեղ վերջինս խրախուսում է Ամերիկայի մուտքը Առաջին համաշխարհային պատերազմ.

   - Պարո՛ն Նախագահ, մի քանի օր առաջ մեր թերթերից մեկում ես գտա առաջնակարգ մի հոդված գրված Դոուես Կոմիտեի նախկին նախագահ Թամս Բիկսբիի կողմից: Հոդվածը տոգորված է քրիստոնեական հայրենասիրության վեհ ու մաքուր զգացումներով, որն ըստ իս, շատ տեղին է այս պահի համար: Ես ցանկանում եմ ընթերցել այն: Հոդվածը շատ կարճ է և վերնագրված է՝ «ՀԱՌԱ~Ջ, ՔՐԻՍՏՈՍԻ՛ ՋԻՆՎՈՐՆԵՐ»:

     Միացյալ Նահանգները, կյանքի կոչվելով հայր փիլգրիմների կողմից, առաջնորդվում էր մարդկանց ճակատագրերը ղեկավարող Ամենակարող Աստծո հանդեպ տածած սիրով և նվիրվածությամբ, իր Փրկչի խաչելության օրը պատերազմ հայտարարեց:

     Այս զուգադիպությունը պատահական չէ և պարունակում է խոր իմաստ իր մեջ: Հայրենասիրական զգացումներով տոչորված ամերիկացիները պատերազմի են գնում ոչ միայն որպես ազատության մարտիկներ, այլ որպես խաչի զինվորներ: Ինչպես որ Նա մոտ 2000 տարի առաջ մահացավ խաչի վրա մարդկությանը փրկելու համար, նույն կերպ ամերիկացիները կմեռնեն մարտի դաշտում այս աշխարհի փրկության համար:

Ամերիկացիների արյան գնով աշխարհը կմաքրվի բարբարոս, վայրագ դինաստիայից, որն իր անհագ կրքի մեջ, մոռացել է մեր Փրկչի պատգամները: Անմեղ տառապանքն ու մահը մարդկանց ավելի են մոտեցնում Աստծուն:

Արդարադատության զրահով պարուրված անվախ Ամերիկան մտնում է մարտի դաշտ: Մեր սրտերում չկա ատելություն, մենք մեր թշնամու վատը չենք ուզում. մենք չենք կռվում հաղթելու կամ նյութական պարգևատրումներ ստանալու համար:
Ամերիկան՝ հավատարիմ իր ծագման խորհրդին, վարում է քրիստոնեական, ազնիվ պատերազմ: Մենք պատրաստ ենք մեռնել՝ ևս մեկ անգամ մարդկությանը հղելով խաղաղության և բարի կամքի ուղերձը:
Այս սուրբ ժամին Ամերիկան աղոթում է իր թշնամիների համար, ինչպես որ աղոթում էր Փրկիչը խաչի վրա.

- Տե՛ր, ների՛ր նրանց, քանզի իրենք էլ չգիտեն թե ինչ են անում:

Ռազմի կոչը հնչել է: Ամերիկան՝ արդարադատության, քաղաքակրթության և քրիստոնեության պաշտպանը, մաքուր սրտով ու հաստատուն բազկով շարժվում է առաջ:

Ճակամարտի աղմուկ աղաղակի մեջ լսվում է մարդկության միավորված դաշնակիցների հիմնը՝ «Հառա~ջ, Քրիստոսի՛ զինվորներ»: (Համաժողովների տեղեկագիր, 65-րդ Համաժողով, առաջին նիստ, 1917թ., գիրք 55, մաս 1, 719):

2. Սեվիլյան հայտարարության տակ ստորագրել են՝ Դավիդ Ադամսը, հոգեբանություն (ԱՄՆ), Ս. Ա. Բարնետտ, էթոլոգիա (Ավստրալիա), Ն.Պ. Բեչտերեվա, նեյրոֆիզիոլոգիա (ՍՍՀՄ), Բոննի Ֆրենկ Քարտեր, հոգեբանություն (ԱՄՆ), Ժոզե Մ. Ռոդրիգեզ Դելգադո նեյրոֆիզիոլոգիա(Իսպանիա), Ժոզե Լուի Դիաս, էթոլոգիա (Մեքսիկա), Անդրեյ Էլյաշ, անհատի զարգացման հոգեբանություն(Լեհաստան), Սանտիագո Զենովես, կենսաբանական մարդաբանություն(Մեքսիկա), Բենսոն Է. Ջինսբուրգ, գենետիկա և դաստիարակություն(ԱՄՆ), Զո Գրեբել, սոցիալական հոգեբանություն(Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետություն), Սամիր-Կումար Ղոշ, սոցիոլոգիա (Հնդկաստան), Ռոբերտ Հինդ, կենդանիների վարքագիծ (Մեծ Բրիտանիա), Ռիչարդ Է. Լիկի, ֆիզիկական մարդաբանություն (Կենիա), Թահա Հ. Մալասի, հոգեբուժություն(Քուվեյթ), Զ. Մարտին Ռամիրեզ, հոգեկենսաբանություն (Իսպանիա), Ֆեդերիկո Մեոր Զարագոզա, կենսաքիմիա (Իսպանիա), Դիանա Լ. Մենդոզա, էթոլոգիա (Իսպանիա), Աշիս Նանդի, քաղաքական հոգեբանություն (Հնդկաստան), Զոն Փոլ Սքոտ, կենդանիների վարքագիծ (ԱՄՆ) և Ռիտա Ուոլստրոմ (Ֆինլանդիա):

3. «Եղբայրության կուսակցություն», Ուլաքոմբ Ռոուդ, Բլեկհիթ, Լոնդոն, Սե 3, Մեծ Բրիտանիա /141Woolacombe Road, Blackheath, London, SE3 8QP, U.K./

4. Միություն 90 /Կանաչների կուսակցություն - Բունդեշոզ, Բոնն 53113, Գերմանիա / Bundeshaus, Bonn 53113, Germany/

5. «ԱՄՆ խաղաղասերների կուսակցություն», 5729 Ս. Դորչեսթեր Ավենյու, Չիկագո, Իլինոյս 60614, ԱՄՆ. Կայքէջ՝ http://www.uspacifistparty.org/.: [5729 S. Dorchester Avenue, Chicago, Illinois 60617, U.S.A. Internet: http://www.uspacifistparty.org/]

6. «Սարվոդայա կուսակցություն», Ունիթան Ֆարմ, Զագաթփուրա, Մալավիա Նագար Փ. Օ., Զայփուր 302017, Ռաջասթան, Հնդկաստան. Կայքէջ՝ http://www.sarvoday.org/frontpage.html. [Unnithan Farm, Jagatpura, Malaviya Nagar P.O., Jaipur-302017, Rajasthan, India. Internet: http://www.sarvoday.org/frontpage.html]

7. «Տրանսնացիոնալ արմատական» կուսակցություն, 866 ՄԱԿ Պլազա, սենյակ 408, Նյու Յորք, 10017, ԱՄՆ, կայքէջ՝ http://www.radicalparty.org: [866 UN Plaza, Suite 408, New York, N.Y. 10017, U.S.A. Internet: http://www.radicalparty.org.]

8. Ներկայացուցիչների պալատի անդամների քվեարկության արդյունքները հետևյալն էին՝ 373-ը՝ կողմ, 50-ը՝ դեմ և 9-ը՝ ձեռնպահ: Պատերազմին դեմ են քվեարկել Էդվարդ Բ. Ալմոնը Դեմոկրատական կուսակցությունից, Ալաբամա, Մարկ Ր. Բեկոնը Հանրապետական կուսակցությունից, Միչիգան, Ֆրեդերիկ Ա. Բրիքնը Հանրապետական կուսակցությունից, Իլինոյս, Էդվարդ Է. Բրաունը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Դենվեր Ս. Չարչը Դեմոկրատական կուսակցությունից, Կալիֆորնիա, Զոն Ր. Կոնելին Դեմոկրատական կուսակցությունից, Կանզաս, Հենրի Ա. Կուպերը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Զեյմս Հ. Դեվիդսոնը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Փըրլ Դ. Դեկերը Հանրապետական կուսակցությունից, Միսսուրի, Կլարենս Է. Դիլլը Դեմոկրատական կուսակցությունից, Վաշինգթոն, Չարլզ Հ. Դիլլոնը Հանրապետական կուսացությունից, հարավային Դակոտա, Ֆրեդերիկ Հ. Դոմինիկը Դեմոկրատական կուսակցությունից, հարավային Կարոլինա, Զոն Զ. Եշչը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Զեյմս Ա. Ֆրեերը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Չարլզ Է. Ֆուլլերը Հանրապետական կուսակցությունից, Իլինոյս, Ջիլբերտ Ն. Հոջը Հանրապետական կուսակցությունից, Իովա, Էվրիս Ա. Հեյսը Հանրապետական Կուսակցությունից, Կալիֆորնիա, Վոլտեր Լ. Հենսլին Դեմոկրատական կուսակցությունից, Միսուրի, Բենջամին Ս. Հիլլիարդը Դեմոկրատական կուսակցությունից, Կոլորադո, Հարրի Է. Հալլը Հանրապետական կուսակցությունից, Իովա, Ուիլյամ Լ. Իգոն Դեմոկրատական կուսակցությունից, Միսսուրի, Ռոյալ Ս. Զոնսոնը Հանրապետական կուսակցությունից, հարավային Դակոտա, Էդվարդ Կիթինգը Դեմոկրատական կուսակցությունից, Կոլորադո, Էդվարդ Զ. Կինգը Հանրապետական կուսակցությունից, Իլինոյս, Մովսես Փ. Կինքեյդը Հանրապետական կուսակցությունից, Նեբրասկա, Կլոդ Կիչինը Դեմոկրատական կուսակցությունից, հարավային Կարոլինա, Հարոլդ Նաքսոնը Հանրապետական կուսակցությունից, Մինեսոտա, Ուիլյամ Լ. ԼաՖոլեթը Հանրապետական կուսակցությունից, Վաշինգտոն, Էդվարդ Է. Լիթլը Հանրապետական կուսակցությունից, Կանզաս, Մեյեր Լոնդոնը Սոցիալիստական կուսակցությունից, Նյու Յորք, Էրնեստ Լանդինը Հանրապետական կուսակցությունից, Մինեսոտա, Աքքինզ Զ. ՄաքԼեմորը Դեմոկրատական կուսակցությունից, Տեխաս, Ուլյան Է. Մեյսոնը Հանրապետական կուսակցությունից, Իլինոյս, Ադոլֆուս Փ. Նելսոնը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Չարլզ Հ. Ռենդոլը «Չոր օրենք» կուսակցությունից, Կալիֆորնիա, Ժանետ Ռենկինը Հանրապետական կուսացկությունից, Մոնտանա, Չարլզ Ֆ. Ռեվիզը Հանրապետական կուսացկությունից, Նեբրասկա, Էդվարդ Է. Ռոբերտսը Հանրապետական կուսակցությունից, Նեվադա, Ուիլյան Ա. Ռոդենբերգը Հանրապետական կուսակցությունից, Իլինոյս, Դորսի Ու. Շեկլֆորդը Դեմոկրատական կուսակցությունից, Միսսուրի, Իսահակ Ռ. Շերվուդը Հանրապետական կուսակցությունից, Օհայոյից, Չարլզ Հ. Սլոանը Հանրապետական կուսակցությունից, Նեբրասկա, Ուիլիամ Հ. Սթատֆորդը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Կարլ Ս. Վան Դայկը Դեմոկրատական կուսակցությունից, Մինեսոտա, Էդվարդ Վոյթը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Լորեն Է. Ուիլերը Հանրապետական

կուսակցությունից, Իլինոյս և Ֆրենկ Փ. Վուդզը Հանրապետական կուսակցությունից, Իովա:

Համաժողովների տեղեկագիր, 65-րդ Համաժողով, առաջին նիստ, 1917թ., գիրք 55, մաս 1, 413:

9. Սենատում ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝ 82 կողմ, 6 դեմ և 8 ձեռնպահ: Պատերազմին դեմ են քվեարկել էյլ Ջ. Գրոննան Հանրապետական կուսակցությունից, Յուսիսային Դակոտա, Ռորբերտ Մ. Լաֆոլետը Հանրապետական կուսակցությունից, Վիսկոնսին, Հարրի Լեյնը Դեմոկրատական կուսակցությունի, Օրեգոն, Ջորջ Վ. Նորրիսը Հանրապետական կուսակցությունից, Նեբրասկա, Ուիլյան Ջ. Սթոունը Դեմոկրատական կուսակցությունից, Միսսուրի և Ջեյմս Կ. Վարդամանը Դեմոկրատական կուսակցությունից, Միսիսիպի:

Համաժողովների տեղեկագիր, 65-րդ Համաժողով, առաջին նիստ, 1917թ., գիրք 55, մաս 1, 261:

10. Տնտեսական «հոլոքոստի» վերաբերյալ Մանիֆեստի տակ ստորագրել են ներքոհիշյալ նոբելյան մրցանակակիրները. Վինսենթ Ալեքսանդրը (գրականություն, 1977թ.), Հանես Ալֆվենը (ֆիզիկա, 1970թ.), Ֆիլիպ Անդերսոնը (ֆիզիկա, 1977թ.), Քրիստիան Աֆինսենը (քիմիա, 1972թ.), Քեննեթ Արոուն (տնտեսագիտություն, 1972թ.), Ջուլիուս Աքսելրոդը (բշժկություն, 1970թ.), Սամուել Բեկետը (գրականություն, 1969թ.), Բերուժ Բենասերաֆը (բշկություն, 1980թ.), Հեյնրիխ Բոլլը (գրականություն, 1972թ.), Նորման Էրնեստ Բորլոգը (խաղաղություն, 1970թ.), Օուեն Չամբերտինը (ֆիզիկա, 1959թ.), Մայրեդ Կորրիգանը (խաղաղություն, 1976թ.), Անդրե Կուրնանդը (բժշկություն, 1956թ.), Ժան Դոսսեթը (բժշկություն, 1980թ.), Ջոն Կերու էքլեսը (բժշկություն, 1963թ.), Օդիսեուս Էլիտիսը (գրականություն, 1979թ.), Էրնստ Օտտո Ֆիշերը (քիմիա, 1973թ.), Ռոջեր Գիլեմինը (բժշկություն, 1977թ.), Օդդ Հասսելը (քիմիա 1969թ.), Գերարդ Հերզբերգը (քիմիա 1971թ.), Ալֆրեդ Կասլերը (ֆիզիկա, 1966թ.), Լորենս Ռ. Կլեյնը (տնտեսագիտություն, 1980թ.), Փոլիքարփ Կուսչը (ֆիզիկա, 1955թ.), Սալվադոր Լուրիան (բժշկություն, 1969թ.), Անդրե Լվոֆֆ (բժշկություն, 1965թ.), Սեն Մաքբրայդը (խաղաղություն, 1974թ.), Սուեսլավ Միլոսցը (գրականություն, 1980թ.), Եվգենիո Մոնտալը (գրականություն, 1975թ.), Նեվիլ Մոտտը (ֆիզիկա, 1977թ.), Գուննար Միրդալը (տնտեսագիտություն, 1974թ.), Դանիել Նաթանսը (բժշկություն, 1978թ.), Ֆիլիպ Նոել-Բեյքերը (խաղաղություն, 1959թ.), Ադոլֆո Փերեզ էսքիվելը (խաղաղություն, 1980թ.), Ռոդնեյ Ռոբերտ Փորթերը (բժշկություն, 1972թ.), Իլյա Պրիգոգինը (քիմիա, 1977թ.), Իսիդոր Իսահակ Ռաբին (ֆիզիկա, 1944թ.), Մարտին Ռայլը (ֆիզիկա, 1974թ.), Աբդուս Սալամը (ֆիզիկա, 1979թ.) Ֆրեդերիկ Սանգերը (քիմիա, 1958 և 1980թթ.), Ալբերտ Սզենթ-Գեորգին (բժշկություն, 1937թ.), Յուգո Թեորելլը (բժշկություն, 1955թ.), Ժան Թինբերգենը (տնտեսագիտություն, 1969թ.), Նիկոլասը Թինբերգենը (բժշկություն, 1973թ.), Չարլզ Հարդ Թաունզը (ֆիզիկա, 1964թ.), Ուլֆ վոն Էյլերը (բժշկություն, 1970թ.), Ջորջ Ուոլդը (բժշկություն, 1967թ.), Ջեյմս Դեուեյ Ուոթսոնը (բժշկություն, 1962թ.), Պատրիկ Ուայթը (գրականություն, 1973թ.), Մորիս Ուիլկինսը (բժշկություն, 1962թ.), Բեթթի Ուիլյամսը (խաղաղություն, 1976թ.):